| | 119. Հայաստան-սփյուռք գործակցու-թյան մեջ երի-տասարդական կազմա-կերպությունների դերի ակտիվացում | 1) համագործակցություն Սփյուռքի երիտասար-դական կազմակերպությունների հետ՝ համա-հայկական խաղերին հայ մարզիկների ավելի լայն շրջանակի ներգրավում | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավել-վածի 2.2-րդ բաժնի «Սփյուռք» գլխի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետեր |
| | | 2) կազմակերպչական աջակցություն Հայ մարմնա-կրթական ընդհանուր միության հիմնադրման (ՀՄԸՄ) 100-ամյակին նվիրված ձեռնարկների իրականացմանը Հայաստանում | հուլիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձա-նագրության 29-րդ կետով հավանու-թյան արժանացած արձանագրային որոշման հավելվածի 56-րդ կետի «ե» ենթակետ |
| | | 3) «Սփյուռք» ամառային դպրոցի շրջանակներում երիտասարդ առաջնորդների դասընթացի կազ-մակերպում | հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4) համահայկական երիտասարդական հավաքի կազմակերպում Հայաստանում՝ նվիրված ՀՀ և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակներին | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 5) սփյուռքի հայկական երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցությամբ նախարարության ծրագրերին («Սփյուռք» ամառային դպրոց, «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխություն, այլ) մասնակիցների ավելի լայն շրջանակի ապահովում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |
| | | 6) սփյուռքում ՀՀ և Մայիսյան հերոսամարտերի 100 և Երևանի հիմնադրման 2800-ամյակներին նվիրված միջոցառումների կազմակերպմանը տեղեկատվական աջակցություն (լուսաբանում ԶԼՄ-ներով) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |
| | | 7) «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխության շրջանակներում «Լավագույն երիտասարդական ծրագիր» անվանակարգում մրցույթի անցկացում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |
| | 120. Սփյուռքում հայապահպանության հիմնախնդրի լուծման գործում մշակութային գործոնի ավելացում | 1) հայրենասիրական-ազգագրական, Երևանին՝ կապված 2800-ամյակի հետ, նվիրված երգերի փաթեթի տրամադրում համայնքներին | հունիսի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 2.2-րդ բաժնի «Սփյուռք» գլխի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 6-րդ ենթակետեր<br>ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման հավելվածի 37–րդ կետ, 56-րդ կետի «դ», «ե» ենթակետեր |
| | | 2) «Սփյուռք» ամառային դպրոցի շրջանակներում սփյուռքի նախադպրոցական հաստատությունների և մշակութային կենտրոնների երգ ու պարի առնվազն 40 ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում | հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) Ճարտարապետների համահայկական 4-րդ համաժողովի կազմակերպում Արցախում | հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4) «Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100 և Երևանի հիմնադրման 2800-ամյակներին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի շրջանակներում Սփյուռքի պարախմբերի, երգչախմբերի, անհատ կատարողների ելույթների կազմակերպում Հայաստանում և Արցախում | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 5) սփյուռքում գործող մշակութային հաստատությունների, հայտնի արվեստագետների հոբելյաններին նվիրված միջոցառումների կազմակերպում Հայաստանում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |
| | | 6) համայնքներում հայոց լեզվի և գրականության առնվազն 40 ուսուցիչների վերապատրաստելու նպատակով, մասնագետների գործուղում (Նիդեռլանդների Թագավորություն, Իրաքի Հանրապետություն) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |
| ՀՀ առողջապահության նախարարություն | 121. Առողջապահական համակարգի արդիականացում | 1) ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, ինչպես նաև վերջինիս մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի հագեցում բժշկական սարքավորումներով և կահույքով | մարտի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 4-րդ կետի 6-րդ ենթակետ |
| | | 2) ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ: Կահույքով և սարքավորումներով հագեցում: | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 3) ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման շինարարական աշխատանքների ավարտ: Կահույքով և սարքավորումներով հագեցում: | հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 4) ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 5) ՀՀ Վայոց ձորի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 122. Ծխելու վնասակարության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի կազմակերպում | 1) բնակչության իրազեկման արշավի իրականացում՝ ծխելու վնասակարության, առողջ ապրելակերպի, առողջության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ (տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստում, վարքագծային ուսուցման իրականացման ընթացքում, խմբային քննարկումների, կլոր սեղանների, համաժողովների ընթացքում, հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի միջոցով) | մարտի 1-ց պարբերաբար | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն |
| | | 2) իրազեկման արշավի իրականացում թիրախ խմբերի համար (տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստում, վարքագծային ուսուցման իրականացման ընթացքում, խմբային քննարկումների, կլոր սեղանների, համաժողովների ընթացքում) | մարտի 1-ից պարբերաբար | |
| | | 3) բուժանձնակազմի գիտելիքների և կարիքների գնահատում, իրազեկման նյութերի պատրաստում և իրազեկման արշավի իրականացում | մարտի 1-ից պարբերաբար | |
| | | 4) օրենսդրության վերաբերյալ շահագրգիռ կողմերին (որոշում կայացնողներ, տնտեսվարող սուբյեկտներ և այլն) օրենսդրության դրույթների կատարման, մեկնաբանման, կիրառման վերաբերյալ իրազեկման արշավի իրականացում | մարտի 1-ից պարբերաբար | |
| | 123. Պետական պատվերի միջոցների հաշվին դեղերի ձեռքբերման և փոխհատուցման մեխանիզմների ներդրում | 1) առողջության առաջնային պահպանման կազմակերպությունների կողմից հատկացվող դեղերի փոխհատուցման մեխանիզմի ներդրում | հուլիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 2-րդ կետի 6-րդ ենթակետ |
| | | 2) դեղերի և բժշկական նշանակության ապրանքների տեխնիկական բնութագրերի օրինակելի ձևերի բազայի ստեղծում, շարունակական կատարելագործում և հրապարակում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 3) ընթացքի մասին հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | հունիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | 124. Առողջապահական համակարգում դեպքերի անհատական վարման ինստիտուտի (case management) ներդրում | 1) բժիշկ-փորձագետների գործունեության ընթացակարգի մշակում և հաստատում | հունիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 2-րդ կետի 2–րդ ենթակետ |
| | | 2) բժիշկ-փորձագետների մասնագիտական բնութագրերի մշակում և հաստատում | հուլիսի 1-ին տասնօրյակ | |
| | 125. Բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման և (կամ) մասնավորեցման աշխատանքների իրականացում | 1) բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման և/կամ մասնավորեցման փուլային ծրագրի մշակում և ներկայացում | սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 4-րդ կետի 5-րդ ենթակետ |
| | | 2) բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման առնվազն 1 մրցույթի կազմակերպում և իրականացում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 126. Բժշկական տուրիզմի ծառայություններ մատուցող կազմակերպությունների շտեմարանի ստեղծում և հասարակությանը իրազեկում | 1) նեղ մասնագիտական ծառայությունների բույլեր մատուցող կազմակերպությունների համար համապատասխանության չափանիշների սահմանում | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության |
| | | 2) պլաստիկ վիրաբուժության, ստոմատոլոգիական, վերականգնողական և համալիր բժշկական զննման (check-up) ոլորտներում նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համավոր հիմունքներով հավաքագրում՝ ըստ մշակված ցուցանիշների | հոկտեմբեր 2-րդ տասնօրյակ | |
| | | 3) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության armenia.travel կայքի համապատասխան դարանում տեղադրման նպատակով տեղեկատվության ձևաչափի սահմանում և տեղադրում | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | 127. Ֆինանսական թափանցիկության ապահովման գործուն մեխանիզմի ներդրում | 1) միասնական հարթակում խոշոր բժշկական հաստատություններում ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման պահանջի սահմանում | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 2-րդ կետ 4–րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 2) պետական պատվերի պայմանագրերի վերանայում ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման պահանջի վերաբերյալ դրույթների սահմանմամբ | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 128. Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերապատրաստման դասընթացների կազմակերպում | Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների (բժիշկներ, բուժքույրեր) համար պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերություն |
| | 129. Կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելակարգերի և ընթացակարգերի ներդրում | Օտարերկրյա առաջադեմ փորձի հիման վրա՝<br>1) 45 մասնագիտություններով առնվազն 50 կլինիկական ուղեցույցի թարգմանում, տեղայնացում և ներդնում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն |
| | | 2) 15 մասնագիտություններով առնվազն 100 գործելակարգի թարգմանում, տեղայնացում և ներդնում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 3) 5 մասնագիտություններով առնվազն 100 ընթացակարգի թարգմանում, տեղայնացում և ներդնում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 130. Սիրտ-անոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերի մշակում և ներդրում | 1) Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգի մշակում և ներդնում, | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության |
| | | 2) Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգի մշակում և ներդնում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 131. Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածքի հաստատում | Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածքի մշակում և հաստատում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646- Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերություն և 4-րդ կետի 3-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 132. ՀՀ բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերում և մշտադիտարկում | 1) ոչ վարակիչ հիվանդությունների անվճար սկրինինգների իրականացում ՀՀ բնակչության ռիսկային խմբերի համար՝ ըստ հետևյալ հիվանդությունների՝<br>ա. հիպերտոնիա,<br>բ. շաքարային դիաբետ,<br>գ. արգանդի պարանոցի քաղցկեղ | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերություն |
| | 133. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանության մշակում | Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանության մշակում և հաստատում | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 2-րդ կետի 5-րդ ենթակետ |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 134. Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովում | 1) նախադպրոցական այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների փուլային ներդրում<br>2) նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների նախագծում, կարիքների գնահատում<br>3) նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների մշակում<br>4) քննարկումների կազմակերպում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ<br>հունիսի 1-ին տասնօրյալ<br>հունիսի 1-ին տասնօրյակ<br>հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4. Սոցիալական ոլորտի<br>4.1 Կրթություն և գիտություն բաժնի 1-ին կետի 1-ին ենթակետ |
| | 135. Հանրակրթության բովանդակության և ծրագրերի բարելավում | 1) փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման առանձնահատուկ մոդելների ներդրում<br>2) ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության համատեքստում ուսուցիչների փուլային վերապատրաստում<br>3) ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության ներդրում<br>4) միջնակարգ կրթության 3-րդ աստիճանում/10-12 դասարաններ/ կրեդիտային համակարգի փորձնական ծրագրի ներդնում | սեպտեմբերի 1-ին տասնօրյակ<br>օգոստոսի 3-րդ տասնօրյակ<br>սեպտեմբերի 1-ին տասնօրյակ<br>սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների 4. Սոցիալական ոլորտի 4.1-ին Կրթություն և գիտություն բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետի «ա», «բ», «ե» և «զ» ենթակետեր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 136. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում | 1) Արմավիրի մարզում հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում<br>2) Նշված մարզում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ծրագրի մոնիթորինգի իրականացում | օգոստոսի 3-րդ տասնօրյակ<br><br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդված, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշման հավելվածի 14-րդ կետ |
| | 137. Կրթական պաշարների և ուսումնական գրականության բարելավում | 1) Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության նոր չափանիշների և գործիքակազմի ներդրում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4. Սոցիալական ոլորտ, 4.1-ին Կրթություն և գիտություն բաժնի 4-րդ կետի 1-ին ենթակետ |
| | 138. Ուսուցիչների պատրաստման, զարգացման և մասնագիտական առաջընթացի արդյունավետ համակարգի ներդրում | 1) ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման նոր մեխանիզմների ներդրում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի. Սոցիալական ոլորտ, 4.1 Կրթություն և գիտություն բաժնի 3-րդ կետի 2-րդ ենթակետ |
| | 139. Դպրոցների կառավարման համակարգի վերափոխում | 1) հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր համակարգի ներդրում<br>2) հանրակրթական հաստատությունների կառավարման նոր արդյունավետ համակարգի ներդրում<br>3) հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության կամ նշանակման նոր չափանիշների և համակարգի ներդրում | հունիսի 3-րդ տասնօրյակ<br>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ<br>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4.Սոցիալական ոլորտ, 4.1-ին Կրթություն և գիտություն բաժնի 6-րդ կետի 1-3-րդ ենթակետեր |
| | 140. Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում | 1) Հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերի (նախակրթարանների) աշակերտներին սննդով ապահովման ծրագրի իրականացում ՀՀ Շիրակի մարզում (շահառուների թիվը կկազմի շուրջ 12600 սովորող) | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4. Սոցիալական ոլորտ, 4.1-ին Կրթություն և գիտություն բաժնի 2-րդ պարբերության 1-ին կետի «թ» ենթակետ: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետ: |
| | 141. Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոդելի մշակում և ներդրում | 1) Ընտրված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում երկակի (դուալ) ուսուցման համակարգի փորձարարական կարգով ներդրում և ընդլայնում | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Հայաստանի հանրապետության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ |
| | 142. Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան առնվազն 7 որակավորումների ոլորտային շրջանակների մշակում | 1) բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակների մշակման համար ստեղծված աշխատանքային խմբերի կողմից առնվազն 7 ոլորտային որակավորումների մշակում<br>2) բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակների մշակման համար ստեղծված աշխատանքային խմբերի կողմից առնվազն 7 ոլորտային որակավորումների մշակված նախնական տարբերակների հանձնում ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>3) բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային առնվազն 7 շրջանակների մակարդակների նկարագրիչների հաստատում | նոյեմբերի 1-ին տասնօրյակ<br>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4. Սոցիալական ոլորտ, 4.1-ին Կրթություն և գիտություն բաժնի 10-րդ պարբերության 1-ին կետի «ա» ենթակետ |
| | 143. Բնագիտական և ինժեներական ոլորտում բուհ-գիտահետազոտական ինստիտուտ-գործատու գիտակրթական կլաստերների մոդելների տարբերակների մշակում | 1) ինժեներական ոլորտում գիտակրթական կլաստերների ստեղծման տեղական մոդելների տարբերակների քննարկում շահակիցների հետ և մշակում<br>2) բնագիտական ոլորտում գիտակրթական կլաստերների ստեղծման տեղական մոդելների տարբերակների քննարկում շահակիցների հետ և մշակում<br>3) գիտակրթական կլաստերների ստեղծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4. Սոցիալական ոլորտ, 4.1-ին Կրթություն և գիտություն բաժնի 12-րդ կետի 2-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ՀՀ մշակույթի նախարարություն | 144. Մշակութային ժառանգության ոլորտում մշակութային նոր ծառայությունների ներդնում և կիրառում՝ տնտեսական բաղադրիչի մեծացմամբ | հուշանվերային նոր արտադրանքի ստեղծում (21) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.5. Մշակույթ» բաժնի 2-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետեր, 1-ին կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերություն |
| | | գրադարաններում մտավոր ժամանցի նոր ծառայությունների ներդնում (1) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | գրավաճառ ցանցի ընդլայնման գործընթացի շարունակական ապահովում (1) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | պատմության և մշակութային անշարժ հուշարձանների պահպանական գոտիներում, ինչպես նաև դրանց հարակից տարածքներում ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանն ուղղված ներդրումային քաղաքականության ակտիվացման, կառավարման նոր մոդելների ներդրման, հանրահռչակման ծրագրերի մշակում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | հնագիտական վայրերի ամրակայման, թանգարանացման աշխատանքների շարունակական ապահովում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 145. Մշակութային ժառանգության ոլորտում տեղեկատվական հասանելիության և մատչելիության ապահովում | հուշարձանային համալիրներում/տարածքներում տեղեկատվական վահանակ-ցուցանակների (QR) տեղադրում (10) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.5. Մշակույթ» բաժնի բաժնի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետեր |
| | | մշակութային ժառանգության թվայնացման գործընթացի շարունակական իրականացում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | պատմամշակութային ժառանգությունը, ժամանակակից արվեստը ներկայացնող, կրթական, դաստիարակչական ուղղվածություն ունեցող գիտահանրամատչելի և ճանաչողական հեռուստահաղորդումների ստեղծման աշխատանքների մեկնարկ | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.5. Մշակույթ» բաժնի բաժնի 8-րդ կետ |
| | | հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլով և սոցիալական մեդիայով մշակութային կյանքի, արդի ստեղծագործողների գործունեության հանրահռչակում, մշակութային անցուդարձի լուսաբանում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 146. Հայաստանում կինոարտադրության զարգացմանն ուղղված կառավարման ժամանակակից մոդելի ներդնում | կինոարտադրության ոլորտի կառավարման ժամանակակից մոդելի ներդրման իրավական հիմքերի մշակում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.5. Մշակույթ» բաժնի 4-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետեր |
| | | պետություն-մասնավոր համագործակցությամբ տարածաշրջանային կինոդպրոցի ստեղծման ծրագրի պատրաստում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 147. Ժամանակակից հայ կերպարվեստի հանրահռչակում և զարգացում | Ժամանակակից հայ կերպարվեստի հանրահռչակմանը և զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում՝<br>1) նոր ցուցադրությունների ստեղծում (3),<br>2) միջազգային հեղինակավոր հարթակներում հայ Ժամանակակից արվեստի ներկայացում (4),<br>3) Հայաստանում նպատակային միջոցառումների կազմակերպմանն աջակցում (6),<br>4) երիտասարդ արվեստագետների ստեղծագործական ներուժի խթանում (5) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված |
| | 148. Հայ պարարվեստի զարգացում և հանրահռչակում | Հայ պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանն ուղղված ծրագրերի իրականացում՝<br>1) նոր պարային ծրագրերի բեմադրությունների իրականացում (2)<br>2) ազգային հենքով նպատակային միջոցառումների կազմակերպմանն աջակցում (4)<br>3) միջազգային հարթակներում հայ պարարվեստի ներկայացում (2)<br>4) երիտասարդ արվեստագետների ստեղծագործական ներուժի խթանում (6) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված |
| | 149. Մարզերում մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովում | մարզերում նոր ձևավորված մշակութային միավորումների և անհատների ստեղծագործական ծրագրերին աջակցության գործարկում (5) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.5. Մշակույթ» բաժնի 6-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | «Մշակութային կանգառ» ծրագրի շարունակական իրականացում (200) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | ՀՀ մարզերում համայնքային կինոթատրոնների հանրապետական կինոցանցի ստեղծման ծրագրի մեկնարկ | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 150. Օտարերկրյա պետություններում հայկական մշակույթի հանրահռչակում և Հայաստանում համաշխարհային մշակույթի ներկայացում | Հայաստանի պատմությունն ու մշակույթը ներկայացնող քաղաքակրթական ցուցահանդեսներ աշխարհի հեղինակավոր թանգարաններում և ցուցասրահներում (4) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.5. Մշակույթ» բաժնի 7-րդ կետ |
| | | Մշակույթի օրերի ձևաչափով հայ մշակույթի հարահռչակում արտերկրում և այլ մշակույթների ներկայացում Հայաստանում (7) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | Հայ թարգմանական գրականության հրատարակում և հանրահռչակում արտերկրում (5) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում շարունակական գործընթացի ապահովում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ (շարունակական) | |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 151. Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը որպես՝ սոցիալական պաշտպանության նախաձեռնողական քաղաքականության նախադրյալների ձևավորման հիմք | 1. Սոցիալական շտապ օգնության արագ արձագանքման պահուստի, այդ թվում՝ պարենի (ֆուդբանկի) ձևավորման, դրանում պահեստավորված ապրանքատեսականու բաշխման փորձնական ծրագրի իրականացում | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն , 3-րդ ենթակետի «ա» պարբերություն, 4-րդ ենթակետի «ա» պարբերություն |
| | | 2. Պրակտիկ սոցիալական աշխատողների վերապատրաստումների կարիքների գնահատում | հունիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 3. Համայնքի սոցիալական աշխատողների վերա-պատրաստման կազմակերպում և վկայականի տրամադրում | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 4. Տվյալ համայնքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային մարմնի սոցիալական աշխատողի և խոշորացված համայնքի սոցիալական աշխատողի համագործակցությամբ՝ համայնքի սոցիալական կարիքների գնահատում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 5. Համայնքի ղեկավարի կողմից տեղական սոցիալական ծրագրի (երի) մշակում՝ հաշվի առնելով սոցիալական աշխատողի՝ համայնքի գնահատված սոցիալական կարիքները | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | 152. Երեխայի իրավունքների պաշտ-պանության համակարգի բարելավում | 1) նախարարության համակարգի՝ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաս-տատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների խորը և ամբողջական գնահատում | մայիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավել-վածի 4-րդ բաժնի 4.2-րդ գլխի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետեր |
| | | 2) գնահատված կարիքներին համապատասխան երեխայի անհատական և նրա ընտանիքի աջակցության ծրագրի մշակում | հունիսի 1-ին տասնօրյակ | |
| | | 3) հաստատություններում գտնվող երեխաների բնակության վայրերում և հարակից բնակավայրե-րում (համայնքներում) ընտանիքներին և երեխա-ներին ուղղված ծառայությունների քարտեզագրում | հունիսի 1-ին տասնօրյակ | |
| | | 4) Մշակված ծրագրերի հիման վրա երեխային և ընտանիքին աջակցող ռեսուրսների համախմբում | հունիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 5) Հաստատությունների վերակազմակերպում<br>ա. Հաստատության անձնակազմի մասնագիտական կարողությունների գնահատում, մասնագետների ընտրություն և վերապատրաստում,<br>բ. Նոր ծառայության համար անհրաժեշտ հաստիքացուցակի վերաբերյալ առաջարկի ներկայացում,<br>գ. Վերակազմակերպվող հաստատության շենքային պայմանների հարմարեցում, ըստ անհրաժեշտության վերանորոգման աշխատանքների իրականացում | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 6) Երեխայի անհատական և նրա ընտանիքի աջակցության ծրագրի իրականացում | հուլիսի 1-ին տասնօրյակից սկսած պարբերաբար | |
| | | 7) Երեխաների վերադարձը կենսաբանական կամ խնամակալ ընտանիքներ | հուլիսի 1-ին տասնօրյակից սկսած պարբերաբար | |
| | | 8) Ըստ կարիքի երեխաների ուղղորդումը գործող այլընտրանքային ծառայություններ | մայիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 153. Բժշկասոցիալական փորձաքննության համակարգի արմատական փոփոխություններ և հաշմանդամության գնահատման նոր մոդելի ներդրմանն ուղղված ընթացակարգերի ապահովում | 1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի տեղեկատվական շտեմարանի կատարելագործում (լրամշակում)՝ որպես հիմնական նպատակ դիտարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 43 արձանագրային որոշման N 1 հավելվածով նախատեսված առողջապահության ոլորտի միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի հետ տեղեկատվության փոխանակությունը, որի ծավալները, կարգը և պայմանները սահմանվելու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարների և «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի հետ համատեղ | ապրիլի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2-րդ գլխի 4-րդ կետի 2-րդ ենթակետ |
| | | 2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի տեղեկատվական շտեմարանի՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատումը և ՎԱԾ-երի կազմումը ապահովող բաղադրիչի գործարկում՝ հաշվի առնելով ԱՀԿ ՖՄԴ-ները | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի տեղեկատվական շտեմարանի և առողջապահության ոլորտի միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջև բժշկասոցիալական փորձաքննության համար անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանակելու ենթահամակարգի համատեղ մշակում և ներդրում՝ հաշվի առնելով անցումային շրջանի կապակցությամբ առկա խնդիրները | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 4. Առողջապահության ոլորտի միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգից ստացված՝ բժշկասոցիալական փորձաքննության համար անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա որոշումների կայացման ենթահամակարգի մշակում և ներդրում (գործարկում) | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 5. Գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստումների կազմակերպում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ (պարբերաբար) | |
| | | 6. ԱՀԿ ՖՄԴ վրա հիմնված բժշկասոցիալական փորձաքննության մոդելի համաձայն հաշմանդամության սահմանում առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց համար (մոդելի կիրարկում) | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 154. Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրում | 1. Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող թվով 35 ծրագրի՝<br>ա. ՄԳ-ի գործընթացի շրջանակում մշակված քանակական և որակական ցուցանիշներին համապատասխան տվյալների հավաքագրում | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2-րդ գլխի 8-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետեր |
| | | բ. հավաքագրված տվյալների վերլուծություն, ծրագրերի գնահատում | հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | գ. ՄԳ-ի ամփոփ հաշվետվությունների կազմում, առաջարկությունների ներկայացում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | դ. ՄԳ-ի արդյունքների հրապարակում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող խնամք և սպասարկում իրականացնող 22 ՊՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների մշտադիտարկում և գնահատում | հունիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 3. Ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացի մշտադիտարկում և գնահատում | հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| | | 4. ՄԳ-ի էլեկտրոնային համակարգի մշակում և փորձնական կիրարկում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 155. Դրամական վճարների նշանակման գործընթացների վերակազմակերպում | 1. Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում տարածքային բաժինների փոխարեն սպասարկման գրասենյակի (back office) և նշանակման կենտրոնի (front office) ձևավորում | հուլիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2-րդ գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետ |
| | | 2. Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում կենսաթոշակ, նպաստ և դրամական այլ վճարներ (բացառությամբ՝ ընտանեկան և սոցիալական նպաստները) նշանակելու և վճարելու նոր ընթացակարգերի (փորձնական ծրագրի) մշակում և փորձարկում, ըստ անհրաժեշտության՝ լրամշակում | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն (նոր ընթացակարգերի ամրագրում ՀՀ օրենսդրությամբ) | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| ՀՀ արդարադատության նախարարություն | 156. Քրեական պատիժների համակարգի արդյունավետության և պատժի նպատակայնության ապահովում | 1) Անչափահաս դատապարտյալների հանրակրթության իրավունքի ապահովում. | հունիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքների պաշտպանություն, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» 1.3-րդ. բաժնի 5-րդ, 6-րդ կետերի «1» ենթակետ |
| | | 2) Կալանավորված անձանց և դատապարտյալների մասնագիտական կրթության ծրագրերի մշակում և ներդնում. | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 3) մասնագիտական ուսուցման ծրագրերի իրականացում ազատազրկման ձևով պատիժ կրող այն անձանց համար, որոնց պատժի կրման ավարտին մնացել է մինչև վեց ամիս, և որոնց, որպես աշխատանք փնտրող անձ, «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմինը հաշվառել է. | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 4) պրոբացիայի շահառուների կողմից մասնագիտական հմտությունների ձեռքբերման համար կահավորված 3 սենյակի գործարկում և շահագործում: | մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| | 157. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացում (շարունակական) | 1) առաջնային առողջապահական ծառայությունների համար լրացուցիչ բժշկական սարքավորումների ձեռքբերման համար կարիքների գնահատում, անհրաժեշտ բժշկական պարագաների և սարքավորումների տեսակների և քանակակազմի մշակում | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքների պաշտպանություն, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» 1.3-րդ բաժնի 5-րդ կետի «2» ենթակետ |
| | | 2) սանիտարահամաճարակային և հիգիենիկ իրավիճակի ուսումնասիրություն և սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի կիրառման վերաբերյալ անազատության մեջ գտնվող անձանց և քրեակատարողական ծառայողների համար ուղեցույցների մշակում | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 3) քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի վերապատրաստում մասնագիտական ծրագրերով | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 4) բժշկական ծառայությունները կանոնակարգող իրավական ակտերի մշակում և ընդունում | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 5) Բժշկական անձնակազմի համալրում՝ բարձր որակավորում ունեցող մասնագետներով | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | 158. Էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդնում և շարունակական զարգացում, էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների նախատեսում | 1) E-request էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի ներդնում: | մարտի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքների պաշտպանություն, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» 1.3-րդ բաժին |
| | | 2) Քրեակատարողական ծառայության e-Penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնում և գործարկում: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 3) ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության e-probation էլեկտրոնային համակարգի վերաբերյալ՝ միջազգային փորձի ուսումնասիրություն, տեխնիկական առաջադրանքի կազմում, համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների, ֆինանսական միջոցների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 4) իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացն ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով իրականացման մեխանիզմների նախատեսում՝ բոլոր գրանցումների համար առցանց դիմելու հնարավորությամբ: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 5) ՀՀ ԱՆ «Թեժ գիծ» ծառայության էլեկտրոնային հարթակի լիարժեք գործարկում: | հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 6) E-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակի արդիականացում և շարունակական զարգացում: | հուլիսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 7) միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրության հիման վրա www.arlis.am իրավական տեղեկատվական կայքի արդիականացմանն ուղղված տեխնիկական առաջադրանքի մշակում և համապատասխան աշխատանքների իրականացում: | օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| | | 8) Սնանկության միասնական www.e-bancrupcy.am կայքի տեխնիկական առաջադրանքի մշակում, ֆինանսական միջոցների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | | 9) լիարժեք գործարկել էլեկտրոնային նոտար՝ www.e-notary.am համակարգը: | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 10) հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների միջև էլեկտրոնային կապի ստեղծում: | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 11) ապահովել էլեկտրոնային կապը հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների նոտարական գործողություններն արդյունավետ իրականացնելու և «մեկ պատուհան» սկզբունքով ծառայություններ մատուցելու նպատակով: | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 159. Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացում, որոնք միտված են դատական իշխանության՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումների արդյունավետ իրականացմանը | 1) դատավորների մասնագիտական զարգացման և վերապատրաստման ծրագրերի իրականացում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության ծրագրի «Մարդու իրավունքների պաշտպանություն, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» 1.3-րդ բաժնի 2-րդ կետի «1», «3» ենթակետ |
| | | 2) դատավորի աշխատակազմի և դատական այլ ծառայողների վերապատրաստման ծրագրերի իրականացում | | |
| | | Աջակցություն Բարձրագույն դատական խորհրդի և դատավորների Ընդհանուր ժողովի գործունեության՝ գործնականում թափանցիկության շարունակական բարելավման, մասնագիտական ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը: | | |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 160. ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի կառավարման համակարգի բարելավում, ՀՀ զինված ուժերի արդիականացման գործընթացի ապահովում | 1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրի հաստատում | հունվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.3. բաժնի «Պաշտպանություն» գլխի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի ապահովում |
| | | 2) ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի նոր կանոնադրությունների և կառուցվածքի սահմանում: | ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) ռազմաբժշկական և ռազմաուսումնական հաստատությունների օպտիմալացում և գործունեության որակի բարձրացում: | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 161. Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծում | 1) ՀՀ Տավուշի մարզում 4 քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում, որի նպատակով՝<br>ա. տարածքների ուսումնասիրություն | ապրիլի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 1.5-րդ գլխի 5-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերություն |
| | | բ. հենակետերի անձնակազմի ընտրություն | հուլիսի 1-ին տասնօրյակ | |
| | | գ. վարչական շենքերով ապահովում | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 2) քաղաքացիական պաշտպանության հենակետերում ծառայության կազմակերպում և իրականացում | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| | 162. Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած մարդկային անվերահսկելի հոսքերի կառավարման կարողությունների զարգացում | 1) «Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման գործողությունների պլանի» մշակում և համաձայնեցում | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 1.5-րդ գլխի 10-րդ կետ |
| | | 2) «Խոշոր աղետի կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման» թեմայով վարժանքի անցկացում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | 3) «Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման գործողությունների պլանի» հաստատում և ներդրում | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | 163. Սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգն ապահովող ազգային դիտացանցի արդիականացում | 1) գրունտի ուժեղ շարժումների դիտարկումների ցանցի (աքսելերոգրաֆների ցանց) արդիականացում՝ փոխարինելով անալոգային սարքերը թվայիններով | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 1.5-րդ գլխի 11-րդ կետի 1-ին ենթակետ |
| | 164. Անտառային հրդեհների արձագանքման կարողությունների զարգացում | 1) ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների հետ համատեղ՝ «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի» մշակում | հուլիսի 1-ին տասնօրյակ | ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 45-Ա որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի 14-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | 2) «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման» թեմայով ուսումնավարժությունների, վարժանքների անցկացում | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| | | 3) «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի» հաստատում և ներդրում | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 165. Հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի արդիականացում | 1) հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի արդիականացման կարիքների ուսումնասիրություն և գնահատում, ճանապարհային քարտեզի մշակում | փետրվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 1.5-րդ գլխի 12-րդ կետի 3-րդ ենթակետ |
| | | 2) հիդրոօդերևութաբանական կանխատեսումների և սպասարկման որակի բարելավման նպատակով՝ աշխատակիցների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, միջազգային առաջադեմ փորձի ներդնում | ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 166. Տավուշի մարզում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողությունների իրականացման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման գործընթացի կատարելագործում | 1. հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործմանն ուղղված աշխատանքների իրականացում,<br>2. հաշվառման-քննական ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողությունները իրականացում «հոսքագծի» եղանակով իրականացնելուն ուղղված միջոցառումների իրականացում | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 - Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 1.1-ին գլխի 1-ին կետի 3-րդ ենթակետ |
| | 167. Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնում | 1. համայնքային ոստիկանության 1 նոր հենակետի (Երևան քաղաքի Էրեբունու վարչական շրջանում) ստեղծման նպատակով կապիտալ շինարարական աշխատանքների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների, | հունիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 - Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի 1.1-ին գլխի 1-ին կետի 4-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | կապիտալ շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների և կապիտալ շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթների հայտարարում<br>2. շինարարական աշխատանքների իրականացում<br>3. հենակետերի համար անհրաժեշտ գույքի և տեխնիկական միջոցների ձեռքբերում<br>4. համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | 168. Գյումրի և Վանաձոր քաղաքներում ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների կազմում թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ շահագործվող օպերատիվ կառավարման կենտրոնների ստեղծում | 1. օպերատիվ կառավարման կենտրոնների ստեղծման համար անհրաժեշտ արդի տեխնիկական միջոցների և սարքերի ձեռքբերում.<br>2. ոստիկանության ծառայողների վերապատրաստում. | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 - Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4-րդ բաժին, 3-րդ կետ |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 169. Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծած արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և ՀՀ կառավարության ծրագրի կատարում | ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակելու է Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության հետագա ամրապնդման, զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ապահովման, համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում առավել ընդգրկման, բարեկամ և գործընկեր երկրների հետ երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների զարգացման ու ամրապնդման, միջազգային կազմակերպություններում գործուն մասնակցության ապահովման արտաքին քաղաքական ուղեգիծը՝ առաջնահերթ քայլերը նպատակաուղղելով՝ | Տարվա ընթացքում | ՀՀ Նախագահի 2013 թվականի նախընտրական ծրագրի 2-րդ գլուխ (արտաքին հարաբերություններ և անվտանգություն) և ՀՀ Նախագահի 2013 թվականի նախընտրական ծրագիր 3-րդ գլուխ (մրցակցային, նորամուծական տնտեսություն)<br>ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646–Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 2 –րդ գլուխ, 2.1-ին ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | - Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի, մասնավորապես, ժողովրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա<br>- Արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը<br>- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, դատապարտմանը և ցեղասպանության հանցագործության կանխարգելմանը<br>- Երկկողմ հարաբերություններ<br>• Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցության և ռազմավարական հարաբերությունների առավել խորացմանն ու ընդլայնմանը<br>• Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության ամրապնդմանը<br>• Եվրոպական երկրների հետ երկկողմ համագործակցության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը<br>• Անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների խորացմանը<br>• Փոխշահավետ համագործակցության ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկող ԱՊՀ մասնակից պետությունների հետ հարաբերությունների խորացմանը<br>• Չինաստանի հետ համապարփակ հարաբերությունների հետագա ամրապնդմանը:<br>Հնդկաստանի հետ համագործակցության ընդլայնմանը | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | • Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության շարունակմանը<br>• Ամերիկայի մայրցամաքի երկրների հետ համագործակցության զարգացմանը<br>• Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի պետություն-ների հետ համագործակցության հարաբերություն-ների զարգացմանը<br>• Հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորմանը<br>- Բազմակողմ հարաբերություններ<br>• Եվրասիական տնտեսական միության շրջա-նակներում համագործակցության ակտիվ մասնակցությանը<br>• ՀԱՊԿ-ի շրջանակում համագործակցության շարունակական խորացմանը<br>• Եվրոպական միության հետ համապարփակ գործընկերության ընդլայնմանը<br>• ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցությանը<br>• ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներգրավվածությանը<br>• Ֆրանկաֆոնիայի միջազգային կազմակեր-պությանը ՀՀ ներգրավվածության խորացմանը, 2018 թվականի Հայաստանում կայանալիք Ֆրանկաֆոնիայի գագաթաժողովի պատշաճ կազմակերպմանը | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | • ՆԱՏՕ -ի հետ քաղաքական երկխոսության շարունակմանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը<br><br>- Միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացմանը<br><br>- Երկկողմ և բազմակողմ ձևաչափերով խորհրդարանական դիվանագիտության զարգացման և կապերի ամրապնդման աջակցմանը<br><br>- Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը՝ հաղորդակցության ուղիների ապաշրջափակման և արտաքին հարաբերություններում տնտեսական բաղադրիչի ընդլայնման միջոցով<br><br>- Հայրենական արտադրանքի արտահանման խթանմանը, նոր շուկաների բացահայտմանը, օտարերկրյա ներդրումների և դեպի Հայաստան զբոսաշրջիկների քանակի ավելացմանը՝ դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ ներգրավման միջոծով<br><br>- Միջկառավարական հանձնաժողովների աշխատանքների ակտիվացման և տնտեսական բնույթի միջոցառումներին հայկական կողմի մասնակցության ապահովմանը<br><br>- Հայաստանի տնտեսական զարգացման տարբեր ոլորտներում սփյուռքի ներուժի առավել արդյունավետ ներգրավմանը | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | - Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը<br>- Արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին, այդ թվում՝ սիրիահայերին աջակցության ցուցաբերմանը<br>- Օտարերկրյա պետություններում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանմանը<br>- Միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն առավել ընկալելի դարձնելուն, բարենպաստ միջազգային հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողությունների իրականացմանը | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունվարի 11-ի N 275 -Ն որոշման

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Հիմնավորումներ |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն** |
| 1. | **«Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն իրավական ակտի մշակման անհրաժեշտությունը բխում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի պահանջների և ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի 3.4 գլխի «Էներգետիկա» բաժնի դրույթների կատարմամբ, որոնց համաձայն էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը և էներգետիկայի բնագավառում իրականացվող նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունում գործող էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի թվում առկա են այնպիսիք, որոնք համաձայն նոր օրենսդրության պահանջների, չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում: Ելնելով վերոգրյալից, ՀՀ էներգետիկայի բնագավառում գործող տեխնիկական կանոնա-կարգերը «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու դեպքում անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության նորմատիվ որոշման նոր նախագիծ, նկատի ունենալով, որ էներգահամակարգի ընկերություններն ունեն սեփականության տարբեր ձևեր և դրանք աշխատում են ՀՀ օրենսդրության շրջանակներում, իսկ խնդրո առարկա նորմատիվ ակտերը պարունակում են նաև այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց սեփականության ձևից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշումը հաստատվել է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, որն ուժը կորցրել է պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Քանի որ համաձայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի սահմանազատվել են ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջները, ապա «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը նոր օրենսդրությամբ չի կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգ և հետևաբար չի կարող գրանցվել |

| | |
|---|---|
| | ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Ուստի, անհրաժեշտ է մշակել նոր նորմատիվ իրավական ակտ, որը կհամապատասխանի «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի պահանջներին և ԵԱՏՄ ստանձնած պարտավորություններին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գազի տնտեսության շահագործման անվտանգության աստիճանի բարձրացման նորմատիվ դաշտի կարգավորում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կսահմանվեն գազի տնտեսությունում անվտանգության նվազագույն պահանջներ մատակարարների և բնակիչ սպառողների համար՝ անկախ սեփականության ձևից: |
| 2. | **«Անվտանգության կանոնները մայրուղային գազատարներում հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 119-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն իրավական ակտի մշակման անհրաժեշտությունը բխում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի պահանջների և ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի 3.4 գլխի «Էներգետիկա» բաժնի դրույթների կատարմամբ, որոնց համաձայն Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը և էներգետիկայի բնագավառում իրականացվող նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունում գործող էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի թվում առկա են այնպիսիք, որոնք համաձայն նոր օրենսդրության պահանջների, չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում: Ելնելով վերոգրյալից, ՀՀ էներգետիկայի բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերը «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու դեպքում անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության նորմատիվ որոշման նոր նախագիծ, նկատի ունենալով, որ էներգահամակարգի ընկերություններն ունեն սեփականության տարբեր ձևեր և դրանք աշխատում են ՀՀ օրենսդրության շրջանակներում, իսկ խնդրո առարկա նորմատիվ ակտերը պարունակում են նաև այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց սեփականության ձևից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 119-Ն որոշումը հաստատվել է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, որը ուժը կորցրել է պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Քանի որ համաձայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, սահմանազատվել են ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջները, ապա «Անվտանգության պահանջները մայրուղային գազատարներում» տեխնիկական կանոնակարգը նոր օրենսդրությամբ չի կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգ և հետևաբար չի կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական |

| | |
|---|---|
| | դաշտը բաց կմնա: Ուստի, անհրաժեշտ է մշակել նոր նորմատիվ իրավական ակտ, որը կհամապատասխանի «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի պահանջներին և ԵԱՏՄ ստանձնած պարտավորություններին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գազի տնտեսության շահագործման անվտանգության աստիճանի բարձրացման նորմատիվ դաշտի կարգավորում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կսահմանվեն անվտանգության կանոնները մայրուղային գազատարներում այն բոլոր կազմակերպությունների և ստորաբաժանումների համար, որոնց գործունեությունը կապված է բնական գազի տեղափոխման և ստորգետնյա պահպանման հետ, ինչպես նաև գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական և մայրուղային գազատարների համար աշխատանքներ իրականացնող այլ կազմակերպությունների համար: |
| 3. | **«Հայաստանում ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանում շարժիչային վառելիքների 100%-ը ներկրվում է: 2013 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ Նախագահի կողմից հաստատված «Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահով-ման հայեցակարգում» վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումներից է՝ հնարավորություն ստեղծել 2020 թվականին առաջնային վառելիքի ընդհանուր հաշվեկշռի մոտ 10%-ը կենսաէթանոլով և կենսադիզելով փոխարինելու համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենսդրությամբ բացակայում են ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացմանը խրախուսող մեխանիզմները, առանձնահատուկ կարգավորումները, հստակ գործողությունները, կատարման ժամկետները ու պատասխանատուները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որպես առաջնային քայլ անհրաժեշտ է սահմանել այլընտրանքային էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկը, պատասխանատուները և ժամկետները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առավելագույն և արդյունավետ օգտագործում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Էներգետիկայի բնագավառում էներգակիրների մատակարարման ուղիների տարատեսա-կանացում՝ ածխաջրածնային շարժիչային վառելիքներից կախվածության նվազեցում: |
| 4. | **«Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն իրավական ակտի մշակման անհրաժեշտությունը բխում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի պահանջների և ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի 3.4 գլխի «Էներգետիկա» բաժնի դրույթների կատարմամբ, որոնց համաձայն Էներգետիկայի |

| | |
|---|---|
| | բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը և էներգետիկայի բնագավառում իրականացվող նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունում գործող էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի թվում առկա են այնպիսիք, որոնք համաձայն նոր օրենսդրության պահանջների, չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում: Ելնելով վերոգրյալից, ՀՀ էներգետիկայի բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերը «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու դեպքում անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության նորմատիվ որոշման նոր նախագիծ, նկատի ունենալով, որ էներգահամակարգի ընկերություններն ունեն սեփականության տարբեր ձևեր և դրանք աշխատում են ՀՀ օրենսդրության շրջանակներում, իսկ խնդրո առարկա նորմատիվ ակտերը պարունակում են նաև այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց սեփականության ձևից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քանի որ համաձայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, սահմանազատվել են ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջները, ապա «Էլեկտրա-կայանքների շահագործման անվտանգության կանոններ հաստատելու մասին» տեխնիկական կանոնակարգը նոր օրենսդրությամբ չի կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգ և հետևաբար չի կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Ուստի, անհրաժեշտ է մշակել նոր նորմատիվ իրավական ակտ, որը կհամապատասխանի «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի պահանջներին և ԵԱՏՄ ստանձնած պարտավորություններին:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության աստիճանի բարձրացման նորմատիվ դաշտի կարգավորում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սահմանելով տեխնիկական շահագործում իրականացնող անձնակազմի գործառույթները, կապահովվի էլեկտրակայանքների անվտանգ և անխափան շահագործումը: |
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | |
| 5. | **«ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է 200 մլն դրամը գերազանցող մրցակցային գնումներ կազ-մակերպած ՊՈԱԿ-ներին էլեկտրոնային գնումների համակարգ տեղափոխելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենսդրության համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպություններն իրենց կարիքների համար գնումներն իրականացնում են փաստաթղթային եղանակով:<br>Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կազմակերպվող մրցակցային գնման գործընթացների թափանցիկության, մրցակցության աստիճանի բարձրացման նպատակով նախա-տեսվում է մինչև 2018 թվականի ավարտը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով իրականացնել վերջիններիս կարիքների համար 200 մլն դրամը գերազանցող մրցակցային գնումները: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ իրականացվող փոփոխությունների արդյունքում՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով կիրականացվեն նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող 200 մլն դրամը գերազանցող մրցակցային գնումները, ինչը կնվազեցնի ինչպես թղթատարությունը, այնպես էլ կոռուպցիոն ռիսկերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծով նախատեսվում է ընդլայնել էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով կազմակերպվող գնումների շրջանակը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար կազմակերպվող՝ 200 մլն դրամը գերազանցող գնման գործընթացները կիրականացվեն էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով: |
| 6. | **«ՀՀ կապիտալի շուկայի զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերը նշված նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 646-Ա որոշման հավելվածի 3.2 «Հարկաբյուջետային քաղաքականություն և ֆինանսներ» բաժնի 5-րդ կետի 1-ին ենթակետով ամրագրված գործողության կատարման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ արժեթղթերի կարգավորվող շուկայում ցուցակված է ընդամենը 25 ֆինանսական գործիք՝ թվով 11 հաշվետու թողարկողի կողմից թողարկված, իսկ «Ազատ շուկա» հարթակում թույլատրված են առևտրի թվով 11 ֆինանսական գործիք՝ թվով 8 թողարկողի կողմից թողարկված: Արժեթղթերի շուկայում առկա նման պասիվ վիճակը աշխուժացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում հետևողական քայլեր իրականացնելու արժեթղթերի շուկայում նոր ինստիտուտներ, թողարկողներ ձևավորելու և արժեթղթերի շուկայի նոր գործիքներ ներդնելու ուղղությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Զարգացնել ՀՀ կապիտալի շուկան, որն էլ իր հերթին անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի կենսաթոշակային երկարաժամկետ խնայողությունների ներդրման դիվերսիֆիկացված հարթակների ձևավորման համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կստեղծվեն ՀՀ կապիտալի շուկան ավելի արդյունավետ, թափանցիկ և գրավիչ դարձնելու նախադրյալներ, կմշակվեն խոշոր մասնավոր ընկերությունների կողմից ֆոնդային բորսայում ցուցակվելու, ինչպես նաև կազմակերպությունների կողմից առաջին անգամ բաց հրապարակային տեղաբաշխում (IPO) իրականացնելու մեխանիզմներ, կընդլայնվեն անհատ ներդրողների՝ արժեթղթերի շուկայում մասնակցությունը:<br>**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կապահովվի տեղական ընկերությունների կողմից բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման խթանման համակարգված ծրագրի մշակումը՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա, որի հետևողական իրականացումը կհանգեցնի ՀՀ արժեթղթերի շուկայի ակտիվացմանը: Դա իր հերթին խթան կհանդիսանա ՀՀ տնտեսության զարգացման և ներդրումների ավելացման համար: |

| | |
|---|---|
| 7. | **«Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Օրենսդրական փաթեթի ընդունումը պայմանավորված է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտներում բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումների հայեցակարգը», որն իր մեջ ամփոփում է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում անհրաժեշտ բարեփոխումների հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով ներկայումս ընդունված միջազգային լավագույն փորձը: Մասնավորապես, հայեցակարգով առաջարկվում է ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր մասնագիտացված կառույց՝ հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը: Հայեցակարգից բխող ոլորտների կարգավորման ու վերահսկողության հիմնական կարգավորումները և այլ դրույթներ նախատեսվում է ամփոփել օրենսդրական նոր փաթեթում: Նշված փաթեթը ներառում է 3 օրենքի նախագիծ՝<br>- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ,<br>- «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ,<br>- «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ,<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բարեփոխումների արդյունքում ակնկալվում է՝<br>• ստեղծել մասնագիտացված կառույց՝ «Հայաստանի որակավորված հաշվապահների ու աուդիտորների պալատ», որը կիրականացնի հաշվապահության և աուդիտի ոլորտի զարգացման համար անհրաժեշտ գործառույթները, մասնավորապես՝ մասնագետների որակավորման և շարունակական զարգացման, ՖՀՄՍ-ների և Աուդիտի միջազգային ստանդարտների ժամանակին թարգմանության, աուդիտի որակի ապահովման համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը.<br>• ՀՀ ֆինանսների նախարարությանը կից ստեղծել Հանրային վերահսկողության խորհուրդ, որը պատասխանատու կլինի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու համար.<br>• ճշգրտել տարեկան աուդիտի պարտադիր պահանջ ունեցող կազմակերպությունների շրջանակը՝ փոփոխված չափանիշներով խոշոր համարվող կազմակերպությունների համար, որոնց սահմանումը կհամապատասխանեցվի ԵՄ-ի դիրեկտիվներով ներկայացված չափանիշներին,<br>• վերանայել աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը՝ հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցով (Աուդիտորական կազմակերպությունների ռեեստր):<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի առարկան հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման համակարգն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում կամբողջականացվի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման համակարգը: |

| | |
|---|---|
| 8. | **«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառման սահմանելը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 18-ի N 646-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված ծրագրային դրույթների իրագործման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում գույքի հարկման բազան հիմնված է գույքի կադաստրային արժեքի վրա, որը չի համապատասխանում գույքի իրական՝ շուկայական արժեքին և վերանայման օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում: Միևնույն ժամանակ, պարապուրդում գտնվող գույքը չի մասնակցում տնտեսությունում ավելացված արժեքի ձևավորմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է վերանայել անշարժ գույքի հարկման մեխանիզմները՝ ապահովելով անշարժ գույքի հարկման արդարացի՝ շուկայական արժեքներին մոտարկված արժեքների հիման վրա հարկման համակարգի ներդրումը և պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ավելացված արժեքի ձևավորմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Անշարժ գույքի հարկման համակարգը<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>- ապահովել գույքային հարկերի, որպես սեփականությունից գանձվող հարկերի, հարկման հորիզոնական և ուղղահայաց արդարության մեխանիզմների առկայություն,<br>- ապահովել անշարժ գույքի հարկման օբյեկտի կադաստրային արժեքից՝ շուկայական գնին մոտարկված արժեքին անցում,<br>- ապահովել պարապուրդում գտնվող գույքի մասնակցություն տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծմանը: |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** | |
| 9. | **«Հայաստանի Հանրապետության տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի մշակման նպատակն է ապահովել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջները:<br>Հայաստանի Հանրապետության տարածքում ներդնելով բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա ռադիոհսկում, որի արդյունքում կհայտնաբերվեն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կբացառվեն չթույլատրված հեռարձակումները՝ զերծ պահելով եթերը վնասակար խանգարումներից<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայումս շուրջօրյա ռադիոմոնիթորինգ իրականացվում է միայն Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, որի համար տեխնիկական |

| | |
|---|---|
| | բազա է հանդիսանում 2002 թվականին կանադական Aerosystems International ֆիրմայի կողմից տեղակայված ռադիոմոնիթորինգի համակարգը՝ 4 բազային և 3 շարժական կայաններով: Ներկա վիճակում առկա սարքավորումներով հնարավոր չէ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիարժեք ապահովել և զերծ պահել եթերային հեռուստառադիոծրագրերի հեռարձակման, շարժական բջջային կապի ծառայությունների մատուցման ընթացքում վնասակար և չարտոնված խանգարումներից՝ չթույլատրված ռադիոհաճախականությունների հեռարձակումներից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ**<br>Նոր տեխնոլոգիաներով և համապատասխան սարքավորումներով վերազինել ռադիոմոնիթորինգի բազային և շարժական կայանների միասնական համակարգը, որը հնարավորություն կընձեռնի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կապահովի ռադիոեթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող վնասակար ռադիոհեռարձակումներց:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում ունենալով ժամանակակից տեխնիկական լուծումներով կառուցված բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգ՝ հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականցնել շուրջօրյա եթերի մշտադիտակում և ժամանակին արձագանքել ու ռադիոեթերում ի հայտ եկած Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող վնասակար ռադիոհեռարձակումներին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրի ընդունման արդյունքում կունենանք ժամանակակից տեխնիկական լուծումներով կառուցված ցանց, որը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականցնել շուրջօրյա մոնիթորինգ՝ ժամանակին հայտնաբերելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բացառելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհեռարձակումները, որն էլ կապահովի պետության անվտանգության համակարգերի, տնտեսվարող սուբյեկտների ռադիոէլեկտրոնային միջոցների անխափան աշխատանքը: |
| 10. | **«ՏՀՏ ոլորտի թիրախների հիման վրա ՏՀՏ ոլորտի զարգացման 2018-2030 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՏՀՏ ոլորտի թիրախների հիման վրա ՏՀՏ ոլորտի զարգացման 2018-2030 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ գլխի 3.6 բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետը, և դրա նպատակն է մշակել «ՏՀՏ ոլորտի թիրախների հիման վրա ՏՀՏ ոլորտի զարգացման 2018-2030 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին»:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ դրական միտումների հետ մեկտեղ, առաջ են գալիս նոր մարտահրավերներ ՏՏ և ՏՀՏ ոլորտի զարգացման և առաջընթացի ապահովման ուղղությամբ:<br>Նման խնդիրների վերհանման և լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք միտված են ոլորտի առաջմղմանը, զարգացմանը, ՀՀ բրենդի համաշխարհային ճանաչմանը, կադրերի պատրաստմանը և այլ խնդիրների լուծմանը: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել ՏՀՏ ոլորտի ռազմավարությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Արդյունքում կմաշկվեն ՏՏ և ՏՀՏ ոլորտի զարգացման ռազմավարություն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունման արդյունքում կսահմանվի ՏՀՏ ոլորտում պետության պատասխանատվության շրջանակը, խնդիրները և իրավասությունները, կարևոր ենթակառուցվածքների դասակարգումը, այդ ենթակառուցվածքներին ուղղված ռիսկերի գնահատման և ենթակառուցվածքների անվտանգության ապահովման նորմերը, պետական մարմիններում տեղեկատվական անվտանգության չափանիշները: |
| 11. | **«Միասնական երթուղային ցանցի ներդրման հայեցակարգի և գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 19.06.2017թ N 646-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 3.6 բաժնի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի կատարման ապահովում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր համայնքներն են ապահովված տրանսպորտային սպասարկմամբ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է հանրապետությունում ձևավորել միասնական երթուղային ցանց, որի շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի նիստի N 31 արձանագրության 32-րդ կետով ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքը: Տեխնիկական առաջադրանքի իրականացման նպատակով անհրաժեշտ է մշակել դրանից բխող միջոցառումների ծրագիր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ներդրման նպատակով անհրաժեշտ է մշակել հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիր, որով կսահմանվեն երթուղային ցանցի ձևավորման քայլերի հաջորդականությունը, դրանց պատասխանատուներն ու կատարման ժամկետները: Նախատեսում է ներմարզային երթուղային ցանցը կապել միջմարզային երթուղային ցանցի հետ, որի դեպքում ներմարզային երթուղիների մրցույթները կանցկացվեն մեկ փաթեթով միջմարզային երթուղիների մրցույթների հետ մեկտեղ: Կընտրվի այնպիսի փոխադրող, որը կսպասարկի մարզի (մարզերի) միջմարզային և ներմարզային երթուղիները համատեղ:<br>Գործող երթուղային ցանցում հնարավոր չէ ներդնել միասնական տոմսավորման համակարգ և շահագործվող տրանսպորտային միջոցների տեղորոշման համակարգ, ինչը թույլ չի տալիս ուղևորներին արդյունավետ կազմակերպելու ուղևորությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կընդունվի միասնական երթուղային ցանցի ներդրման հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիրը, որով սահմանված ժամկետներում հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ, կկրճատվի ուղևորության համար ծախսվող ժամանակահատվածը, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցները կհամապատասխանեցվեն փաստացի ուղևորահոսքի ծավալներին, կբարձրանա ուղևորափոխադրումների արդյունավետությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետության բոլոր բնակավայրերը կապահովվեն կանոնավոր ուղևորափոխադրումներով: |

| | |
|---|---|
| 12. | **«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անվտանգ երթևեկության ապահովում, խանգարող օբյեկտների բացառում, միջպետական և հանրապետական նշանակությա նավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման խստացում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտի-ներում առկա են առանց համապատասխան համաձայնեցման կառուցված հասարակական օգտա-գործման օբյեկտները, որոնք խանգարում են դրանցով անվտանգ երթևեկության ապահովումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անվտանգ երթևեկության ապահովում, խանգարող օբյեկտների բացառում, միջպետական և հանրա-պետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման խստացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման կանոնակարգում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Անվտանգ երթևեկության ապահովում: |
| 13. | **«Վճարովի ճանապարհների մասին» ՀՀ օրենքի նախագծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Այլընտրանքային վճարովի ավտոմոբիլային ճանապարհների առկայություն:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս օրենսդրորեն կարգավորված չեն վճարովի ավտոմոբիլային ճանապարհներին առնչվող խնդիրները: Առաջարկվում է, որպես այլընտրանքային տարբերակ ՀՀ-ում ներդնել վճարովի ավտոմոբիլային ճանապարհների կառուցման հնարավորությունը:<br>**1.2. Առկախնդիրներիառաջարկվողլուծումները**<br>Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից բացի առաջարկվում է ՀՀ օրենքով սահմանել նաև այլընտրանքային տարբերակ՝ վճարովի ավտոմոբիլային ճանապարհների կառուցում՝ սահմանելով նաև այդ ճանապարհների կառուցման կարգն ու պայմանները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Այլընտրանքային ճանապարհների կառուցում և դրանց պահպանման և շահագործման գործընթացի կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում այլընտրանքային ճանապարհների առկայություն: |
| 14. | **«Երկաթուղային ենթակառուցվածքների զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ մասի 3.6-րդ գլխի 5-րդ կետի «ա» ենթակետի պահանջից: Նախագծի նպատակն է երկաթուղային ենթակառուցվածքների առկա վիճակի ուսումնասիրության հիման վրա գոյություն ունեցող խնդիրների բացահայտման, դրանց լուծման առաջնահերթությունների սահմանման, կառավարման ժամանակակից միջոցների կիրառման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման օպտիմալացման և դրանց արդյունավետությունը բարձրացմանան հրաժեշտությունը:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ռազմավարությունով սահմանվելու են երկաթուղային ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Ռազմավարության կարգավորման առարկան է երկաթուղային ենթակառուցվածքների զարգացումը, հայկական երկաթուղու աշխարհագրության ընդլայնումը, երթևեկության անվտանգության ապահովումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարության ընդունման արդյունքում կապահովվի երկաթուղային ենթակառուցվածքների միասնական քաղաքականության մշակումն ու իրականացումը և կենսական նշանակության ենթակառուցվածքների արդյունավետ ու անվտանգ շահագործումը: |
| 15. | **ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 10-ի N 231-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման ապահովում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցները և ավտոբուսները պետք է կահավորված լինեն տախոգրաֆով, ինչպես նաև թվային տախոգրաֆով կահավորված միջպետական փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպությունները և վարորդները պետք է ունենան համապատասխանաբար կազմակերպության և վարորդի թվային տախոգրաֆի քարտեր: Սակայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի N 231-Ն որոշմամբ սահմանված է միայն միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու համար թվային տախոգրաֆների տրամադրման կարգը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսում է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան փոփոխություններ և լրացում կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի N 231-Ն որոշման մեջ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին և վարորդներին կտրամադրվեն թվային տախոգրաֆի քարտեր, իսկ միջպետական ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցներ կկահավորվեն թվային տախոգրաֆներով:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջպետական ուղևորափոխադրումները կհամապատասխանեցվեն «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներին, որի արդյունքում կբարձրանա դրանց անվտանգության մակարդակը: |
| **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** | |
| 16. | **«ՀՀ հողօգտագործողներին 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների, մասնավորապես հանքային պարարտանյութերի մատչելի գներով մատակարարման ծրագրի շարունակմամբ: Իրավական ակտով կսահմանվեն ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի Հայաստանի Հանրապետության մարզերի մատակարարման չափաքանակները և այլ պայմաններ: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նման ուղղվածության ծրագիր իրականացվել է նաև 2017 թվականին, սակայն 2018 թվականին ծրագրի շարունակման համար անհրաժեշտ է սահմանել մատակարարվող ռեսուրսների ծավալները, ըստ մարզերի և առանձին տնտեսավարողների (ընկերություններ, կազմակերպություններ), պահանջվող ֆինանսական ռեսուրսները, գները և այլն: Վերջինիս համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընդունել համապատասխան ծրագիր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2018 թվականին ծրագրի շարունակման համար անհրաժեշտ է, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մարզերից և առանձին տնտեսավարողներից ստացված հայտերը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունել «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանք-ների համար մատչելի գներով ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը»:<br>**2. Կարգավորման առարկան**<br>2018 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների հայտերի հիման վրա ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի մատչելի գներով մատակարարման գործընթացի կանոնակարգումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝<br>- գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար պայմաններ կստեղծվեն գյու-ղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջների կատարման համար,<br>- կբարձրանա գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունավետությունը, կավելանան արտադրության ծավալները,<br>- կբարձրանա բուսաբուծական մթերքների մրցունակությունը և ինքնաբավության մակարդակը, պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման համար: |
| 17. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապե-տության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «Սննդամթերքի անվտանգություն» բաժնի 6-րդ կետի 2-րդ ենթակետի կատարման անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշմամբ կարգավորվում են ներմուծվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների (այսուհետ՝ սննդամթերք) ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և գնահատված ռիսկերի հիման վրա վերահսկողության համակարգի մեթոդաբանության հետ կապված հարաբերությունները:<br>Ներմուծման ընթացակարգը և ժամկետները վերանայման և պարզեցման կարիք ունեն, ինչպես նաև որոշման մեջ նշված ծածկագրերը չեն համապատասխանում ԵԱՏՄ երկրների կողմից կիրառվող մեկ ընդհանուր ծածկագրերին: |

**2. Կարգավորման առարկան**
Ներմուծման ընթացակարգի պարզեցում և վերանայում:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**
Նախագծի ընդունման արդյունքում կյուրինացվի և կպարզեցվի ներմուծման գործընթացը:

**Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

18.

**«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**
Օրենքի նախագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 9-ի N 646-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրում ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունների ներքո ամրագրված համապատասխան դրույթից: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2017 թ. նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ ամրագրված է մինչև 2018 թ. փետրվարը ՀՀ կառավարության աշխատակազմ Նախագծի ներկայացումը: Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) զարգացման համար անհրաժեշտ իրավական հենքի ձևավորումը Հայաստանում ներդրումային ակտիվության խրախուսման ու ներդրումային միջավայրի կատարելագործման ուղղությամբ ՀՀ կառավարության հանձնառությունների առանցքային տարրերից մեկն է:
**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**
Միջազգային պրակտիկան վկայում է, որ վերջին տարիներին պետություն-մասնավոր գործընկերությունը զարգացած և զարգացող բազմաթիվ երկրներում ավելի կարևոր, արդյունավետ ու լայնորեն կիրառվող գործիք է դառնում հանրային ենթակառուցվածքներին ուղղված ու այլ զարգացման նախաձեռնությունների կյանքի կոչման նպատակով մասնավոր ռեսուրսի ներգրավման համար: Ներկայումս Հայաստանում առկա է ՊՄԳ սկզբունքներով մի շարք նախագծերի իրականացման հաջողված փորձ մի շարք ոլորտներում: ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին որոշակի քայլեր են ձեռնարկվել ՊՄԳ դաշտը կարգավորող օրենսդրության մշակման ուղղությամբ, մասնավորապես, 2009 թվականին ընդունված «ՀՀ պետություն-մասնավոր հատվածների համագործակցության հայեցակարգը» և «ՊՄԳ ծրագրերի գնահատման և հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թ. N 1241-Ն որոշումը: Միաժամանակ, երկրում արդյունավետ ՊՄԳ պրակտիկայի ձևավորման ու կայացման համար բացակայում է օրենսդրությունը, որով անհրաժեշտ իրավական հիմքեր կապահովվեն գործարարների և ներդրողների հետ պետության արդյունավետ ու փոխվստահելի համագործակցության կառուցման համար:
2017 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել Պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականության փաստաթուղթը, որով ամրագրվում են Հայաստանում ՊՄԳ քաղաքականության ընդհանուր կառուցակարգերը, ինչպես նաև ուղղորդիչ հիմքեր են ապահովվում հետագա իրավակարգավորումների համար:
**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**
ՊՄԳ նոր օրենքի ընդունմամբ կկարգավորվեն գործընկերության ձևաչափով նախագծերի իրագործման շուրջ առաջացող իրավահարաբերությունները, այդ թվում՝ ընդունելի ոլորտները, մոդելները, ընտրության չափորոշիչները և ընթացակարգերը, ծրագրի մշակման և իրականացման գործընթացները:
**2. Կարգավորման առարկան**
Օրենքի նախագծով կամրագրվեն պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերը:
**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**
Օրենքի ընդունմամբ ընկալելի օրենսդրական միջավայր կձևավորվի և հնարավորություններ կստեղծվեն ենթակառուցվածքային և զարգացման այլ ծրագրեր իրագործել մասնավոր ռեսուրսի

| | |
|---|---|
| | ներգրավմամբ՝ այդպիսով հավասարակշռելով նաև նման նախաձեռնությունների իրագործման համար պետական պարտք ներգրավելու պահանջը և նպաստելով հանրային ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը: |
| 19. | **«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի անհրաժեշտությունը բխում է հեղինակային իրավունքի բնագավառի հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման և ԵԱՏՄ կարգավորումներին համապատասխանեցնելու պահանջից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ գրանցված ապրանքային նշանի իրավատերն իրավունք չունի արգելելու երրորդ անձանց կողմից տվյալ ապրանքային նշանի օգտագործումն այն ապրանքների նկատմամբ, որոնք իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ այդ նշումով տնտեսական շրջանառության մեջ են դրվել որևէ այլ երկրում (զուգահեռ ներկրում), իսկ ըստ ԵԱՏՄ պայմանագրի՝ նշված դրույթը կիրառվում է միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ տնտեսական շրջանառության մեջ են դրվել ԵԱՏՄ պայմանագրի անդամ որևէ երկրում:<br>Գործող օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի զիջումը կամ լիցենզիայի տրամադրումը հիմք է հանդիսանում չօգտագործման պատճառով ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու մասին հայցը մերժելու համար: Սա դարձել է շինծու գործարքների կնքման պատճառ, երբ նշված ժամանակահատվածի ավարտին կնքվում են իրավունքի փոխանցման կամ լիցենզիայի տրամադրման պայմանագրեր, որոնք ակնհայտորեն միտված են ապրանքային նշանի օգտագործումը հիմնավորելու համար, սակայն նշված ապրանքային նշանը շարունակվում է չօգտագործվել:<br>Գործող օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու համար ապրանքային նշանի չօգտագործման ժամկետը սահմանված է ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարի անընդմեջ կամ հայցը ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ հայցին անմիջականորեն նախորդող 5 տարի անընդմեջ ժամանակահատվածները, իսկ ԵԱՏՄ պայմանագրի համաձայն՝ նշված ժամանակահատվածը սահմանված է 3 տարի:<br>Գործող օրենքում առկա է նաև որոշ տեխնիկական բնույթի հարցերի կատարելագործման անհրաժեշտություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերը նշված խնդիրների հասցեագրման նպատակով կմշակվի և ՀՀ կառավարության աշխատակազմ կներկայացվի «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի նպատակը ապրանքային նշանների իրավական պահպանության օրենսդրության կատարելագործումն է՝ բնագավառի ներկա միջազգային զարգացումներին համարժեք մոտեցումների սահմանման ու մեխանիզմների կիրառման իրավական հիմքեր ստեղծելու միջոցով: Օրենքը նախագծելուց հաշվի են առնվելու բնագավառում գործող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:<br>**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ իրավական հիմքեր կապահովվեն ապրանքային նշանների հետ կապված հարաբերությունների հուսալի և արդյունավետ կարգավորման, ինչպես նաև՝ բնագավառի միջազգային ինտեգրման գործընթացներում արդյունավետ մասնակցության համար: |

| | |
|---|---|
| 20. | **«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2019 թվականի ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներդրումների ու գործարարության տեսակետից գրավիչ երկրի համբավի շարունակական ամրապնդման առումով գործարար միջավայրի բարելավմանն ուղղված հետևողական աշխատանքը ՀՀ կառավարության տնտեսական զարգացման քաղաքականության օրակարգի առաջնահերթություններից է: ՀՀ կառավարությունը հետևողական քայլեր է իրականացնում գործարարությամբ զբաղվելը դյուրացնելու և անհարկի պետական միջամտության բեռը թեթևացնելու ուղղությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործարար միջավայրի բարեփոխումների կարևորությունն ու հանձնառությունն ընդգծելու և դրա շուրջ գործընթացների համակարգումն ամրապնդելու նպատակով ՀՀ վարչապետի 2017 թ. նոյեմբերի 27-ի N 1373-Ա որոշմամբ ձևավորվել է Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավման աշխատանքները համակարգող միջգերա-տեսչական աշխատանքային խումբ:<br>Գործարար միջավայրի բարելավման շրջանակներում աշխատանքներն ուղղված են լինելու շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացմանը, պետության կողմից տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների բարելավմանը և պարզեցմանը, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի կրճատմանն ու հնարավորինս պարզեցմանը: Իրականացվելու են տնտեսապես ոչ արդյունավետ, աշխատատար, ծախսատար և աննպատակահարմար մեխանիզմների կրճատմանն ուղղված առաջարկությունների նախապատրաստում և համապատասխան միջոցառումների սահմանում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ ՀՀ կառավարության բարե-փոխումների շարունակականության ապահովման և տարբեր ոլորտներում այդ ուղղությամբ իրականացվող առանձին միջոցառումների համալիր ու հասցեական իրագործման նպատակով ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2019 թ. ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Աշխատանքներ կիրականացվեն Հայաստանի գործարար միջավայրի բարեփոխման և Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ:<br>**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է Հայաստանը դարձնել գործարար և ներդրումային առավել բարենպաստ միջավայր ունեցող երկիր՝ Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վար-կանիշում ապահովելով երկրի դիրքի բարելավում: |
| 21. | **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է հեղինակային իրավունքի բնագավառի հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման պահանջով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ներկայումս ընդլայնվում են գրականության, գիտության և արվեստի բնագավառների ստեղծագործությունների օգտագործման և տարածման հետ |

| | |
|---|---|
| | կապված հնարավորությունները, ինչն իր հերթին հանգեցնում է նոր և չկարգավորված իրավահարաբերությունների առաջացմանը: Թվային միջավայրում և գրքալ ցանցերում ստեղծագործությունների օրինական օգտագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանության հուսալի և արդյունավետ միջոցներ:<br>Գործող «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ չեն համապատասխանում ներկայումս միջազգային պրակտիկայում կիրառվող որոշ մոտեցումներին և ենթակա են վերանայման: Օրենքի ընդունումից հետո ուժի մեջ են մտել երկու նոր միջազգային պայմանագրեր, մասնավորապես՝<br>«Տեսալսողական կատարումների մասին» 2012 թ. Պեկինի պայմանագիրը, որը նպատակ ունի կատարելագործել կատարողների իրավունքները և նրանց տրամադրել ավելի արդյունավետ ու միատեսակ պահպանություն:<br>2013 թ. Մարաքեշում ընդունված «Կույրերի, տեսողական հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողական այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների հասանելիությունը դյուրացնելու մասին» պայմանագիրը, որը նախատեսում է հեղինակային իրավունքի որոշակի սահմանափակումներ, որոնք հնարավորություն կտան հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեք ու արդյունավետ մասնակցելու և ներգրավվելու հասարակական և մշակութային կյանքին:<br>Գործող օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթական հաստատությունների և գրադարանների կողմից ստեղծագործությունների վերարտադրմանը, չեն համապատասխանում ներկայիս պահանջներին և այդ կապակցությամբ անհրաժեշտություն կա հստակ սահմանափակումներ մտցնել այդ ստեղծագործությունների իրավունքների նկատմամբ: Նախագծում ընդգրկված հեղինակային իրավունքի սահմանափակումները նպատակաուղղված են հանրության շրջանում գիտելիքի, մշակութային արժեքների, ստեղծագործությունների էլ ավելի լայն հասանելիության ապահովմանը: Դրանք հնարավորություն կտան կրթական հաստատություններին և գիտահետազոտական ինստիտուտներին, գրադարաններին ու արխիվներին ոչ առևտրային հիմունքներով ստեղծագործություններ մատակարարել միմյանց՝ իրենց ընթերցողներին տրամադրելու, ինչպես նաև՝ ստեղծագործությունների օրինակներն ուսանողներին ներքին ապահով ցանցով տրամադրելու համար:<br>Գործող օրենքով լիարժեք կարգավորված չէ գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման համակարգը, որը կատարելագործման կարիք ունի: Նախագծով նախատեսվում են մտավոր սեփականության ոլորտում պետական լիազոր մարմնի կողմից կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հավատարմագրման գործընթացը և հավատարմագիր ստանալու համար անհրաժեշտ պայմանները: Նախատեսված են դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմներ:<br>Խնդիրներ են առկա նաև մալուխային վերահաղորդումների հետ կապված հեղինակային իրավունքին և հարակից իրավունքներին առնչվող հարաբերությունների, ինչպես նաև տեսալսողական կատարումների ամրագրումների արտադրության և օգտագործման հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցերում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կմշակվի և ՀՀ կառավարության աշխատակազմ կներկայացվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի նպատակը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավական պահպանության օրենսդրության կատարելագործումն է՝ բնագավառի ներկա միջազգային զարգացումներին համարժեք մոտեցումների սահմանման ու մեխանիզմների կիրառման իրավական հիմքեր ստեղծելու միջոցով: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ իրավական հիմքեր կապահովվեն հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների հետ կապված հարաբերությունների հուսալի և արդյունավետ կարգավորման, ինչպես նաև՝ բնագավառի միջազգային ինտեգրման գործընթացներում արդյունավետ մասնակցության համար: |
| 22. | **«Արտոնագրերի մասին» և «արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի «Ներդրումներ» ենթաբաժնի 1-ին կետի 4 ենթակետի պահանջից: Նախագծով նպատակ է դրվում Հայաստանի Հանրապետությունում ներդնել գյուտերի իրավական պահպանության առավել կատարելագործված համակարգ: «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի առանձնացնել արդյունաբերական նմուշների հետ կապված հարաբերությունների կարգավորումը գյուտերի և օգտակար մոդելների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտել 2009թ հունվարի 1-ից, որի կիրարկման ընթացքում ի հայտ են եկել որոշ խնդիրներ: Մասնավորապես, գործող օրենքում բացակայում է երրորդ անձանց կողմից գործող արտոնագրի դեմ առարկությունների ներկայացման ընթացակարգը, բավականաչափ հստակ պարզաբանված չեն՝ գյուտերին լրացուցիչ իրավական պահպանություն տրամադրման պայմանները, «ծառայողական» գյուտերի հեղինակների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև՝ առկա են խնդիրներ գյուտերի փորձաքննության ընթացակարգերի հետ կապված:<br>Գործող օրենքով արդյունաբերական նմուշների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են գյուտերի և օգտակար մոդելների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքով, որը, հաշվի առնելով այս օբյեկտների առանձնահատկությունները, օրենքի կիրառման համար որոշակի խնդիրներ է առաջացնում, բացի այդ միջազգային պրակտիկայում նշված օբյեկտների հետ կապված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են առանձին օրենքներով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով կնախատեսվի երրորդ անձանց կողմից գործող արտոնագրի դեմ առարկությունների ներկայացման ընթացակարգը, կներդրվի միջազգային լավագույն փորձին համապատասխան գյուտերի փորձաքննության կատարելագործված ընթացակարգ, կհստակեցվեն գյուտերին լրացուցիչ իրավական պահպանության տրամադրման պայմանները, «ծառայողական» գյուտերի հեղինակների իրավունքները և պարտականությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի և «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքի նախագծերի մշակում:<br>**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում գյուտերի և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության առավել կատարելագործված համակարգերի ներդրում: |

| | |
|---|---|
| 23. | **«Հայաստանի Հանրապետությունում նորարարության զարգացման ռազմավարությանը և ճանապարհային քարտեզին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրում Հայաստանի Հանրապետությունում ստեղծարար բիզնեսների և տեխնոլոգական զարգացմանն առնչվող դրույթների շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում մշակելու ՀՀ-ում նորարարության զարգացման նոր ռազմավարություն և ճանապարհային քարտեզ, որով կնախանշվեն ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները և ռազմավարական մոտեցումները, նպատակներն, խնդիրները և իրականացվելիք գործողությունները:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգին, որի ներքո իրականացվել են ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ:<br>Ներկայում անհրաժեշտություն է առաջացել մշակելու ոլորտի զարգացման նոր ռազմավարություն և ճանապարհային քարտեզ, որոնք կանդրադառնան գիտության արդյունքների առևտրայնացման խթանման,կրթություն-գիտություն-տնտեսություն կապերի ամրապնդման, ինովացիոն գործունեության խթանման նախաձեռնությունների ինստիտուցիոնալ հիմքերի զարգացման, ինովացիոն ենթակառույցների ձևավորման ու զարգացման, ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացման և ոլորտի զարգացմանն ուղղված այլ կարևոր հարցերի:<br>Այս ուղղությամբ արդեն իսկ ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ զարգացմանը» ծրագրի շրջանակում Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության տեխնիկական աջակցությամբ ներգրավված տեղական և միջազգային փորձագետների հետ համատեղ մեկնարկել են նորարարության զարգացման նոր ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ 2018 թվականին մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ-ում նորարարության զարգացման նոր ռազմավարությունն ու ճանապարհային քարտեզը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից է գիտելիքահենք տնտեսության ձևավորումը և այդ նպատակով ինովացիոն գործունեության խթանումը՝ որպես տեխնոլոգիական առաջընթացի և միջազգայնորեն մրցունակ տնտեսության զարգացման հիմք:<br>ՀՀ-ում նորարարության զարգացման նոր ռազմավարությունն ու դրանից բխող ճանապարհային քարտեզով կնախանշվեն ՀՀ-ում ինովացիոն ոլորտի զարգացման հետագա ուղղությունները, մոտեցումներն ու գործառնական քայլերը:<br>**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում ինովացիոն ոլորտի հետագա զարգացումը խթանելու նպատակով պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու գործողություններն ամրագրող իրավական հիմքի ձևավորում: |
| 24. | **«Զբոսաշրջային ծառայությունների որակավորման կարգերն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային գրավիչ երկրի հեղինակության շարունակական ամրապնդման գործընթացում բնագավառի դինամիկ զարգա- |

| | |
|---|---|
| | ցումներին համահունչ կարգավորման միջավայր ունենալը հաջողության երաշխիքներից է: Այս տեսակետից ոլորտի օրենսդրական դաշտի բարելավումը նպատակով նախատեսվում է «Զբոսաշրջային ծառայությունների որակավորման կարգերն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի պահանջը բխում է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Զբոսաշրջության բնագավառի զարգացումներին համընթաց անհրաժեշտություն է առաջանում ոլորտում կիրառվող մի շարք հասկացությունների արդիականացման և հստակեցման, սպառողի իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու և, այդպիսով, երկրի զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը բարձրացնելու նպատակով ստանդարտների ներդրման և կամավորության սկզբունքով հյուր-նոցային տնտեսության օբյեկտների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտ-ների, զբոսավարների, ուղեկցորդների, ռեստորանների և զբոսաշրջային ավտոբուսների որակա-վորման, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորման, ծառայությունների նկատմամբ պահանջների պահպանման մեխանիզմների ապահովման:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծից բխող կարգերն ու չափանիշները սահմանող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Զբոսաշրջության բնագավառում մատուցվող ծառայությունների որակավորման կարգերի ու չափանիշների սահմանում:<br>**3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է համարժեք իրավական կարգավորման միջոցով ապահովել զբոսաշրջային ծառայությունների որակի ամրապնդում ու բարձրացում, զբոսաշրջային ծառայությունների ընտրության գործում սպառողին աջակցություն, համաշխարհային ու ներքին շուկայում Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի դրական նկարագրի ամրապնդում ու շարունակական բարձրացում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | |
| 25. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 944-Ն որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթի 13-րդ խմբագրության 9-րդ հրատարակությամբ /2016 թ. փետրվար/ սահմանված նոր ավիացիոն անվտանգության ընթացակարգերին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2016 թ. ընթացքում ԵԿԱԿ կողմից 13-րդ խմբագրության 9-րդ հրատարակությամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել Եվրոմիության կողմից «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթում, սահմանվել են ավիացիոն անվտանգության ընթացակարգերի նոր ստանդարտներ:<br>Վերը նշված լրացումների և փոփոխությունների կիրառման ուշացումը կարող է ազդել ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման վրա և այսօր |

| | |
|---|---|
| | ավիացիոն անվտանգության առումով վերը նշված փոփոխությունների և լրացումների կիրառումը անհրաժեշտ է:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության բնագավառում իրականացվող քաղաքականության նպատակն է ապահովել ՀՀ օդանավակայաններում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումների համապատասխանությունը ԻԿԱՕ և ԵԿԱԿ ստանդարտներին, որի ապահովման նպատակով ԻԿԱՕ և ԵԿԱԿ կողմից նոր ընդունված ստանդարտները ներդրվում են ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության աշխատանքները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերում և գործնական կիրառում ստանում ՀՀ օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ընթացակարգերում:<br>**4. Կարգավորման առարկան**<br>Վերը նշված փոփոխությունների և լրացումների ընդունումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում նոր ավիացիոն անվտանգության ընթացակարգերը կանոնակարգել և համապատասխանեցնել Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի N 17՝ «Անվտանգության» հավելվածով և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթով սահմանված նոր ստանդարտներին:<br>**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունման դեպքում կիստակեցվեն ավիացիոն անվտանգության ընթացակարգերն և հնարավորություն կընձեռնվի ավելի բարձր մակարդակի հասցնել օդանավակայանում ավիացիոն անվտանգության հսկողության գործառույթների իրականացումը: |
| 26. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման, վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքների իրականացման ընթացակարգերի պարզեցման, վերահսկողության մեխանիզմների արդիականացման, ինչպես նաև Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) հրապարակած միջազգային ստանդարտներին, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (Չիկագոյի կոնվենցիա) 18-րդ հավելվածի դրույթներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:<br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դեպի Հայաստանի Հանրապետություն կամ Հայաստանի Հանրապետությունից դեպի դուրս վտանգավոր համարվող, սակայն օդային փոխադրման համար չարգելված բեռների օդային փոխադրման, Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումներն սպասարկող (փաթեթավորող և փաստաթղթային ձևակերպումներ իրականացնող) կազմակերպություններին թույլտվություն տալու գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշմամբ, որի իրավական հիմքը հանդիսանում է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա) 37-րդ հոդվածը, կոնվենցիայի «Օդով վտանգավոր բեռների անվտանգ փոխադրում» 18-րդ հավելվածը (այսուհետ՝ N 18 հավելված) և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) ԴՈԿ 9284 ԱՆ/905 «Օդով վտանգավոր բեռների անվտանգ փոխադրման տեխնիկական հրահանգը» (այսուհետ՝ տեխնիկական հրահանգ): |

| | |
|---|---|
| | Չիկագոյի կոնվենցիայի N 18 հավելվածում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք ենթակա են ՀՀ օրենսդրության մեջ պարտադիր ներդրման և կիրառման: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում կատարելու համապատասխան փոփոխություններ վտանգավոր համարվող բեռների փոխադրման, սպասարկման աշխատանքները կանոնակարգող համապատասխան իրավական ակտում՝ ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մեջ:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մի շարք դրույթներ չեն համապատասխանում Չիկագոյի կոնվենցիայի N 18 հավելվածում կատարված փոփոխություններին: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել վերահսկողական մեխանիզմները և պարզեցնել վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման, վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքների իրականացման ընթացակարգերը:<br>**4. Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում կհստակեցվեն դեպի Հայաստանի Հանրապետություն կամ Հայաստանի Հանրապետությունից դեպի դուրս վտանգավոր համարվող, սակայն օդային փոխադրման համար չարգելված բեռների օդային փոխադրման, Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում վտանգավոր բեռների վերգետնյա սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումներն սպասարկող (փաթեթավորող և փաստաթղթային ձևակերպումներ իրականացնող) կազմակերպություններին թույլտվություն տալու գործընթացի հետ կապված հարաբերությունները:<br>**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու համար առաջարկվող միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշումը ամբողջապես կհամապատասխանի ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթներին, ինչպես նաև կպարզեցվեն վարչարարական ընթացակարգերը: |
| 27. | **Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 16-ի N 249 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշման ընդունումը հնարավորություն կտա հստակեցնել քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականության սկզբունքները և կապահովի դրանց համապատասխանությունը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) «Ընթացակարգերի պարզեցում» N 9-րդ հավելվածով սահմանված չափորոշիչներին:<br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Օդային փոխադրումներին առնչվող ընթացակարգերի պարզեցման ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 249 որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի մարտի 16-ին, այն համապատասխանել է ԻԿԱՕ-ի կողմից սահմանված չափանիշներին, սակայն 9-րդ՝ «Ընթացակարգերի պարզեցում» հավելվածում 2016 թվականին 14-րդ խմբագրությամբ սահմանվել են նոր չափորոշիչներ՝ կապված օդանավերի թռիչքների թույլտվությունների ձևակերպման, օդանավերի ժամանման և մեկնման, օդանավակայաններում օդանավերի և ուղևորների սպասարկման համար անհրաժեշտ ծառայությունների և տեխնիկական միջոցների առկայության, ուղևորների և բեռների սահմանային, մաքսային, առողջապահական, սանիտարակարանտինային հսկողությունների, օդանավերի անձնակազմերի վկայականների, ուղևորային փաստաթղթերի ձևակերպումների, մուտքի իրավունք |

| | |
|---|---|
| | չունեցող անձանց հետ վարվելու կարգի, փոխադրվող ուղևորների ուղևորային մանիֆեստների և փոխադրման ընդունված բեռների բեռնային մանիֆեստների ձևաթղթերի, օդանավի անձնակազմի անդամների գլխավոր հայտարարագրերի ձևաթղթերի, օդանավում հիվանդ ուղևորների առկայության մասին ձևաթղթերի լրացման և ժամանման օդանավակայանում ներկայացման կարգի, օդանավերի դեզինֆեկցիայի և դեզինսեկցիայի միջոցառումներին ներկայացվող պահանջների հետ:<br>Նշված փոփոխությունների և լրացումների կիրառմամբ ՀՀ օդանավակայաններում իրականացվող ուղևորների սպասարկման ընթացակարգերը կհամապատասխանեցվեն ԻԿԱՕ-ի կողմից սահմանված նոր չափորոշիչներին:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կտա համապատասխանեցնելու Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ԻԿԱՕ)  կողմից նոր ընդունված չափորոշիչներին և ավելի բարձրացնել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում կիրառվող ուղևորների սպասարկման աշխատանքների անհրաժեշտ մակարդակը:<br>**4. Կարգավորման առարկան**<br>Նշված փոփոխությունների և լրացումների ընդունումը հնարավորություն կտա կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ուղևորների սպասարկման աշխատանքները բոլոր փուլերում, համապատասխանեցնելով դրանք ԻԿԱՕ-ի չափորոշիչներին:<br>**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունմամբ հստակ կամրագրվեն ուղևորների սպասարկման բոլոր փուլերի ընթացքում կիրառվող ընթացակարգերը և դրանց գործնական իրականացման միջոցով կդյուրացվեն օդային փոխադրումների ընթացքում ուղևորների սպասարկումներին առնչվող գործընթացները, դրանք համապատասխանեցնելով ԻԿԱՕ անդամ երկրներում գործող ներկայիս ընթացակարգերին: |
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** |
| 28. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ  լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Առաջարկվում է պարզեցնել պետական գույքի օտարման ընթացակարգը՝ նվազագույն վարչարարության ապահովմամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման 3-րդ կետով սահմանվել է, որ պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի (բացառությամբ մինչև հինգ մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի) օտարման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում ընդունելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա հնարավոր ազդեցության (եկամուտների կամ ծախսերի փոփոխության) մասին կարծիք, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը՝ գույքի օտարման ձևի և գների հիմնավորվածության մասին եզրակացություն: Օտարման ընթացագարգի պարզեցման համար անհրաժեշտ է սահմանել նաև պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման վերաբերյալ սկզբունքները: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է պարզեցնել պետական գույքի օտարման ընթացակարգերը և նվազեցնել վարչարարությունը, սահմանելով պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված օտարման ենթակա գույքի վերաբերյալ սկզբունքերը և պայմանները, ինչպես նաև ապահովել վարչարարության կրճատումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական գույքի օտարման գործընթացի պարզեցում՝ նվազագույն վարչարարության ապահովմամբ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կպարզեցվի օտարման գործընթացը՝ նվազագույն վարչա-րարության ապահովմամբ, ինչպես նաև օտարման գործընթացի պահանջների արդիականացում: |
| 29. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարման անհաժեշտությունը բխում է 2017 թվականի մարտի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 954, 955, 966-րդ հոդվածներում կատարված փոփոխությունների և լրացումների պահանջներով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող որոշմամբ սահմանվում են 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերով հավաստված իրավունքների մրցութային կարգով հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացի առանձնահատկությունները, որի նպատակն է ընդլայնել հավատարմագրային կառավարման պրակտիկան, պետական բաժնեմասով ընկերություններում ներդրումներ ներգրավել և բարելավել դրանց կառավարումը մասնագիտացված կազմակերպությունների (անձանց) աշխատանքի շնորհիվ: Որոշմամբ, մասնավորապես, պահանջվում է որպեսզի մրցույթի մասնակցող կազմակերպությունները (հավանական հավատարմագրային կառավարիչները) ներկայացնեն իրենց հավատարմագրային կառավարման ծրագրերը, որոնք պետք է ներառեն ներդրումային բաղադրիչ, կազմակերպության զարգացման համար իրականացվելիք միջոցառումներ (ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշմամբ հաստատված կարգի կետ 19): Ընդ որում, և' ներդրումները, և' միջոցառումները պետք է ներկայացվեն տարիների կտրվածքով, կատարման հստակ ժամկետներով և ֆինանսավորման աղբյուրներով:<br>Նախագծով առաջարկվում է 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարումն հանձնել նաև ուղղակի ձևով, սահմանելով համապատասխան պահանջներ:<br>Որոշմամբ սահմանված են բավականին խիստ պայմաններ, որոնց կատարման համար անհրաժեշտ է վստահություն ունենալ պայմանագրի երկարաժամկետ բնույթի մասին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացված նախագծով առաջարկվում է երկարաձգել գույքի հավատարմագրային կառա-վարման պայմանագրի առավելագույն ժամկետը՝ հնարավորություն տալով իրականացնելու ավելի երկարաժամկետ ներդրումներ:<br>Նախագծով առաջարկվող լուծումների արդյունքում հնարավոր է նաև որոշակի լուծումներ տալ չօգտագործվող գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելու խնդրին, որն առաջադրված է ՀՀ կառավարության կողմից, պետական չօգտագործվող գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետական գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացի կանոնակարգում՝ սահմանելով նաև ուղղակի ձևով հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքերը և պահանջները, ինչպես նաև ժամկետների երկարաձգում և կանխատեսելի արդյունքների ձեռքբերում: |
| 30. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ կատարվող փոփոխությունը պայմանավորված է պետական գույքի հաշվառման համակարգի արդիականացնելու անհրաժեշտությամբ:<br>**1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական գույքի հաշվառման և անշարժ գույքի գրանցամատյանի վարման համակարգը արդիականացնելու նպատակով համապատասխան մասնագիտական կառույցների հետ քննարկվել են հաշվառման փաստաթղթային համակարգից էլեկտրոնային ինտեգրացված համակարգին անցում կատարելու հնարավորությունները: Ընդ որում Վարչության կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա մասնագիտական կառույցները հաշվարկել են ծրագրի ներդրման հետ կապված ծախսերը:<br>Համակարգի ներդրման շնորհիվ ոչ միայն կբարելավվի հաշվառման օպերատիվությունը և կբարձրանա հավաստիության մակարդակը, այլ նաև կավելանա համակարգից օգտվողների թվաքանակը և այն կդառնա ավելի մատչելի և դինամիկ: Հաշվառման համակարգը հնարավորություն կընձեռնի հաշվառման օբյեկտների վերաբերյալ ստանալ նաև պատկերային տեղեկություններ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացված նախագծով նախատեսվում է պետական գույքի հաշվառման համակարգը արդիականացել՝ հաշվառման փաստաթղթային համակարգից անցում կատարել էլեկտրոնային ինտեգրացված համակարգին, որը հնարավորություն կընձեռի տարբեր մարմիններին մուտք գործել համակարգ, փոխանցել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն: Օրինակ, լուսանկարներ, տեսանյութեր և այլն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունմամբ՝ արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ կկատարելագործվեն պետական սեփականություն համարվող գույքի հաշվառման և գրանցամատյանի վարման համակարգը՝ պետական կառավարչական և պետական այլ հիմնարկների հաշվեկշռում գտնվող գույքի ամբողջական հաշվառմամբ, ինչպես նաև հաշվառման փաստաթղթային համակարգից անցում կկատարվի էլեկտրոնային ինտեգրացված համակարգին: |
| | **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն** |
| 31. | **«Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թվականին մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների գործնական փուլից ի վեր Հայաստանի Հանրապետությունում համայնքների խոշորացման գործընթացում ներգրավվել է թվով 466 համայնք, ինչի արդյունքում ձևավորվել է թվով 52 համայնք:<br>Խոշորացման արդյունքում ձևավորվել է առավել մրցակցային ավազանի, հաստիքների |

| | |
|---|---|
| | վերաբաշխում, ինչի արդյունքում կրկնվող հաստիքները (աշխատակազմի քարտուղար, ֆինանսիստ, հաշվապահ և այլն) փոխարինվել են ծառայություններ մատուցող հաստիքներով: ՀՀ կառավարության 2017 թ.-ի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 1.2.2.1 կետի «ա» ենթակետով նախատեսվում է 2017-2019 թվականների ընթացքում շարունակել վարչատարածքային բարեփոխումները, ավարտել համայնքների խոշորացման գործընթացը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համայնքների խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվելու է ՀՀ օրենքների նախագծային փաթեթ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Փաթեթում ներառվող «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում սահմանվելու են խոշորացման արդյունքում ձևավորվող համայնքների կազմերը, անվանումները, համայնքային կենտրոնները, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ նոր ձևավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և լիազորությունների դադարման ու ստանձնման ժամկետները, այդ համայնքների կարգավիճակի փոփոխության վերաբերյալ դրույթներ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է 2018 թվականին շարունակել համայնքների միավորման գործընթացը, ինչը կհանդիսանա լիազորությունների հետագա ապակենտրոնացման, բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացման, որակի և մատչելիության բարձրացման հիմք, կարևորագույն նախապայման կհանդիսանա և կնպաստի համայնքների կողմից ֆինանսական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը: |
| 32. | **«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք 57-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկելու ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով լիազոր մարմնի կայացրած ցանկացած բացասական որոշում՝ դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում:<br>Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել. վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, իսկ պարտավորեցման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին իրազեկվելու պահից:<br>Ուստի անհրաժեշտ է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում՝ ՀՀ-ում ապաստանի տրամադրումը մերժելու վերաբերյալ միգրացիայի հարցերով պետական լիազոր մարմնի որոշման դատական կարգով բողոքարկման ժամկետը համապատասխանեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված՝ հայցը դատարան ներկայացնելու ժամկետին:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Փախստականների և ապաստանի մասին»ՀՀ օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի միջև առկա է հակասություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրը ենթակա է լուծման «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու եղանակով: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Սահմանել, որ ապաստանի հայցի վերաբերյալ լիազոր մարմնի ընդունած բացասական որոշումը 30 օրյա ժամկետում բողոքարկման փոխարեն կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում կվերացվի «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի միջև առկա հակասությունը: |
| 33. | **«Համայնքային ծառայության վերապատրաստման համակարգի բարեփոխման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացվում է առնվազն 3 տարին մեկ անգամ: Ներկայումս գործող վերապատրաստման ծրագրերում ներառված են ընդհանուր թեմաներ, որոնց համաձայն իրականացվող վերապատրաստումները չեն ապահովում համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման կարիքը: Անհրաժեշտ է կազմել նոր՝ կոնկրետ մասնագիտական թեմաներ պարունակող ծրագրեր և վերապատ-րաստումն իրականացնել ոչ թե 3 տարին մեկ, այլ ըստ անհրաժեշտության:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է վերապատրաստման ծրագրերը մշակել համայնքապետարանի աշխատա-կազմի կողմից իրականացվող գործառույթների (ըստ ոլորտների) համաձայն՝ շեշտադրելով ներդրումային ծրագրերի վերլուծության մեթոդոլոգիան, ինչպես նաև համայնքի տարածքում գործարար միջավայրի բարելավմանը և տուրիզմի խթանմանն ուղղված միջավայրի ձևավորման վերաբերող թեմաների անհրաժեշտությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախատեսվում է վերապատրաստման ծրագրերը մշակել համայնքապետարանի աշխատա-կազմի կողմից իրականացվող գործառույթների (ըստ ոլորտների) համաձայն՝ շեշտադրելով ներդրումային ծրագրերի վերլուծության մեթոդոլոգիան, ինչպես նաև համայնքի տարածքում գործարար միջավայրի բարելավմանը և տուրիզմի խթանմանն ուղղված միջավայրի ձևավորման վերաբերող թեմաների անհրաժեշտությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համայնքային ծառայողների վերապատրաստման միջոցով համայնքային ծառայողների կոնկրետ մասնագիտական կարողությունների կատարելագործում, որը կապահովի համայնք-ների զարգացման ռազմավարական խնդիրների իրականացումը: |
| 34. | **«Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող, թերհամալրված դպրոցներում բարե-փոխումներ իրականացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարզային ենթակայության կրթական հաստատությունների բարեփոխումների նպատակն ուսումնական հաստատություններին հատկացվող բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության և նպատակայնության բարձրացումն է, ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպական ցուցանիշների (սովորող-մանկավարժ հարաբերակցություն, ուսումնական խմբերի միջին խտություն, մանկավարժների միջին ծանրաբեռնվածություն և այլն) և կրթության որակի բարելավումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մարզային ենթակայության կրթական համակարգի ֆինանսատնտեսական վիճակի և ծառայությունների մատուցման որակի բարձրացման պոտենցիալի վերլուծության, շահագրգիռ մարմինների հետ մասնագիտական քննարկումների արդյունքում ակնկալվում է ուսումնական հաստատություններում կրթության որակի, մատչելիության և ընդգրկվածության մակարդակի բարձրացում: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացված որոշման նախագծով նախատեսվում է վերը նշված միջոցառումն ամրագրել ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ցանկում՝ սահմանված ժամկետում կատարումն ապահովելու համար:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ապահովել փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող, թերհամալրված դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացումը և ՀՀ պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը: |
| 35. | **«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին» հավանություն տալու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 1.2 բաժնի 4-րդ կետի 2-րդ ենթակետի կատարմամբ և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 49 արձանագրային որոշման դրույթներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Արագածոտնի մարզում ներկայումս աղբահանության ծառայությունները հեռու են բավարար լինելուց և գործող աղբահանության համակարգը բնապահպանական, առողջապահական, սանիտարահիգենիկ առումներով խիստ խոցելի է և կարիք ունի բարելավման:<br>Աղբահանության ծառայությունը հասանելի չէ համայնքի ողջ բնակչությանը: Խնդիրն առավել լուրջ է գյուղական համայնքներում: Արդյունքում՝ կենցաղային աղբը համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում հեռացնելու փոխարեն, անկանոն կերպով թափվում է համայնքի մերձակա տարածքներում կամ նույնիսկ ոռոգման ջրանցքներում: Դրա հետ մեկտեղ, անմխիթար վիճակ է տիրում նաև աղբի հեռացման վայրերում՝ աղբավայրերում և աղբանոցներում, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ:<br>Ելնելով վերգրյալից, մարզի աղբահանության ենթահամակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտություն է առաջանում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ Արագածոտնի մարզի համար մշակել հայեցակարգ, որը կնախատեսի ԿԿԹԿ միջազգային չափանիշները բավարարող ծախսարդյունավետ, բնապահպանական և սանիտարահիգենիկ առումով պատշաճ ենթահամակարգ, որի ծառայություններում ներգրավված կլինի մարզի ողջ բնակչությունը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայեցակարգով նախատեսվում է նպաստել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի կայացման աշխատանքներին, որը հիմնադրույթային փաստաթուղթ կծառայի գործադիր իշխանության տարածքային ստորաբաժանումների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ մարզի աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրների կարգավորման համար:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունմամբ ակնկալվում է հաշվի առնելով ՀՀ Արագածոտնի մարզի սոցիալ-տնտեսական, բնապահպանական, կոմունալ-ենթակառուցվածքային խնդիրներն ու ժողովրդագրական պատկերը, բարելավել մարզի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը: |

| | |
|---|---|
| 36. | **«Հյուրանոցային հարկի մասին» և «Հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-ին հոդվածներով հյուրանոցային հարկը սահմանված է որպես տեղական հարկատեսակ: Սակայն, այն բացակայում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտում՝ «Հարկային օրենսգրքում»:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է մշակել «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծով կկարգավորվեն հյուրանոցային հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, կսահմանվեն Հայաստանի Հանրապետությունում հյուրանոցային հարկ վճարողների շրջանակները, հյուրանոցային հարկով հարկվող օբյեկտն ու հարկման բազան, հյուրանոցային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման ժամկետներն ու կարգը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հյուրանոցային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կհանգեցնի տեղական նոր հարկատեսակի ներմուծմանը, համայնքային բյուջեների եկամտային մասի շարունակական աճի ապահովմանը և կնպաստի համայնքներում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը: |
| 37. | **«Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանվել է 2006 թ. սկզբին և անցած տասնամյակի ընթացքում, հատկապես էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կտրուկ աճով, փաստաթղթերը և տիպերի և բովանդակային առումով լուրջ փոփոխություն են կրել, շատ փաստաթղթեր այլևս չեն ստեղծվում, դրանց փոխարեն հանդես են եկել նորերը: Անհրաժեշտություն է առաջացել նաև փոփոխել մի շարք փաստաթղթերի պահպանության ժամկետները, մի մասինը ավելացնել, մի մասին պակասեցնել:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի նոր ցանկ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ կհստակեցվի և նոր ժամանակի պահանջներին կհամապատասխանացվի պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրարկումը կապահովի արդի պայմաններում ստեղծվող նոր տիպի փաստաթղթերով, այդ թվում էլեկտրոնային փաստաթղթերով Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրումը: |

| | |
|---|---|
| 38. | **«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին» հավանություն տալու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 1.2 բաժնի 4-րդ կետի 2-րդ ենթակետի կատարմամբ և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 49 արձանագրային որոշման դրույթներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Տավուշի մարզում ներկայումս աղբահանության ծառայություններրը հեռու են բավարար լինելուց: Աղբահանության ծառայությունը հասանելի չէ համայնքի ողջ բնակչությանը: Խնդիրն առավել լուրջ է գյուղական համայնքներում: Արդյունքում՝ կենցաղային աղբը համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում հեռացնելու փոխարեն, անկանոն կերպով թափվում է համայնքի մերձակա տարածքներում կամ նույնիսկ ոռոգման ջրանցքներում: Դրա հետ մեկտեղ, անմխիթար վիճակ է տիրում նաև աղբի հեռացման վայրերում՝ աղբավայրերում և աղբանոցներում, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ:<br>Ելնելով վերգրյալից, մարզի աղբահանության ենթահամակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտություն է առաջանում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ Տավուշի մարզի համար մշակել հայեցակարգ, որը կնախատեսի ԿԿԹԿ միջազգային չափանիշները բավարարող ծախսարդյունավետ, բնապահպանական և սանիտարահիգենիկ առումով պատշաճ ենթահամակարգ, որի ծառայություններում ներգրավված կլինի մարզի ողջ բնակչությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայեցակարգով նախատեսվում է նպաստել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի կայացման աշխատանքներին, որը հիմնադրույթային փաստաթուղթ կծառայի գործադիր իշխանության տարածքային ստորաբաժանումների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ մարզի աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրների կարգավորման համար:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունմամբ ակնկալվում է հաշվի առնելով ՀՀ Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական, բնապահպանական, կոմունալ-ենթակառուցվածքային խնդիրներն ու ժողովրդագրական պատկերը, բարելավել մարզի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը: |
| 39. | **«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ըստ գործող «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթների դոտացիաները բաղկացած են երկու մասից՝ «Ա» և «Բ»: Այդ մասերից յուրաքանչյուրը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների: «Ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով, «Բ» մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բյուջետային ապահովվածու- |

| | |
|---|---|
| | թյան գործակցի: Յուրաքանչյուր համայնքի դոտացիաների հաշվարկի համար, որպես բազային անփոփոխելի գումար համարվում է ՀՀ 2016 թ. պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարը և հաշվարկվող տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի ու 2016 թվականին հատկացված դոտացիայի ընդհանուր գումարի տարբերության չափով հավելաճի գումարը:<br>Գործող օրենքում բացակայում են գործոններ, որոնք կնպաստեն համահարթեցման դոտացիաների առավել արդարացի բաշխմանը և կխթանեն համայնքներում պետության կողմից վարվող քաղաքականությանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքի նախագծով սահմանվելու է դոտացիաների հաշվարկման հիմքում դրվող բազմագործոն համակարգ, որը կնպաստի համայնքներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների առավել արդարացի բաշխմանը և կբխի համայնքների զարգացմանն ուղղված պետության կողմից վարվող քաղաքականությունից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Վերոնշյալ խնդիրները կարգավորելու նպատակով նախատեսվում է մշակել և մինչև դեկտեմբերի 1-ին տասնօրյակ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել «Ֆինանսական համա-հարթեցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի նախագծի ընդունմամբ կկարգավորվի համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը: |
| 40. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականից իրականացվող վարչատարածքային փոփոխությունների արդյունքում կազմավորվել և ձևավորվել են նոր վարչատարածքային միավորներ՝ խոշորացված բազմաբնակավայր համայնքներ: Բազմաբնակավայր համայնքներն իրենց վարչական սահմաններում ընդգրկում են միավորված նախկին համայնքների տարածքները, հետևաբար և ենթակառուցվածքները: Հայաստանի Հանրապետությունում ներհամայնքային ճանապարհների պահպանության և շահագործման իրավասությունը վերապահված է համայնքների ղեկավարներին, իսկ միջհամայնքային ճանապարհների դեպքում՝ տարածքային կառավարման մարմիններին, այն է մարզպետարաններին: Համայնքների խոշորացման արդյունքում նախկին միջհամայնքային ճանապարհների կարգավիճակը վերաձևակերպվում է ներհամայնքային կարգավիճակի, քանի որ միավորվող համայնքները խոշորացված համայնքի կազմում հանդես են գալիս բնակավայրի կարգավիճակով, հետևաբար, բնակավայրերն իրար միացնող ճանապարհները համարվում են ներհամայնքային ճանապարհներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, առաջարկվում է կազմակերպել և իրականացնել միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանության և շահագործման լիազորության ապակենտրոնացում:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Ներհամայնքային (նախկինում՝ միջհամայնքային) ճանապարհների պահպանության ու շահագործման իրավասությունը համապատասխան մարզպետարաններից նախատեսվում է փոխանցել համապատասխան խոշորացված բազմաբնակավայր համայնքների ղեկավարներին: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միավորված համայնքների միջբնակավայրային ճանապարհների պահպանման և շահագործման լիազորությունները կպատվիրակվեն համայնքի ղեկավարին: |
| **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն** | |
| 41. | **«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2019 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2019 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը կապված է լճի և դրա ջրհավաք ավազանի ներկայիս վիճակի բարելավման խնդրի հետ, որի համար անհրաժեշտ է ապահովել Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանությունը, լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի բնական պաշարների կայուն օգտագործմանն ուղղված 2019 թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարումը:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը»: Տարեկան ծրագրի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12, 13, 14 հոդվածների պահանջներից և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակներից ու խնդիրներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս առաջնային են Սևանա լճի մակարդակի բարձրացման և նրա ջրհավաք ավազանի բնական պաշարների պահպանության և կառավարման հարցերը, որոնք 2001 թվականից դրվել են օրենսդրական հիմքի վրա և կարգավորվում են «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 876-Ն որոշմամբ:<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2019 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի կարգավորման նպատակն է՝ Սևանա լճի, որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի պահպանումը, էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգերի բնականոն ներդաշնակ զարգացմանն ու կայուն օգտագործմանն ուղղված 2019 թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարման ապահովումը: Օրենքներում ամրագրված են Սևանի լճային էկոհամակարգի կայունության, ջրի դրական հաշվեկշռի ապահովման և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման դրույթները, որոնց կատարման անհրաժեշտ պայմաններից է՝ լճի մակարդակի բարձրացումն առնվազն 6 մետրով: Լճից բաց թողնված ջրի քանակը յուրաքանչյուր տարի հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումով և համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան |

ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանվել է մինչև 170.0 մլն.խ.մետր չափաքանակը:
Միաժամանակ տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքերում կառավարությունը «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:
Ներկայումս (10.05.2017 թ. դրությամբ) Սևանա լճի մակարդակը 1900.76մ է, ինչի շնորհիվ առաջացել են հիմնախնդիրներ, կապված ափամերձ անտառապատ ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների իրականացման հետ: Ջրի տակ մնացող օրգանական նյութերի մեծ զանգվածները վտանգում են լճի վիճակը՝ ջրի աղտոտման տեսակետից: Լուրջ խնդիրներ են առաջացնում նաև ջրի տակ մնացած բազմաթիվ շինությունները և ենթակառուցվածքները: Միաժամանակ ջրի բարձր որակն ապահովելու համար կարևոր է կտրուկ բարելավել վիճակը՝ կապված մեծ քանակի չմաքրված կեղտաջրերի լիճ թափվելու հետ: Ներկայումս լճի շրջակայքում առկա բոլոր մաքրման կայանները չեն գործում:
Սևանա լճի ձկնաշխարհին աչքի է ընկել ինքնատիպությամբ: Սակայն լճի մակարդակի իջեցումը, կենսապաշարների գերօգտագործումը և դրանց կանոնավոր մոնիթորինգի բացակայությունը (մինչև 2004 թվականը) նպաստեցին լճի կենսաբազմազանության փոփոխմանը, ձկնապաշարների կտրուկ անկմանը՝ էնդեմիկ ձկնատեսակների, հատկապես Սևանի իշխանի ենթատեսակների անհետացմանը և սիգ ձկնատեսակի արդյունագործական ծավալների նվազեցմանը: Հայաստանի Կարմիր գրքի /2010 թ./ մեջ են գրանցվել Սևանի իշխանը, Սևանի կողակը և Սևանի բեղլուն: Ձկնատեսակների թվաքանակի կրճատման հետևանքով լճային էկոհամակարգում տեղի է ունենում օրգանական նյութերի ինտենսիվ կուտակում և ճահճացմանը հանգեցնող գործընթացների արագացում, ինչը ևս բացասաբար է անդրադառնում Սևանի ջրային էկոհամակարգի վրա: Ներկայումս հիմնական խնդիրը լճում բնական և արհեստական եղանակներով էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի մեծացումն է մինչև կայուն ու կենսունակ աստիճանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սևանա լճի հիմնախնդրի լուծումը Հայաստանի բնապահպանական քաղաքականության կարևորագույն մասն է: Հիմնական ջանքերը կենտրոնանում են հետևյալ խնդիրների լուծման վրա՝ լճի մակարդակի շարունակական բարձրացում, Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման կանխարգելում, փաստացի ջրօգտագործման պայմանների նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործում, լճի ջրհավաք ավազանի ջրի որակի բարելավում, կենսաբանական ռեսուրսների պահպանում և վերականգնում, Սևանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման հետ կապված խնդիրների լուծում, թափոնների կառավարման կատարելագործում:

**2. Կարգավորման առարկան**

«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2018 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի կարգավորման նպատակն է՝ Սևանա լճի, որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի պահպանումը, էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգերի բնականոն ներդաշնակ զարգացմանն ու կայուն օգտագործմանն ուղղված 2019 թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարման ապահովումը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

- Սևանա լճի մակարդակի բարձրացում,
- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն և կենսապաշարների կայուն օգտագործման բարելավում,

| | |
|---|---|
| | • ափամերձ ջրածածկ տարածքներից անտառաշերտերի, բազմաթիվ շինությունների և ենթակառուցվածքների մաքրում,<br>• ռեկրեացիայի արդյունավետ զարգացում,<br>• կենցաղային թափոնների կառավարման բարելավում,<br>• կառավարման համակարգի բարելավում: |
| 42. | **« Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված է ընդերքօգտագործողների կողմից խախտված հողերի (այդ թվում նաև ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ հանդիսացող լցակույտերի մակերեսների) վերականգնման նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումների կատարումը:<br>2016 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-161-Ն օրենքը, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման հետ կապված նոր ընթացակարգեր: Օրենքով սահմանվում է, որ ընդերքօգտագործողներն օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության շրջանակներում կարող են իրականացնել նաև ընդերքօգտագործման թափոնների վերամշակում: Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում հնարավոր են արտադրական լցակույտերով զբաղեցրած տարածքների մակերեսների և, հետևաբար, ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների փոփոխություններ: Դա իր հերթին կհանգեցնի ընդերքօգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման դրույթների համապատասխան կատարվող հատկացումների փոփոխությանը: Մինչև 2017 թվականի մայիսի 4-ը օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների համար թափոնների վերամշակման, թափոններով զբաղեցրած տարածքների փոփոխության դեպքում կառաջանան կարգավորում պահանջող իրավահարաբերություններ: Հետևաբար, անհրաժեշտ է կարգավորել վերոնշյալ իրավահա-բաբերությունները՝ նախատեսելով ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների իրագործման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարների վերահաշվարկման մեխանիզմ:<br>Միաժամանակ, նախատեսվում է մշակել իրավական հիմքեր և ներդնել մեխանիզմներ, որոնք թույլ կտան օգտագործել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից հատկացված գումարները խախտված տարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացման համար (օրինակ՝ ռեկրեացիոն գոտիների, ձկնաբուծության զարգացում և այլն):<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման և ընդունման արդյունքում կկանոնակարգվեն մի շարք օրենսդրական բացեր, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ և նպատակային օգտագործել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում կուտակվող գումարները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2017 թ.-ին մշակվել է «Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, ինչը ստեղծել է օրենսդրական նախադրյալներ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ձևավորման մեխանիզմների վերանայման, դրամագլխի գումարների նպատակային օգտագործման նոր ուղղությունների մշակման համար: Դրանք կիրառելի դարձնելու և մեխանիզմների իրավական բովանդակությունը ամրագրելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (ՀՕ-280, 28.11.2011 թ.) համապատասխան հոդվածներում: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման և ընդունման արդյունքում նախատեսվում է ամրագրել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ձևավորման և կուտակվող գումարների արդյունավետ և նպատակայինօգտագործման նոր մեխանիզմներ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝<br>- վերանայել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ձևավորման մոտեցումները,<br>- ապահովել կուտակված գումարների վերահաշվարկման հնարավորությունը՝ ընդերքօգտագործողի կողմից լցակույտերում կուտակված ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների ներկայացման դեպքում,<br>- ներդնել դրամագլխում կուտակված գումարների հատկացման մեխանիզմներ՝ ընդերքօգտագործման թույլտվությունների ժամկետների ավարտից հետո խախտված հողատարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացման նպատակով: |
| 43. | **«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման իրավական հիմքի բացակայությամբ:<br>«Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2016 թվականի նոյեմբերի 17-ի «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-231-Ա կարգադրությունից, ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի 1540 բանաձևի իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային գործողությունների 2015-2020 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 95-Ա որոշումից և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 49 արձանագրային որոշումից:<br>Օրենքի նախագծի մշակումը բխում է նաև ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի «4.4. Բնապահպանություն» բաժնի 8-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քիմիական նյութերի գործածության ոլորտը բազմասեկտորալ է և դրանց կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգվում են միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններով և ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով: Միևնույն ժամանակ, այդ իրավական ակտերի առկայությունը բավարար չէ, քանի որ քիմիական նյութերի անվտանգ գործածության համար բացակայում են «Քիմիական նյութերի մասին» օրենքը, ինչպես նաև քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմներ սահմանող ենթաօրենսդրական ակտերը: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման նպատակով կկատարվի Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի իրավական կարգավորման վերլուծությունը, կվերհանվեն խնդիրները և դրանց լուծման նպատակով կամրագրվեն քիմիական նյութերին և դրանց գործածությանը ներկայացվող անվտանգության պահանջները, ինչպես նաև քիմիական նյութերի անվտանգության ոլորտում տարբեր պետական կառավարման մարմինների լիազորությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացված օրինագծով կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության տարածքում քիմիական նյութերի գործածության՝ արտադրության, օգտագործման, պահման, փոխադրման, իրացման, ներմուծման և արտահանման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության անվտանգության ապահովման հետ կապված հարցերն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն օրենքով քիմիական նյութերին և դրանց գործածության փուլերին ներկայացվող անվտանգության պահանջների, ինչպես նաև քիմիական նյութերի անվտանգության ոլորտում տարբեր պետական կառավարման մարմինների լիազորությունների հստակ ամրագրումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցմանն ու անվտանգության ապահովմանը: |
| 44. | **«Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը/ նպատակը**<br>«Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.4-րդ բաժնի «Բնապահպանություն» ենթաբաժնի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 76-րդ կետի պահանջից:<br>Ապօրինի հատումները դարձել են անտառային տնտեսության զարգացմանը խոչընդոտող ամենահիմնական պատճառներից մեկը, որը պայմանավորված է մի շարք գործոններով: Ներկայումս անտառների պահպանության և ապօրինի հատումների դեմ պայքարի վերահսկողական համակարգը, մարդկային ռեսուրսները և տեխնիկական հագեցվածությունը, հաշվի առնելով երկրի բարդ ռելիեֆի առանձնահատկությունները, բավարար չեն անտառային էկոհամակարգերի պահպանության, ապօրինի անտառահատումների կրճատման, անտառների ամբողջականության ապահովման համար: Վերահսկողական համակարգում առկա բացերը և ապօրինի անտառահատման դեմ պայքարի գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր, որը հնարավորություն կտա նախանշել հետագա գործողությունները:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անտառների պահպանության և ապօրինի հատումների դեմ պայքարի վերահսկողական համակարգը, մարդկային ռեսուրսները և տեխնիկական հագեցվածությունը, հաշվի առնելով երկրի բարդ ռելիեֆի առանձնահատկությունները, բավարար չեն անտառային էկոհամակարգերի պահպանության, ապօրինի անտառահատումների կրճատման, անտառների ամբողջակա- |

| | |
|---|---|
| | նության ապահովման համար: Վերահսկողական համակարգում առկա բացերը և ապօրինի անտառհատման դեմ պայքարի գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր:<br>Ներկայումս ոլորտում իրականացվում են մի շարք օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ ոլորտի պետական վերահսկողական համակարգը մոտեցնելով միջազգային լավագույն չափորոշիչներին՝ նպատակ ունենալով ապահովել վերահսկողական համակարգի աշխատանքների թափանցիկությունը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Այս առումով նորագույն տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կտա ապօրինի հատումների դեմ պայքարն իրականացնել երեք ուղղություններով՝ կանխարգելող, բացահայտող և ստուգող:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն միջոցառումների ծրագիրը հնարավորություն կտա հնարավորինս նվազագույնի հասցնել անտառներում անօրինական գործողությունները և ապօրինի հատումները և կօժանդակի անտառային էկոհամակարգերի պահպանությանը, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառային պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործմանը և անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման միջոցառումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծով ներկայացվելու են նորագույն տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը, միջոցառումները, ժամանակացույցը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ակնկալվում է նվազագույնի հասցնել ապօրինի անտառհատումները, ինչպես նաև աշխատատարությունը և ֆինանսական ծախսերը, բարձրացնել տվյալների ստացման ճշտությունը: |
| 45. | **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 1994 թվականին ընդունված «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով և օրենքի կիրակումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով: Օրենքն արդիականացնելու և մթնոլորտային օդի վրա որոշ բացասական ազդեցությունների կանխարգելման նպատակով վեջին տարիներին օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, վերջինը՝ 2011 թ.:<br>Սակայն հասարարական և միջազգային հարաբերություններում տեղի ունեցած որոշակի զարգացումների հետևանքներով առաջացել է հին նորմերի վերանայման և նոր մոտեցումների ամրագրման անհրաժեշտություն: Գործող օրենսդրությունը ժամանակակից մոտեցումներին համահունչ դարձնելու, ինչպես նաև առկա հակասությունները և բացթողումները վերացնելու համար անհրաժեշտ են արմատական փոփոխություններ օրենքում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության կառավարումն իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի նոյեմբերի 1-ի օրենքով (այսուհետ՝ Օրենք): Այս ժամանակաշրջանում հասարակական և միջազգային հարաբերություններում տեղի են ունեցել որոշակի զարգացումներ, որոնք օրենքում նոր պահանջների ամրագրման և հին նորմերի վերանայման անհրաժեշտություն են առաջացրել: Բացի այդ, օրենքի իրավակիրառման գործընթացում բացահայտվել են թերություններ ու բացթողումներ, որոնք շտկելը նույնպես անհրաժեշտություն է: |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետությունում ընդունված չէ «աղտոտվածության կրիտիկական մակարդակ» չափանիշը:<br>Արտանետումների սահմանափակման գործող սկզբունքը չի նպաստում նոր, բնապահպանական տեսակետից ավելի մաքուր տեխնոլոգիաների ներդրմանը:<br>Շարժական աղբյուրների արտանետումների սահմանափակումները անմիջականորեն կապված են ավտոտրանսպորտային միջոցների մաշվածության և օգտահործվող վառելանյութի հետ: Հաշվի առնելով տրանսպորտի ոլորտի արտանետումների բաժինը ընդհանուր արտանետումների մակարդակում, անհրաժեշտ է օրենսդրորեն և հետևողականորեն խստացնել ներմուծվող մեքենաների նկատմամբ ներկայացվող պահանջները՝ ներդաշնակեցնելով դրանք ԵՄ ու ԵԱՏՄ երկրներում գործող պահանջների հետ:<br>Լիարժեք չի իրականացվում մթնոլորտային օդի մոնիթորինգը, մասնավորապես չի իրականացվում մթնոլորտային օդի հետազոտվող ցուցանիշներում կախված մասնիկների $PM_{2.5}$, $PM_{10}$-ի մոնիթորինգ, մթնոլորտի աղտոտվածության գնահատումը չի համապատասխանում միջազգային մոտեցումներին:<br>ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ իրավական մեխանիզմ, որով գոյություն ունեցող տեխնոլոգիաները կարող են համարվել «լավագույն հասանելի»: «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ գործող օրենքով չի պարտադրվում նոր, ավելի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, որոնք կապահովեն վնասակար նյութերի արտանետումների ավելի ցածր չափաքանակներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքի մշակում, որտեղ՝<br>ա. մթնոլորտային օդի որակի գնահատման մասով՝<br>օրենքը կլրացվի «կրիտիկական մակարդակ» հասկացությամբ, ինչպես նաև դրա որոշման մեթոդների, կիրառման, աղտոտվածության մոնիթորինգի, վերահսկողության լիազորությունների սահմանմամբ,<br>բ. շարժական աղբյուրների արտանետումների մասով՝<br>մեքենաների, վառելիքի և շարժիչների նկատմամբ տարեց տարի ԵՄ և ԵԱՏՄ երկրներում խստացող պահանջները Հայաստանում կիրառելու համար իրավական հենքի ստեղծմամբ, ինչպես նաև ներկայումս ներմուծվող վառելիքի և շարժիչների նկատմամբ գործող սահմանափակումների ՝ օրենսդրորեն ամրագրմամբ,<br>գ. արտանետումների հաշվառման մասով՝<br>վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) հաշվառման միասնական համակարգի ստեղծման վերաբերյալ դրույթի սահմանմամբ,<br>դ. անշարժ աղբյուրներից արտանետումների սահմանափակման մասով՝<br>«տեխնիկական նորմատիվների» և «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» որոշման մեթոդների կիրառման, մոնիթորինգի, վերահսկողության լիազորությունների սահմանմամբ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Մթնոլորտային օդի պահպանության գործող օրենսդրության կատարելագործում, մասնավորապես՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ ՀՀ օրենքի նախագծի մշակում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ընդունման դեպքում նոր «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով կամրագրվեն ժամանակակից սկզբունքները, մասնավորապես՝ էկոհամակարգային մոտեցմամբ մթնոլորտային օդի պահպանության խնդիրները, «տեխնիկական նորմատիվների» և «կրիտիկական մակարդակների» և դրանց ներդրման մեխանիզմների՝ «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» միջոցով, ինչպես նաև աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների դասակարգման, արտանետումների թույլտվությունների տրամադրման գործընթացները: |

| | |
|---|---|
| 46. | **«Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N 338-Ն որոշման 2-րդ հավելվածով հաստատված միջոցառումների ցանկի 6. «Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգի մշակում և ընդունում» կետի կատարումն ապահովելու նպատակով մշակված «Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգից»:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարդն անխնա սպառում է բնական պաշարները, որի հետևանքով նվազում են օգտակար հանածոները, աղտոտվում է բնական միջավայրը, և շրջակա միջավայրի պահպանության խնդրի լուծումը ձեռք է բերում առաջնահերթություն: Հայաստանի Հանրապետությունը, որպես լեռնային երկիր, բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Այս ֆոնի վրա առավել խոցելի են ջրային ռեսուրսները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կլիմայի գլոբալ փոփոխությունը մարդկության առջև ծառացած խոշոր մարտահրավերներից է: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը, առավել հրատապ է դարձել ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանումն աղտոտումից: Ստեղծված իրավիճակում ջրային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում առավել կարևորվել է պետության դերը: Այն ընդգրկում է ջրային ոլորտի քաղաքականության մշակում, այդ թվում, ջրախնայող տեխնոլոգիաների արդյունավետ համակարգերի ներդրման խթանում՝ հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների ներդրման ոլորտում առկա միջազգային փորձը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծով ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտի առաջնահերթություն ստացած նորագույն ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման ուղղությունները, նպատակները, ակնկալվող արդյունքը, ֆինանսական գնահատականը:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրախնայող տեխնոլոգիաների կիրառմամբ զգալի չափով կվերականգնվեն տարիներ շարունակ ոչ ռացիոնալ, ավանդական ջրօգտագործումից ժառանգած և ընթացիկ գործունեության արդյունքում հյուծված ջրային ռեսուրսները, որով կլ կապահովվեն բնական ռեսուրսների վերականգնման և ողջամիտ օգտագործման պահանջները, մարդկանց առողջության վրա վնասակար ազդեցության նվազեցումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության հետագա կայուն զարգացումը: |

| | |
|---|---|
| 47. | **«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի» ընդունման անհրաժեշտությունը պայմանվորված է Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման նպատակներից, քանի որ տնտեսության շատ ճյուղեր խոցելի են ներկա և կանխատեսվող կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերից: Այն պայմանավորված է նաև ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 8-ի N 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ազգային մակարդակով նախատեսված գործողությունների/ներդրումների»-ի և բխում է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի դրույթներից:<br>Հարմարվողականության գործողությունները պետք է ընդգրկեն կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խոցելի ոլորտները (տնտեսական ճյուղերից՝ ջրային ռեսուրսները, գյուղատնտեսությունը, էներգետիկան, ենթակառուցվածքները, զբոսաշրջությունը; բնական էկոհամակարգերը՝ ջրային ու ցամաքային, այդ թվում անտառային էկոհամակարգերի կենսաբազմազանությունը և մարդու առողջությունը): Հարմարվողականության ազգային ծրագրի նպատակն է վեց գերակա ոլորտներում ներդրումների առաջնահերթության սահմանումը, և ծրագրով նախատեսված գերակա գործողությունների իրականացման նպատակով ֆինանսական ռեսուրսների հասանելիության հնարավորության ապահովումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանում չկա հարմարվողականության համապարփակ համակարգ, թեև «Ազգային մակարդակով նախատեսված գործողությունների/ներդրումների» փաստաթղթում և Կլիմայի փոփոխության ներքո Հայաստանի Ազգային Հաղորդագրություններում հստակ նշված է հարմարվողականության գերակայությունը: Այն բխում է նաև Կլիմայի փոփոխության կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի դրույթներից:<br>Հայաստանը, որպես դեպի ծով ելք չունեցող լեռնային երկիր, խիստ խոցելի է կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Ազգային տնտեսության հարմարեցումը և կլիմայի փոփոխության հետևանքով կորստի ու վնասի կրճատումը վճռորոշ նշանակություն ունեն աղքատության կրճատման և շրջակա միջավայրի դեգրադացումից պաշտպանելու համար: Հայաստանը հայտարարել է, որ երկրի կայուն զարգացման համար առաջնահերթություն է հարմարվողականության, այդ թվում՝ էկոհամակարգերի վրա հիմնված հարմարվողականության ազգային պլանի կազմումը:<br>Առկա խնդիրներն են՝<br>• Հստակ գործընթացների բացակայությունը հարմարվողականությանն ուղղված միջոցառումների մշակման ու առաջնահերթությունների սահմանման համար,<br>• Կլիմայի փոփոխության և հարմարվողականության առումով ճյուղային նախարարությունների իրազեկության և կարողությունների պակասը,<br>• Կլիմայի փոփոխությանն առնչվող ռիսկերն ու հարմարվողականությունը պլանավորման (ազգային պլանավորման և ոլորտային պլանավորման) գործընթացներում ու փաստաթղթերում ներառելու անբավարար մակարդակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հարմարվողականության ազգային ծրագրերը պետք է կրեն պարբերական բնույթ, ուղղված լինեն առաջնահերթությունների գնահատման սահմանմանը և իրականացման համար հիմնադրույթային կարողությունների ամրապնդմանը: Միաժամանակ, կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) տեղայնացման շրջանակներում, Հարմարվողականության ազգային ծրագրերի մշակման գործընթացը կնպաստի համապատասխան կլիմայական փոփոխություններին արձագանքող թիրախների ձևավորմանը: Մասնավորապես, անհրաժեշտ կլինի սահմանել և մշակել դրույթներ՝ ուղղված խոցելիության գնահատմանը ըստ ոլորտների, մշակել առաջնահերթությունների սահմանման հստակ գործընթաց՝ |

կլիմայի փոփոխության ազդեցությունների և հարմարվողականությանն ուղղված միջոցառումների ընտրության համար, այնուհետև համակարգել դրանք, որից հետո հնարավոր կլինի մշակել գործողությունների ծրագիր և իրականացնել այն:

**2. Կարգավորման առարկան**

Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորումը: Այն կանդրադառնա Կլիմայի փոփոխություններին հարմարվելու համար ազգային, ոլորտային և տեղական ինքնակառավարման մակարդակների ինտեգրմանը պլանավորման գործընթացում առկա հիմնախնդիրներին, ինչպես նաև կնպաստի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը, կլիմայական ռիսկերի և խոցելիության գործունակ գնահատումների իրականացմանը և կլիմայական ռիսկերի առնչությամբ իրազեկված որոշումների կայացման համար անհրաժեշտ արդյունավետ մեթոդների ներդրմանը: Այն նաև կօժանդակի Փարիզյան համաձայնագրի հետագա կիրառման և հարմարվելու գործընթացի առաջընթացի ապահովման ուղղությամբ ֆինանսավորման ռազմավարությունների և մեխանիզմների ձևակերպմանը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայաստանի հարմարվողականության ազգային ծրագիրը կնպաստի

- երկրի խոցելիության նվազեցմանը կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ՝ ստեղծելով հարմարվելու կարողություն և դիմակայունություն:

-Հայաստանի զարգացման պլանավորման գործընթացներում և ռազմավարություններում՝ բոլոր վերաբերելի ոլորտներում կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների ներառմանը և Հայաստանի զարգացման նպատակների իրականացմանը:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե**

48.

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկանը ներկայացնելը**

**1. Իրավական ակտի (ակտերի) անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ցանկում նշված միջոցառման ներառումը պայմանավորված է «ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ» հաստատված կարգով սահմանված պահանջների արդիականացման անհրաժեշտությամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս բացակայում են գոտևորման նախագծերի գծագրական և տեքստային մասերին ներկայացվող միասնական պահանջներ և յուրաքանչյուր նախագծող ինքնուրույն որոշում է գծագրական տեխնիկայի, պայմանական նշանների, գոտիների անվանումների, գոտիներում թույլատրելի ձևերի ներկայացման եղանակը: Տարբեր ձևաչափերով է ներկայացվում նաև տեքստային մասը: Անհրաժեշտ է նաև համապատասխանեցնել գոտևորման նախագծերին ներկայացվող պահանջները ստեղծվող երկրատեղեկատվական համակարգի միասնական չափորոշիչներին: Պարզեցման կարիք ունի նաև նախագծերի մշակման, հաստատման և փոփոխման ընթացակարգը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախատեսվում է վերանայել որոշմամբ հաստատված կարգը, նախատեսելով նախագծերի մշակման, հաստատման և փոփոխման պարզ և տրամաբանական ընթացակարգ, սահմանել գործառնական գոտիների ցանկը և դրանց համապատասխանող կոդերը, կարգը լրացնել նաև ստեղծվող երկրատե-ղեկատվական համակարգի միասնական չափորոշիչներին համապատասխան պահանջներով:

**2. Կարգավորման առարկան**

Քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող օրենսդրության կատարելագործում:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման գործընթացների պարզեցում:

| | |
|---|---|
| 49. | **«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» միջոցառման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով (ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելված, 3-րդ գլուխ, «3.8. Քաղաքաշինություն» բաժին, 7-րդ կետ) նախատեսված՝ երկրաշարժի հետևանքով աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացում և մինչև 2020 թվականի տարեվերջ՝ ծրագրի ավարտ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաշվառված և աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շահառու ճանաչված 5381 ընտանիքից 2008-2016 թվականների ընթացքում կարգավորվել է 4737 ընտանիքի բնակարանային խնդիր, որոնցից՝<br>- 2008-2016 թթ.՝ մոտ 64.4 մլրդ. դրամի հաշվին, լուծվել է 4737 ընտանիքի բնակարանային խնդիր (շահառու ճանաչված ընտանիքների մոտ 88%),<br>- 2017 թ.՝ 560.0 մլն. դրամի շրջանակներում նախատեսվել է լուծել 94 ընտանիքի (90-ը՝ Գյումրի, 1-ը՝ Սպիտակ, 2-ը՝ Լոռու գյուղ, 1-ը՝ Շիրակի գյուղ.) խնդիր, որոնցից 65-ի խնդիրը լուծված է, 23-ինը՝ ընթացքում, 6-ինը դեռևս չի լուծվել:<br>- դեռևս լուծման կարիք ունի ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 550 ընտանիքի խնդիր (Լոռի՝ 345, Շիրակ՝ 175, Արագածոտն՝ 30 ), որի համար կպահանջվի մոտ 4.0 մլրդ դրամ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է 2018 թվականի ընթացքում՝ ՀՀ 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված չափաքանակների շրջանակում 2018 թվականի համար նախատեսված 460.0 մլն դրամի հաշվին լուծել ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 345 ընտանիքից առավել բարձր պատրաստականության կիսակառույց բնակելի տներ ունեցող մոտ 50 ընտանիքի բնակարանային խնդիր:<br>Արդյունքում, դեռևս լուծման կարիք կունենա ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերի 500 ընտանիքի բնակարանային խնդիր, որի լուծման համար կպահանջվի մոտ 3.5 մլրդ դրամ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով (նախագիծ) նախատեսված 460.0 մլն դրամ հատկացումների հաշվին ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության մոտեցումների և աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարցերի ամրագրում:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի շարունակական իրականացում և ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված մոտ 50 բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարում: |

| | |
|---|---|
| 50. | **«Հայաստանի Հանրապետության բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի վերակառուցման (նորոգման) պետական աջակցության համակարգված մեխանիզմների ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» հհ կառավարության արձանագրային որոշման նախագիծըհհ կառավարություն ներկայացնելը» միջոցառման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով (ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելված, 3-րդ գլուխ, «3.8 Քաղաքաշինություն» բաժին, 6-րդ կետի 2-րդ ենթակետ) նախատեսված՝ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի վերակառուցման, վերանորոգմանն ուղղված (այդ թվում՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման) պետական աջակցության համակարգված մեխանիզմների ներդրման ուղղությունների և սկզբունքների ամրագրում:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետությունում առկա է 18815 բազմաբնակարան շենք (434706 բնակարան), գերակշիռ մասը շահագործման է հանձնվել 40 և ավել տարի առաջ: Այդ շենքերի բնակարանների 99%-ը մասնավոր սեփականություն է:<br>Գործող օրենսդրության համաձայն շենքերի ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի պարտականությունն է այդ սեփականությունը պահպանելն ու շահագործելը: Սակայն բազմաբնակարան շենքերի պահպանման գործառույթները լիովին չեն իրացվում հիմնականում ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականության պահպանման նկատմամբ սեփականատերերի ոչ նպաստավոր վարքագծով:<br>Վերջին տարիների ընթացքում բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ուղղությամբ պետական և համայնքային բյուջեներից որոշակի աջակցություն է ցուցաբերվել հիմնականում հրատապ լուծում պահանջող խնդիրների վերացմանը (ՀՀ տարեկան պետական բյուջեներով տանիքների վերանորոգման աշխատանքներին է ուղղվել մոտ 4,65 մլրդ. դրամ)՝ որպես կանոն առանց շենքերի ընտրության և աջակցության տրամադրման հստակ և թափանցիկ մեխանիզմների կիրառման և այդ աշխատանքներին շենքերի շինությունների սեփականատերերի մասնակցության:<br>Չնայած իրականացված միջոցառումների, բնակարանային ֆոնդի պահպանման համար մեծածավալ ներդրումների պահանջ է առաջանում, և միայն շենքի շինությունների սեփականատերերի միջոցների հաշվին այդ աշխատանքների իրականացումն իրատեսական չէ, նկատի ունենալով այն փաստը, որ մինչև 2000-ական թվականները կառուցված բազմաբնակարան շենքերն առավելապես բնակեցված են սոցիալապես առավել խոցելի խմբերում ընդգրկված ընտանիքների մեծամասնությունը, անհրաժեշտություն է առաջանում պետության միջամտության:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքի վերակառուցման և նորոգման (այդ թվում՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման) ուղղությամբ պետական աջակցության համակարգված մեխանիզմների ներդրում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքի վերակառուցման և նորոգման ուղղությամբ պետական աջակցության ուղղությունների և քայլերի հստակեցումը, արդյունքում պետական միջոցների առավել արդյունավետ և թիրախավորված ծրագրերի իրականացման միջոցով նպաստումը՝ երկրի համար առանցքային նշանակություն ունեցող ակտիվի՝ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանմանն ու անվտանգ շահագործմանը: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքի վերակառուցման և նորոգման պետական աջակցության համակարգված մեխանիզմների ներդրմամբ ակնկալվում է ապահովել այդ ուղղությամբ պետական միջոցների արդյունավետ ու հասցեական օգտագործումը, ինչն էլ իր հերթին կնպաստի՝<br>- գոյություն ունեցող շենքերի անվտանգ շահագործման ժամկետների երկարացմանը,<br>- շենքի տարրերի ու սարքավորումների նոր տեխնոլոգիաների և էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ վերազինմանը՝ նվազեցնելով էներգետիկ ռեսուրսների ծախսը,<br>- շենքերի հուսալիության, հարմարավետության ու շահագործման սպառողական հատկա-նիշների բարձրացմանը և արդյունքում՝ բնակարանների շուկայական արժեքի բարձրացմանը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** | |
| 51. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2018 թվականի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից՝ ըստ որի հողերի կադաստրային գները, ըստ նպատակային նշանակության, յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել 2018 թվականի համար, ուստի, որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվեն 2018 թվականի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2018 թվականի կադաստրային գները (արժեքները):<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն 2018 թվականի հողերի կադաստրային գները, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում: |
| 52. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2018 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի հողամասերն անկախ սեփականության ձևից ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի ու |

| | |
|---|---|
| | քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների մասին ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում են փոփոխություններ, այդ թվում՝ նպատակային նշանակությունների ու սեփականության սուբյեկտների, հողատեսքերի ու գործառնական նշանակությունների, ինչպես նաև ոռոգվող հողերի կազմում: Այս բոլոր ընթացիկ փոփոխությունները տարեկան կտրվածքով ենթակա են պետական հաշվառման և պետք է արտացոլվեն Հայաստանի Հանրապետության ընթացիկ հողային հաշվեկշռում:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշման պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1059-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հողային հաշվեկշիռը: 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված՝ Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի փաթեթը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված է Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական մարմինների համաձայնեցմանը և սահմանված ժամկետում այն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի այն փոփոխությունները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով կկատարվեն 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը, անհրաժեշտ է արտացոլել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հողային հաշվեկշռում:<br>Նպատակը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռի՝ ըստ նպատակային և գործառնական նշանակությունների, սեփականության ձևերի ու հողատեսքերի՝ առկա վիճակն ու փոփոխությունները ներկայացնելն է՝ հողային պաշարների արդյունավետ օգտագործման և կառավարման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սեփականաշնորհված հողերի միավորման ու խոշորացման ծրագրերին օժանդակելու համար:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխությունները կարտացոլվեն 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռում:<br>Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2018 թ. հաշվետվության (հողային հաշվեկշիռ) նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, ոչ պետական կազմակերպություններն ու անձինք:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2018 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման արդյունքում կկազմվի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը): |

| | |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** |
| 53. | **«Ոռոգման նպատակով 2018 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Ոռոգման նպատակով 2018 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է <Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին> ՀՀ օրենքով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ 2017 թվականի մայիսի 4-ին ընդունված «Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության N 461-Ա որոշմամբ ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի չափաքանակ է սահմանվել մինչև 170 մլն խոր մետր ջրաքանակը: Հետագայում 2017 թվականի հուլիսի 6-ին ընդունվել է ՀՕ-116-Ն օրենքը, որի համաձայն 2017 թվականին Սևանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակը լրացուցիչ ավելացվել է 100 մլն $մ^3$-ով և սահմանվել է մինչև 270 մլն $մ^3$:<br>Առ 27.09.2017 թ. դրությամբ Սևանա լճից բաց է թողնվել 266.757 մլն խոր մետր ջուր: Սևան-Հրազդան էներգետիկ-ոռոգման համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողերը ոռոգելու համար անհրաժեշտ է Սևանա լճից բաց թողնել համապատասխան «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված առավելագույն քանակին համապատասխան ջրաքանակ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ջրային օբյեկտներից հնարավոր ջրառի տարբերության չափով պահանջարկի բավարարում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սևան-Հրազդան ոռոգման-էներգետիկ համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքների վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրի ապահովման գործընթացի իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրօգտագործողներին անհրաժեշտ քանակի ոռոգման ջրով ապահովում: |
| | **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** |
| 54. | **«Հայաստանի Հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացման 2019-2022 թվականների ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» հհ կառավարության արձանագրային որոշման նախագիծը հհ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման նպատակը Հայաստանի Հանրապետությունում մարզա-առողջարանային զբոսաշրջության միջոցառումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է, ինչը հնարավոր կդարձնի մեծ քանակությամբ քաղաքացիների ներգրավումը սպորտային զբոսաշրջության շարժման մեջ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի առնելով այն փաստը, որ սպորտային զբոսաշրջությունն իրականացվում է պետական, հասարակական և կոմերցիոն հիմունքներով, անհրաժեշտ է պետական մակարդակի միասնական |

| | |
|---|---|
| | նորմատիվ փաստաթղթի մշակում, որը կապահովի զբոսաշրջության անվտանգությունը, կդասակարգի սպորտային երթուղիները, զբոսաշրջության գույքը և կադրերը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ապահովել սպորտային զբոսաշրջության զարգացման միջոցով ՀՀ համայնքներում բնակչության կյանքի որակի բարձրացումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում զարգացնել և խթանել սպորտային զբոսաշրջությունը, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետության բնակչության կյանքի որակի բարձրացմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սպորտային զբոսաշրջության զարգացում, բարենպաստ և հասանելի սպորտային զբոսաշրջային միջավայրի ձևավորում: Հանրապետությունում զբոսաշրջության սպորտային ձևի զարգացում, սպորտային զբոսաշրջությունով հետաքրքրվող ավելի մեծ քանակությամբ օտարերկրյա զբոսաշրջիկների ներգրավում, հանրապետության տնտեսության զարգացմանն օժանդակում: |
| 55. | **«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2018-2024 թվականների ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սոցիալ-տնտեսական նոր պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում: Հաշմանդամություն ունեցող անձանց մասսայական ներգրավման աջակցում ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական ուղղվածության միջոցառումներում, տարբեր մրցաշարերում՝ տեղական առաջնություններում, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում, պարալիմպիկ, սուրդլիմպիկ, հատուկ օլիմպիադաների խաղերում և այլ միջազգային մրցաշարերում: Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և ադապտիվ սպորտի ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանն ուղղված հիմնական ուղղությունների ամրագրում: Ադապտիվ սպորտի բնագավառում համապատասխան մասնագետների առկայության ապահովում: Հայաստանի Հանրապետությունում գործող ադապտիվ սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների միջազգային հաշմանդամային մարզական կազմակերպություններին ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ կազմակերպությունների միջև համագործակցության գործընթացների խթանմանը նպաստում:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոչ բավարար թվով հաստատությունների առկայությունը կամ դրանց բացակայությունը, մասնագիտացված մարզական կառույցների, սարքավորումների և գույքի սակավությունը կամ բացակայությունը, մարզական կառույցների ֆիզիկական մատչելիության բացակայությունը, անկախ սեփականության ձևից՝ պետական և մասնավոր հատվածում հաշմանդամային սպորտի զարգացմանը նպաստող ոչ բավարար պայմանները,<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց համար ըստ բնակության վայրի ֆիզիկական վարժություններով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծում, հաշմանդամային (ադապտիվ) սպորտի զարգացումը, ադապտիվ սպորտի բնագավառում տարվող քաղաքականության հիմնական ուղղությունների ամրագրում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում և առողջ ապրելակերպի արմատավորում, տարբեր մրցապայքարներում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության ապահովում: Հասարակությանը հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման օժանդակում: |

| | |
|---|---|
| | **3. Միջոցառման կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.** <br> Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում: Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ կազմակերպությունների համակողմանի համագործակցում: Հաշմանդամության նկատմամբ բնակչության դրական վերաբերմունքի ձևավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում, աշխատունակության բարձրացում, ակտիվ հանգստի կազմակերպման և վերականգնման ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում, որակյալ մարզիկների և մարզիչների պատրաստում, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և անհատ մարզիկների մասնակցության ապահովում, պարալիմպիկ, սուրդլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների գրանցում: |
| **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** | |
| 56. | **Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը** |
| | **1. Անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2 բաժնի «Սփյուռք» գլխի 2-րդ կետի 3-րդ ենթակետից և ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածից: <br><br> **2. Ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Սփյուռքում վտանգված է հայապահպանությունը, հայոց լեզուն, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ երիտասարդության մշտական և բազմաբնույթ կապերն ու հարաբերություններն են, պատանիների ու աղջիկների Հայաստան ճանաչողական այցելություններն են, իրենց հասակակիցների հետ ծանոթություններն ու շփումները, հայկական հարուստ ժառանգության հետ նրանց մշտական առնչությունները: <br> **3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> «Արի տուն» ծրագրի մշակման ու իրականացման միջոցով հնարավոր է Սփյուռքի երիտասարդության համար ճանաչելի դարձնել սեփական հայրենիքը, լեզվամշակութային արժեքները, այդ ճանապարհով նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, հայապահպանությանը սփյուռքում: <br><br> **4. Կարգավորման առարկան** <br> «Արի տուն» ծրագրի իրականացումը թույլ է տալիս յուրաքանչյուր տարի հայաստանյան ընտանիքներում հյուրընկալել հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդների, նրանց համար կազմակերպել ճանաչողական շրջայցեր ու դասընթացներ: <br> **5. Ակնկալվող արդյունքները** <br> Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում, սփյուռքի երիտասարդության կողմից հայրենաճանաչություն և ամուր կապ Հայրենիքի հետ, երիտասարդական գործակցության խորացում և Սփյուռքում հայապահպանություն, երիտասարդների ներգրավում համահայկական ծրագրերում: 2018 թ. ծրագրով Հայաստան կայցելեն, հայաստանյան ընտանիքներում կհյուրընկալվեն, շրջագայությունների կմասնակցեն և ճամբարային հանգիստ կանցկացնեն տարբեր երկրների մինչև 1000 հայ երիտասարդներ: |

| | |
|---|---|
| 57. | **Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100 և Երևանի հիմնադրման 2800-ամյակներին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը** |
| | **1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 2.2 բաժնի «Սփյուռք» գլխի 1-ին կետի 1-ին ենթակետ ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածից:<br>**2. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սփյուռքում վտանգված է հայապահպանությունը, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ մշակութային կապերն ու հարաբերություններն են, ազգային երգի, պարի, այլ մշակութային խմբերի այցելություններն են հայրենիք, իրենց արվեստի ներկայացումը:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Իմ Հայաստան» փառատոնի ծրագրի մշակման ու իրականացման միջոցով հնարավոր է սփյուռքի մշակութային խմբերին, անհատ կատարողներին հնարավորություն տալ ներկայացնելու սեփական հմտությունները, անհրաժեշտ փորձ ձեռք բերել շփվելով հայրենիքի, սփյուռքյան այլ խմբերի, գործիչների հետ, աջակցել հայապահպանությանն ու հայ մշակույթի զարգացմանը, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանը:<br>**4.Կարգավորման առարկան**<br>«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի իրականացումը թույլ է տալիս երկու տարին մեկ անգամ հայրենիքում հյուրընկալել հարյուրավոր սփյուռքահայերի, նրանց համար կազմակերպել համերգներ, ելույթներ Երևանում և տարբեր մարզերում:<br>**5. Ակնկալվող արդյունքները**<br>Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում, հայ մշակույթի զարգացում և տարածում, ամուր կապ հայրենիքի հետ, մշակութային գործակցության խորացում և սփյուռքում հայապահպանություն, սփյուռքահայերի ներգրավում համահայկական ցանցերում և ծրագրերում: 2018 թ. մինչև 800 սփյուռքահայ կմասնակցի ազգային երգի ու պարարվեստի, ասմունքի օրերին, դուդուկի փառատոնին: Հայաստանյան բեմերում հանդես կգան սփյուռքի տարբեր համայնքներում վերջին շրջանում ստեղծված համույթներ, խմբեր, կհայտնաբերվեն տաղանդավոր, արվեստագետ ու արվեստասեր սփյուռքահայ երիտասարդներ: |
| 58. | **«Հայաստանի Հանրապետության բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսումնական տարվա ուսման վարձերի փոխհատուցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը** |
| | **1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2 բաժնի «Սփյուռք» գլխի 2-րդ կետից և ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածից:<br>**2. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սիրիահայ երիտասարդության՝ հայաստանյան հանրություն ինտեգրելուն ուղղված ծրագրերն ու միջոցառումները, նրանց ուսման վարձի փոխհատուցման հարցերը դարձել են ՀՀ սփյուռքի նախարարության համար առաջնահերթային, մշտապես քննարկվել են գործող միջգերատեսչական հանձնաժողովում, աշխատանքներ են տարվել համապատասխան գերատեսչությունների, համահայ- |

| | |
|---|---|
| | կական կառույցների, հիմնադրամների, ուսումնական հաստատությունների հետ կրթական խնդիրների օպերատիվ, արդյունավետ լուծման համար: Սակայն բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսման վարձերի հարցը շարունակում է մնալ որպես ամենամյա լուծում պահանջող խնդիր, քանի դեռ չի ավարտվել ուսման ողջ շրջանը:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2012 թվականից սկսած յուրաքանչյուր տարի սիրիահայ ուսանողների ուսման վարձի փոխհատուցման համար ֆինանսական միջոցների հիմնական ծավալը տրամադրվել է «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկության, Հայկական բարեգործական ընդհանուր միության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից: Ցուցաբերած նյութական աջակցությունը բավարար չլինելու պատճառով սիրիահայ ուսանողների ուսման վարձը փոխհատուցելու նպատակով ֆինանսական միջոցներ են տրամադրվել նաև պետական բյուջեից:<br>**4. Կարգավորման առարկան**<br>Նախագծի ընդունմամբ կկարգավորվի սիրիահայ ընտանիքների, երիտասարդների սոցիալական, թերևս, ամենահրատապ և շարունակական լուծում պահանջող հիմնահարցերից մեկը:<br>**5. Ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսումնական տարվա ուսման վարձերի փոխհատուցում: |
| 59. | **«Հայրենադարձության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը** |
| | **1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2 բաժնի «Սփյուռք» գլխի 3-րդ կետի 2-րդ ենթակետից և հայրենադարձության գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտությունից:<br>**2. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայրենադարձությունը, որպես պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է: Հայրենադարձությունը դիտարկվում է հայրենիքում բնակություն հաստատելու յուրաքանչյուր հայի իրավունք, և որպես հայապահպանության կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո:<br>Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը նախապատրաստվել է դեռևս 2012 թվականին և անհրաժեշտություն է առաջացել նախագծում սահմանել նոր եզրույթներ նպատակների, խնդիրների, հայրենադարձվածներին տրվող օգնության և արտոնությունների վերաբերյալ, ինչպես նաև ընդլայնել նախագծում գործածվող հիմնական հասկացությունները:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայրենադարձության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի տնտեսական, քաղաքական, մտավոր ու պաշտպանական ներուժը:<br>**4.Կարգավորման առարկան**<br>Նախագծի ընդունմամբ կկարգավորվի հայրենադարձության գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:<br>**5. Ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի ընդունման արդյունքում որակական նոր իրավիճակ կստեղծի Սփյուռքում և ՀՀ-ում, նոր լիցք կհաղորդվի Հայաստան-սփյուռք կապերին և հայապահպանությանը:<br>Հայաստանում այն կնպաստի սփյուռքահայերի արագ և սահուն ինտեգրմանը հասարակության մեջ, կնպաստի Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հնարավորություն կընձեռի հայկական մասնագիտական ներուժի համախմբման և Հայաստանում նպատակային կիրառման համար: |

| | |
|---|---|
| 60. | **«Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը** |
| | **1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2 բաժնի «Սփյուռք» գլխի 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերից:<br>**2. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունը 1999 թ.-ից սկսած պաշտպանություն է տրամադրում միջազգային պաշտպանության կարիք ունեցող՝ այդ թվում նաև հայազգի օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Իրաքյան ճգնաժամի պատճառով (սկսած 2002 թ.-ից)՝ 1450, խորայելա-լիբանանյան հակամարտության հետևանքով (2006 թ.)՝ 650, վրաց-օսեթական հակամարտության հետևանքով (2008 թ.)՝ 207, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով (սկսած 2014 թ.-ից)՝ 255 անձինք ՀՀ-ում ստացել են փախստականի կարգավիճակ: Սիրիական հակամարտության սկսվելուց ի վեր ավելի քան 22.000 մարդ, առավելապես ազգությամբ հայեր, ինչպես նաև արաբներ, քրդեր, ասորիներ տեղահանվել և պաշտպանություն են գտել Հայաստանում:<br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շարունակել նպաստել միջազգային բեռի թեթևացմանը և ներդրում ունենալ միջազգային խնդիրների լուծմանը՝ նպաստելով Սիրիայից Հայաստան տեղափոխվել ցանկացող հայերի տեղափոխմանը Հայաստան, Հայաստանում վերջիններիս պատշաճ ընդունմանը և երկարաժամկետ ինտեգրմանը, նպաստավոր պայմաններ ստեղծելով Սիրիայից այլ փախստականների պատշաճ ընդունման և ինտեգրման համար: Տեղահանված անձանց համար Հայաստանում պաշտպանության տարբերակների մշակում միջազգային չափանիշներին համապատասխան՝ ապաստան հայցելու ընթացակարգերի հասանելիություն և ներկայացվող հայցերի արագացված կարգով ուսումնասիրություն, պարզեցված և արագացված կարգով ՀՀ քաղաքացիության շնորհում կամ պարզեցված և արագացված կարգով կացության կարգավիճակի տրամադրում:<br>**4. Կարգավորման առարկան**<br>Նախագծի ընդունմամբ կկարգավորվի սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:<br>**5. Ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց հասարակական լիարժեք ինտեգրմանն գործընթացի արագացում: |
| | **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** |
| 61. | **«Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության կենտրոնացված կառավարման համակարգի նկարագիրը և ներդրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության կենտրոնացված կառավարման համակարգի նկարագիրը և ներդրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներդրման նպատակն է ՀՀ-ում ձևավորել կենսաանվտանգության կառավարման մեկ միասնական կենտրոնացված համակարգ՝ ներառելով կենսաանվտանգությանն առնչվող բոլոր շահագրգիռ կառույցների ոլորտին առնչվող գործընթացները և ընթացակարգերը, ինչպես նաև դրանց կառավարման մեխանիզմները: |

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Կենսաանվտանգության կենտրոնացված համակարգն, ըստ միջազգային մոտեցումների, իր մեջ ներառում է լաբորատոր տեղեկատվական, պետական սահմանի անցման կետերում կենսաբանական գործոնի առնչությամբ գործընթացների, վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության, կլիմայի գլոբալ փոփոխության հետ կապված խոցելիության և հարմարողականության մեխանիզմների ձևավորման, հիվանդների բժշկական օգնության և սպասարկման, կենսաէթիկայի և այլ միասնական պահանջները, գործընթացները, ընթացակարգերը: Միջազգային մի շարք հիմնարար փաստաթղթեր՝ Հելսինկյան դեկլարացիա, Նյուրնբերգյան դեկլարացիա, ՄԱԿ-ի 1540 բանաձև, Կենսաբանական զենքի նվազեցման կոնվենցիա և այլն, սահմանում են կենսաանվտանգության ինտեգրացված, կենտրոնացված համակարգային համակարգ: Կենսաբանական վտանգների, սպառնալիքների և ռիսկերի դիմակայման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ներդրվել են մի շարք հիմնարար իրավական ակտեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի նոյեմբերի 17-ի «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ 231-Ա կարգադրություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «ՄԱԿ-Ի ԱԽ 1540 բանաձևի իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային գործողությունների 2015-2020 թթ. ծրագիրը հաստատելու մասին» N 95-Ա որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում կենսաբանական զենքի կոնվենցիայի դրույթների կիրառման ծրագրի միջոցառումների իրականացման 2017-2020 թվականների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի նիստի «Հատուկ վտանգավոր պետաոդիմներից պաշտպանության հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին ու ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 34 արձանագրային որոշում: Չնայած վերը նշվածին, այսօր հանրապետությունում կենսաանվտանգության ուղղությամբ առանձին նախարարություններում, մասնավորապես՝ գյուղատնտեսության, արտակարգ իրավիճակների և այլն, կենսաանվտանգության ապահովման ոլորտում իրականացվում են որոշակի միջոցառումներ, սակայն դրանք համապարփակ չեն և չեն ներկայացնում մեկ միասնական համակարգ: Կենսաանվտանգության ուղղությամբ գործողություններ իրականացնում են կենսաբանական գործոնի հետ աշխատող բոլոր կառույցները, սակայն դրանք ստանդարտ մոտեցումներով չեն ղեկավարվում և չկա համալիր կառավարում այս ոլորտում: Մասնակիորեն սահմանվել են Հայաստանի Հանրապետության համար վտանգի ներքին և արտաքին աղբյուրները: Սահմանված չէ ոլորտի լիազոր մարմինը: Հաշվի առնելով կենսաբանական վտանգի գործոններով պայմանավորված ռիսկերը, ինչպես նաև գնահատելով դրանց դիմակայելու առկա կարողությունները, վարակների առաջացման բարձր հավանականությունը, կենսաահաբեկչության հնարավորությունը՝ կենսաանվտանգության ապահովման գործընթացը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու համար խիստ կարևոր է համակարգային մոտեցումը: Վերջինս իրականացնելու համար մշակվել է ՀՀ կառավարության նշված նախագիծը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետությունում կենսաանվտանգության կենտրոնացված կառավարման համակարգի նկարագիրը և ներդրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ առաջարկվում է ՀՀ-ում ձևավորել կենսաաանվտանգության կառավարման մեկ միասնական կենտրոնացված համակարգ՝ ներառելով կենսաանվտանգությանն առնչվող բոլոր շահագրգիռ կառույցների ոլորտին առնչվող գործընթացները և ընթացակարգերը: Կենսաանվտանգության կառավարման կենտրոնացված համակարգի գործունեությունն ուղղված է լինելու նոր տիպի կենսաբանական սպառնալիքների հայտնաբերմանը, «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների» առնչությամբ, օրինական գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված կենսաբանական նյութերի, պատրաստուկների և դրանց հետ կապված հարակից նյութերի չարտոնված կիրառման (վտանգավոր կենսաբանական

ազդակների ստեղծում և տարածում) կանխարգելմանը, կենսաբանական վտանգների ու սպառնալիքների առաջացման հետ կապված չնախատեսված կամ չկանխատեսված իրավիճակների կանխմանը, միասնական տեղեկատվական բազայի ձևավորմանը, արձագանքման գործողությունների համակարգային կառավարմանը: Համակարգի մասնակիցներն են՝ անկախ կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական պատկանելությունից կազմակերպությունները, մասնավորապես՝ կենսաբանական գործոնի հետ աշխատող կազմակերպությունները, կենսաբանական նյութերի, պատրաստուկների և դրանց հետ կապված հարակից նյութերի հետ առընչություն ունեցող բոլոր գիտահետազոտական կազմակերպությունները, կենսաբանական գործոնի հետ առնչվող արտադրական և առևտրային կազմակերպություններն ու ընկերությունները, շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպությունները, կենսաբանական զենքի հետ առնչվող ռազմական և այլ կազմակերպությունները, էթիկայի հանձնաժողովները, պետական սահմանի անցման կետերում հսկողություն իրականացնող կառույցները և այլն: Կենսաանվտանգության համակարգը ներառում է՝ խորհրդատվության նպատակով, աշխատանքները համակարգող, շահագիգիռ կառույցների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, կենսաանվտանգության հարցերով զբաղվող ազգային ասոցիացիաները, կենսաանվտանգության հարցերով զբաղվող ազգային, միջազգային ասոցիացիաների և Լիազոր մարմնի համագործակցության մեխանիզմները, կենսաանվտանգության հարցերի ընդգրկմամբ գիտական հետազոտությունների պլանը: Համակարգն աշխատելու է 2 մակարդակով՝ ազգային մակարդակ՝ ապահովում է միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված ազգային օրենսդրության մշակումն ու կատարելագործումը և ինստիտուցիոնալ մակարդակ՝ ներառում է վերը նշված կառույցները, որոնք առնչվում են կենսաբանական նյութերի, պատրաստուկների և դրանց հետ կապված հարակից նյութերի հետ աշխատանքի, տեղափոխման, վաճառքի, պահեստավորման, կենսաբանական գործոնով պայմանավորված դեպքերի վարման ու հսկողության հետ: Միջացառումներն իրականացվելու են նաև Համակարգի գործունեության ապահովման համար գործադրվում է Կենսառիսկերի կառավարման համակարգ: Դրա կառուցվածքը, բաղադրիչները, պահանջները սահմանվում են Լիազոր մարմնի կողմից՝ նորմատիվ իրավական ակտով: Նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի պահանջում:

**2. Կարգավորման առարկան**

Առաջարկվում է կարգավորել կենսաանվտանգության համակարգը՝ ձևավորելով մեկ միասնական կենտրոնացված համակարգ՝ ներառելով կենսաաանվտանգությանն առնչվող բոլոր շահագրգիռ կառույցները: Ինչպես նաև կնշանակվի կենսաանվտանգության կառավարման կենտրոնացված համակարգի ներդրման հարցով Հայաստանի Հանրապետության պետական լիազոր մարմին:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Հայաստանի Հանրապետությունում կենսաանվտանգության կենտրոնացված կառավարման համակարգի նկարագիրը և ներդրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել մեկ միասնական կենտրոնացված համակարգ՝ Հայաստանի Հանրապետության սահմանելով պետական լիազոր մարմին:

62.

**«Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության ազգաբնակչությանը ցուցաբերվող

| | |
|---|---|
| | բժշկական օգնության որակը, նաև իրականացնել թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) բուժման շարունակական ապահովում և բուժման գործընթացի համապատասխանեցում արդի միջազգային մոտեցումներին:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ըստ վիճակագրական տվյալների թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները (ԹՔՕՀ) մահաբերության 3 տեղը և հաշմանդամության առաջացման 4 տեղն են զբաղեցնում՝ սիրտ-անոթային և ուռուցքային հիվանդություններից հետո: Որպես ԹՔՕՀ առաջացման գլխավոր ռիսկի գործոն է համարվում ծխախոտի օգտագործումը և օդի աղտոտվածությունը: Հայաստանի Հանրապետությունում ԹՔՕՀ վերաբերյալ վիճակագրական տվյալների ոչ լիարժեքությունը, ԹՔՕՀ տարածվածության, պացիենտների խնամքի ու բուժման ոչ բավարար վերահսկողականությունը և հասարակության ցածր տեղեկատվածությունը ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ՝ անհրաժեշտություն են ստեղծել ԹՔՕՀ դեմ պայքարի ռազմավարության մշակմանը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բարձրացնել հասարակության տեղեկատվածությունը ԹՔՕՀ ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ՝ հատկապես ռիսկի խմբում գտնվող անձանց մոտ, հաշվի առնելով, որ ԹՔՕՀ վաղ փուլերում դրսևորվում է ոչ սպեցիֆիկ ախտանիշներով:<br>Մշակել ԹՔՕՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման միասնական մոտեցումներ:<br>Օգտագործելով էլեկտրոնային բժշկության հնարավորությունները գնահատել ԹՔՕՀ ներկայիս առողջապահական վիճակը, վերահսկել ԹՔՕՀ տարածվածությունը, պացիենտների խնամքն ու բուժումը՝ ներառյալ վերականգնողական բուժումը, ուսումնասիրել և ներդնել ախտորոշման, բուժման նորարարությունները:<br>Աջակցել ԹՔՕՀ բնագավառում գիտական հետազոտությունների իրականացումը՝ հիվանդության կանխարգելման, ախտորոշման և բուժման նոր և առավել արդյունավետ միջոցների մշակման նպատակով:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է իրականացնել ԹՔՕՀ բուժման շարունակական ապահովում և բուժման գործընթացի համապատասխանեցում արդի միջազգային մոտեցումներին:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Բարձրացնելով հասարակության տեղեկատվածությունը ԹՔՕՀ ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ, վերահսկելով ԹՔՕՀ տարածվածությունը, պացիենտների խնամքն ու բուժումը, ակնկալվում է իջեցնել ԹՔՕՀ մահաբերության և հաշմանդամության ցուցանիշները, բարելավել պացիենտների կյանքի որակը: |
| 63. | **«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի կետ 3-ի 1-ին ենթակետի «բ» պարբերության պահանջներից: |

**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, կրթությունն ստանալուց հետո, իրենց ստացված կրթական դիպլոմների համաձայն՝ դիմում են համապատասխան բժշկական օգնություն և սպասրկման գործունեության տեսակի լիցենզիա ունեցող հաստատություններ, իրենց մասնագիտության համապատասխան աշխատանքի ընդունվելու համար: Այնուհետ, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անցնում են շարունակական մասնագիտական զարգացման հնգամյա շրջափուլով և հավաստագրման գործընթացով: Գործող օրենքը, որպես այլընտրանքային տարբերակ այն մասնագտների համար, ովքեր հնգամյա շրջափուլի համար չեն հասցնում հավաքել օրենսդրությամբ ամրագրված նվազագույն կրեդիտների քանակը, նախատեսում է տրամադրել վերապահումով հավաստագիր՝ թույլ տալով վերջիններիս շարունակել աշխատանքը, բայց այլ մասնագետի հսկողության ներքո և հավաքագրել չբավարարող կրեդիտները: Սակայն, պետք է նշել, որ օրենքի այս կարգավորումը բավականաչափ խնդրահարույց է և այս առաջարկվող թեստավորման համակարգի ներդրումը պետք է լինի այն այլընտրանքային մեխանիզմը, որը հնարավորություն է տալու այն մասնագետներին, ովքեր չեն հավաքագրել բավարար քանակությամբ կրեդիտներ հավաստագրման համար, դիմել թեստավորման և հանձնելով վերջինս՝ շարունակել աշխատանքը:

Միևնույն ժամանակ, թեստավորման համակարգի ներդրումը հնարավորություն կտա սահմանել միասնական մեխանիզմ, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պահանջներին համապատասխան կրթություն ստացած անձանց, միասնական քննության միջոցով, վերահաստատելու իրենց գիտելիքների բավարար մակարդակը և պետության կողմից անհատական պրակտիկա իրականացնելու համար սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանությունը, և սահմանված ընթացակարգերին համապատասխան մուտուցել բնակչությանը համապատաս-խան բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ ամրագրելով թեստավորման համակարգի ներդրման վերաբերյալ դրույթներ, հիմք ընդունելով միջազգային փորձը:

**2. Կարգավորման առարկան**

Առաջարկվում է օրենքի մակարդակով սահմանել թեստավորման համակարգի ներդրման վերաբերյալ դրույթներ, ինչը հնարավորություն կտա այն մասնագետներին, ովքեր չենք հավաքագրել բավարար քանակությամբ կրեդիտներ հավաստագրման համար, թեստավորում անցնելու միջոցով շարունակել աշխատանքը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի ընդունման արդյունքում հնարավոր է կլինի ներդնել թեստավորման համակարգ, ինչի արդյունքում սահմանվելու են միասնական պահանջներ և տրամադրելու են հավասար պայմաններ, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պահանջներին համապատասխան կրթություն ստացած անձանց, միասնական քննության միջոցով, վերահաստատելու իրենց գիտելիքների բավարար մակարդակը և պետության կողմից անհատական պրակտիկա իրականացնելու համար սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանությունը:

64.

**«Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Պացիենտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել գործուն մեխանիզմներ ստեղծելու, այդ իրավունքների խախտումներին օպերատիվ արձագանքելու,

| | |
|---|---|
| | խախտված իրավունքների վերականգնմամբ նմանատիպ խախտումների հետագա դեպքերը կանխարգելելու, ինչպես նաև պացիենտների և բժշկական հաստատությունների՝ առողջապահության ոլորտում իրավագիտակցության բարձրացման նպատակով նախատեսվում է ներդնել բժշկական հաշտարարի համակարգ: Այս նպատակով մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Բժշկական հաշտարարի համակարգի գործունեության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի նախագիծը, որն էլ հենք կհանդիսանա «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքի մշակման համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պացիենտների իրավունքներն ամրագրված են առողջապահության ոլորտը կարգավորող բազմաթիվ իրավական ակտերում, դրանց պաշտպանության մեխանիզմները գործող իրավակարգավորումների և իրողությունների շրջանակում բազմազան են, այդուհանդերձ դրանց կիրառման արդյունավետությունը ցածր է և ոչ բոլորին հասանելի: Պացիենտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել գործուն մեխանիզմների բացակայությունը, պացիենտների իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքների աճը, դրանց քննության համար նեղ մասնագիտական գիտելիքների պահանջը ինքնին արդիականություն են հաղորդում բժշկական հաշտարարի ինստիտուտի ներդրմանը, որը կհետապնդի հետևյալ նպատակները.<br>1) ապահովել պացիենտների բողոքների քննման մասնագիտացված, անվճար, արագ և արդյունավետ մեխանիզմ,<br>2) ամրապնդել բնաչկության վստահությունը բժշկական համակարգի նկատմամբ,<br>3) ներդնել բժշկական հաստատություններում պացիենտների իրավունքների պաշտպա-նության առաջին աստիճանի համակարգ,<br>4) կանխարգելել հնարավոր համակարգային ռիսկերը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է խնդրի համապարփակ կարգավորման նպատակով ՀՀ-ում ներդնել պացիենտ-բուժհաստատություն վեճերի լուծման երկաստիճան համակարգ: Առաջին աստիճանում վեճերը կքննվեն բուժհաստատություններում առկա համապատասխան անձի (հանձնաժողովի) կողմից, իսկ չլուծվելու դեպքում կտեղափոխվեն ավելի բարձր հարթակ՝ բժշկական համակարգի հաշտարարի գրասենյակ: Հարկ է Նախագծով սահմանել, որ մինչև Հաշտարարին դիմելը պացիենտը պետք է դիմի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին, որը պետք է օրենքով կամ ներքին կանոնակարգով սահմանված ընթացակարգով քննի բողոքը և դրա վերաբերյալ պատասխան ներկայացնի: Համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ է ընդունել «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքը, քանի որ համակարգի գործունեությունն ուղղակիորեն վերաբերում է ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, ինչը, կարող է սահմանվել միայն օրենքով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակում հասարակական հարաբերությունների կարգավորում, համապատասխան դրույթների ամրագրում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունումով ակնկալվում է ակնկալվում է նվազեցնել և կանխարգելել պացիենտների իրավունքների խախտումները, ապահովել խախտված իրավունքների վերականգնման օպերատիվ և անաչառ համակարգ: Բացի դրանից՝ բժշկական հաշտարարի ինստիտուտի գործարկումը թույլ կտա վեր հանել առողջապահական համակարգի այլ խնդիրներ՝ հնարավորություն տալով դրանց լուծման միջոցով բարելավել ոլորտի ընդհանուր վիճակը |

| | |
|---|---|
| 65. | **«Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրական առկա բացերը և խնդիրները վեր հանելու, դրանց վերլուծության արդյունքներով միասնական մոտեցումների որդեգրման միջոցով ոլորտային նոր մայր օրենքի ընդունման անհրաժեշտությամբ, ինչպես նաև առողջապահական բնագավառում իրականացվող ներկա բարեփոխումներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առողջապահության ոլորտը կարգավորող հիմնական օրենքները, այն է՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է դեռևս 1996 թվականին, «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը՝ 1992 թվականին, «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը՝ 1997 թվականին, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքը և «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը՝ 2002 թվականին: Նշված օրենքները բազմից փոփոխվել են, սակայն ներկայումս անհրաժեշտություն է առաջացել հիմնովին վերանայել առողջապահական ոլորտի օրենսդրությունը՝ նոր միասնական «մայր» օրենքի տեսքով: Այն հնարավորություն կտա այս ոլորտում մարդու սահմանադրական իրավունքների պատշաճ իրականացման երաշխիքներ սահմանելու, պետական քաղաքականության միասնական մոտեցումներն ամրագրելու, համակարգի ընդհանուր կառուցվածքը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը հստակեցնելու, պացիենտների, բուժաշխատողների իրավունքները և պարտականությունները համապարփակ սահմանելու, առողջապահական համակարգի առավել կարևոր ենթահամակարգերի ընդհանուր նկարագրերը տալու, հանրային առողջապահության ոլորտը կարգավորելու և այլ կարևոր խնդիրներ կանոնակարգելու նպատակով: Հաշվի առնելով սույն օրենքի կարևորությունը՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Առողջապահության մասին» ՀՀ օրենքով առաջարկվում է  կարգավորել համակարգի բոլոր առավել կարևոր հարաբերությունները՝ վերջինիս դիտարկելով որպես ոլորտի միասնական մայր օրենք, որի արդյունքում ուժը կորցրած կճանաչվի «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը և այլ օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է օրենքով կարգավորել առողջապահության ոլորտի առավել կարևորություն ներկայացնող հարաբերությունները՝ ոլորտի բարեփոխումներն ու արդի իրավիճակը հաշվի առնելով:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է ունենալ մեկ միասնակա օրենք, որը համապարփակ ձևով կկարգավորի առողջապահության ոլորտը: |
| 66. | **«Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական ասոցիացիաների ֆունկցիոնալ բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական ասոցիացիաների ֆունկցիոնալ բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի |

N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի կետ 3-ի 1-ին ենթակետի ե/ պարբերության պահանջներից:

**1.2.Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ցանկացած ոլորտում տվյալ ոլորտի քաղաքականությունն իրականացնող կառույցի և հասարակության կապի ձևավորմանն է ուղղված տարաբնույթ մասնագիտական ասոցիացիաների հիմնումը, որոնք հնարավորություն են տալիս հասարակությանը, մասնավորապես՝ բժշկական անձակազմին ուղղակի կամ անուղղակի ներգրավված լինել առողջապահության բնագավառի լիազոր մարմնի կողմից իրականացվող քաղաքականությանը: Այս իմաստով, առաջնային դերը պատկանում է մասնագիտական ասոցիացիաներին՝ այն այլընտրանքային ուժին, որն իր մեջ ներառում է տարբեր մասնագիտական տեր մարդկանց և նրանց շահերը: Սակայն, ներկայումս գործող բազմաթիվ մասնագիտական բժշկական ասոցիացիաների դերակատարումը առողջապահության բնագավառին վերաբերող և մասնագիտական կարողություններ պահանջող հարցերին չի ապահովվում: Փոխարեն այն բանի, որ մասնագիտական ասոցիացիաները դառնան մասնագիտական ներուժի ինստիտուցիոնալ շարժիչները՝ ապահովելով պետություն-հասարակություն երկուստեք կապը, երկու կողմերի համար ընդունելի լուծումների որոնումը և դրանց իրագործելիությանը նպաստումը, պետական որոշումների ընդունման և իրականացման գործընթացում կոնսենսուսը, վերջիններս շարունակում են գործել յուրաքանչյուրն իր պատկերացրած շրջանակերում՝ չներկայացնելով տվյալ մասնագիտությամբ բժիշկների մասնագիտական դիրքորոշումը:

Հստակ գործառույթներով և ֆունկցիոնալ կարողություններով մասնագիտական ասոցիացիաների առկայությունն ու արդյունավետ աշխատանքը հանգեցնում է պետական քաղաքականության, կարևորագույն երևույթների և իրադարձությունների վերաբերյալ թափանցիկության ապահովմանը և բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի, իրազեկության մակարդակի բարձրացմանը, հասարակական նախաձեռնության զարգացման աջակցությանը, անկախ վերլուծական օժանդակության խթանմանը:

Ավելի քան 50 մասնագիտական բժշկական ասոցիացիաներ տարբեր մասնագիտություններով՝ այս կամ այն ձևաչափով, անվանմամբ, իրավասությամբ, առաքելությամբ, գործառույթներով, գոյություն ունեն ՀՀ-ում, ընդ որում, կան ինչպես ընդհանուր հարցերով, այնպես էլ հատուկ գործառույթներ ունեցող կառույցներ: Սակայն, դրանց հիմնական սկզբունքը պետք է լինի մեկը, այն է՝ միջնորդ հանդիսանալ և սատարել քաղաքականություն իրականացնող պետական մարմնի-հասարակություն հարաբերություններին, դառնալ այն կապող օղակը, որը հնարավորություն կտա այս կամ այն ոլորտի մասնագետներին համախմբվելով ազդել վարվող քաղաքականության վրա, նպաստելով, որպեսզի պետական մարմինը իր գործողություններն ուղղորդի հասարակության պահանջարկին համընթաց:

**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է մշակել «Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական ասոցիացիաների ֆունկցիոնալ բարեփոխումների բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին»ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ՝ արդյունավետ դարձնելու մասնագիտական ասոցիացիաների համագործակցությունը և ապահովելով համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ կառուցողական միջավայր:

**2. Կարգավորման առարկան**

Առաջարկվում է հայեցակարգի նախագծով նախանշել մասնագիտական ասցիացիաների դերը ներկայիս առողջապահական համակարգի կայացման գործում և գնահատելով առկա իրավիճակը ու համադրելով միջազգային մոտեցումները մասնագիտական ասոցիացիաների աշխատանքի վերաբերյալ, առաջարկներ ներկայացնել ՀՀ-ում գործող բժշկական ասոցիացիաների դերի բարձրացման և ֆունկցիոնալ բարեփոխման ուղղությամբ:

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում հնարավոր է լինելու դուրս բերել այն հարթությունները, համագործակցության եզրերը, ֆունկցիոնալ բարեփոխման ուղիները, որոնք կնպաստեն իրական համագործակցության նախաձեռնմանը, կառուցողական դեր կունենան առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավման գործում, և կդառնան այն անկյունաքարային կարծիք տրամադրող կառույցները, որոնք կապահովեն առողջապահության ոլորտի քաղաքականության պատշաճ իրականացմանը: |
| 67. | **«Հայաստանի Հանրապետության առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխում-ների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 4-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Թեև առողջության առաջնային պահպանումը դիտարկվում է առողջապահության համակարգի գերակա ուղղություններից մեկը և որպես բարեփոխման իրականացման ճանապարհ է ընտրվել այլ երկրներում գործարկված ու առավել արդյունավետ ճանաչված ընտանեկան բժշկության ներդրումը, ներկայում՝ բարեփոխումների սկզբից շուրջ 20 տարի անց, արձանագրվում է, որ այն բերել է զգալի առաջընթացի՝ հանրապետության մարզերում (հատկապես գյուղական վայրերում), մինչդեռ՝ մեծ քաղաքներում և հատկապես, մայրաքաղաքում, դեռևս լիարժեք չէ: Մինչ այժմ իրականացված առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումները հիմնականում ուղղվել են ՀՀ մարզերի գյուղական առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողների ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաև ընտանեկան բժշկության ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ որպես կառուցվածքային առավել արդյունավետ, մատչելի ու նպատակահարմար մոդելի:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է մշակել առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների հայեցակարգ՝ ապահովելով բնակչության համար առողջության առաջնային պահպանման ծառայությունների համընդհանուր մատչելիության սկզբունքը, նպատակ ունենալով ուժեղացնել առողջության առաջնային պահպանման օղակը, քաղաքային վայրերում զարգացնել ընտանեկան բժշկության ինստիտուտը, բարելավել առողջության առաջնային պահպանման օղակում մատուցվող բժշկական ծառայությունների որակը, նվազեցնել հիվանդանոցային դեպքերի թիվը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները ամրագրել իրավական ակտով՝ սահմանելով իրականացվելիք բարեփոխումների ժամկետներ:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում կսահմանվեն բարեփոխումների ուղիները, առողջության առաջնային պահպանման օղակում վերհանված խնդիրների առաջարկվող լուծումները, առաջարկվող քաղաքականության հիմնական դրույթները: |

| | |
|---|---|
| 68. | **«Հայաստանի Հանրապետությունում առողջության պարտադիր ապահովագրության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում առողջության պարտադիր ապահովագրության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման (այսուհետ՝ Հայեցակարգ) ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 2-րդ կետի 7-րդ ենթակետով 2018 թվականի համար նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ (համաձայնությամբ) Հայաստանում առողջության պարտադիր ապահովագրության հայեցակարգի մշակման անհրաժեշտությունից:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում, ՀՀ-ում գործում է կամավոր ապահովագրության ինստիտուտը, իսկ 2017 թ. հոկտեմբերի 1-ից սոցիալական փաթեթի շահառուների բժշկական օգնությունն ու սպասարկումը իրականացվում է ապահովագրական ընկերությունների միջոցով:<br>Հայեցակարգի ներդրմամբ կբարձրանա Հայաստանի Հանրապետության բնակչության համար բժշկական օգնության և սպասարկման որակը և մատչելիությունը՝ առողջապահության ոլորտի ֆինանսավորման նոր աղբյուրների ներգրավման, ինչպես նաև բուժօգնության որակի վերահսկման նոր մեխանիզմների ներդրման միջոցով, կբարելավվի առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, կկրճատվի ստվերայնությունը և կբարձրանա կառավարման արդյունավետությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության պարտադիր ապահովագրություն՝ սահմանելով պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հիմնական սկզբունքները, կազմակերպա-իրավական և ֆինանսավորման մեխանիզմները, շահառուների հնարավոր շրջանակը, փոխհատուցման ենթակա բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փաթեթը, ապահովագրավճարների հաշվարկման սկզբունքները և հավաքագրման մեխանիզմները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության պարտադիր ապահովագրություն:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ՀՀ-ում առողջության պարտադիր ապահովագրության արդյունքում բարձրացնել բնակչության համար բժշկական օգնության և սպասարկման որակը, այն դարձնել առավել մատչելի և հասանելի, բարելավել առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, կրճատել ստվերայնությունը: |
| **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն** | |
| 69. | **«Բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) ուսուցման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանա-գրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017-2022 թվա-կանների գործունեության ծրագրից: Հայեցակարգի նպատակն է հանրակրթության բոլոր մակար-դակներում վերանայել բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի ուսուցման մոտեցումները, ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման նոր մեխանիզմները, |

| | |
|---|---|
| | առարկաները դասավանդող ուսուցիչներին ներկայացվող չափորոշչային պահանջների սահմանումը և համապատասխան մեթոդաբանության մշակման այլ խնդիրներ:<br><br>**2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը**<br>Ուսուցիչները ոչ միշտ են կիրառում մոտեցումներ և մեթոդներ, որոնք սովորողին կմոտիվացնեն տվյալ առարկան սիրելու, ավելի խորը ուսումնասիրելու, և, հետագայում որպես մասնագիտություն ընտրելու համար: Անհրաժեշտ է սովորողին իրեն «հասանելի» լեզվով մատուցել առարկան, բարձրացնել սովորողների կողմից որպես գիտության համընդհանուր լեզու մաթեմատիկայի դերը, հասարակության զարգացման մեջ մաթեմատիկայի պատմական նշանակությանը: Բնագիտական առարկաները ոչ բոլոր սովորողների կողմից են հեշտ ընկալելի, իսկ ուսուցչի կողմից հետևողական չլինելը հանգեցնում է բնագիտական ուղղվածություն ունեցող սովորողների նվազմանը: Անհրաժեշտ է ձևավորել նոր մոտեցումներ՝ բնագիտական առարկաները գրավիչ և հասանելի դարձնելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաները մատչելի են բոլոր սովորողների համար, նրանք բավականին լավ են տիրապետում ժամանակակից տեխնոլոգիաներին, ավելի արագ և հեշտ են ծանոթանում ու կիրառում առօրյայում, ավելի շատ ու բազմազան հնարավորություններ ունեն ինֆորմացիա ստանալու ցանկացած բնագավառից, մինչդեռ ուսուցիչները բավականին հետ են մնում և հմտությունների ձևավորման, և ծրագրային նյութը ավելի արդիական դարձնելու ու մատուցելու առումով: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ճկուն ծրագիր և դասավանդման մեթոդաբանություն, որ ուսուցիչը և աշակերտը խոսեն միևնույն լեզվով, նաև՝ մրցունակ լինեն տվյալ ոլորտում:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ապահովել սովորողների տրամաբանական ու տարածական պատկերացումների, ճարտարագիտական, ինժեներական և համակարգային մտածողության զարգացումը, ալգորիթմական և քննական մտածողության ձևավորումը, տարաբնույթ խնդիրներ մոդելավորելու և վերլուծություններ կատարելու, տվյալների հետ աշխատելու, հետագա կրթության և մասնագիտական կողմնորոշման, գործունեության համար կարողությունների զարգացումը: Նպաստել թիմային աշխատանք և համագործակցության հմտություններ ձևավորելուն, խթանել սովորողների ստեղծագործականությունը, պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ: Այլ կերպ ասած՝ առավելագույնս ապահովել սովորողին ներկայացվող չափորոշչային պահանջները: |
| 70. | **«Հանրակրթական հաստատությունների կառավարման նոր համակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017-2022 թվականների գործունեության ծրագրից: Նպատակն է՝ վերանայել և առավել արդյունավետ դարձնել հանրակրթական հաստատությունների կառավարումը:<br><br>**2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակ**<br>Կառավարման գործող համակարգը արդյունավետ չէ, վերանայման կարիք ունեն և տնօրենների ընտրության, նշանակման և գործունեության գնահատման մեխանիզմները, և կառավարման խորհուրդների ձևավորումը, գործունեությունն ու լիազորությունները, ինչպես նաև հաստատության գործունեության թափանցիկ և համագործակցային նոր մեխանիզմների կարիք կա:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Թափանցիկ հաշվետու և համագործակցային կառավարման մեխանիզմների մշակում և ներդրում, հանրակրթության որակի բարձրացում: |

| | |
|---|---|
| 71. | **«Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տնօրենի ընտրության (նշանակման) նոր համակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017-2022 թվականների գործունեության ծրագրից: Նպատակն է՝ վերանայել հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության համակարգը:<br>**2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը**<br>Ներկայումս գործող համակարգը ամբողջությամբ չի բացահայտում տնօրենների մասնագիտական, կառավարչական և անձնային հմտություններն ու որակները, ինչ հետագայում բերում է խնդիրների, որոնք իրենց հերթին բերում են ոչ արդյունավետ կառավարման և կրթության որակի իջեցման:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նոր համակարգի ներդրում, որը հնարավորություն կտա հմուտ և որակյալ տնօրեններ ընտրել: |
| **72.** | **ՀՀ Արմավիրի մարզում 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում (Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոցի և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխա-ների N 2 հատուկ (օժանդակ) դպրոցի վերակազմակերպման (վերանվանման) միջոցով) ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել**<br><br>**1) Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոցի և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոցի վերակազմակերպման միջոցով վերանվանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 656-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 14-րդ կետի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:<br>**2) Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը**<br>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:<br>Օրենքով ամրագրվել է, որ հատուկ դպրոցները, պետք է վերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն հանրակրթական դպրոցներին, կազմակերպելու համար կրթության առանձնահատուկ պայման- |

| | |
|---|---|
| | ների կարիք ունեցող երեխաների կրթությունը: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, որպես երկրորդ մակարդակ, պետք է մատուցեն անձի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական ծառայություններ (կազմակերպում, համակարգում) և իրականացնեն անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի համաձայն նախատեսվում է 2018 թվականի ընթացքում Արմավիրի մարզում 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում:<br>Միաժամանակ նախատեսվում է Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում: Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների ձևավորումը կապահովի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելիությանը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումը իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում:<br><br>**3) Ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրմամբ նախատեսվում է համընդհանուր ներառական կրթության, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդնում, ինչը կնպաստի կրթության ոլորտում սահմանված նպատակների իրականացմանը, մասնավորապես կապահովի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար: |
| 73. | **«Նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմների» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախադպրոցական համակարգի հիմնախնդիրների լուծումը հնարավոր չէ առանց պետական նպատակաուղղված քաղաքականության և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների լայն համագործակցության:<br><br>**2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը**<br>Նախադպրոցական հաստատությունների աշխատակիցները բավականին ցածր են վարձատրվում: Ուսումնական հաստատության բյուջեն փոքր է, և նույնն է բոլոր ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց մեծությունից, խմբերի քանակից և դրանց խտությունից: Ուստի, արդիական է դրանք տարբերակել՝ ըստ մեծ և փոքր ուսումնական հաստատությունների:<br>Նման մոտեցումը թույլ կտա ոչ միայն առավել արդյունավետ կառավարել համակարգը, այլև բարձրացնել նախադպրոցական կրթության որակն ու արդյունավետությունը՝ ուսումնական հաստատություններն ավել շահագրգռված կլինեն մեծ թվով երեխաների ընդունել, սա մրցակցություն կառաջացնի. ուսումնական հաստատությունները ավելի շահագրգռված կլինեն իրենց շենքային, գույքային պայմանները բարելավել և ներգրավել որակյալ բազմամասնագիտական կադրեր:<br>Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը ըստ փաստացի միջին հաճախումների՝ նույնպես արդյունավետ չէ: Ուսումնական հաստատության կառավարման տեսանկյունից առավել նպատակահարմար է ուսումնական հաստատության ֆինանսավորումն |

| | |
|---|---|
| | ըստ ցուցակային թվի: Դա հնարավորություն կտա նախադպրոցական ուսումնական հաստա-տությունների աշխատանքն ավելի կայուն դարձնել, քանի որ այդ դեպքում հնարավոր կլինի պլանավորել բյուջեն և այլ ծախսեր նախատեսել, աշխատել ուսումնական հաստատության պայմանների բարելավման վրա:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրում, պետական աջակցություն նախադպրոցական կրթության զարգացմանը: |
| **74.** | **«Արտադպրոցական դաստիարակության 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Արտադպրոցական դաստիարակության 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի նպատակն է նպաստել արտադպրոցական դաստիարակության ոլորտի աստիճանական զարգացմանը, նորացմանն ու կատարելագործմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմա-կերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրե-նասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:<br>ՀՀ-ում արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ցանցը ձևավորվել է խորհրդային իշխանության տարիներին:<br>Երկրի անցումային շրջանին բնորոշ սոցիալական, տնտեսական ծանր հետևանքներով արտադպրոցական դաստիարակության ոլորտում կուտակվել են բազմաբնույթ հիմնախնդիրներ:<br>Նախորդ տարիներին արտադպրոցական դաստիարակության ոլորտի առաջնային ուղղություն-ներն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի արդիականացումը:<br>Ձեռնարկած միջոցներն այսօր չեն բավարարում արտադպրոցական դաստիարակության համակարգի լիարժեք զարգացմանը:<br>Ակնհայտ է, որ առանց էական բարեփոխումների և պետական աջակցության դժվար է տեսնել արտադպրոցական դաստիարակության ոլորտի նկատելի զարգացում:<br>Ռազմավարության նախագիծը ուղղված է արտադպրոցական դաստիարակության համակարգի հետագա զարգացման և ռազմավարական հիմնախնդիրների իրականացմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջին ժամկետ հատվածում սահմանել այն հիմնական դրույթները, նպատակները, խնդիրներն ու զարգացման ուղիները, որոնք համընդհանուր կլինեն արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում նոր որակական նախադրյալներ ստեղծելու հիմքում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավա-րական ուղղությունների սահմանում և դրանց համապատասխան գործընթացների կանոնակարգում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտի կայուն զարգացման ապահովում, նորացում, մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և կատարելագործում: |
| **75.** | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017-2022 թվա-կանների պետական ծրագրի 8-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջից, նոր մշակված պետական կրթական չափորոշիչների պահանջներից (բովանդակային և տնողության), փոփոխվող աշխա- |

| | |
|---|---|
| | տաշուկայի պահանջներին արագ արձագանքելու հանգամանքից, նոր տեխնոլոգիաների, գիտության և տնտեսության զարգացման արդյունքում նոր մասնագիտությունների ի հայտ գալով: Միջոցառման իրականացումը կնպաստի ուսումնական հաստատություններում պահանջարկ չվայելող մասնագիտությունների բաժինների փակմանը և պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ներդրմանը, մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում ուսուցանվող մասնագիտությունների արդիականացմանը:<br><br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և ոևակավորումների ցանկերը վերանայվել են 2015 թվականին, որի նպատակն էր այն համապատասխանեցնել մասնագիտական կրթության և ուսուցման որակավորումների ազգային շրջանակին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված կրթական միջազգային բաղադրիչներին:<br>Սակայն վերջին երկու տարիներին ՄԿՈւ համակարգում իրականացված մի շարք բարեփոխումներ, կատարված ուսումնասիրություններ, ինչպես նաև ՆՄՄԿՈւ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցման գործընթացը առաջացրել են անհրաժեշտություն վերանայել մասնագիտությունների ցանկը:<br>Հարկ է նշել նաև, որ վերջին տարիներին ՆՄՄԿՈՒ ոլորտում մշակվել են շուրջ 170 պետական կրթական չափորոշիչներ և համապատասխան մոդուլային ծրագրեր, ինչպես նաև վերանայվել են են գործող չափորոշիչները, որի արդյունքում չափորոշչով նախկինում սահմանված մի շարք ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների ուսուցման բովանդակային և տևողության պահանջները, ինչպես նաև որակավորումները փոփոխվել են:<br>Ելնելով վերոնշյալ խնդիրներից՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերում փոփոխությունների կատարումը դարձել է առաջնահերթ:<br><br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարումը հնարավորություն է ստեղծում Հայաստանում իրականացվող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ - տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին:<br><br>**4. Կարգավորման առարկան**<br>«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարել կանոնակարգում է նախնական (արհեստա-գործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններում տրամադրվող կրթական ծառայությունների մատուցումը ըստ ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների:<br><br>**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ մարզերի զարգացման ուղղություններից և աշխատաշուկայի առանձնահատկություններից ելնելով՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստա-տություններում վերանայված և նոր ներդրված մասնագիտություններով ուսուցման իրակա-նացում: |

| | |
|---|---|
| 76. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ներկայումս գործող ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի վերանայման ու ներկայիս իրավիճակի համապատասխան դաշտի կարգավորման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու որոշ դրույթներ:<br>Բուհերում, ըստ մասնագիտությունների (բացառությամբ արվեստի ու սպորտի ոլորտի) ընդունելության մրցույթն իրականացվում է միասնական քննությունների արդյունքների հիման վրա: Դիմորդը միասնական քննություն կարող է հանձնել տարվա մեջ միայն 1 անգամ:<br>Ներկայումս դիմորդները հայտագրում են 10 մասնագիտություն (2 անվճար և 8 վճարովի ուսուցման համար), որը նվազեցնում է մասնագիտական կողմնորոշմամբ բուհ ընդունվելու հնարավորությունը:<br><br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է ներդնել միասնական քննությունների այլընտրանքային տարբերակ՝ արտաքին գնահատումների համակազ: 12-րդ դասարանում իրականացնել 3 արտաքին գնահատում, դրանց արդյունքները բերել հանրագումարի 20 միավորանոց համակարգով և դպրոցի շրջանավարտներին (ցանկության դեպքում) հնարավորություն տալ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու արտաքին գնահատումների հանրագումարով:<br>Նախատեսվում է բուհերի ընդունելության մրցույթն անցկացնել մեկ մասնագիտության հայտագրմամբ: Հիմնական մրցույթից հետո անցկացնել թափուր տեղերի մրցույթ՝ 4 մասնագիտության հայտագրմամբ:<br><br>**4. Կարգավորման առարկան**<br>ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության և միասնական քննությունների գործընթացը:<br><br>**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման դեպքում 12-րդ դասարանցիները հնարավորություն կունենան միասնական քննության ամբողջ ծավալը հանձնել մաս-մաս: Նախատեսվում է, որ կնվազեն պատահական մասնագիտություններով (պարզապես ինչ որ տեղ ընդունվելու համար) ներկայացված հայտերը: |
| **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե** | |
| 77. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագրից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային |

| | |
|---|---|
| | որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը: Շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին, երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում նաև՝ օտարերկրյա պետություններ: Արդյունքում՝ գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները բերեցին գիտության արագ «ծերացման», գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի որակական փոփոխության, խախտվեցին գիտական և գիտամանկավարժական դպրոցների շարունակականությունը, սերնդափոխության սահուն ընթացքը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունում: Նշված ծրագրի կատարումը նպատա-կաուղղված է գիտության ոլորտում այնպիսի միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, որոնց արդյունքում հնարավոր կլինի ներդնել ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման մեխանիզմներ, մեծացնել երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, բարձրացնել գիտական աշխատողի վարկանիշը և հետաքրքրություն առաջացնել երիտասարդների մեջ գիտության նկատմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ նպատակաուղղված երիտասարդ գիտնականների և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցմանը: Մասնավորապես, պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների հայտերի մրցույթների ժամանակ սահմանվել են երիտասարդ կատարողների (ասպիրանտներ և մագիստրանտներ) մասնակցության նվազագույն սահմանը, իրականացվում են ասպիրանտների և երիտասարդ գիտնականների աջակցության, բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների խրախուսման, ինչպես նաև շարժունակության ապահովման ծրագրեր: Սակայն դրանք բավարար չեն գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերարտադրության և բնագավառի կադրային կազմի տարիքային կառուցվածքի անհրաժեշտ փոփոխությունն ապահովելու համար: Նպատակին կարելի է հասնել միայն պետական ծրագրային քաղաքականության միջոցով, որի արդյունավետությունը պայմանավորված է համակարգային բնույթով և, որը հնարավորություն կտա կենտրոնացնել ռեսուրսները՝ բնագավառը երիտասարդ կադրերով համալրելու և ամրապնդելու առաջնայնությունների վրա:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում ներդնել գիտական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանա-կակից եղանակներ, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, կբերի գիտական կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացմանը:<br>Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման ծրագիրը կներառի տաղանդավոր երիտասարդներին գիտության ասպարեզ ներգրավումը խթանող, օտարերկրյա պետություններում աշխատող կամ բուհերում սովորող հայ երիտասարդների վերադարձին նպաստող մասնագիտական ու սոցիալական պատշաճ պայմանների ստեղծման նախադրյալներ:<br>Ծրագրի ընդունումն ու իրականացումը կնպաստի գիտության և տեխնոլոգիաների բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը |

| | |
|---|---|
| 78. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագրից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում դանդաղ են իրականացվում կառուցվածքային բարեփոխումները, գիտական կազմակերպություններում ներդրված չէ աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ժամանակակից համակարգը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության «Գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագծի ընդունում: Նշված ծրագրի կատարումը նպատակաուղղված է գիտության բնագավառի ոլորտային և միջոլորտային մոտեցմամբ օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, անկախ գերատեսչական պատկանելությունից, միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունների միավորմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գիտական կազմակերպություններում պետք է ներդնել աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ժամանակակից համակարգ, հստակեցնել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները (արժևորելով տնօրենի պաշտոնը և վարչական ազդեցությունից հանելով գիտական որոշումների ընդունման գործառույթները), սահմանափակել գիտական ստորաբաժանումների ղեկավարների և տնօրենի պաշտոններն անընդմեջ զբաղեցնելու ժամանակահատվածը, ապահովել առանձին ֆինանսատնտեսական և կազմակերպչական ինքնուրույնություն ունեցող ստորաբաժանումների գործունեությունը: Անհրաժեշտ է նաև հստակեցնել բուհերում գիտական ստորաբաժանումների կազմակերպաիրավական կարգավիճակը՝ ապահովելով ֆինանսատնտեսական գործունեության որոշակի ինքնուրույնություն և խրախուսելով բուհերի մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը (համաֆինանսավորման սկզբունքով ծրագրերի իրականացում, համատեղ լաբորատորիաների ստեղծում և այլն):<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում ներդնել գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման ժամանակակից համակարգ, որն էլ իր հերթին կբարձրացնի գիտական հետազոտությունների արդյունավետությունը: |
| 79. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման կարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագրից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրից: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ-ում պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների իրականացման մեջ ներգրավված են ընդհանուր թվով 87 գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ բուհ) և բուհերի կազմում ընդգրկված մասնաճյուղեր: Սակայն գիտության պետական ֆինանսավորման անբավարար մակարդակը, գիտության որոշ բնագավառներում բարձր որակավորում ունեցող կադրերի ոչ բավարար թվաքանակը, բարձր որակավորում ունեցող գիտաշխատողների բարձր տարիքային կազմը, ինչպես նաև գիտական ենթակառուցվածքների մեծամասնության անհամապատասխանությունն արդի չափանիշներին հանգեցնում է գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության նվազման:<br>Նմանօրինակ վիճակի հիմնական պատճառներից է գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման և պետական ֆինանսավորման ծավալների ու արդյունավետության համապատասխանեցման մեխանիզմների բացակայությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման կարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունում, որը կնպաստի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կազմակերպություններին հատկացվող պետական ֆինանսավորման ծավալների ու արդյունավետության համապատասխանեցմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գիտության արդի պահանջներին համապատասխան գիտական կազմակերպությունների արդյունավետության բարձրացում, գիտության ոլորտում բյուջետային միջոցների բաշխման արդյունավետության աճի ապահովում, ազգային տնտեսության մրցունակության բարձրացման մեջ գիտության ոլորտի ներդրման աճի ապահովում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների կիրառումը հնարավորություն կտա մի շարք գիտաչափական և ոչ գիտաչափական չափանիշների համեմատության միջոցով ստանալ ամբողջական պատկեր յուրաքանչյուր բնագավառի գիտական կազմակերպությունների առկա վիճակի, գիտական ներուժի և զարգացման հեռանկարների վերաբերյալ: Դրա վրա հիմնված գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության և պետական ֆինանսավորման ծավալների համապատասխանեցումը կհանդիսանա գիտության ոլորտի հետագա առաջընթացի խթան, կնպաստի գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը, ղեկավարման արդի մեխանիզմների և տնտեսության մեջ գիտական արդյունքների ներդրմանը, ինչպես նաև գիտության ոլորտի մրցունակության բարձրացմանը: |
| **Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն** | |
| 80. | **«Սմբատաբերդ» և «Բջնի» պատմամշակութային արգելոց-թանգարան ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Բջնի ամրոց» և «Սմբատաբերդ» պատմամշակութային արգելոցների ստեղծումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Բջնի ամրոց» և «Սմբատաբերդ» հուշարձանները ունեն հանրապետական նշանակություն և ընդգրկված են պետական ցուցակում: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը բխում է նաև «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից»: |

| | |
|---|---|
| | Պատմամշակութային արգելոցների ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորության: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հուշարձանները հանդիսանում են պետական սեփականություն և 2005 թվականից վերականգնվում են պետական միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պատմամշակութային արգելոցների ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 17-րդ հոդվածների պահանջներին: «Բջնի ամրոց» և «Սմբատաբերդ» հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին: |
| 81. | **«Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու կարգը և ձևը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 981-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս մշակութային արժեքների արտահանման թույլտվությունը քաղաքացիներին տրամադրվում է միայն թղթային տարբերակով: Թույլտվության տրամադրման նախատեսումը նաև էլեկտրոնային եղանակով հնարավորություն կտա արդեն մշակութային արժեքների փորձաքննություն իրականացրած քաղաքացիներին առցանց (էլեկտրոնային) եղանակով |

| | |
|---|---|
| | ներկայացնել պահանջվող փաստաթղթերի փաթեթը պետական լիազոր մարմին և ստանալ արտահանման թույլտվությունը էլեկտրոնային եղանակով:<br>Համակարգի ներդրումը և դրա միացումը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին հնարավորություն կտա զուգահեռաբար այդ կառույցին տրամադրել արտահանման թույլտվության էլեկտրոնային օրինակը և մաքսային անցակետերում առավել արդյունավետ իրականացնել մաքսային հսկողություն մշակութային արժեքների արտահանման գործընթացների օրինականության նկատմամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկա փուլում արտահանման թույտվության տրամադրման համար քաղաքացիները լիազոր մարմին են ներկայացնում և նրանից ստանում անհրաժեշտ փաստաթղթերի բացառապես թղթային տարբերակները: Սա հավելյալ դժվարություններ է առաջացնում այն քաղաքացիների համար, ովքեր նախկինում արդեն իրականացրել են մշակութային արժեքների փորձաքննություն, և լիազոր մարմնին այցելելու անհրաժեշտությունը բացակայում է:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է նախատեսել նաև էլեկտրոնային եղանակով թույլտվության տրամադրման ինստիտուտը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մշակութային արժեքների արտահանման գործընթացների պարզեցումն է, պետական լիազոր մարմնի հետ քաղաքացու նվազագույն առնչությունը, ժամանակի արդյունավետ օգտագործումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կունենանք գործընթացի էլեկտրոնային եղանակով իրականացման հնարավորություն, որի հետևանքով արդեն մշակութային արժեքների փորձաքննություն իրականացրած քաղաքացիները կխնայեն ժամանակ և ռեսուրսներ՝ արտահանման եզրակացությունը ստանալու համար:<br>Բացի այդ, մաքսային մարմինների համար հնարավորություն կստեղծվի իրականացնել արտահանման գործընթացների համակարգված հսկողություն: |
| 82. | **«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր թատերահամերգային, թանգարանային, սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված տոմսային տեղեկատվական համակարգի ներդրումից հետո տոմսերի իրացումն իրականացնել բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսվում է բոլոր կենտրոններում էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի ստեղծում ու ներդրում, որը կձևավորի թատերահամերգային, թանգարանային, սպորտային, ժամանցային ծառայությունների մատուցման ոլորտում միանգամայն նոր միջավայր, կամրագրվեն տոմսային տնտեսության վարման նոր սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան առավել վերահսկելի ու համահավասարության հիման վրա արդյունավետորեն կազմակերպել մշակութային-ժամանցային ծրագրային քաղաքականությունը: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է սեղմ ժամկետներում թատերահամերգային, թանգարանային, սպորտային, ժամանցային կենտրոնների համար ներդնել էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգ, ինչը վաճառքի հնարավոր բոլոր ուղիների միջոցներով տոմսերի ձեռքբերումը կդարձնի առավել դյուրին ու հարմարավետ: Տոմսերի գնման հասանելիությունը էապես կխթանի պահանջարկը, հետաքրքրությունը մշակութային, սպորտային ու ժամանցային կյանքի հանդեպ: Ինչպես նաև էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի ներդնումը կնպաստի տոմսերի իրացման շրջանառության իրական ծավալների բացահայտմանը, հետևաբար նաև պետական բյուջեի եկամուտների աճին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր թատերահամերգային, թանգարանային, սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների տոմսերի իրացման ընթացքի հետ կապված լիարժեք տեղեկատվությունն ու վերահսկելիությունը էական գործիք կհանդիսանան գնային քաղաքականությանը հետևելու և հնարավոր չարաշահումները կանխելու ուղղությամբ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում գործող բոլոր թատերահամերգային, թանգարանային, սպորտային կազմակեր-պությունների և ժամանցային կենտրոնների համար կսահմանի պարտադիր պահանջ՝ միասնական ավտոմատացված համակարգի ներդրումից հետո տոմսերի իրացումն իրականացնել բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով: |
| 83. | **«Հուշարձանների պետական ցուցակում նորահայտ օբյեկտ ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգում սահմանված չեն այն չափորոշիչները, համաձայն որոնց նոր հայտնաբերված մշակութային ժառանգության նյութական անշարժ դրսևորումը կարող է արժևորվել ու սահմանված կարգով ստանալ նորահայտ օբյեկտի կարգավիճակ և ընդգրկվել ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: Միայն գործող կարգի 15-րդ կետում նշված է **«համապատասխան հիմնավորմամբ»** բառակապակցությունը, ինչը մասնագետների կարծիքով բավարար չէ նոր հայտնաբերված մշակութային ժառանգության նյութական անշարժ դրսևորումը արժևորելու գործընթացը որոշակի սահմանված չափորոշիչներով կանոնակարգելու, համապատասխան բնութագրմամբ ընտրություն կատարելու, հիմնավոր առաջարկություններ ներկայացնելու համար:<br>ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ պետությունների մշակութային ժառանգությանը վերաբերող իրավական փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ հուշարձանների արժևորման նպատակով չափորոշիչների սահմանումը խիստ կարևոր է, և ՀՀ մշակույթի նախարարությունը, ելնելով պատմամշակութային ժառանգության պահպանման գերակա խնդրից, որոշման նախագծի ընդունումը հիմնավորում է հուշարձանների հաշվառման և պահպանության բնագավառում առկա այս իրավական բացը լրացնելու անհրաժեշտությամբ:<br>**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**<br>ՀՀ գործող իրավական դաշտը հնարավորություն չի ընձեռում հստակ ու կանոնակարգված |

| | |
|---|---|
| | իրականացնել նորահայտ օբյեկտների արժևորման գործընթացը և շատ հաճախ ներկայացված առաջարկների մերժումն ու ընդունումը լինում է ոչ պատշաճ հիմնավորմամբ: Ընդունված չափորոշիչները հնարավորություն կտան առավել կանոնակարգելու նախարարության կողմից հուշարձանների պետական ցուցակները կազմելու, հստակեցնելու, այդ ցուցակներում նոր միավորներ ընդգրկելու և անհրաժեշտության դեպքում պետական ցուցակից ընդգրկված հուշարձանները հանելու գործընթացները: Այդ նպատակով ներկայացված առաջարկությունները կունենան անհրաժեշտ հիմնավորումներ:<br>**3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**<br>Մշակութային անշարժ ժառանգության արժևորման, հուշարձանների անխաթար պահպանության համար անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծում, դրանք հաջորդ սերունդներին փոխանցման գործընթացի անընդհատության ապահովում:<br>**4. Կարգավորման նպատակը և բնույթը**<br>Ստեղծել համապատասխան իրավական դաշտ՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում նոր միավորներ ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձաններ հանելու գործընթացները համապատասխան հիմնավորմամբ և կանոնակարգված իրականացնելու համար:<br>**5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**<br>Նախագծի մշակման գործընթացում քննարկումներ են կազմակերպվել բնագավառի փորձառու՝ ՀՀ ԳԱԱ պատմության, արվեստի, հնագիտության ինստիտուտների, ՀՀ մշակույթի նախարարության մասնագետների մասնակցությամբ: Խնդիրը նախարարության մասնագետների մասնակցությամբ քննարկվել է նաև ՀՀ մշակույթի նախարարության փորձագիտական հանձնաժողովի անդամների հետ: Չափորոշիչների սահմանման վերաբերյալ առաջարկը մասնագիտական կարծիքի է ուղարկվել բնագավառի հետ առնչվող գիտահետազոտական ինստիտուտներին, ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին, նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպություններին: Ստացված դիտողություններն ու առաջարկություններն ամփոփվել է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության կողմից:<br>**6. Ակնկալվող արդյունքը**<br>Կանոնակարգել մշակութային ժառանգության անշարժ նյութական դրսևորումների արժևորման, նորահայտ օբյեկտի կարգավիճակ տալու, պետական ցուցակից հուշարձանը հանելու գործընթացները: |
| 84. | **«Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների հավաստագրման կարգը, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում մասնագիտական գործունեության տեսակների ցանկը և պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կարգի ընդունումը պայմանավորված է պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարության պահանջից: Բնագավառի մասնագետների գործունեության որակի, նրանց նկատմամբ պահանջների կանոնակարգման բացակայությունը և կադրերի վերապատրաստման գործընթացի անհրաժեշտությունը: Կարևորելով պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների բնագավառում մասնագետների գործունեության որակի հսկողության դերը՝ անհրաժեշտ է բարեփոխումների միջոցով մեծացնել պատասխանատվությունն այս ոլորտի նկատմամբ՝ |

| | |
|---|---|
| | կիրառելով մասնագետների գիտելիքների բարձրացման և կարողությունների գնահատման նոր մոտեցումներ ու չափորոշիչներ: Բնագավառի մասնագետների գործունեության նկատմամբ կանոնակարգումը պահանջում է հավաստագրման գործընթաց, ինչ հնարավոր չէ կատարել ներկայիս օրենսդրությամբ ամրագրված լիցենզավորման պահանջի պարագայում:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, հնագիտական պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, դրանց գիտանախագծային փաստաթղթերի, ինչպես նաև պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմման, փորձաքննման, գիտական ղեկավարման, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքների որակյալ իրականացում:<br>Հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, հնագիտական պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, դրանց գիտանախագծային փաստաթղթերի, ինչպես նաև պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմման, փորձաքննման, գիտական ղեկավարման, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներն իրականացնելու իրավասություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց և (կամ) կազմակերպություններ ներկայացվող պահանջների սահմանում և հավաստագրերի տրամադրում: |
| **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | |
| 85. | **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է գործատուների վարչական բեռի թեթևացման, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերլուծության արդյունքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների հստակեցման և պարզեցման, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:<br>Նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի , 4-րդ բաժնի 4.2 գլխի 2-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թ. ապրիլի 27-ի նիստում ՀՀ վարչապետի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ արդարադատության նախարարություններին տրված հանձնարարականի (27.04.2017 թ. նիստի N 17 արձանագրություն, N 29.7/[403491]-17) պահանջից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թ. հունիսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքում կատարվեցին բավականին մեծ թվով փոփոխություններ, որոնց զգալի մասը ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցնելու գործընթացի համատեքստում էր: Օրենքի ընդունումը պայմանավորված էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի որոշակի դրույթների կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրներով:<br>ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրով ՀՀ կառավարությունը, կարևորելով արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման համար պայմանների ապահովումը, նախատեսել է նախաձեռնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի արմատական փոփոխություններ եվրոպական ժամանակակից միտումներին համահունչ: Այս համատեքստում մասնավորապես նպատակադրվել է վերացնել աշխատավարձի հավելումների և աշխատողների հատուցումների կոշտ կարգավորումները՝ բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության և կոլեկտիվ բանակցությունների կայացմանը զուգընթաց: |

| | |
|---|---|
| | ՀՀ կառավարության 2017 թ. ապրիլի 27-ի նիստում ՀՀ վարչապետի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ արդարադատության նախարարություններին հանձնարարվել է (27.04.2017 թ. նիստի N 17 արձանագրություն, N 29.7/[403491]-17) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ՝ գործատուների համար վարչական բեռը թեթևացնելու նպատակով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով կառաջադրվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման առավել ճկուն մեխանիզմներ՝ միջազգային լավագույն փորձը հիմքում ունենալով, կհստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ իրավակիրառական պրակտիկայում տարընկալման տեղիք տվող դրույթները, ինչպես նաև առանձին դրույթներն էլ կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ աշխատանքային օրենսգրքի կատարելագործում՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հստակեցման միջոցով:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունմամբ կթեթևանա գործատուների վարչական բեռը, կբարելավվեն աշխատողներին պետության կողմից ապահովվող սոցիալական երաշխիքները, կպարզեցվեն և կհստակեցվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները: |
| 86. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված՝ զբաղվածության պետական կարգավորման նոր ուղղության սահմանումը: Նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4.2 կետի 1-ին ենթակետի պահանջներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի 4.2-րդ բաժնի 2-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության և ՀՀ կառավարության 2009 թ. հուլիսի 2-ի N 27 արձանագրության 3-րդ կետով հավանության արժանացած ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ցանկի հավելված 1-ի 2-րդ գլխի 2.5՝ «Զբաղվածություն և մայրություն» բաժնի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ ժողովրդագրության ոլորտում արդեն իսկ իրականացվող միջոցառումների շարունակական ընթացքի ապահովման հետ մեկտեղ, առկա իրավիճակը պահանջում է թիրախավորված նոր միջոցառումներ, որոնք կարող են որակական փոփոխություններ մտցնել երիտասարդ և բազմազավակ ընտանիքների եկամտի, կենսապայմանների և սոցիալական այլ խնդիրների լուծումներում:<br>Աշխատանքային գործունեության և ծնողական պարտականությունների մեկտեղման հնարավորությունների խթանման նպատակով առաջարկվում է երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներին պետական աջակցություն՝ աշխատանքի վերադառնալու դեպքում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվող լրացումը նպատակ է հետապնդում զբաղվածության կարգավորման պետական |

| | |
|---|---|
| | նոր ծրագրի ներդրմամբ մեծացնել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողների՝ աշխատանքի վերադառնալու և երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու հնարավորությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված զբաղվածության կարգավորման նոր ուղղության սահմանում: Նախագծով առաջարկվող լրացումը նպատակ է հետապնդում զբաղվածության կարգավորման պետական նոր ծրագրի ներդրմամբ մեծացնել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողների՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատաշուկա վերադառնալու և երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու հնարավորությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներին աշխատաշուկա վերադառնալու հնարավորությունների մեծացում՝ աշխատանքային գործունեության և ծնողական պարտա-կանությունների համատեղման հնարավորությունների ապահովման միջոցով: |
| 87. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը պայմանավորված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնց համաձայն՝ կենսաթոշակները վճարվելու են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին: Բացի այդ, առանձին դեպքերում սահմանվել են կենսաթոշակների վճարման առանձնահատկություններ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է լիազոր մարմնի հետ կենսաթոշակների վճարման ծառայություններ մատուցելու պայմանագիր կնքած բանկում բացված հաշվին փոխանցելու միջոցով: Այս դեպքում կենսաթոշակառուն դիմում է բանկին, բացում է համապատասխան բանկային հաշիվ, որից հետո դիմում է սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին՝ գումարն այդ բանկային հաշվին փոխանցելու միջոցով վճարելու համար:<br>«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ կենսաթոշակների վճարների համար բանկում բացվելու է հատուկ բանկային հաշիվ՝ սոցիալական ապահովության հաշիվ:<br>Բացի այդ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված մեկ այլ փոփոխու-թյամբ սահմանվել է ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով հաշմանդամ ճանաչված անձի կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում զինվորական կենսաթոշակի չվճարված գումարը վճարելու առանձնահատկություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծով նախատեսվում է ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի N 665-Ն որոշման՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելուն և զինվորական կենսաթոշակի չվճարված գումարը վճարելու վերաբերող դրույթները համապատասխանեցնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված նոր իրավակարգավորումներին: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ՀՀ կառավարության 2011 թ. մայիսի 5-ի N 665-Ն որոշումը կհամապատասխանեցվի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին:<br>Կբարելավվի ՀՀ պետական բյուջեից վճարվող՝ սոցիալական պաշտպանության (ապահովության) ծրագրերով նախատեսված կենսաթոշակների գումարները շահառուներին վճարելու գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաև՝ շահառուներին մատուցվող ծառայությունների որակը:<br>Միաժամանակ, կպարզեցվեն կենսաթոշակները անկանխիկ եղանակով վճարելու ընթացակարգերը, կավելանան անկանխիկ վճարումների ծավալը՝ բարելավելով գործընթացի թափանցիկությունն ու ֆինանսական կառավարելիությունը, ինչպես նաև նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: |
| 88. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2 գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետի բ. պարբերության դրույթներից, ըստ որի նախատեսվել է ապահովել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման բնականոն գործընթացը՝ սոցիալական դեպքի վարման մեթոդաբանության ներդրման, ընտանիքների անապահովության գնահատման բազմակողմանի և օբյեկտիվ հենքի ապահովման միջոցով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգ, ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակում և վճարում, կարգավորվում են ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ:<br>Ի կատարումն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտության արդյունքներով ներկայացվող առաջարկությունների հիման վրա մշակվում են ընտանիքի անապահովության բնութագրիչների թիրախային ցուցանիշները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հստակեցնել ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման գործընթացի իրավակիրառական դրույթները, փոփոխություններ կատարել ընտանիքների անապահովության գնահատման կարգում հասցեականության մեծացման նպատակով:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման գործընթացի իրավակիրառական խնդիրների լուծում, բնականոն ընթացքի ապահովում, հասցեականության բարձրացում:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված որոշման նախագծի ընդունմամբ կհստակեցվեն ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները: |

| | |
|---|---|
| 89. | **«Ընտանիքի սոցիալական գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2 գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետի բ. պարբերության դրույթներից, ըստ որի նախատեսվել է ապահովել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման բնականոն գործընթացը՝ սոցիալական դեպքի վարման մեթոդաբանության ներդրման, ընտանիքների գնահատման բազմակողմանի և օբյեկտիվ հենքի ապահովման միջոցով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողների սոցիալական աշխատանքի հիմնական մեթոդը համարվում է սոցիալական դեպքի վարումը: Սոցիալական դեպքի վարումը սկսում է ընտանիքի սոցիալական կարիքների գնահատումից, որի համար անհրաժեշտ է ճանաչել ընտանիքի թե սոցիալական խնդիրները, թե առկա ռեսուրսները կամ իրականացնել ընտանիքի սոցիալական գնահատում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողներն ըստ էության կատարում են ընտանիքի սոցիալական գնահատում, սակայն դրա իրականացման ընթացակարգերը սահմանված չեն: Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշման նախագծով լրացնել այդ բացը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողների աշխատանքների հստակ ընթացակարգերի սահմանում, ամբողջ հանրապետությունում միասնական աշխատակարգի ներդրում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված որոշման նախագծի ընդունմամբ կհստակեցվեն սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման կարգը, ինչպես նաև ակնկալվում է աշխատանքների կազմակերպման արդյունավետության մեծացում: |
| 90. | **«Հաշմանդամություն ունեցող անձանց համար էլեկտրոնային կայքէջերի մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հաշմանդամություն ունեցող անձանց համար էլեկտրոնային կայքէջերի մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2 գլխի 4-րդ կետի 1-ին ենթակետի և «Հայաստանի Հանրապետու-թյունում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Էլեկտրոնային կայքէջերը տեղեկատվության տարածման, ինչպես նաև հանրային իրազեկման առաջատար աղբյուրն են, որից տեսողության, լսողության, մտավոր և այլ խնդիրներ ունեցող անձինք ունեն օգտվելու սահմանափակ հնարավորություններ: Կարևորելով խնդրի անհրաժշտությունը՝ էլեկտրոնային կայքէջերի մատչելիության վերաբերյալ միջոցառում է սահմանվել նաև ՀՀ կառավարության 2017 թ. հունվարի 12-ի N 1 «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման 2-րդ հավելվածի 2.3.2 կետով: |

| | |
|---|---|
| | **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տեսողության, լսողության, մտավոր և այլ խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և հավասար պայմաններ ապահովելու նպատակով՝ անհրաժեշտ է էլեկտրոնային կայքէջերը հագեցնել վեբ հասանելիության բարելավման այնպիսի գործիքներով, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն կընձեռեն հանրային քննարկման կամ այլ բնույթի տեղեկատվությունից օգտվելու իրենց համար մատչելի տարբերակով: Նմանատիպ գործիքները թույլ կտան կարգավորելու կայքէջում առկա տեքստի տառատեսակները, դրանց չափսերը, կայքէջի ինտերֆեյսի գունային տարբեր համադրությունները, ունենալ ենթագրեր կամ լուսագրեր տեսանյութերի, այլընտրանքային տեքստեր՝ նկարների համար, հասանելի դարձնել տեքստերի ձայնային ուղեկցումը և այլն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն նախագծով կարգավորվում է տարբեր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար էլեկտրոնային կայքէջերում առկա տեղեկատվություն ստանալու մատչելիության խնդիրը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կայքէջերից տեսողության խնդիրներ ունեցող անձանց մատչելի ձևաչափով տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովում: |
| 91. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ ՀՀ կառավարությունը կարևորելով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների բնագավառում նպատակային, արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգի առկայությունը՝ հիմնված «դրամի դիմաց առավելագույն արժեք» սկզբունքի վրա, նախատեսում է մինչև 2018 թվականի ավարտը վերակազմակերպել դրամական վճարների նշանակման գործընթացները և քաղաքացիներին սպասարկելու գործառույթը տարանջատել որոշում ընդունելու գործառույթից (վարչարարությունից)՝ նպատակ ունենալով նվազեցնելու որոշումներ ընդունող անձնակազմի և շահառուների միջև շփումները՝ նպատակ ունենալով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների բնագավառում շարունակաբար նվազեցնել առկա ռիսկերը:<br>Այդ փոփոխություններին համապատասխան՝ անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման մեջ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը հաստատված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 1 հավելվածով:<br>Գործող կարգի համաձայն՝ կենսաթոշակ նշանակվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժինների միջոցով:<br>Պարգևավճարները, պատվովճարները, ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը վճարվում են կենսաթոշակների համար սահմանված կարգով:<br>Քաղաքացիներին սպասարկելու և որոշում ընդունելու գործառույթների տարանջատումը |

| | |
|---|---|
| | նպատակ ունի նվազեցնել որոշումներ ընդունող անձնակազմի և շահառուների միջև շփումները: Ինչը պահանջում է դրամական վճարների նշանակման գործընթացների վերակազմակերպում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում տարածքային բաժինների և սպասարկման գրասենյակներ և նշանակման կենտրոնների միջոցով կենսաթոշակ նշանակելու նոր ընթացակարգի սահմանում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագիծն ընդունելու դեպքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում տարածքային բաժինների և սպասարկման գրասենյակներ և նշանակման կենտրոնների միջոցով կենսաթոշակ, նպաստ և դրամական այլ վճարներ նշանակելը և վճարելը նոր ընթացակարգերի միջոցով իրականացնելու համար: |
| | **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն** |
| 92. | **«Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության գլխավոր երաշխիքներից է գործուն և թիրախային հակակոռուպցիոն ռազմավարության առկայությունը: Այս առումով, անհրաժեշտ է շարունակաբար մշակել և իրականացնել հակակոռուպցիոն ռազմավարություն և դրանում ներառել տվյալ ժամանակահատվածին համահունչ ներքին իրավիճակը բարելավող, միջազգային պահանջներին համապատասխան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարությունն իրականացվում ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1141-Ն որոշմանը համապատասխան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող հակակոռուպցիոն ռազմավարությունն ավարտվում է 2018 թվականին՝ անհրաժեշտություն է առաջանում հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման՝ նոր նախաձեռնություններին համահունչ: Միաժամանակ, 2018 թվականին կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետությունը մշտադիտարկման է ենթարկվելու մի շարք կազմակերպությունների կողմից, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի, Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի քարտուղարության կողմից: Ուստի, մշտադիտարկումների արդյունքում Հայաստանին կտրվեն նոր հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ կլինի նաև միջոցառումների տեսքով արծարծել Հակակոռուպցիոն նոր ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տարբեր ոլորտներում իրականացված ռիսկերի գնահատումների, հետազոտությունների, վերլուծությունների արդյունքում կմշակվի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը կներկայացվի հանրային քննարկումների, արդյունքում կլրամշակվի և կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ: |

**2. Կարգավորման առարկան**

Հայաստանի Հանրապետությունում միջազգային պարտավորություններին և լավագույն չափանիշներին համապատասխան կմշակվի և կիրականացվի հակակոռուպցիոն նոր ռազմավարություն:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Կոռուպցիայի դեմ պայքարը կիրականացվի գործուն ռազմավարական ուղղությամբ՝ ներառելով թիրախային ոլորտները:

93.

**«Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի գրավականներից մեկը ազդարարների ինստիտուտն է: Ազդարարների ինստիտուտի ներդրմամբ հարկ է սահմանել գործուն կառուցակարգեր, որոնք կոռուպցիայի դեմ պայքարին զուգընթաց կապահովեն նաև ազդարարների պաշտպանությունը: Այդպիսի կառուցակարգերից մեկն էլ ազդարարին անանուն եղանակով հաղորդում ներկայացնելու իրավունք տալն է, իսկ վերջինս կարող է իրացվել ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով: Ուստի, անհրաժեշտ է մշակել հարթակի ստեղծման անհրաժեշտ նախադրյալները, այն է՝ հարթակի տեխնիկական նկարագիրը և դրա վարման կարգը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարում ազդարարների ինստիտուտի ներդրումը՝ 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվեց «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ազդարարման, ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Ի շարս այլ կարգավորումների՝ օրենքով ներդրվեց ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ինստիտուտը, որի միջոցով ազդարարը կարող է անանուն եղանակով հաղորդել տեղեկություններ հանցագործության մասին: Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը՝ անհրաժեշտ է հաստատել ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և դրա վարման կարգը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասին համահունչ՝ կմշակվի «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ:

**2. Կարգավորման առարկան**

Միջազգային առաջադեմ փորձի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նորարարությունների հիման վրա մշակված «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կկանոնակարգվեն ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և դրա վարման կարգը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կստեղծվեն ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման և վարման անհրաժեշտ նախադրյալները՝ այդպիսով ապահովելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լիարժեք գործողությունը:

| | |
|---|---|
| 94. | **«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրության բողոքարկման ողջամիտ ժամկետ սահմանելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս օրենսդրությամբ հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրության բողոքարկման համար սահմանված ժամկետը գործնականում առաջացնում է մի շարք խնդիրներ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկում է վերանայել հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրությունը լիազոր մարմին կամ դատարան բողոքարկելու համար սահմանված ժամկետը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի ընդունման արդյունքում կսահմանվի հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրության բողոքարկման ողջամիտ ժամկետ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ սեփականության իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության համար: |
| 95. | **«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է կատարողական գործողությունները հարկադիր կատարման մարմնի գործիքակազմին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br>**1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող օրենսդրությամբ կատարողական գործողությունների և փորձաքննություն-ների համար սահմանված ժամկետները գործնականում առաջացնում են որոշ խնդիրներ, մասնավորապես՝ հանգեցնում են անհարկի ժամանակի կորստի:<br>**1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվում է հստակեցնել կատարողական գործողությունների՝ ներառյալ փորձաքննությունների կատարման ժամկետները՝ դրանք հասցնելով նվազագույնի:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում կնվազեցվեն կատարողական գործողությունների՝ ներառյալ փորձաքննությունների կատարման ժամկետները:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող նախագծով կատարողական գործողությունների կատարումը առավել արդյունավետ կդառնա: |

| | |
|---|---|
| 96. | **«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման նպատակով գործուն մեխանիզմների ներդրման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անվճար իրավաբանական օգնության երաշխավորման համար ներկայումս պետությունը կողմից տրամադրվող միջոցները բավարար չեն հանրության առավել լայն շրջանակների ապահովման համար: Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի մատչելի իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների ներդրման ուղղությամբ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվում է մատչելի իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների ներդրման ուղղությամբ համապատասխան միջոցառումների ձեռնարկում, որը ևս խթան կհանդիսանա դատարանի մատչելիության իրավունքի լիարժեք իրացման համար:Մատչելի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձը իրավաբանական օգնությունը կստանա համապատասխան ցուցակում նախատեսված գների շրջանակներում մատչելի իրավաբանական օգնություն տրամադրել ցանկացող փաստաբանների կողմից.<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է մատչելի իրավաբանական օգնության մատուցման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ներդնում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի ապահովել մատչելի իրավաբանական օգնության ապահովումը հանրության առավել լայն շրջանակների համար: |
| 97. | **«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է արդարադատության մատչելիության և արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ նոտարիատի ինստիտուտի ներգրավման շրջանակների ընդլայնման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող իրավակարգավորումների համաձայն՝ նոտարներին վերապահված է առանձին տեսակների իրավաբանական փաստերի հաստատման լիազորություն՝ պահպանելով դատարանի կողմից նշված վարույթների իրականացումը, սակայն այն առավել արդյունավետ իրագործելու համար անհրաժեշտ է ընդլայնել փաստը հաստատող ապացույցների շրջանակը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող նախագծով նախատեսվում է նոտարի կողմից իրավաբանական փաստերի հաստատման գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման համար ընդլայնել փաստը հաստատող ապացույցների շրջանակը՝ ներառելով վկայի ցուցմունքները, դրա հետ մեկտեղ քրեական պատասխանատվություն նախատեսելով վկայի կողմից նոտարին սուտ ցուցմունք տալու համար: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում կընդլայնվեն ՀՀ նոտարիատի ինստիտուտի ներգրավման շրջանակները՝ նոտարները ապահովելով համապատասխան գործիքակազմով, այդ թվում՝ ապացույցների ընդունման և գնահատման տեսանկյունից:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծով նախատեսվող փոփոխությունների արդյունքում իր լիազորություններն իրակա-նացնելիս նոտարները կապահովվեն նաև համապատասխան գործիքակազմով: |
| 98. | **«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների առողջացմանը խթանելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող իրավակարգավորումներում բացակայում են սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների առողջացմանը ուղղված գործուն երաշխիքները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է ի թիվս այլ կարգավորումների բարձրացնել սնանկության կառավարիչների վարձատրությունը, ինչն իր հերթին կնպաստի վերջիններիս շահագրգռվածու-թյանը սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների առողջացման գործընթացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող կարգավորումների արդյունքում կներդրվեն սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների առողջացմանը խթանող երաշխիքներ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է սնանկության կառավարիչների վարձատրության բարձրացման եղանակով խթանել սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների առողջացման գործընթացի դրական լուծմանը: |
| | **Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն** |
| 99. | **«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.3. բաժնի «Պաշտպանություն» գլխի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի կատարումն ապահովելու նկատառումներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ զինված ուժերն իրենց ստեղծման օրվանից անցել են զարգացման մի շարք փուլեր, որոնք իրենցից ներկայացնելով որոշակի առաջընթաց քայլեր, շատ դեպքերում չեն կարողացել ամբողջական ապահովել առկա մարտահրավերներին համապատասխանող կառավարման համակարգ, կառուցվածք, սպառազինությամբ և մարտական տեխնիկայով համալրվածություն, |

| | |
|---|---|
| | գիտատեխնիկական ներուժ: Ժամանակակից մարտահրավերները և արագ զարգացող աշխարհը պարտադրում են ունենալ առավել երկարաժամկետ և արդյունավետ պլանավորված միջոցառումներով արդիականացվող զինված ուժեր:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ունենալ ՀՀ զինված ուժերի արդիականացման 7-ամյա ծրագիր, որի կատարումը կապահովի Հայաստանի Հանրապետության հուսալի պաշտպանությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագծի համաձայն նախատեսվում է ՀՀ Նախագահի հաստատմանը ներկայացնել ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը, որը կներառի Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովման շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի և ՀՀ զինված ուժերի գործունեության բոլոր ուղղություններով առաջիկա տարիներին իրականացման ենթակա գործողությունների համալիրը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի ընդունումը կնպաստի երկրի պաշտպանունակության և անվտանգության առավել բարձր մակարդակի ապահովմանը: |
| 100. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի NN 602-Ա և 603-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի NN 602-Ա և 603-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.3. բաժնի «Պաշտպանություն» գլխի 3-րդ և 6-րդ կետերի կատարումն ապահովելու նկատառումներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքներում գործում են մարզային ենթակայության բժշկական կենտրոններ և համապատասխանաբար ՀՀ պաշտպանության նախարարության Գեղարքունիքի և Զանգեզուրի կայազորային հոսպիտալներ, որոնք իրենց առօրյա գործունեության ընթացքում հաճախ կրկնում են տարածաշրջանի ազգաբնակչության ստացիոնար բժշկական օգնության գործառույթները, երկու բժշկական կազմակերպությունների անջատ գործելու արդյունքում փոշեցրվում է տարածաշրջանի առանց այդ էլ սակավաթիվ բժշկական ներուժը: Բացի այդ, երկու կազմակերպությունների գործունեությունը ֆինանսական արդյունավետության առումով բավականին ցածր է, ներառյալ պետական բյուջեից իրականացվող ծախսերի մասով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է օպտիմալացման շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքների բժշկական կենտրոնները լուծարել, դրանց գույքը հանձնել համապատասխանաբար ՀՀ պաշտպանության նախարարության Գեղարքունիքի և Զանգեզուրի կայազորային հոսպիտալներին, որոնք կիրականացնեն նաև տարածաշրջանների բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագծով փոփոխություններ և լրացումներ են կատարվելու ՀՀ պաշտպանության նախարարության Գեղարքունիքի և Զանգեզուրի կայազորային հոսպիտալների ստեղծման մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում, որոնց համաձայն հոսպիտալներին իրավասություն է վերապահվելու իրականացնել նաև բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը, սահմանվելու են բժշկական օգնության և սպասարկման տեսակները: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշմանի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է առավել արդյունավետ իրականացնել զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների, տարածաշրջանի բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը, կրճատել պետական բյուջեից համապատասխան հաստատություններին ուղղվող ծախսերը: |
| 101. | **«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան» պետական հիմնարկ ստեղծելու մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան» պետական հիմնարկ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարու-թյան 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.3. բաժնի «Պաշտպանություն» գլխի 5-րդ կետի կատարումն ապահովելու նկատառումներով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 28.04.2016 թ. N 424-Ա և 446-Ա որոշումներով ստեղծվել են համապատասխանաբար մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն և Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանները, որոնք իրականացնում են ռազմաավիացիոն և համազորային ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթություն: Ռազմական կրթության որակի կատարելագործման և այդ ուղղությամբ ներուժի, ռեսուրսների և պահպանման ծախսերի օպտիմալացման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջացել միավորել նշված երկու համալսարանները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է միավորել երկու համալսարանները և համապատասխան ռազմակրթական ուղղություններով գործունեությունն իրականացնել մեկ համալսարանի կազմում համազորային ու ռազմաավիացիոն ինստիտուտների տեսքով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագծի համաձայն ստեղծվելու է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան, որը կներառի ներկայումս գործող երկու համալսարանների կրթական գործունեության շրջանակը, կսահմանվեն համալսարանի խնդիրները, կազմակերպական կառուցվածքը, կրթական գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշմանի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել իրականացվող ռազմական կրթության որակը, ռազմական կրթության ոլորտում ներդնել ժամանակակից կրթական ու մեթոդական ծրագրեր, առավել նպատակային օգտագործել կրթական գործընթացին ներգրավված ներուժը, կրճատել պետական բյուջեից համապատասխան հաստատություններին ուղղվող ծախսերը: |
| | **Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն** |
| 102. | **«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիա-կան պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումներ նախատեսող նախագծերի փաթեթի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումների փաթեթի ներկայացումը պայմանավորված է ոլորտային օրենսդրության կատարելագործման, մի շարք օրենքներում կարգավորման հարաբերությունների միասնական մոտեցումների ձևավորման, |

| | |
|---|---|
| | կրկնությունների և հակասությունների բացառման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, քաղաքացիների իրավասությունների և պարտավորությունների հստակեցմամբ և 2015 թվականի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br>Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «1.5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ» գլխի 1-ին կետի՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի իրավական դաշտի կատարելագործման նպատակով նախատեսվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նախագծերի մշակում:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կիրառելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքները և արտակարգ իրավիճակների բնագավառի այլ ՀՀ օրենքները՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը բախվում է որոշ խնդիրների, որոնց կարգավորումները պետք է տրվեն ներկայացվող օրենսդրական փաթեթով:<br>Մասնավորապես, տարերային և տեխնածին աղետներից խաղաղ ու պատերազմի ժամանակ բնակչության, նյութական արժեքների ու տարածքների պաշտպանությանն ուղղված տարբեր օրենքներով կարգավորվում են տարերային և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման, հետևանքների վերացման նմանատիպ հարաբերությունները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումների փաթեթով նախատեսվում է բացառել ոլորտային օրենսդրության հակասությունները, խուսափել անհարկի կրկնություններից, նպատակահարմարության դեպքում նաև մի քանի օրենքներ միավորել մեկ իրավական ակտի ներքո՝ օրենսգրքի տեսքով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության և սեյսմիկ պաշտպանության բնագավառների օրենսդրության փոփոխությունները, ինչպես նաև արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումները նպատակ ունեն կարգավորելու արտակարգ իրավիճակների կառավարման հետ կապված հարաբերությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումներով ակնկալվում է ապահովել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում միասնական պետական քաղաքականության առավել արդյունավետ իրականացումը, ինչպես նաև հստակ սահմանել հասկացությունների ընկալման և պարզաբանման հարաբերությունները՝ բացառելով անհարկի կրկնությունները և հակասությունները: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 103. | **«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխի կիրարկման, ինչպես նաև ոստիկանության կողմից |

օրենքով սահմանված դեպքերում պաշտպանության ենթակա անձանց և նրանց գույքի անվտանգությունն ապահովելու նպատակով համապատասխան կարգն ու պայմանները սահմանող իրավական ակտի մշակման համար օրենքով ՀՀ կառավարությանը լիազորություն վերապահելու անհրաժեշտությամբ:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով կանոնակարգվում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանը վերաբերող իրավահարաբերությունները, սակայն պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները որևէ օրենսդրական ակտով սահմանված չեն և ուղղակիորեն ՀՀ օրենքով որևէ մարմնի նման կարգ սահմանելու լիազորություն վերապահված չէ: Սահմանված չեն նաև այլ օրենքներով պաշտպանության ենթակա անձանց (օրինակ՝ դատավոր, դատախազ, քննիչ և այլն) պաշտպանության իրականացման հետ կապված հարաբերությունները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել ոստիկանության կողմից կոնկրետ պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգերը, որի համար նախևառաջ անհրաժեշտ կլինի «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ՀՀ կառավարությանը հստակ լիազորություն վերապահել սահմանելու Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները:

**2. Կարգավորման առարկան**

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ կառավարությանը հստակ լիազորություն կվերապահվի սահմանելու Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները:

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա լրացնել օրենսդրական բացը և իրավական հիմք կստեղծի սահմանելու համար Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե**

104. **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21 N 2013-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**

Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է Ֆուկուշիմայի վթարից հետո Ատոմային էներգիայի միջազգային գործակալության ստանդարտներում կատարված փոփոխություններով, ինչպես նաև միջուկային անվտանգության բնագավառում կատարվող գնահատումների/վերլուծությունների մեթոդներում տեղի ունեցած փոփոխություններով և խստացումներով: Կառավարության վերոհիշյալ որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ԱԷՄԳ-ի կողմից ընդունված անվտանգության նոր՝ «Ատոմային էլեկտրակայանների անվտանգության հաշվետվության կառուցվածքը և բովանդակությունը» (Format and Content of the Safety Analysis Report for Nuclear Power Plants) GS-G-4.1 ստանդարտին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև Ֆուկուշիմայի ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարից քաղված դասերով:

**2. Կարգավորման առարկան և առկա խնդիրները**

Վերոհիշյալ որոշմամբ կսահմանվեն նոր, խստացված պահանջներ, ԱԷԿ-ի հրապարակի բնութագրերի և դրանց վերլուծության, միջուկային տեղակայանքի, անվտանգության ապահով-

| | |
|---|---|
| | ման հայեցակարգի, անվտանգության համար կարևոր համակարգերի և տարրերի վերլուծության, էներգաբլոկի անվտանգության վերլուծության, շահագործման փորձի վերլուծության վերաբերյալ ներկայացվելիք տեղեկատվության բովանդակության և կառուցվածքի նկատամամբ:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող աղյունքը**<br>Վերոհիշյալ որոշման ընդունումը թույլ կտա ՀԱԷԿ -ի շահագործման անվտանգության գնահատումն իրականացնել խստացված պահանջների կիրառմամբ՝ հաշվի առնելով բնագավառում միջազգային լավագույն փորձը և Ֆուկուշիմայի ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարից քաղված դասերը: |
| 105. | **«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին տարածք հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին են վերապահված շրջակա միջավայրի հողի, օդի, ջրի ճառագայթային մշտադիտարկման (մոնիթորինգ) և վերահսկողության իրականացումը, տեսչական ստուգումների ժամանակ ստուգվող օբյեկտներից փորձանմուշներ վերցնելը, հայտնաբերված ռադիոակտիվ նյութերի տիպաճշտումը, երկրի ընդերքից արտազատվող ռադիոակտիվ ռադոն գազի վերահսկումը:<br>Նշված աշխատանքները ժամանակակից պահանջներին համապատասխան կատարելու համար անհրաժեշտ է բարձր ճշտության ռադիոմետրիկ ու սպեկտրոմետրիկ սարքերով, ինչպես նաև ռադիոքիմիական անալիզների կատարման ու փորձանմուշների մշակման համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցված լաբորատորիա:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կստեղծվի ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հարաբերությունները կարգավորող համակարգված փաստաթուղթ՝ Եվրամիության դիրեկտիվներին և ԱԷՄԳ անվտանգության ստանդարտներին համապատասխան:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիա ունենալու դեպքում կոմիտեն կկարողանա Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխան իրականացնել շրջակա միջավայրի կարգավորող վերահսկողությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, բարելավելու շրջակա միջավայրի պահպանությունը: |
| 106. | **«Ռադիոակտիվ թափոնների կառավարման կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 4-ի N 631-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտության**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կառավարության վերոհիշյալ որոշման նախագծի ընդունումը բխում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) IRRS (կարգավորման ինտեգրված դիտարկման ծառայություն-Integrated Regulatory Review Services) առաքելության կողմից տրված առաջարկությունների կատարման և ԱԷՄԳ-ի անվտանգության նոր ստանդարտներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից:<br>**2. Կարգավորման առարկան և առկա խնդիրները**<br>ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտներով պահանջվում է սահմանել կանոններ ռադիոակտիվ թափոնների կառավարման աշխատանքների (նախնական մշակման, կոնդիցիայի բերման, պահման, թաղման) անվտանգության տեղակայանքների կենսական ցիկլի յուրաքանչյուր փուլի |

| | |
|---|---|
| | (հրապարակի ընտրություն, նախագծում, կառուցում, շահագործում, շահագործումից հանում կամ գերեզմանոցների դեպքում՝ փակում) անվտանգության ապահովման համար:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Վերոհիշյալ որոշման ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում կներդրվեն ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հարաբերությունները կարգավորող՝ միջազգայնորեն ընդունված անվտանգության ապահովման նորագույն մոտեցումներին համապատասխանող պահանջներ: |
| | **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** |
| 107. | **Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժող**<br>Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի նախապատրաստում և անցկացում Երևանում:<br>2016 թ. նոյեմբերին Անտանանարիվոյի գագաթնաժողովին Հայաստանն ընտրվել է Ֆրանկոֆոնիայի պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ համաժողովը հյուրընկալող երկիր: 2017թ. նոյեմբերի 25-26-ին Փարիզում տեղի ունեցած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարների 34-րդ համաժողովում Հայաստանը պաշտոնապես ստանձնեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության արտաքին գործերի նախարարների համաժողովի նախագահությունը:<br>Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի նախապատրաստման և անցկացման նպատակով ՀՀ Նախագահի 2017 թվականի հունվարի 26-ի հրամանագրով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը գլխավորում է ՀՀ վարչապետը: |
| 108. | **ՄԱԿ-ի Կայուն զարգացման օրակարգի ՀՀ առաջին կամավոր ազգային դիտարկում**<br>ՄԱԿ-ի Կայուն զարգացման օրակարգի և դրանից բխող նպատակների և թիրախների իրա-կանացման առաջընթացն ամփոփող ՀՀ առաջին կամավոր ազգային դիտարկումը (զեկույցը) ՄԱԿ -ի բարձր մակարդակի քաղաքական ֆորումի շրջանակներում:<br>Հայաստանն ընդգրկվել է 2018 թ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի բարձր մակարդակի քաղաքական ֆորումում՝ ՀՀ ազգային կամավոր զեկույցի ներկայացման համար: Համաձայն ՄԱԿ-ի ԳԱ 70/299 բանաձևի պահանջների, 2018 թ. ֆորումի թեման է՝ «Փոխակերպում դեպի կայուն և տոկուն հասարակություններ»: |
| 109. | **ՄԱԿ -ի մարդու իրավունքների թեմատիկ զեկույցներ**<br>ՄԱԿ -ի մարդու իրավունքների պայմանագրային մարմիններին ներկայացվող ՀՀ բոլոր պաշտոնական թեմատիկ զեկույցների մաս կազմող Հիմնարար փաստաթղթի պատրաստում և ներկայացում ՄԱԿ -ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի քարտուղարություն:<br>Հիմնարար փաստաթղթի պատրաստումը պարտադիր պահանջ է ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների համար, որը ներկայացվում է ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից: |
| 110. | **ՄԱԿ -ի մարդու իրավունքների միջնաժամկետ զեկույց**<br>ՄԱԿ -ի մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական դիտարկման միջնաժամկետ զեկույցի պատրաստում և ներկայացում ՄԱԿ -ի Մարդու իրավունք-ների բարձրագույն հանձնա-կատարի գրասենյակի քարտուղարություն:<br>Համընդհանուր պարբերական դիտարկման միջնաժամկետ զեկույցի ներկայացումը կամավոր ստանձնած պարտավորություն է, որի նպատակն է միջազգային հարթակներում ՀՀ վարկանիշի բարձրացումը: |
| 111. | **ՄԱԿ -ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների կատարման վերաբերյալ ՀՀ ազգային զեկույց**<br>ՄԱԿ -ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթների կատարման վերաբերյալ ՀՀ ազգային զեկույցի պատրաստում և ներկայացում ՄԱԿ -ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի քարտուղարություն:<br>Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի համաձայն զեկույցների պատրաստումը բխում է տվյալ դաշնագրի 40-րդ հոդվածից: |

| | |
|---|---|
| 112. | **ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահություն**<br>ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահության շրջանակներում /2018 թ. 1-ին կիսամյակ/ ՏՀՏ, գիտության և տեխնոլոգիաներին նվիրված միջազգային համաժողով:<br>Հայաստանը հանձնառու լինելով Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության ռազմավարական նպատակներին և վերահաստատելով իր աջակցությունը կազմակերպության տնտեսական օրակարգին, որն ուղղված է տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը՝ 2018 թ. առաջին կիսամյակում, որպես նախագահող երկիր ստանձնած պարտավորությունների համաձայն, պետք է կազմակերպի վերոհիշյալ միջոցառումները: Բացի այդ, որպես նախագահող երկիր, Հայաստանը պետք է կազմակերպի նաև մեկ ոլորտային հանդիպում: |
| 113. | **ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահություն**<br>ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահության շրջանակներում /2018 թ. 1-ին կիսամյակ/ ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահության շրջանակներում արտաքին գործերի նախարարների խորհրդի հանդիպում:<br>Հայաստանը հանձնառու լինելով Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության ռազմավարական նպատակներին և վերահաստատելով իր աջակցությունը կազմակերպության տնտեսական օրակարգին, որն ուղղված է տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը՝ 2018 թ. առաջին կիսամյակում, որպես նախագահող երկիր ստանձնած պարտավորությունների համաձայն, պետք է կազմակերպի վերոհիշյալ միջոցառումները: Բացի այդ, որպես նախագահող երկիր, Հայաստանը պետք է կազմակերպի նաև մեկ ոլորտային հանդիպում: |
| 114. | **ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահություն**<br>ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահության շրջանակներում /2018 թ. 1-ին կիսամյակ/ ՄԾՏՀԿ-ում ՀՀ նախագահության շրջանակներում գործարար համաժողով:<br>Հայաստանը հանձնառու լինելով Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության ռազմավարական նպատակներին և վերահաստատելով իր աջակցությունը կազմակերպության տնտեսական օրակարգին, որն ուղղված է տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը՝ 2018 թ. առաջին կիսամյակում, որպես նախագահող երկիր ստանձնած պարտավորությունների համաձայն, պետք է կազմակերպի վերոհիշյալ միջոցառումները: Բացի այդ, որպես նախագահող երկիր, Հայաստանը պետք է կազմակերպի նաև մեկ ոլորտային հանդիպում: |
| 115. | **Միջկառավարական հանձնաժողովներ**<br>Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև միջկառավարական հանձնաժողովների նիստեր:<br>Համաձայն ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի շրջանակներում ներկայացվող պահանջի, անհրաժեշտ է ակտիվացնել միջկառավարական հանձնաժողովների աշխատանքները և աշխուժացնել արտերկրում տնտեսական բնույթի միջոցառումներին հայկական կողմի մասնակցությունը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունվարի 11-ի N 275 -Ն որոշման

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| NN ը/կ | Հիմնավորումներ |
|---|---|
| | **ՀՀ կառավարության աշխատակազմ** |
| 1. | **«Էլեկտրոնային ծառայությունների մատուցումը դյուրացնելու համար արխիվային նյութերի թվայնացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված միջոցառումը իրականացվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ գլխի 3.6 բաժնի 3-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությունը, որի նպատակն է «Թվային Հայաստան» հիմնադրամի կողմից երեք տարվա կտրվածքով թվայնացնել արխիվային նյութերը՝ ինտեգրելով թվայնացված նյութերը գործող ավտոմատացված համակարգերին:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կթվայնացվեն արխիվային նյութերը՝ էլեկտրոնային ծառայությունների մատուցումը դյուրացնելու համար: |
| | **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն** |
| 2. | **Հայկական ԱէԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի արդիականացման և ավարտական փուլի իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2015 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ են մտել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ստորագրված Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրերը: Համաձայն համաձայնագրի իրականացվում են Հայկական ԱէԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքները:<br>2018 թվականի ընթացքում կիրականացվեն Հայկական ԱէԿ-ի երկրորդ էներգաբլոկի կառավարման և պաշտպանական համակարգի արդիականացում, չորրորդ տուրբոագրեգատի երկու կոնդենսատորների փոխարինում, Տ-3 և Տ-4 տրանսֆորմատորների փոխարինում, երրորդ տուրբոգեներատորի փոխարինում, երրորդ տուրբոագրեգատի արդիականացում և Հայկական ԱէԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ԱէԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու դեպքում ակնկալվում է արդիականացնել Հայկական ԱէԿ-ի երկրորդ էներգաբլոկի երրորդ տուրբոագրեգատի արդիականացման ավարտ և չորրորդ տուրբոագրեգատի երկու կոնդենսատորների փոխարինում: Կատարված արդիականացումները հնարավորություն կընձեռեն մեծացնել Հայկական ԱէԿ-ի տուրբինային արտադրամասի նախագծային հզորությունը: |

| | |
|---|---|
| 3. | **Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցումը նպատակաուղղված է գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Արդյունքում՝ Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի: |
| 4. | **Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքի ապահովումն է՝ նպատակ ունենալով բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում: Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ /ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Առաջին փուլի արդյունքում՝ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից կհասցվի 350 ՄՎտ-ի: |
| 5. | **Վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմամբ արտադրական հզորությունների տեղծման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2013 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահի կողմից հաստատված «Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգում» վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումներում նշված է, որ Հայաստանը ստանձնել է պարտավորություններ մինչև 2020 թվականը վերականգնվող առաջնային էներգիան հասցնել սպառվող ողջ էներգիայի 20 տոկոսին:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմամբ արտադրական նոր հզորությունների ստեղծման արդյունքում՝ միջնաժամկետ հեռանկարում էներգետիկ համակարգում կստեղծվեն նորագույն և մաքուր («կանաչ») տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրական մի շարք նոր հզորություններ, այդ թվում արևային էներգիայի կիրառմամբ, որոնք զգալիորեն կթեթևացնեն էներգետիկ համակարգում գործող արտադրական հզորությունների բեռը՝ նվազեցնելով կախվածությունը ներկրվող ածխաջրածնային վառելիքներից: Այդպիսով կդիվերսիֆիկացվի ՀՀ տնտեսությունը՝ էներգակիրների մատակարարման (ներկրման և(կամ) արտադրության) այլընտրանքային ուղիների ապահովման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման տեսակետից և կբարձրանա էներգետիկ անկախության աստիճանը: |

| | |
|---|---|
| 6. | **ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ առաջին ազգային զեկույցի կազմման և հրապարակման, ոլորտի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման և հրապարակման վերաբերյալ**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունը 2016 թվականից հանդիսանալով ԱՃԹՆ-ն թեկնածու անդամ, պարտավորություն է ստանձնել կատարել ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջները, որի մեջ է մտնում նաև հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ առաջին ազգային զեկույցի և ոլորտի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի կազմումը և հրապարակումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հիմք կդրվի առավել թափանցիկ, հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծմանը, ինչը խթան կհանդիսանա կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության կայացմանը: |
| 7. | **Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման նպատակով ախտորոշիչ ուսումնասիրությունների իրականացման վերաբերյալ**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրի 3.4 կետի «Բնական պաշարներ» բաժնի 1.3 ենթակետի /19.06.2017թ. ՀՀ կառավարության N 646-Ա որոշում/ պահանջից, որով նախատեսված է մշակել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը:<br>Միջոցառումն իրականացվելու է Համաշխարհային բանկի և դոնոր կազմակերպությունների կողմից տրվող դրամաշնորհների հաշվին: Միջոցառումը կիրականացվի համապատասխան տեխնիկական առաջադրանքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության միջոցով:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման հենքի նախապատրաստում: |
| | **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** |
| 8. | **«Տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների գնահատման նպատակով նոր գործիքակազմի ներդրում» խնդրի ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության, մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում իրականացվող կանխատեսումների և վերլուծությունների որակի բարձրացման, ինչպես նաև տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների գնահատման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ներդնել նոր գործիքակազմ: Այդ նպատակով նախատեսվում է դոնոր կազմակերպությունների կողմից տեխնիկական աջակցության ներգրավում, ինչի շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել վերոնշյալ աշխատանքները:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության, մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում իրականացվող կանխատեսումների և վերլուծությունների որակի բարձրացում և կատարելագործում: |
| 9. | **«Բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացման աշխատանքների իրականացում» խնդրի ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս պետական բյուջեի կազման գործընթացում բազմաթիվ գործառույթներ ավտոմատացված չեն, որի արդյունքում բյուջետային ծրագրերի կազմման փուլում մեծանում է բյուջետային հսկողության ռեսուրսատարությունը, մեծանում է սխալների կատարման և խեղումների հավանականությունը, հետագայում ծրագրերը հնարավորություն չեն ունենում |

| | |
|---|---|
| | ավտոմատ համակցել կատարողական համակարգերի (էլ-գանձապետարան, գնումներ) հետ: Վերջինս նվազեցնում է պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը: Դրանով պայմանավորված 2017 թվականին նախաձեռնվել է բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացման աշխատանքների իրականացումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ 2019 թվականին կներդրվի պետական ծախսերը կազմելու ավտոմատացված համակարգ, որը նաև հնարավորություն կընձեռի այն ինտեգրելու պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացված համակարգերի հետ՝ տեղեկատվության փոխանակման նպատակով:<br>Վերը նշված գերակա խնդրի իրականացման ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալը՝<br>- պետական ծախսերը կազմելու՝ պետական բյուջեն ձևավորելու գործընթացի ավտոմատացված համակարգ մշակելու և վերջինիս պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացված համակարգերի հետ ինտեգրելու՝ տեղեկատվության փոխանակման հնարավորություն ստեղծելու համակարգի մշակում և ներդրում ըստ փուլերի:<br>Նշված գերակա խնդրի լուծման համար 2018թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| 10. | **«ՊՈԱԿ-ների գործունեության թափանցիկության և արդյունավետության բարձրացման նպատակով վերջիններիս հաշիվների գանձապետարանի միջոցով վարում» խնդրի ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս պետությանը և համայնքներին պատկանող դրամական միջոցները հիմնականում համախմբված են գանձապետական միասնական հաշվում: Բացառություն են կազմում ՊՈԱԿ-ների, ՀՈԱԿ-ների և պետական ու համայնքային մասնակցությամբ ընկերությունների հաշիվների մնացորդները, որոնք շրջանառվում են բանկային համակարգի միջոցով: Այս հանգամանքը չի ապահովում այս միավորների գործունեության պատշաճ թափանցիկությունը և միջոցների (որոնք կազմում են պետական ֆինանսների բաղկացուցիչ մասը) օգտագործման արդյունավետությունը:<br>Դրանով պայմանավորված, ՊՈԱԿ-ների դրամական հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, ֆինանսական կարգապահությունը բարելավելու, ՊՈԱԿ-ների գործունեության թափանցիկության ավելի բարձր աստիճան ապահովելու և դրանով իսկ պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել ՊՈԱԿ-ների հաշիվների վարումը գանձապետարանի միջոցով:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ 2018 թվականի ավարտին ՊՈԱԿ-ների հաշիվների վարումը կկազմակերպվի գանձապետարանի միջոցով: Վերը նշված գերակա խնդրի իրականացման ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերը՝ ծրագրային ապահովման ձեռքբերում, թեստավորում և ներդրում:<br>Նշված գերակա խնդրի լուծման համար ՀՀ 2018 թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| 11. | **«Գնումների էլեկտրոնային համակարգի արդիականացում» խնդրի ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Էլեկտրոնային եղանակով գնումներն իրականացվում են էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով: Համակարգի գործնական կիրառման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել արդիականացնելու համակարգը և համապատասխանեցնելու Էլեկտրոնային կառավարման համակարգերի ժամանակակից չափորոշիչներին:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ունենալ էլեկտրոնային գնումների արդիականացված համակարգ: |

| | |
|---|---|
| | Նշված գերակա խնդրի լուծման համար 2018 թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| 12. | **«Նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվություն-ներ պատրաստելու նպատակով միջանկյալ համախմբման գործիքների և մեթոդաբանության մշակում և պիլոտավորում ՀՀ մեկ նախարարությունում» խնդիրը ՀՀ կառավարության 2018 թվա-կանի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով նախատեսված դեպքերում վերահսկող կազմակերպությունը պարտավոր է պատրաստել և ներկայացնել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համակարգերի ներդրման փուլը իրականացվում է սկսած 01.01.2016 թ.-ից և նախատեսվում է իրականացնել 2016-2018 թթ. ընթացքում: Այս փուլի նպատակը հանրային հատվածի առանձին կազմակերպություններում միջազգային չափանիշներին համահունչ հաշվեգրման հիմունքով հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու մշակույթի ձևավորումն է:<br>Համակարգի ներդրման հաջորդ փուլը միջանկյալ (նախարարությունների մակարդակով) համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համակարգերի ներդրման փուլն է, որը իրակա-նացվելու է առաջիկա մի քանի տարիների ընթացքում: Նախատեսվում է մշակել համապատասխան իրավական դաշտ՝ միջանկյալ համախմբման գործիքներ և մեթոդաբանություն՝ նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստելու համար, որը զուգահեռաբար պիլոտավորվելու է ՀՀ մեկ նախարարությունում: Երկրորդ փուլի նպատակը նախա-րարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստացման ընթացակարգերի ձևավորումն է:<br>**2.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ունենալ համապատասխան իրավական դաշտ՝ միջանկյալ համախմբման գործիքներ և մեթոդաբանություն՝ նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստելու համար: |
| 13. | **«ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին (BEPS ծրագիր) ՀՀ անդամակցություն» խնդիրը ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս, Հայաստանի Հանրապետությունը կարող է կիրառել BEPS ծրագրի առանձին գործողությունների վերաբերյալ արդեն իսկ մշակված հայեցակարգերը և մոտեցումները, սակայն չի կարող անմիջականորեն մասնակցել վերջիններիս մշակմանը: Մինչդեռ, ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթ¬յուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին (BEPS ծրագիր) ՀՀ անդամակցությունը եզակի հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությանը հավասար ձայնի իրավունքով անմիջականորեն մասնակցելու աշխարհի շուրջ 100 երկրների, այդ թվում ՏՀԶԿ/Մեծ քսանյակի երկրների հետ համատեղ, հարկման բազայի խեղաթյուրմանը և շահույթների տեղաշարժին (BEPS) ուղղված օրենսդրական աշխատանքներին:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է դառնալ ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրի (BEPS ծրագիր) անդամ:<br>Նշված գերական խնդիրը լուծելու համար 2018թ. պետական բյուջեով միջոցներ նախատեսված չեն: |

| | |
|---|---|
| 14. | **«Միջազգային լավագույն փորձին համահունչ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առաջացող հարկային հարաբերությունների իրավակարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացում» ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Էլեկտրոնային առևտուր» գործողությունը հանդիսանում է BEPS ծրագրի 1-ին գործողությունը, որով նախատեսված հարկային հարաբերությունները կարգավորող դրույթների տեղայնացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում ներդնել էլեկտրոնային առևտրի միջոցով իրականացվող գործարքների հարկման՝ միջազգային լավագույն փորձին համահունչ իրավական կարգավորումներ:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը քննարկել BEPS ծրագրի 1-ին գործողությամբ սահմանված կարգավորումների՝ ՀՀ օրենսդրության մեջ տեղայնացման հնարավորությունները:<br>Նշված գերակա խնդրի լուծման համար 2018թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| 15. | **«Առնվազն թվով 6 պետությունների հետ կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ստորագրումն (ուժի մեջ մտնելն) ապահովելու նպատակով անհրաժեշտ միջոցառումների իրականացում» խնդիրը ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը թվով 46 պետությունների հետ ունի կնքված կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր: Այդուհանդերձ, տնտեսության և միջպետական առևտրի զարգացման ու տնտեսական կապերի աշխարհագրության ընդլայնմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում մշտապես ընդլայնել նաև կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակը՝ դրանով իսկ խթանելով տնտեսական աճը և արտահանման ծավալների աճը: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսվել է, որ մինչև 2018 թվականի ավարտը կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի քանակը կընդլայնվի թվով 8-ով:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է մինչև 2018 թվականի ավարտը առնվազն 6-ով ավելացնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի քանակը:<br>Նշված գերակա խնդրի լուծման համար 2018թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն** | |
| 16. | **Խթանել հայկական ՏՏ-ի կամ ՏՀՏ-ի արտադրանքի մրցունակ բրենդի ձևավորմանը և ապահովել միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող արտադրանքը պատշաճ ներկայացնելուն, ինչպես նաև խթանել այլ համակարգերի հետ ինտեգրմանը միջոցառման իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Խթանել հայկական ՏՏ-ի կամ ՏՀՏ-ի արտադրանքի մրցունակ բրենդի ձևավորմանը և ապահովել միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող արտադրանքը պատշաճ ներկայացնելուն, ինչպես նաև խթանել այլ համակարգերի հետ ինտեգրման միջոցառումը իրականացվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ գլխի 3.6 բաժնի 3-րդ կետի 3-րդ ենթակետի 2-րդ ենթակետը, որի նպատակն է ՏՀՏ ոլորտի գործարար համայնքի հետ պարբերաբար կազմակերպել քննարկումներ՝ առկա խնդիրների վերհանում և լուծման մեխանիզմները մշակելու համար, զարգացնել |

| | |
|---|---|
| | ուսումնական կենտրոններում ՏՀՏ ոլորտի որակյալ մասնագիտական կարողությունները՝ վերազգային ընկերությունների ներգրավմամբ, ապահովել Գյումրի և Վանաձոր քաղաքներում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության և խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը՝ առևտրայնացնելով գիտական հետազոտությունների արդյունքները:<br>Միաժամանակ, գերակա խնդրի նպատակն է հանդիսանում նաև Գերմանիայում կայանալիք «Cebit 2018» ցուցահանդեսին և Հնդկաստանում կայանալիք «WCIT 2018» համաժողովին տեխնոլոգիական ոլորտի հայաստանյան կազմակերպությունների մասնակցությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ոչ ֆինանսական աջակցության տրամադրումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կստեղծվի ավելի բարենպաստ պայմաններ ՏՀՏ ոլորտի գրավչության բարձրացման և ներդրումների ներգրավման ուղղությամբ, կձևավորվի ՀՀ բրենդը ներկայացնող արտադրանք և զարկ կտրվի գիտություն-մասնավոր հատված համագործակցությանը, կնպաստի ՏՀՏ ոլորտի կադրերի պատրաստմանը և վերապատրաստման, ինչպես նաև կնպաստի ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տեխնոլոգիատար ընկերությունների ու աշխատատեղերի ստեղծման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների որակյալ մասնագիտական ներուժի պահպանման ու զարգացման: |
| 17. | **2018 թվականին պետություն-մասնավոր համագործակցությամբ տվյալների մշակման ժամանակակից կենտրոնների ստեղծման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2018 թվականին պետություն-մասնավոր համագործակցությամբ տվյալների մշակման ժամանակակից կենտրոնների ստեղծման ծրագիրը մշակվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ գլխի 3.6 բաժնի 3-րդ կետի 4-րդ ենթակետի բ) պարբերությունը և նպատակը ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիական ծրագրերի և տարբեր բովանդակությամբ տվյալների անվտանգ, անխափան և հուսալի ժամանակակից պահոցներ և ծառայություններ ստեղծելն է:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ տարածքային և տարածաշրջանում ընկերությունների ծառայությունների և ծրագրերի, ինչպես նաև տեղական բովանդակությամբ տվյալների պահոցի ստեղծմանն ուղղված պետություն-մասնավոր հատվածի համագործակցության հարթակների ձևավորումն, կենտրոնների ստեղծման նպատակով մրցութային փաթեթի մշակումն է և մրցույթի անցկացում: |
| 18. | **Զարգացնել և ստեղծել ՏՀՏ-ի ծառայությունների մատուցման էլեկտրոնային հարթակներ միջոցառումների իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ տնտեսության ճյուղերում ՏՏ-ի և ՏՀՏ-ի լուծումների կիրառման ընդլայնում միջոցառումը իրականացվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ գլխի 3.6 բաժնի 3-րդ կետի 5-րդ ենթակետը, որի նպատակն է դյուրացնել կազմակերպությունների կողմից հաշվետվությունների ներկայացման գործընթացը՝ թղթային ձևաչափից անցնելով էլեկտրոնային ձևաչափին, ստեղծել հաշվետվությունների առցանց վերլուծության ժամանակակից համակար և երեք տարվա<br>կտրվածքով թվայնացնել արխիվային նյութերը՝ ինտեգրելով թվայնացված նյութերը գործող ավտոմատացված համակարգերին:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կդյուրանա հաշվետվությունների ներկայացման գործընթացը և հնարավորություն կստեղծվի իրական ժամանակում գնահատել տեղեկատվության հավաքագրման և վերլուծության արդյունքները, ինչպես նաև կթվայնացվի արխիվային նյութերը՝ էլեկտրոնային ծառայությունների մատուցումը դյուրացնելու համար: |

| | |
|---|---|
| 19. | **Ներդնել ակտիվների կառավարման միասնական համակարգ, այդ թվում՝ ճանապարհների երկարաժամկետ սպասարկման և շահագործման պայմանագրերի միջոցով**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդիրը պայմանավորված է Ճանապարհների սպասարկման և շահագործման պայմանագրերի վերանայման արդյունքում միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սպասարկման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ճանապարհների սպասարկմանը ուղղված միջոցների ավելի արդյունավետ օգտագործում, ճանապարհների որակի բարձրացում, միջազգային փորձի ներդրում: |
| 20. | **Գույքագրել, քարտեզագրել և թվայնացնել ՀՀ ճանապարհային ցանցը**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ ճանապարհային ցանցի գույքագրում, քարտեզագրում և թվայնացում, ճանապարհների էլեկտրոնային շտեմարանների ստեղծում:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ճանապարհային ցանցի վերաբերյալ տեղեկությունների հասանելիություն, ճանապարհային ցանցի էլեկտրոնային տարբերակի պահպանման հնարավորություն: |
| 21. | **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շարունակություն**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ տրանշի շինարարական աշխատանքների իրականացում<br>3-րդ տրանշի շինարարական և կոմունիկացիաների տեղափոխման աշխատանքների իրականացում:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տրանշ 2-ի շինարարական աշխատանքների շարունակություն, տրանշ 3-ի կոմունիկացիաների տեղափոխման համար կատարվում են ուսումնասիրություններ, իսկ տրանս 4-ի իրականացման համար բանակցություններ են ընթանում շահագրգիռ կազմակերպությունների հետ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շարունակություն<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ամբողջացնելու Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Աշտարակ-Լանջիկ և Սիսիան-Քաջարան հատվածում ժամանակակից չափանիշները բավարարող ավտոմոբիլային ճանապարհ ունենալու հեռանկարը: |
| 22. | **ՀՀ համայնքների համապատասխան միջպետական նշանակության ավտոճանապարհներին կամ մարզկենտրոններին կապող առնվազն մեկ լավ կամ բավարար վիճակում գտնվող ճանապարհով ապահովման վերաբերյալ**<br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված գործընթացի անհրաժեշտությունը բխում է ՀՀկառավարության 2017թ.Հուլիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3-րդ մասի 3.6-րդ գլխի 2-րդ կետի 3-րդ ենթակետի <գ> պարբերություն պահանջից: ՀՀ-ում համայնքների համապատասխան միջպետական նշանակության ավտոճանապարհներին կամ մարզկենտրոններին կապող առնվազն մեկ լավ կամ բավարար վիճակում գտնվող ճանապարհով ապահովում:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ-ում ներկայումս համայնքային նշանակության ավտոմոբիլային որոշ ճանապարհները գտնվում են անբավարար վիճակում, ինչը խոչընդոտ է հանդիսանում այդ համայնքներից դեպի մարզկենտրոնների կամ այլ համայնքների հետ առևտրի զարգացմանը, ինչպես նաև բավարար չափով չի ապահովում այդ ճանապարհներով անվտանգ երթևեկությունը: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորմանառարկան**<br>43.4 կմ երկարությամբ միջհամայնքային ճանապարհների հիմնանորոգման միջոցով ապահովել այդ համայնքներից առնվազնմեկ լավ կամ բավարար վիճակում գտնվող ճանապարհների առկայություն:<br>**3. Կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում համայնքների համապատասխան միջպետական նշանակության ավտոճանապարհներին կամ մարզկենտրոններին կապող առնվազն մեկ լավ կամ բավարար վիճակում գտնվող ճանապարհով ապահովում: |
| **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** | |
| 23. | **Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության առաջնահերթ խնդիրն է անհրաժեշտ սննդամթերքների ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը, Ներկայումս հանրապետությունում առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնա-բավության մակարդակը, էներգետիկ արժեքով գնահատված, կազմում է շուրջ 60 տոկոս: Պարենային անվտանգության ապահովման հիմնական խնդիրներից և ուղղություններից է ագրոպարենային համակարգի զարգացումը, բուսական և կենդանական ծագում ունեցող տեղական արտադրության պարենամթերքի ֆիզիկական մատչելիության ապահովումը:<br>Մի շարք պարենամթերքների ինքնաբավության մակարդակը հանրապետությունում չափազանց ցածր է, դա հիմնականում վերաբերում է ցորենին, անասնապահական ծագման մթերքներին (բա-ցառությամբ մանր եղջերավորների մսի և ձվի): Հետևաբար պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը կարևորագույն գերակա խնդիր է:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա գյուղատնտեսությունում տնտեսվարողների բարձր վերարտադրության սերմերով ապահովվածության մակարդակը, որը բուսաբուծական արտադրանքի ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիքներից մեկն է:<br>Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման արդյունքում վնասատուների պատճառած կորուստը կնվազի 70-85 %-ով: Ագրոքիմիական հետազոտությունների և բերրիության բարձրացման ծրագրի շնորհիվ 170 համայնքի համար կմշակվեն ագրոքիմիական քարտեզներ, որոնք հիմք կծառայեն հիմնավորված նորմաներով պարարտացման համար:<br>Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կնպաստի գյուղատնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, տնտեսվարողների գործունեության պայմանների բարելավմանը, ընդլայնված վերարտադրու-թյան ապահովմանը, գյուղատնտեսական արտադրության և սպասարկումների առավել արդյունավետ կազմակերպմանը, կոոպերատիվներին կտրամադրվի գյուղատնտեսական տեխնիկա:<br>Կխթանվի նոր ինտենսիվ այգիների հիմնման գործընթացը, շուրջ 200 հեկտարով կավելանան պտղատու այգետարածքները,<br>Հանրապետության համայնքային մակարդակով «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում շուրջ 10.7 մլն կանխարգելիչ պատվաստումների և ախտորոշիչ միջոցառումների իրականացումը կնպաստի կենդանիների վարակիչ հիվանդություն-ների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակի ստեղծմանը՝ մոտ 99.9 %-ով, անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովմանը, կխթանի արտահանման և ներկրման գործընթացին, կնպաստի տնտեսության զարգացմանը՝ բարելավելով ազգաբնակչության սոցիալական վիճակը:<br>Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր մեխանիզմներով ծրագրի իրականացման արդյունքում գյուղատնտեսությունում ավելի քան 2000 տնտեսավարողի կտրամադրվի շուրջ 9.4 մլրդ դրամի մատչելի տոկոսադրույքներով վարկեր:<br>Պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման համար: |

| | |
|---|---|
| | Բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, դաշտային կերարտադրության բարելավման, անասնաբուծության արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանման, արտադրական կարողությունների և արժեշղթայի զարգացմանն ուղղված համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական կոոպերատիվների և ֆերմերային տնտեսությունների ձևավորմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կնպաստի գյուղատնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, տնտեսվարողների գործունեության պայմանների բարելավմանը, ընդլայնված վերարտադրության ապահովմանը, գյուղատնտեսական արտադրության և սպասարկումների առավել արդյունավետ կազմակերպմանը: |
| 24. | **Գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գներով մատակարարում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի լուծման անհրաժեշտությունը պայմանավորված է գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների, մասնավորապես, հանքային պարարտանյութերի մատչելի գներով մատակարարման ծրագրի շարունակմամբ, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման, ագրոտեխնիկական պահանջների կատարման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում՝<br>- գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական մշակաբույսեր մշակման ժամանակ ագրոտեխնիկական պահանջների կատարման համար,<br>- կբարձրանա գյուղատնտեսության ոլորտում օգտագործվող հանքային պարարտանյութերի մատչելիության մակարդակը,<br>- կբարձրանա գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունավետությունը, կավելանան արտադրության ծավալները և տնտեսվարողների եկամուտները,<br>- կբարձրանա գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը և ինքնաբավության մակարդակը,<br>- պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման համար: |
| 25. | **Անասնապահության ճյուղի կայունացմանն ուղղված միջոցառումների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Անասնաբուծության զարգացումը պահանջում է հանրապետությունում տոհմային տնտեսությունների ձևավորման, մաքրացեղ տոհմային կենդանիների գլխաքանակի ավելացման և տավարաբուծական մասնագիտացում ունեցող տնտեսություններում բուծվող կենդանիների տոհմամթերատու հատկանիշների բարելավմանն ուղղված պետական աջակցության միջոցառումների իրականացում:<br>Եվրասիական տնտեսական միությանը անդամագրվելուց հետո Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է վարել տոհմային անասնաբուծության ոլորտում իրականացվող միասնական քաղաքականություն, որում առաջնահերթ նշանակություն է տրվում տոհմաբուծարանների ստեղծմանն ու գործունեությանը:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տոհմային բարձրարժեք կենդանիների վերարտադրությունից ստացված տոհմային մատղաշը փոխշահավետ պայմաններով կվաճառվի հանրապետության տավարաբուծական տնտեսություններին, ինչը հնարավորություն կընձեռի տոհմային տնտեսություններին շարունակել ՀՀ ներկրված բարձրարժեք տոհմային կենդանիների մաքուր բուծման գործընթացը:<br>Գերակա խնդրի լուծման դեպքում հնարավորություն կընձեռնվի սկիզբ դնել տոհմաբուծարանների ստեղծման գործընթացին, որը, հետագա տարիներին ընդլայնելով, հիմք կհանդիսանա տոհմաբուծարանների ցանցի ձևավորմանը: |

| | |
|---|---|
| | Նախատեսվում է 2018 թվականից մեկնարկել այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները և մինչև 2018 թվականի ավարտը հիմնել առաջին տավարաբուծական տոհմաբուծարանը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի՝ Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսության բազայի վրա: |
| 26. | **Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Գյուղատնտեսության զարգացման և արդյունավետության բարձրացման գործում առանձնակի կարևորվում է տեխնիկական վերազինման, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման և սպասարկման արդյունավետության բարձրացման խնդիրները:<br>Մեքենատրակտորային հավաքակազմի վերազինման գործում առկա դժվարությունները հիմնականում պայմանավորված են տեխնիկան շահագործող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորություններով, ներմուծվող մեքենայացման միջոցների բարձր գներով, գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների բացակայությամբ:<br>Հանրապետությունում շահագործվող գյուղատնտեսական տեխնիկայի շուրջ 90%-ն օգտագործվում է 20 տարվանից ավելի և անցել է ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները: Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով կտրուկ ավելանում է նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսը, որի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետությունում մեքենատրակտորային կայաններ՝ որոնց կողմից կիրականացվի հանրապետության գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքների ծառայության մատուցում:<br>Ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացմամբ նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակ պահանջարկի բավարարման՝ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի նորացման համար: Գյուղատնտեսական տեխնիկայի կայանների հիմնման պիլոտային ծրագրի իրականացման շրջանակներում կձևավորվեն մեքենատրակտորային կայաններ՝ որոնց կողմից կիրականացվի հանրապետության գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքների ծառայության մատուցում: Ծրագրի իրականացումը հնարավորություն կստեղծի ձևավորել նաև գյուղատնտեսական տեխնիկայի սպասարկման կենտրոններ: |
| 27. | **Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Արտադրության կազմակերպման առումով, բնատնտեսական և այլ առանձնահատկություններով պայմանավորված, գյուղատնտեսության ոլորտը հանդիսանում է բարձր ռիսկային: Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15 %-ը, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100 %: Կարկտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվարանում է դրա իրացումը, զգալիորեն նվազում տնտեսավարողների եկամուտները:<br>Ոռոգման համակարգերի շարքում կաթիլային ոռոգման համակարգը ամենա արդյունավետներից է: Զարգացած երկրներում այն համարվում է այգու մշակության կարևոր նախապայման: Սակայն դրա ներդրումը սահմանափակ ֆինանսական միջոցներ ունեցող հանրապետության գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար լուրջ խոչընդոտ է:<br>Տնտեսության զարգացման ներկայիս փուլում գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար խիստ անհրաժեշտ է ժամանակին ստանալ բնակլիմայական անբարենպաստ ազդեցության վերաբերյալ մոնիթորինգային տվյալներ և արագ արձագանքել հետևանքների մեղմմանը: Այդ նպատակին է ծառայելու աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրման ծրագիրը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հակակարկտային ցանցերի ներդրման ծրագրի իրականացման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ տարեկան շուրջ 1350 հա խաղողի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման համար, հակակարկտային ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի կարկուտի հասցված վնասների ռիսկը, կբարելավվի բերքի որակը, կավելանա տնտեսավարողների եկամուտները, կբարձրանա ապահովագրության համար գրավչությունը:<br>Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրումը կնվազեցնի մշակության ժամանակ ծախսվող նյութա-կան միջոցները և մարդկային ռեսուրսները, կբարձրացնի բերքատվությունը, կնպաստի հանրա-պետության ջրային, էներգետիկ և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:<br>Աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրման երկրորդ փուլի աշխատանքների իրականացման արդյունքում հանրապետության բոլոր մարզերի կտրվածքով կիրականացվի գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք քարտեզագրում, վերջիններիս վերաբերյալ կկազմվի առավել ամբողջական պատկերացում: |
| 28. | **Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ճյուղի աջակցություն և ագրոպարենային արտադրանքի իրացման գործընթացի բարելավում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտը հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերից է, վերջինիս տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 2016 թվականի տվյալներով կազմել է 37.3%, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 59.6%:<br>Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանդիսանում է գյուղա-տնտեսական մթերքների երաշխավորված իրացման և վերարտադրության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը և տնտեսության այդ ոլորտի զարգացման մակարդակը մեծապես պայմանավորում է գյուղատնտեսության զարգացումը:<br>Մյուս կողմից ագրոպարենային ոլորտի արդյունավետության և մրցունակության մակարդակի բարձրացումը, մարքեթինգային գործունեության իրականացումը և ներդրումների ավելացումը պահանջում է ապրանքայնության մակարդակի բարձրացում, որը հնարավոր է միայն իրացման և արտահանման գործընթացի տարբեր օղակների գործունեության բարելավման միջոցով: Վերջինս պահանջում է պետություն-մասնավոր հատված համագործակցության մի շարք քայլերի ձեռնարկում՝ ուղղված մթերումների գործընթացի բարելավմանը, այդ բնագավառում պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը, մթերված գյուղատնտեսական հումքի արժեքը գյուղացիական տնտեսություններին կարճ ժամկետում վճարման ապահովմանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա ագրոպարենային ոլորտի գրավչության և ապրանքայնության մակարդակը, որը կխթանի ագրոպարենային ոլորտում ներդրումների ավելացմանը, արդյունքում կբարձրանա արդյունա-վետությունը, կավելանան արտադրության և իրացման ծավալները: Դա կնպաստի նաև գյուղական բնակավայրերում եկամուտների ավելացմանը և աղքատության մակարդակի կրճատմանը: |
| 29. | **Գինեգործության վարկանիշի և մրցունակության բարձրացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ գործող օրենսդրությամբ թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սահմանված տարեկան տուրքի դրույքաչափը կազմում է 15 մլն դրամ, իսկ կոնյակի և բրենդիի սպիրտների ներմուծումը ծանուցման ենթակա գործունեություն չի համարվում, և այդ գործունեության իրականացման իրավունքի համար պետական տուրք սահմանված չէ, որի պատճառով անհանգստացնող չափերի է հասել կոնյակի և բրենդիի սպիրտների ներմուծումը: 2016 թվականին ներմուծվել է 7996.4 հազ. լիտր կոնյակի սպիրտ, որը համարժեք է շուրջ 88.0 հազ. տոննա խաղողի, և նշված ծավալներով կոնյակի սպիրտների ներմուծումը կարող է լուրջ խնդիրներ ստեղծել հանրապետությունում |

| | |
|---|---|
| | արտադրվող խաղողի բերքի իրացման և մթերումների կազմակերպման համար: Բացի այդ սահմանված տարեկան տուրքի 15 մլն դրամ դրույքաչափը անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում խոշոր և մանր ընկերությունների համար:<br>Մյուս կողմից ակցիզային հարկի գործող դրույքաչափերը չեն նպաստում հանրապետությունում կոնյակի իրացման ծավալների ավելացմանը (ակցիզային հարկի գործող դրույքաչափերի փոփոխության նախորդ տարում՝ 2012 թվականին կոնյակի իրացման ծավալները կազմել են 1888.7 հազ. լիտր, իսկ հավաքագրված ակցիզային հարկը՝ 2244.5 մլն դրամ: Հաջորդ տարիներին կոնյակի իրացման ծավալներն ու հավաքագրվող ակցիզային հարկի մուտքերը աստիճանաբար նվազել և 2016 թվականին կազմել են համապատասխանաբար 885.8 հազ. լիտր և 2096.1 մլն դրամ կամ 2012 թվականի համեմատ հանրապետությունում կոնյակի իրացման ծավալները նվազել են 1002.9 հազ. լիտրով կամ ավելի քան 2 անգամ, իսկ հավաքագրված ակցիզային հարկը նվազել է 148.4 մլն դրամով կամ 6.6 տոկոսով):<br>Գինեգործության ոլորտի զարգացումը, խաղողի նկատմամբ առկա պահանջարկի մեծացումը, թողարկվող արտադրանքի որակի և մրցունակության մակարդակի բարձրացումն ու իրացման ծավալների ավելացումն անհնար է ապահովել առանց դրանց նպաստող հարկային քաղաքականության իրականացման և հավասար մրցակցային միջավայրի ապահովման ուղղությամբ քայլերի ձեռնարկման:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գինեգործության ոլորտի տնտեսավարողների համար կապահովվի հավասար մրցակցային միջավայր, պետական տուրքի և ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները միտված կլինեն ոլորտի զարգացմանը, արտադրության ու իրացման ծավալների և պետական բյուջեի մուտքերի ավելացմանը, խաղողի նկատմամբ առկա պահանջարկի մեծացմանը, խաղողագործության ապրանքայնության մակարդակի բարձրացմանը և խաղողի մթերման հիմնախնդրի մեղմմանը: |
| 30. | **Ագրոպարենային ոլորտում արտաքին ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ագրոպարենային ոլորտի զարգացումը, մասնավորապես արդիական տեխնոլոգիաների և կառավարման առաջավոր մեթոդների կիրառումը պահանջում է զգալի միջոցների ներդրում, որն անհնար է ապահովել առանց արտաքին ռեսուրսների ներգրավման: Վերջինս պահանջում է այդ գործընթացի ակտիվացման քայլերի ձեռնարկում, մասնավորապես գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին միջազգային համաձայնագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին և նախաձեռնություններին մասնակցության ապահովում, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների մասնագետների և պատվիրակությունների այցերի կազմակերպում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ագրարային ոլորտում երկկողմ և բազմակողմ համագործակցության, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, միջկառավարական հանձնաժողովներին մասնակցության ակտիվացման, միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովումը կնպաստի ագրարային ներդրումների ավելացմանը և արդյունքում ոլորտում արտադրության արդյունավետության բարձրացմանը և արտադրության ծավալների ավելացմանը: |
| 31. | **Սննդամթերքի անվտանգության համակարգի կատարելագործում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը անվտանգ սննդամթերքով սպառողների ապահովվածության մակարդակի բարձրացումն է, սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ներդրումն ապահովող իրավաօրենսդրական ակտերի շակումն ու ընդունումը, համակարգերի ներդրման գործընթացի կազմակերպումը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրապետությունում սննդամթերքի, ինչպես նաև առաջին անգամ արտադրվող կամ շուկայահանվող նորահայտ և հատուկ նշանակության սննդամթերքի ու սննդային հավելումների շուկայահանման, ինչպես նաև սննդի շղթայում ընդգրկված տնտեսավարողների գործունեության իրականացման վայրի մասին իազոր մարմնին տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի սահմանում:<br>Միջազգային պահանջներին համապատասխան՝ մարդու սպառման համար նախատեսված սննդամթերքի վերահսկողության ընթացակարգերի ու պահանջների սահմանում:<br>Տեղական շուկայում և տեղական սպառողներին սննդամթերքի անվտագության միջազգային ընդունված չափորոշիչներին համապատասխանող սննդամթերքով ապահովում, սննդամթերքի արտադրության և պետական հսկողության ապահովման միջազգային ընդունելի գործելակերպի ստեղծում: |
| 32. | **Խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում, «Խաղողի տնկարկների կադաստրի» հիմնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Խաղողի տնկարկների կադաստրի ստեղծումը մաս է կազմում այն համալիր աշխատանքների, որոնք ուղղված են Հայաստանի խաղողագործության և գինեգործության զարգացմանը ընդհանրապես և խաղողագինեգործական արտադրանքի որակի բարձրացմանն ու մրցունակության կայուն ապահովմանը՝ մասնավորապես: Նմանատիպ կադաստրի ստեղծումը ուղղված է նաև կեղծարարության դեմ պայքարին:<br>Ամպելոէկոլոգիական տեսանկյունից հիմնավորված խաղողի տնկարկների տեղաբաշխումը և վերահսկումը ընդունված է համաշխարհային պրակտիկայում և վաղուց իրականացվել է աշխարհի զարգացած խաղողագինեգործական երկրներում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում կստեղծվի էլեկտրոնային միասնական տեղեկատվական համակարգ, որում կտեղակայվի մշտապես թարմացվող տեղեկատվություն խաղողի տնկարկների, բերքի մթերմամբ և հումքի մշակությամբ զբաղվող բոլոր շահառու կողմերի մասին:<br>Կվերհանվի և կուսումնասիրվի խաղողագործական շրջաններում խաղողագործական, գինեգործական և պատմամշակույթային տարբերվող համատեքստ ունեցող միկրո և մակրոշրջանները, կխթանվի աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի մշակումը և ներդրումը:<br>Ստեղծված համակարգը հնարավորություն կտա գույքագրելու հանրապետության խաղողի տնկարկները, վերահսկելի դարձնել գինեգործական արտադրանքի որակը և կանխել հնարավոր կեղծարարությունները: |
| 33. | **Սննդի շղթայի օպերատորների շրջանում ըստ ոլորտների որակի կառավարման համակարգերի ներդրման աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջով՝ մասնավորապես ըստ ոլորտների, որակի կառավարման համակարգերի փուլային ներդնում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արտահանվող առանձին ապրանքատեսակների որակի ստուգմանը: Սննդի շղթայի օպերատորների շրջանում որակի կառավարման համակարգերի ներդրմանն ուղղված իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակն է ներկայացնել տնտեսավարողներին որակի կառավարման համակարգերի արդյունավետությունը: Միջազգային պրակտիկայում ընդունված է Վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի կիրառումն արտադրության փուլում, որը թույլ է տալիս կատարել անցում ռիսկերի գնահատման և կառավարման ներդրված համակարգի հիման վրա վտանգի հայտնաբերման ու |

| | |
|---|---|
| | կանխարգելման սկզբունքներով գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը: Հետևաբար, նման համակարգերի ներդնումը վերջնական արտադրանքի համապատասխանությունը իրավական ակտերի պահանջներին ստուգելու փոխարեն հնարավորություն կտա կանխարգելել վտանգները արտադրության փուլերում և չկրել տնտեսական կորուստներ:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ըստ ոլորտների ունենալ իրազեկված սննդի շղթայի օպերատորներ, որակի կառավարման համակարգի աուդիտի իրականցում, գնահատված որակի կառավարման համակարգի աուդիտի գործընթաց, ինչը կնպաստի մակրոտնտեսական մակարդակով սպառողներին առաջարկվող սննդամթերքի անվտանգության, մրցունակության և արտահանման ծավալների բարձրացմանը: |
| 34. | **Տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, մասնավորապես նախատեսվում է փուլերով իրականացնել տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորման և փուլերով կիրառել առանց սանիտարական անձնագրերի տրանսպորտային միջոցներով սննդամթերք տեղափոխող սննդի շղթայի օպերատորների նկատմամբ պատասխանատվության միջոցներ: Տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորման նպատակն է բացառել տեղափոխման փուլում սննդամթերքի աղտոտման վտանգը և սպառողին մատակարարել անվտանգ սննդամթերք:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ժամանակացույցի համաձայն ունենալ սանիտարական անձնագրավորված տարանսպորտային միջոցներ, ինչը կնպաստի իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխան կահավորված տրանսպորտային միջոցներով սննդամթերքի տեղափոխում, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացմանը: |
| 35. | **Մսի իրացման և գնման ոլորտում պարտադիր սպանդանոցային մորթի ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 3-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով՝ մասնավորապես, մշակել և ներդնել սպանդանոցների նկատմամբ հսկողության, անասնաբուժասանիտարական փորձաքննության և մսի դրոշմման վարչարարության կատարելագործման ու արդյունավետության բարձրացման մեխանիզմներ: Պարտադիր սպանդանոցային մորթի ժամանակացույցով սահմանված սպանդանոցային ծագման մսի իրացման նախապատրաստական աշխատանքների իրականցում՝ Ծառայության կենտրոնական և մարզային մակարդակներում տեղական սպանդանոցային ծագման միս վերամշակողների հետ քննարկումներ, գործընթացների նկատմամբ հետևողական վերահսկողության ապահովում: Անասնաբուժասանիտարական փորձաքննության, մսի դրոշմման և անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի տրման գործընթացների նկատմամբ հետևողական վերահսկողության ապահովում և հսկողության գործընթացում թվայնացման աշխատանքների իրականացում:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ունենալ սպանդանոցային ծագման մսի իրացման վերաբերյալ իրազեկված տնտեսավարող սուբյեկտներ, արդյունքում մսի իրացման և գնման ոլորտում փուլային ներդրված պարտադիր սպանդանոցային մորթին անցում: |

| | |
|---|---|
| 36. | **Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և նույնականացման ծրագրի մշակման աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 4-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով՝ նախատեսվում է ներդնել թվայնացված համակարգ և ապահովել վտանգի բացահայտման ու վարակիչ հիվանդությունների մոնիթորինգային հսկողություն՝ գյուղատնտեսական կենդանիների նույնականացման, հաշվառման ու համարակալման նպատակով, կենդանիների համարակալման նույնականացման և գրանցման համակարգի մշակման համապարփակ նկարագրությանն ուղղված աշխատանքներ, կենդանիների համարակալման նույնականացման և գրանցման ծրագրի իրականացման թվայնացված համակարգի ներդրման աշխատանքների շարունակություն:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումից ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ունենալ գյուղատնտեսական կենդանիների նույնականացված, հաշվառված ու համարակալված թվայնացված համակարգ, ինչը կնպաստի ունենալ համակարգված տվյալների բազա հանրապետությունում առկա գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ, որը կնպաստի կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավմանը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանմանը: |
| 37. | **Ըստ արտադրատեսակների և գործունեության իրականացման տեսակների, սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգի ներդրման աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 5-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով՝ մասնավորապես նախատեսվում է ներդնել սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգ: Նախատեսվում է իրականացնել պետական վերահսկողության կազմակերպման և իրականացման գործընթացների թվայնացման աշխատանքներ, իրականացնել սահմանային և տարածքային պետական վերահսկողության արդյունքներով ըստ արտադրատեսակների և արտադրողների ռիսկերի վերհանում և վերլուծություն:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումից ակնկալվում է ունենալ պետական վերահսկողության կազմակերպման և իրականացման գործընթացների թվայնացված համակարգ, սահմանային և տարածքային պետական վերահսկողության արդյունքներով ըստ արտադրատեսակների և արտադրողների վերլուծված ռիսկայնության վերաբերյալ տվյալներ: |
| 38. | **Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդելի մշակման և ռիսկերի կառավարման մեխանիզմների աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով՝ մասնավորապես նախատեսվում է ներդնել սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդել և կիրառել |

| | |
|---|---|
| | ռիսկերի կառավարման մեխանիզմներ: Նախատեսվում է իրականացնել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ ռիսկերի գնահատման կարողությունների զարգացման ծրագրի հաստատում, ռիսկերի գնահատման կարողությունների զարգացման ծրագրի իրականացում, անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում ռիսկ գնահատելու և վերլուծելու կարողություններ ունեցող մարմինների գնահատում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումից ակնկալվում է ունենալ միջազգային փորձագետների կողմից Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատված իրավիճակը և սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի կարողությունների զարգացման մշակված ծրագիր: Գնահատված անասնաբուժության, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ՀՀ-ում ռիսկ գնահատելու և վերլուծելու կարողություններ ունեցող մարմիններ: |
| 39. | **ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության լաբորատոր կարողությունների զարգացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 5-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջով՝ մասնավորապես նախատեսվում է բարձրացնել սննդամթերքի անվտանգության լաբորատոր հսկողության մակարդակը և զարգացնել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական ու բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների համակարգը: Շարունակել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային ISO 17025 պահանջներին համապատասխան հավատարմագրման գործընթացը, փուլային անցում կատարել մարզերում Ծառայության լաբորատոր կարողությունների զարգացնելու նպատակով, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունների հավատարմագրման ոլորտների շրջանակների ընդլայնմանն ուղղված աշխատանքների իրականացում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային ԻՍՕ 17025 ստանդարտով հավատարմագրում և միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների մատուցում, լաբորատորիաների ցանց ստեղծելու համար կարիքների բացահայտում և մեխանիզմների մշակում: |
| 40. | **Ներմուծման արտահանման ընթացակարգերի և այդ գործընթացներում ռիսկայնության մեթոդաբանության վերանայում և պարզեցում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 6-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով՝ մասնավորապես անհրաժեշտ է վերանայել և պարզեցնել ներմուծման արտահանման ընթացակարգերը և այդ գործընթացներում ռիսկայնության մեթոդաբանությունը, Ծառայության գործունեության էլեկտրոնային համակարգի գործարկում և սպասարկում: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ունենալ վերանայված և պարզեցված ներմուծման արտահանման ընթացակարգեր և այդ գործընթացներում ռիսկայնության մեթոդաբանություն, Ծառայության գործունեության գործարկված էլեկտրոնային համակարգ՝ ինչը կնպաստի սահմանային վերահսկողության գործընթացների և ժամկետների կրճատմանը: |
| 41. | **Արտադրանքի և որակի կառավարման համակարգերի հսկողության բարձր մակարդակ ունեցող երկրներից որոշակի սննդամթերքի տեսակների ներմուծման դեպքում վարչարարության պարզեցում և ժամկետների կրճատում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5-րդ կետի «Գյուղատնտեսություն» բաժնի «Սննդամթերքի անվտանգություն» ենթաբաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջով, մասնավորապես անհրաժեշտ է պարզեցնել արտադրանքի և որակի կառավարման համակարգերի հսկողության բարձր մակարդակ ունեցող երկրներից որոշակի սննդամթերքի տեսակների ներմուծման դեպքում վարչարարությունը, ինչպես նաև կրճատել ժամկետները, սահմանային վերահսկողության գործընթացներում նմուշառման կարողությունների զարգացում, բեռների մաքսային ձևակերպումների տարածքներում նմուշառման կարողությունների ստեղծմանն ուղղված աշխատանքներ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ունենալ պարզեցված արտադրանքի և որակի կառավարման համակարգերի հսկողության բարձր մակարդակ ունեցող երկրներից որոշակի սննդամթերքի տեսակների ներմուծման դեպքում վարչարարություն, ինչպես նաև կրճատել ժամկետները, զարգացած սահմանային վերահսկողության գործընթացներում նմուշառման կարողություններ: |
| **Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** | |
| 42. | **Արտահանման շուկաների հասանելիության ընդլայնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ն որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 3.1 բաժնի «Արտահանում» ենթաբաժնի 1-ին կետի 2, 3, 5 և 6 ենթակետերի պահանջներից: Արտահանման զարգացման քաղաքականությունը ՀՀ կառավարությունը նպատակադրում է իրականացնել հիմնականում 2 ուղղությամբ՝ 1) ԵԱՏՄ շրջանակներում նոր արտահանման շուկաների հասանելիության բարձրացում և 2) երկկողմ հարթության մեջ թիրախային երկրների հետ առևտրի արտոնյալ ռեժիմների ձեռքբերում՝ միաժամանակ ձևավորելով նպաստավոր միջավայր արտահանող արտադրողների (մասնավորապես՝ ոսկերչության ոլորտում) մրցունակության բարձրացման նպատակով:<br>Նշված խնդրի անհրաժեշտությունը բխում է հայկական ապրանքների մուտքը այլ երկրների շուկաներ ազատականացնելու և արտաքին առևտրի քաղաքականության գործիքների կիրառման հստակ կանոններ սահմանելու նպատակներից, որի ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում ԵԱՏՄ ձևաչափով օտարերկրյա պետությունների հետ արտոնյալ, այդ թվում՝ ազատ առևտրի համաձայնագրերի կնքման ուղղությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման ուղղությամբ քայլեր կձեռնարկվեն ԵԱՏՄ շրջանակներում Իրանի ու Չինաստանի հետ բանակցային գործընթացներին մասնակցության, Հնդկաստանի, Իսրայելի, Սինգապուրի և Եգիպտոսի հետ ազատ առևտրի մասին համաձայնագրերի բանակցությունների մեկնարկի, Վիետնամի հետ կոնյակի մասով և Ծոցի երկրների հետ ՀՀ-ին միակողմանի արտոնությունների տրամադրման մասով աշխատանքների, ԵԱՏՄ երկրներում ոսկերչական |

| | |
|---|---|
| | իրերի հարգադրոշման փոխչանաճելիությունն ապահովելու ուղղությամբ:<br>Գերակա խնդրի շրջանակներում 2018 թվականին տարվող աշխատանքներն ընդհանուր առմամբ կնպաստեն որպես Հայաստանի տնտեսական աճի շարժիչ՝ արտահանման զարգացմանը և ՀՆԱ նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցության գծով ՀՀ կառավարության թիրախավորման ձեռքբերմանը: |
| 43. | **Արտահանման խրախուսման մեխանիզմների կատարելագործում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ն որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 3.1 բաժնի «Արտահանում» ենթաբաժնի 1-ին և 2-րդ կետերի դրույթներից: Հայաստանն արտահանման վրա հիմնված տնտեսական աճի մոդելով առաջնորդելու քաղաքականության համալիրում արդյունավետ խթանող գործիքակազմերը լրացնում են միջավայրային ու շուկաների հասանելիության ընդլայնման ուղղություններով տարվող աշխատանքները:<br>Արտահանման խրախուսման ուղղությամբ քայլեր կձեռնարկվեն մասնավորապես՝<br>– eLAB էլեկտրոնային համակարգի ներդրման և որակավորման ստուգման ծրագրեր իրականացնող և միջլաբորատոր փորձարկումներ կազմակերպող միջազգային պրովայդեր կազմակերպության ներկայացուցչության ստեղծման իրավական հիմքերի ձևավորման,<br>– ԵԱՏՄ շրջանակներում ծառայությունների միասնական շուկայի ընդլայնման համատեքստում ներդաշնակեցման ենթակա ԵԱՏՄ անդամ-երկրների նորմատիվ իրավական ակտերի ցանկերի ձևավորման,<br>– հայկական ապրանքների համար թիրախային շուկաներ ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվական ամբողջական հասանելիության ապահովման,<br>– հայկական արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակի ներդրման<br>– ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցության աջակցության արդիականացված մեխանիզմների կիրառման ապահովում<br>– արտահանման ապահովագրության ծավալի կրկնակի աճի ապահովման միջոցառումների իրականացման ուղղություններով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի կատարման ուղղությամբ ծրագրված քայլերի արդյունքում արտահանման խրախուսման գործիքների ու արտահանող ընկերություններին աջակցող տեղեկատվական ենթակառուցվածքների գործարկման միջոցով նախատեսվում է բարձրացնել ՀՀ կառավարության՝ արտահանման խթանման ասպարեզում տարվող աշխատանքների ընդհանուր արդյունավետությունն ու հասցեականությունը: |
| 44. | **Գործարարության խթանմանն ուղղված նախաձեռնությունների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Արտահանման զարգացման ու ներդրումային հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ ՀՀ կառավարության համապարփակ քաղաքականության առանցքը գործարարության ու ձեռներեցության զարգացումն է: Այս տեսակետից գործարար ակտիվության խրախուսման թիրախավորված ու արդյունավետ քաղաքականությունների իրագործումը դառնում է զարգացման հենքային նախապայմանների ապահովման անհրաժեշտ բաղադրիչներից մեկը:<br>Նշված համատեքստում այս փուլում ՀՀ կառավարության նախաձեռնությունները կներառեն հետևյալ ուղղությունները՝<br>– «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի իրագործում, այդ թվում՝ ՓՄՁ-ի ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող միջազգային կառույցների հետ համագործակցության խորացում,<br>– ՓՄՁ-ի սուբյեկտների նոր պահանջներին համապատասխան պետական աջակցության նոր գործիքակազմի մշակում և ներդրում,<br>– ՓՄՁ-ի ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ինստիտուցիոնալ հնարավորությունների ձևավորում, |

| | |
|---|---|
| | – «Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2018 թվականի ծրագրի» իրագործում, ներառյալ՝ «Made in Armenia» միջոցառման անցկացում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության ընդլայնում և մրցակցային կարողությունների ամրապնդում, ֆինանսական և ներդրումային հնարավորությունների, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվի աճ և նոր աշխատատեղերի ստեղծում, ինչպես նաև տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնում և դիվերսիֆիկացիա, հայկական ապրանքների մրցունակության աճ և արդյունքում արտահանվող ապրանքների ծավալի աճ, տնտեսական մրցակցության բնագավառում կայացվող որոշումների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում: |
| 45. | **Ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ն որոշման հավելվածով հաստատվածՀՀ կառավարության ծրագրի 3.1 բաժնի «Ներդրումներ» ենթաբաժնի 2-րդ կետի 5-8 ենթակետերի պահանջից:<br>ՀՀ կառավարությունը նպատակադրում է միջնաժամկետում օտարերկրյա ներդրումներ/ ՀՆԱ հարաբերակցության նշանակալի աճ արձանագրել: Այս նպատակի իրագործման ուղղությամբ ներդրումային քաղաքականության բնագավառում ՀՀ կառավարության հանձնառության տիրույթը ներառում է ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ինստիտուտների ամրապնդումը և ներդրումային միջավայրի բարելավումից «թիրախավորված» ռազմավարությամբ ներդրումային քաղաքականության անցում: Նշված հարթություններում իրականացվող աշխատանքները 2018 թվականին կներառեն հիմնականում հետևյալը՝<br>– կապահովվեն որոշակի գումարից ավել ներդրում կատարած օտարերկրացիներին ՀՀ քաղաքացիություն շնորհելու հայեցակարգից բխող քայլերը,<br>– մոտեցումներ կձևավորվեն առաջատար վերազգային ընկերությունների հետ երկկողմ հարաբերությունների ձևաչափերի և մեխանիզմների վերաբերյալ,<br>– կապահովվի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառումը,<br>– կմշակվեն թվով 2 թիրախային ոլորտներում օտարերկրյա ներդրումների ներգրավման վերաբերյալ առաջարկությունների և կներկայացվեն ՀՀ կառավարության աշխատակազմ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի ներքո ծրագրված ուղղություններով 2018 թվականի աշխատանքների իրագործման արդյունքում ակնկալվում է ընդհանուր առմամբ նպաստել Հայաստանում ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ինստիտուտների ամրապնդմանը, «թիրախավորված» ռազմավարությամբ ներդրումային քաղաքականության անցման համար նախապայմանների ապահովմանը: |
| 46. | **Ստեղծարար և նորարարական բիզնեսների զարգացման խթանում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից դրսևորումների ֆոնին երկրների երկարաժամկետ կայուն զարգացման հեռանկարները թերևս ավելի քիչ են սկսում կախված լինել զարգացման հենքային մակարդակից: Տնտեսական զարգացման ճեղքում ապահովվելու հնարավորությունը նշանակալիորեն պայմանավորված է գիտության ու տեխնոլոգիաների, ինովացիաների և կիրառությունների, մշակումների և հետազոտությունների ասպարեզներում սրընթաց մրցավազքին մասնակցելու ու այդ բնագավառները ներառող գլոբալ արժեշղթաներում դիրքավորվելու կարողությամբ: |

| | |
|---|---|
| | Այս իրողությունների պարագայում Հայաստանի զարգացման ներկա փուլի առանցքային մարտահրավերներից է համաշխարհային տեխնոլոգիական ու ինովացիոն հոսքերում ակտիվ մասնակից դառնալու համար կրիտիկական կարողությունների և համարժեք էկոհամակարգի ձևավորումը, ունեցած հատվածային ձեռքբերումները մասշտաբայնացնելու և տնտեսության տարբեր ոլորտներում տարածելու համար անհրաժեշտ կառուցակարգերի ամրագրումը, համարժեք մարդկային կապիտալի կայացման համար հենքային նախապայմանների ապահովումը:<br>Նշված մարտահրավերների հաղթահարումը պահանջում է երկրի ինովացիոն ներուժի և տեխնոլոգիական զարգացման հնարավորությունների առավելագույն իրացման միջոցով ստեղծարար, արդիական ու միջազգային արժեշղթաներում մրցունակ բիզնեսներ ձևավորելու ուղղությամբ հացեական քայլերի իրականացում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2018 թվականին նախատեսվող աշխատանքները կներառեն հետևյալ ուղղությունները՝<br>– ՀՀ նորարարական էկոհամակարգի (իրավական դաշտ, կազմակերպություններ, ոլորտի զարգացման ծրագրեր, նորարարական բիզնես, կրթություն և հետազոտություններ) քարտեզագրում,<br>– Առաջադեմ տեխնոլոգիական հիմքով արտադրություններին աջակցության հատուկ մեխանիզմների մշակում,<br>– Հետազոտություններ ու մշակումներ իրականացնող լաբորատորիաների ձևավորման նպատակով վերազգային առնվազն 2 կազմակերպության՝ Հայաստան ներգրավում:<br>Նախանշված աշխատանքները կնպաստեն երկրում կենսունակ էկոմիջավայրի ձևավորման, խրախուսման արդյունավետ ու հասցեական գործիքակազմերի կիրառման միջոցով ինովացիոն հիմքով գործարարության զարգացմանը: |
| 47. | **Զբոսաշրջության ոլորտի զարգացման նախաձեռնությունների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Զբոսաշրջությունը, որպես Հայաստանի տնտեսության դինամիկ զարգացող և ուղղակի տնտեսական եկամուտներ և անուղղակի օգուտներ բերող ոլորտ, ՀՀ կառավարության տնտեսական զարգացման քաղաքականության առանցքային գերակայություններից է: Վերջին տարիներին ոլորտում նկատվող միտումները բավականին խոստումնալից հիմքեր են ապահովում զբոսաշրջային նոր ուղղությունների զարգացման համար՝ նպաստելով զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, ինչպես նաև զբոսաշրջային միջազգային շուկայում սպառողական բազմազան խմբերի համար երկրի հետաքրքրության աճին:<br>Երկրի զբոսաշրջային արդյունաբերության հետագա զարգացման քաղաքականությունը հենվելու է երկրի՝ որպես զբոսաշրջության համար առանձնահատուկ ու գրավիչ վայր ճանաչելիության բարձրացման, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման ապահովման, վիճակագրական տեղեկատվական համակարգի կատարելագործման ուղղություններով իրականացվող նախաձեռնությունների վրա:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծմանն ուղղված հասցեական քայլերի և միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է Հայաստանի ճանաչելիության բարձրացման միջոցով նպաստել ոլորտի աճի և զարգացման հնարավորությունների ընդլայնմանը, տնտեսության այլ ճյուղերում հարակից դրական արդյունքների տարածմանը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | |
| 48. | **«Հարկային և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների թիրախային ուղղություններից է համարվում ռիսկային չափանիշների հիման վրա հարկային և մաքսային հսկողության հասցեականության ապահովումը և արդյունավետության |

| | |
|---|---|
| | բարձրացումը՝ ռիսկերի կառավարման էլեկտրոնային ավտոմատ համակարգերի կատարելագործման միջոցով:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է վերանայել ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության չափանիշները՝ համակարգը հարկ վճարողների իրական ռիսկը բնութագրող նոր չափանիշներով համալրելու և ոչ արդյունավետ կիրառվող ռիսկային չափանիշները հանելու նպատակով՝ դրանով իսկ ապահովելով ՀՀ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումների առավել հասցեականությունը:<br>Մաքսային հսկողության տեսանկյունից կարևորվելու է ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա ԱՏԳ մասնակցի ընտրության համակարգի հետագա կատարելագործումը՝ սահմանային հսկողությունը աստիճանաբար հետբացթողումային հսկողությամբ փոխարինելով՝ ապահովելով ԱՏԳ-ի մասնակիցների համար ապրանքների սահմանահատման, ձևակերպման և բացթողման գործընթացների պարզեցում ու դյուրինացում:<br>Միաժամանակ, ակնկալվում է ապահովել երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների ավտոմատացված համակարգի գործարկումը: |
| 49. | **«Ըստ նպատակայնության հարկային, մաքսային, վարչական, քրեական պատասխանատվության տեսակների և չափերի կանոնակարգում, իրավախախտումների համար՝ ըստ բնույթի, վտանգավորության աստիճանի և պատճառած վնասի, պատասխանատվության միջոցների սահմանում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային, մաքսային, վարչական, քրեական պատասխանատվության տեսակների և չափերի կանոնակարգման կարևորությամբ: Ներկայումս արդիական է շարունակում մնալ իրավախախտումների՝ ըստ բնույթի, վտանգավորության աստիճանի և պատճառված վնասի, պատասխանատվության միջոցների սահմանումը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ նախատեսվում է կանոնակարգել պատասխանատվության տեսակները և չափերը՝ հաշվի առնելով իրավախախտումների բնույթը, վտանգավորության աստիճանը և պատճառված վնասը, այդ նպատակով նախատեսվում է ներկայացնել համապատասխան առաջարկություններ խնդրի կարգավորման ուղղությամբ: |
| 50. | **«Տնտեսությունում գործարքների ամբողջական փաստաթղթավորման մշակույթի ներդրում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ հարկային վարչարարության բարեփոխումների առաջնահերթություններից է սահմանվել տնտեսությունում կատարվող գործարքների ամբողջական փաստաթղթավորման մշակույթի ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:<br>Հաշվի առնելով, որ հարկ վճարողների կողմից կատարվող գործարքների մեջ դեռևս զգալի ծավալ են կազմում առանց հաշվարկային փաստաթղթերի, կամ գործարքների իրական գներից էականորեն տարբերվող գներով կազմված փաստաթղթերով, կամ գործարքները կատարվելուց հետո դրանց մասով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերն անվավեր համարելու, ինչպես նաև հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով անապրանք փաստաթղթեր դուրս գրելու դեպքերը՝ արդիական է շարունակում մնալ իրացվող ապրանքների գծով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոնների տրամադրման խախտումների բացահայտմանն ուղղված միջոցառումների իրականացումը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ նախատեսվում է հսկիչ դրամարկղային մեքենաներով, հաշվարկային փաստաթղթերով և հարկային հաշիվներով իրականացվող գործարքների մոնիթորինգի իրականացման արդյունքում դուրս բերել ռիսկային հարկ վճարողների ցանկերը և դրանց հիման վրա՝ վերջիններիս էլեկտրոնային եղանակով ուղարկել ծանուցումներ՝ նշելով արձանագրված ռիսկերը:<br>Մոնիթորինգի արդյունքներով՝ ծանուցված հարկ վճարողներից կընտրվեն վարքագիծը չփոփոխած ռիսկային հարկ վճարողներ՝ վերջիններիս մոտ համապատասխան հսկողական միջոցառումներ իրականացնելու նպատակով:<br>Իրականացվելիք աշխատանքների արդյունքում ակնկալվում է տնտեսավարող սուբյեկտների մոտ ամրապնդել խախտումներ իրականացնելու դեպքում պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիության գիտակցումը, ինչն իր հերթին կհանգեցնի տնտեսության մեջ փաստաթղթաշրջանառության մշակույթի ամրապնդմանը: |
| 51. | **«Հարկային և մաքսային մարմինների վերլուծական կարողությունների զարգացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրով սահմանված՝ ռիսկերի գնահատման գործընթացների բարելավման, ինչպես նաև հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունն էլեկտրոնային հսկողությամբ փոխարինելու նպատակով՝ վերլուծական կարողությունների ընդլայնմամբ և կատարելագործմամբ:<br>Արդիական է շարունակում մնալ ռիսկերի արագ բացահայտման և արդյունավետ կառավարման համակարգերի կիրառությունն ու դրա հիման վրա թիրախավորված ընթացիկ հարկային հսկողության իրականացումը: Այս տեսանկյունից կարևորվում է վերլուծական կարողությունների զարգացումը՝ ուղղված ռիսկերի բացահայտմանը և կառավարման մեխանիզմների կատարելագործմանը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ նախատեսվում է իրականացվող վերլուծությունները կենտրոնացնել մոնիթորինգային կենտրոնում՝ ապահովելով վերլուծությունների միասնականություն և ռիսկերի արագ բացահայտման և օպերատիվ արձագանքման հնարավորություն, հսկողական աշխատանքների համար ծախսվող ռեսուրսների արդյունավետ կառավարում, ինչպես նաև հարկային տեսուչ-հարկ վճարող շփումների և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կրճատում:<br>Միաժամանակ, վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար, կընդլայնվեն էլեկտրոնային կառավարման հնարավորությունները, կներդրվի կամերալ ուսումնասիրությունների էլեկտրոնային համակարգը՝ արդյունքում նպաստելով վերլուծական և վարչարարական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:<br>Վերլուծական կարողությունների զարգացման արդյունքում կբարձրանա տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության կիրառման արդյունավետությունը՝ ապահովվելով հարկային հսկողության թափանցիկություն, հնարավորություն ընձեռելով իրականացնել հասցեական և արդյունավետ ստուգումներ՝ հարկային ռեսուրսներն ուղղելով առավել ռիսկային ոլորտներ՝ բարեխիղճ հարկ վճարողների նկատմամբ կիրառելով «թեթևացված» հարկային վարչարարություն: |
| 52. | **«Հարկային և մաքսային մարմինների էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունների զարգացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի մշակումը պայմանավորված է ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունների շարունակական զարգացման անհրաժեշտությամբ, ինչն ուղղված է |

| | |
|---|---|
| | իրականացվող գործընթացների առավելագույնս ավտոմատացմանը, ինչպես նաև հարկ վճարողներին որակյալ ծառայությունների մատուցմանը՝ այդ թվում հարկային մարմին ներկայացվող բոլոր հաշվարկների, փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորության ստեղծմանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործմամբ՝ նախատեսվում է կատարելագործել էլեկտրոնային կառավարման համակարգը, ապահովել հարկային մարմին ներկայացվող բոլոր հաշվարկների, փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորությունը՝ այդ թվում ՀՀ հարկային օրենսգրքից բխող փոփոխությունների էլեկտրոնայնացումը: |
| 53. | **«Շրջանառության հարկի հաշվարկման ինքնաշխատ համակարգի ներդրում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնմամբ և հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ներդնել ՓՄՁ սուբյեկտների համար շրջանառության հարկի հաշվարկման ինքնաշխատ համակարգ, ինչի արդյունքում համակարգը, հարկ վճարողների կողմից տրամադրած բազային տվյալների հիման վրա, ավտոմատ կերպով կհաշվարկի հարկային պարտավորության գումարը: Համակարգի գործարկման արդյունքում հնարավորինս կնվազեցվի հարկ վճարողների վարչարարական բեռը և ծախսվող ժամանակը: |
| 54. | **«Հարկերի վճարման էլեկտրոնային համակարգի գործարկում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հարկ վճարողներին հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ընդլայնմամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է գործարկել հարկերի վճարման էլեկտրոնային համակարգը, ինչը հնարավորություն կտա հարկ վճարողներին իրենց հարկային պարտավորության մնացորդը էլեկտրոնային համակարգի միջոցով տեսնելուց հետո կատարել հարկերի վճարումը: |
| 55. | **«ԵԱՏՄ մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող նորմերի մշակում և ԵԱՏՄ-ի իրավունքի մաս կազմող իրավական ակտերի մշակման աշխատանքներին մասնակցություն» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մոտարկել անդամ երկրների օրենսդրական դաշտը: Նշված գործընթացը ենթադրում է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակում, ինչպես նաև վերազգային մակարդակով՝ ԵԱՏՄ-ի իրավունքի մաս կազմող իրավական ակտերի մշակման աշխատանքներին մասնակցության ապահովում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ապահովել ԵԱՏՄ մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կատարելագործումը: |

| | |
|---|---|
| 56. | **«Հարկ վճարողների գործունեության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ՝ վերջիններիս ուղարկվող ծանուցումների համակարգի կիրառման ընդլայնում՝ օգտագործելով առավելապես էլեկտրոնային համակարգերի հնարավորությունները» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի իրագործումը միտված է հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունը էլեկտրոնային հսկողությամբ փոխարինելուն: Այդ տեսանկյունից արդիական է շարունակում մնալ հարկ վճարողների գործունեության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ՝ վերջիններիս ուղարկվող ծանուցումների համակարգի ընդլայնումը: Մասնավորապես, կարևորվում է հսկիչ դրամարկղային մեքենաներով, հաշվարկային փաստաթղթերով իրականացվող գործարքների մոնիթորինգի արդյունքների հիման վրա՝ հարկ վճարողներին բացառապես էլեկտրոնային եղանակով ծանուցումների տրամադրումը, ինչպես նաև վարչական վարույթների ընթացքում՝ հարկ վճարողների պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով վերջիններիս ծանուցումների տրամադրման համակարգի կիրառման հարցի ուսումնասիրությունը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրագործմամբ կապահովվի հարկ վճարողներին առավելապես էլեկտրոնային համակարգերի հնարավորությունների կիրառմամբ ծանուցումների տրամադրման գործընթացը: |
| 57. | **«Հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտների կատարելագործում՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված կարևոր ուղղություններից է հանդիսանում հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտների կատարելագործումը, ինչը կնպաստի հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին սպասարկման միասնականության և հավասարության սկզբունքի ամրապնդմանը՝ ապահովելով որակյալ ծառայությունների մատուցում:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործումը թույլ կտա ունենալ հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտներ՝ միաժամանակ ապահովելով դրանց հրապարակայնությունը: |
| 58. | **«Հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է ապահովել հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործումը, ինչպես նաև 2018 թվականի հարկ վճարողների իրազեկման և ուսուցման ծրագրի մշակումը և միջոցառումների կազմակերպումը՝ համաձայն ծրագրի:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրագործման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել արդյունավետ գործող հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգ՝ ապահովելով հարկ վճարողների շրջանում հարկային օրենսդրության և իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության անհրաժեշտ մակարդակ: |
| 59. | **«Հարկային կարգապահության թեմայով հեռուստահաղորդաշարերի հեռարձակում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված գերակա խնդրի սահմանումը պայմանավորված է հարկային կարգապահության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությամբ: Իրականացվող աշխատանքները կհանգեցնեն հարկ վճարողների կողմից հարկային և մաքսային կարգապահության բարձրացմանը, վարչական մարմնի հանդեպ վստահության մթնոլորտի ձևավորմանը, ինչն էլ իր |

| | |
|---|---|
| | իրերին կնպաստի տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը և հարկային եկամուտների ապահովմանը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրագործման արդյունքում կապահովվի բացահայտված իրավախախտումների, կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը զանգվածային լրատվամիջոցներին, ինչպես նաև հարկային կարգապահության թեմայով հեռուստահաղորդաշարերի հեռարձակման նպատակով՝ ֆինանսական միջոցների նախատեսման առաջարկության ներկայացումը: |
| 60. | **«Հարկային մարմին-հարկ վճարող համագործակցության արդյունավետության բարձրացում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված գերակա խնդրի սահմանումը պայմանավորված է հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված լայնածավալ աշխատանքների իրականացմամբ, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ, հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորմամբ, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողների գործունեության համար առավել բարենպաստ պայմանների ներդրման անհրաժեշտությամբ:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված գերակա խնդրի իրագործումը կհանգեցնի հարկային և մաքսային կարգապահության բարձրացմանը, հարկային և մաքսային մարմինների գործունեության թափանցիկության բարձրացմանը, վարչական մարմնի հանդեպ վստահության մթնոլորտի ձևավորմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը և հարկային եկամուտների ապահովմանը, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողների գործունեության համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը: |
| 61. | **«Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործում» գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, հարկային, մաքսային ծառայողի կերպարի վերափոխման կարևորությամբ:<br>Արդիական խնդիր է հանդիսանում հարկային և մաքսային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայողների ուսուցման և վերա-պատրաստման գործընթացի արդյունավետ կազմակերպումը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է կատարելագործել մարդկային ռեսուրսների կառավարման գործող համակարգը՝ բարձրացնելով վերջինիս արդյունավետությունը, ինչը կնպաստի աշխատանքի և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | |
| 62. | **Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 24-ժամյա «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (free route airspace) հայեցակարգի ներդրում 290 թռիչքային մակարդակից (fl290) հնարավորինս ցածր բարձրությունների վրա**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ միջազգային աերոնավիգացիոն անվտանգության կազմակերպության նախա-ձեռնությամբ մշակվել է «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ): |

| | |
|---|---|
| | Համաձայն Հայեցակարգի՝ օդային մայրուղիներից ազատ օդային տարածք է հանդիսանում այն օդային տարածքը, որտեղ թռիչքները կարող են իրականացվել առանց պետության օդային տարածքում սահմանված օդային մայրուղիներով՝ ունենալով թռիչքի երթուղու ազատ ընտրության հնարավորություն օդային տարածքի մուտքի և ելքի կետերի միջև:<br>Հայեցակարգի առավելություններն են՝<br>1) օդային տարածքի թողունակության բարձրացում,<br>2) օդի աղտոտման նվազում,<br>3) օդային երթևեկության սպասարկման և օդանավ շահագործողների ծախսերի նվազում,<br>4) համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ելնելով Հայեցակարգից ակնկալվում է, որ թռիչքները կիրականացվեն ուղիղ հետագծերով, բացառությամբ թռիչքների համար վտանգավոր կամ փակ տարածաշրջանների:<br>ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼԻ նախնական հաշվարկներով ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼԻ անդամ բոլոր պետությունների օդային տարածքներում Հայեցակարգի ներդրման դեպքում թռիչքների երկարությունը կկրճատվի 7,5 միլիոն մղոնով, որն իր հերթին կբերի 45 հազ. տոննա վառելիքի և 150 հազ. տոննա թունավոր արտանետումների նվազման, կամ 37 միլիոն եվրո խնայողության: |
| 63. | **«ՀՀ-եմ ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի տեքստը ստորագրման պատրաստում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը պայմանավորված է դեպի ՀՀ և ՀՀ-ից օդային փոխադրումների աշխարհագրության ընդլայնման և ավիափոխադրումների ծավալների ավելացման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը կմիանա ԵՄ միասնական ավիացիոն գոտուն, որի արդյունքում համաձայնագրի կողմերը փոխադարձաբար կազատականացնեն շուկան՝ ավիաընկերություն-ներին ընձեռելով հնարավորություն առանց սահմանափակումների շահագործել երթուղիները և, հետևաբար, օգտվել ոչ խտրական, հավասար պայմաններում շուրջ 500 միլիոն բնակչություն ունեցող շուկայի սպասարկման լայն հնարավորությունից: Նոր համաձայնագրի կնքման արդյունքում ՀՀ-ում կներդրվեն եվրոպական չափանիշները, ինչպես նաև ավիաընկե-րությունները հնարավորություն կունենան շահագործել երթուղիները օդի 5-րդ ազատության իրավունքով՝ ինչն ավելի ճկուն կդարձնի ավիաընկերությունների կողմից երթուղիների ցանցի պլանավորումը և կբարձրացնի դրանց շահագործման արդյունավետությունը: |
| 64. | **Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմի քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանդարտների համապատասխան «E» դասի շնորհում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) չափանիշների համաձայն աերոդրոմները բաժանվում են դասերի (A, B, C, D, E, F): Աերոդրոմների տեխնի-կական հնարավորությունները գնահատվում են լիազոր մարմնի կողմից և տվյալ աերոդրոմին շնորհվում է համապատասխան դաս, ինչը թույլ է տալիս սպասարկել տվյալ դասի օդանավեր:<br>«E» դասի օդանավեր են համարվում A330, B747-100/200/300/400/SR/SP, B777-200/200ER/300/300ER, B787, MD11:<br>Առավելություններն են՝<br>1) ավելի բարձր ուղևորատարությամբ օդանավերի սպասարկում,<br>2) ուղևորահոսքերի ավելացում,<br>3) օդանավակայանի թողունակության ավելացում, |

| | |
|---|---|
| | 4) օդանավակայանի աշխատանքների բարելավում,<br>5) միջազգային ստանդարտների կիրառում և պահպանում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմին «E» դաս շնորհելը թույլ կտա օդանավակայանում սպասարկել նաև «E» դասին պատկանող օդանավեր, որի արդյունքում ակնկալվում է ուղևորահոսքի աճ:<br>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմին «E» դասի շնորհման արդյունավետությունը՝<br>1) Ուղևորահոսքերի ավելացում,<br>2) Բեռնափոխադրումների աճ.<br>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմի վերանորոգման և բարելավման աշխատանքները կիրականացվեն կառավարչի միջոցների հաշվին, համաձայն զարգացման ծրագրի: Լիազոր մարմնի կողմից աերոդրոմի համապատասխանության գնահատման և «E» դասի շնորհման աշխատանքները լրացուցիչ ֆինանսավորում չեն պահանջում: |
| 65. | **«Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության միջազգային բյուրոյի ստեղծման մասին» միջազգային համաձայնագրի նախագծի վերջնական տեքստի համաձայնեցման աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2017 թվականի սեպտեմբերին ՌԴ տրանսպորտի նախարարը հանդես է եկել Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության միջազգային բյուրո ստեղծելու առաջարկությամբ, որն ընդունվել է, ներկայացվել են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության մարմնի ստեղծման հարցերով զբաղվող միջկառավարական աշխատանքային խմբում ներգրավվող թեկնածուները և համապատասխանաբար ընթացիկ փուլում են նոր միջազգային կառույցի ստեղծման ուղղությամբ կատարվող ծավալուն աշխատանքները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշվի առնելով ՀՀ-ում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննություն անցկացնելու համար ռեսուրսների բացակայությունը՝ նպատակահարմար է նշված գործառույթի իրականացումը փոխանցել ստեղծվելիք մարմնի կատարմանը: Վերոշարադրյալը կհանգեցնի այս մասով ԻԿԱՕ պահանջների կատարմանը և կնպաստի արդյունավետ կառավարմանը՝ միջազգային կառույցում ներկայացուցիչ ունենալու փաստով: |
| 66. | **Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության անցկացման լիազորված մարմին ստեղծելու վերաբերյալ ՀՀ կառավարությանն առաջարկություն ներկայացնելու մասին**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից 2015 թվականի հունիսին անցկացված Թռիչքների անվտանգության վերահսկողության ստուգումների համընդհանուր ծրագրի (USOAP CMA) արդյունքներով արձանագրվել է, որ ՀՀ-ում պետք է գործի ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության անցկացման անկախ մարմին: Նշվածի հիմքով «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2015 թվականի հուլիսի 19-ի թիվ ՀՕ-101-Ն օրենքով նախատեսվել է նման մարմնի ստեղծում, որը սակայն, մինչ օրս որպես միավոր չի ձևավորվել:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաշվի առնելով վերը նշված պահանջի ամրագրումը օրենսդրական մակարդակով, ինչպես նաև ԻԿԱՕ և Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության (EASA) կողմից մշտական դիտարկման ներքո գտնվելու փաստը, նաև այն, որ նշվածի վերաբերյալ պարբերաբար |

| | |
|---|---|
| | խորհրդատվություններ են անցկացվում ՀՀ ավիացիոն իշխանությունների հետ՝ անհրաժեշտ ենք համարում հստակեցնել խնդիրը և ստեղծել ավիացիոն իշխանություններից անկախ մարմին: Ըստ ԻԿԱՕ չափանիշների՝ պատահարների և լուրջ միջադեպերի անկախ քննության անցկացումն այլ համապատասխան միջազգային մարմնին փոխանցելուց պետությունն իր հերթին պետք է ունենա իր անկախ մարմինը՝ պատահարների և լուրջ միջադեպերի քննության համակարգի նկատմամբ ընդհանուր վերահսկողություն իրականացնելու համար: |
| 67. | **ՀՀ փոքր ավիացիայի գործարկման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ԽՍՀՄ տարիներին Հայաստանում գործում էր շուրջ 13 ներքին օդանավակայան, որոնք ապահովում էին մայրաքաղաքի օդային կապը գրեթե բոլոր շրջանների հետ: Այդ օդանավակայաններն օգտագործվում էին ինչպես ուղևորափոխադրումների, այնպես էլ գյուղատնտեսական նպատակներով: 90-ականներից հետո ՀՀ-ի տնտեսության անկմանը զուգահեռ փոքր ավիացիայի գործունեությունը դարձավ ոչ շահավետ, ինչի արդյունքում այն փաստացի դադարեց:<br>Ներկայումս ՀՀ տնտեսության զարգացմանը զուգընթաց առաջանում է փոքր ավիացիայի վերագործարկման անհրաժեշտություն: Փոքր ավիացիայի վերագործարկումը կնպաստի ՀՀ-ում ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացմանը, ժամանակի տնտեսմանը և փոխադրման հարմա-րավետության բարձրացմանը, բնակչության սպասարկման մակարդակի բարձրացմանը, գյուղա-տնտեսական նպատակներով ավիացիայի օգտագործման հնարավորությանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի գործարկման համար անհրաժեշտ նախադրյալ-ների ստեղծումը նպատակաուղղված է Հանրապետությունում ներքին ավիափոխադրումների գործարկմանը, ինչն իր հերթին խթան կհանդիսանա զբոսաշրջության աճի, աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման համար: |
| | **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** |
| 68. | **2017-2020 թվականների մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մաս-նավորեցման նախապատրաստման աշխատանքների կազմակերպում և իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունա-վետության բարձրացման և ծառայությունների մատուցման որակի, մրցակցային միջավայրի բարելավման նպատակող պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թթ.-ի ծրագրում ընդգրկված կազմակերպությունների պետությանը պատկանող բաժնետոմսերի մասնավորեց-ման գործընթացում նոր ձևերի և գործիքակազմի կիրառման շնորհիվ արդյունավետ կառավարում իրականացնող գնորդի կամ ներդրողի ընտրությունն է:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Հայաստանի Հանրապետությունում համախառն ներքին արդյունքի մեջ, ոչ պետական հատվածի բաժնեմասի և պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացումն է, ինչպես նաև մասնավորեցման շնորհիվ տնտեսության մեջ լրացուցիչ ներդրումների ծավալի ներգրավումն և նոր աշխատատեղերի ստեղծումն է: |
| 69. | **Օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց գնային առաջարկի վաճառքի կազմակերպման գործընթացի ուսումնասիրում և կանոնակարգում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Օտարման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ուսումնասիրել օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց նախապես |

| | |
|---|---|
| | հայտարարված վաճառքի մեկնարկային գնի ՀՀ-ում աճուրդային եղանակի կիրառման հնարավորությունը,<br>Աճուրդի այս ձևի իմաստը կայանում է նրանում, որ հավանական գնորդները, գնային մրցակցության և շուկայական իրավիճակի պայմաններում իրենք են որոշելու ձեռք բերվող գույքի արժեքը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Պետական սեփականություն հանդիսացող գրավիչ գույքի վաճառքի նոր եղանակի կիրառում, օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց գնային առաջարկի վաճառքի կազմակերպման գործընթացի կանոնակարգում: |
| 70. | **Պետական գույքի կառավարման բնագավառում կառավարման ավելի արդյունավետ ձևերի և մեթոդների կիրառում**<br><br>**1) Պետական գույքի վաճառքի խթանման նպատակով պետական գույքի վաճառքի գնի տարաժամկետ վճարման ձևաչափի ներդրմամբ՝ մասնավոր հատվածին տարաժամկետման պայմանով տնտեսական շրջանառությունից դուրս մնացած պետական գույքի փոխանցման մասին առաջարկությունների ներկայացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Պետական գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացման և գույքի վաճառքի խթանման նպատակով  նախատեսվում է կիրառել նոր մոտեցում, մասնավորապես՝ բազմաթիվ անգամ վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված պետական գույքի վաճառքը խթանելու նպատակով առաջարկվում է կիրառել պետական գույքի վաճառքի գնի տարաժամկետ վճարման ձևաչափ, որի արդյունքում բազմաթիվ անգամ վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված պետական գույքը կդրվի տնտեսական շրջանառության մեջ:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Պետական գույքի վաճառքի խթանման և հետագա օգտագործման արդյունավետության բարձրացում՝ պետական գույքի վաճառքի գնի տարա¬ժամկետ վճարման ձևաչափի ներդրմամբ, որի արդյունքում մասնավոր հատվածին տարաժամկետման պայմանով փոխանցել տնտեսական շրջանառությունից դուրս մնացած պետական գույքի փոխանցման շնորհիվ ուղղակի վաճառքի ժամանակ և անուղղակի՝ հետագայում գույքի օգտագործելու դեպքում կավելանա պետական բյուջեի մուտքերը:<br><br>**2) Հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացում:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավում և պետական բյուջե վճարման ենթակա գումարների ավելացում:<br>**3) Իրենց գործունեությամբ շահույթ չապահովող 100 տոկոս պետական սեփականությամբ առևտրային կազմակերպություններն ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու մասին առաջարկությունների ներկայացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ձեռնարկատիրական գործունեություն չծավալող ընկերությունների, որոնց գործունեությունն իրականացվում է միայն պետական բյուջեի միջոցների հաշվին, նպատակահարմար է վերակազմակերպել պետական ոչ առևտրային կազմակերպությունների: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ընկերությունների իրավական կարգավիճակի փոփոխություն:<br><br>**4) Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործադիր տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների աշխատանքի խրախուսման նոր ձևեր ու մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացում<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Գործադիր տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների աշխատանքի խրախուսման մեխանիզմների մշակում: |
| 71. | ***Հանրությանը մատուցված ծառայությունների որակի բարձրացման նպատակով պետական գույքի կառավարման մի շարք լիազորությունների պատվիրակման հնարավորության ուսումնասիրություն և արդյունքները մարզի օրինակով պիլոտային իրագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացում.***<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Հանրությանը մատուցված ծառայությունների որակի բարձրացման և պետական ծախսերի կրճատման նպատակով նախատեսվում է ուսումնասիրություն իրականացնել պետական գույքի կառավարման մի շարք լիազորությունների պատվիրակման հնարավորության վերաբերյալ և ուսումնասիրությունների հիման վրա, դրական արդյունքների դեպքում՝ մարզի օրինակով առաջարկություններ ներկայացնել պիլոտային իրագործման մասին:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Պետական ծախսերի կրճատման և հանրությանը մատուցված ծառայությունների որակի բարձրացման նպատակով ուսումնասիրել ՀՀ մարզերում պետական գույքի կառավարման մի շարք լիազորությունների պատվիրակման հնարավորությունը և դրական արդյունքների դեպքում մարզի օրինակով ներկայացնել առաջարկություններ պիլոտային իրագործման վերաբերյալ: |
| | ***Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն*** |
| 72. | ***Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգի ներդնում՝ ՀՀ բնապահպանության նախարարության գործառույթների ամբողջականացմամբ գերակա խնդրի վերաբերյալ***<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգի ներդնման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածի և Կայուն զարգացման սկզբունքի դրույթների կատարման հրամայականից, այն է՝ հավասարակշռված քաղաքականության իրականացում' բնապահպանական, սոցիալական և տնտեսական խնդիրները համալիր կառավարման մոտեցմամբ լուծելու ուղղությամբ:<br>Միջազգային փորձը այդպիսի մոդելի համար առաջադրում է էկոհամակարգային կառավարում, որի հիմքում ընկած է շրջակա միջավայրի պահպանության, բնության հատուկ պահպանվող տարածքների, բնական անտառների միասնական և համապարփակ կառավարումը, բնական ռեսուրսների կայուն օգտագործման իրականացումը: Անհրաժեշտություն է առաջացել նաև ձևավորել միասնական մոնիթորինգի համակարգ, որի առկայությունը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել շրջակա միջավայրի մոնիթորինգը և հզորացնել մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունների կարողությունները:<br>Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները և իրավասությունները բաշխված են տարբեր նախարարությունների միջև, ինչը նվազեցնում է իրականացվող քաղաքականության |

| | |
|---|---|
| | արդյունավետությունը: Միաժամանակ, ՀՀ բնապահպանության նախարարության անվանումը չի արտացոլում նախարարության ամբողջական գործառույթները և անհրաժեշտություն կա այն վերանվանել ՀՀ շրջակա միջավայրի պահպանության նախարարության:<br>Առաջին փուլում նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգի ներդրման հայեցակարգի մշակում և ընդունում: Երկրորդ փուլում կիրականացվի նախարարության վերանվանման հետ կապված իրավական ակտի մշակում և ընդունում, այնուհետև կուսումնասիրվի բնապահպանության ոլորտի ՀՀ օրենսդրական դաշտը՝ միասնական կառավարման համակարգի ներդրման տեսանկյունից: Երրորդ փուլում կմշակվեն և ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվեն խնդրի կարգավորմանն ուղղված համապատասխան իրավական ակտերի նախագծերը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Արդյունքում ակնկալվում է կազմավորել համալիր կառավարման մոտեցմամբ շրջակա միջա-վայրի պահպանության, բնության հատուկ պահպանվող տարածքների, բնական անտառների միասնական և համապարփակ էկոհամակարգային կառավարում իրականացնող մարմին: |
| 73. | **Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի և թափոնների փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2016 թ.-ի հոկտեմբերի 18-ին ընդունվել է «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-161 օրենքը, ինչով կանոնակարգվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ու վերամշակման բնագավառի իրավահարաբերությունները: Մինչ նշված օրենքի ընդունումը «ընդերքօգտագործման թափոններ» հասկացությունը սահմանված չէր, տարանջատված չէին ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ոլորտում ՀՀ պետական կառավարման մարմինների և ընդերքօգտագործողների պարտավորություններն ու իրավասությունները: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.10 հոդվածով սահմանվել է, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է ընդերքօգտագործման թափոնների փակված (այդ թվում՝ լքված) օբյեկտների գույքագրումը, ինչի նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 06.07.2017 թ.-ի N 774-Ն որոշմամբ հաստատվել է ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը: Համաձայն հաստատված կարգի, գույքագրման ընթացքում նախատեսվում է իրականացնել ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների տարածքում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի որոշում, շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում և մշակել աղտոտվածության նվազեցման, չեզոքացման կամ վերացման միջոցառումներ:<br>Նշված աշխատանքները սկսելու համար անհրաժեշտ ստեղծել համապարփակ տեղեկատվական բազա ՀՀ տարածքում առկա ընդերքօգտագործման թափոնների և թափոնների օբյեկտների վերաբերյալ: Որպես առաջնային՝ նախատեսվում է կազմել մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոններին լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի, թափոնների փակված օբյեկտներին վերաբերվող տեղեկատվական բազան:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ընդերօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման արդյունքում.<br>- կստեղծվի ՀՀ տարածքում ընդերքօգտագործման թափոնների, թափոնների փակված օբյեկտների վերաբերյալ նպատակային ինֆորմացիա ապահովող տեղեկատվական համակարգ,<br>- կապահովվի աղտոտվածության կանխարգելման/նվազեցման միջոցառումների մշակման համար տեղեկատվական հենքը: |

| | |
|---|---|
| 74. | **Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերջին տարվա (2016թ.) ընթացքում հիդրոակուստիկ դիտարկումները ցույց են տվել, որ սիգի ընդհանուր կենսազանգվածը նախորդ տարիների համեմատ աճել է, ինչը պայմանավորված է հիմնականում նախորդ 2-3 տարիների բերդուն սերունդների առկայությամբ: Ստացված տվյալների ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ սիգ ձկնատեսակի պոպուլյացիայի կենսազանգվածը հիմնականում ապահովել են 2-3 տարեկան ձկները: Ավելի փոքր և ավելի մեծ տարիքի ձկները կազմել են պոպուլյացիայի 20 %-ը, ինչը վկայում է այն մասին, որ թեպետ առկա է այս ձկնատեսակի ընդհանուր կենսազանգվածի որոշակի աճ նախկին տարիների համեմատ, սակայն խոսել արդյունագործական պաշարների վերականգնման մասին դեռ վաղ է:<br>Հաշվետու տարում Սևանա լճում նկատվել է արծաթափայլ լճածածանի քանակի կտրուկ կրճատում: Որսի հիմնական մասը կազմել են մինչև 2-3 տարեկան, արդյունագործական նշանակություն չունեցող, առանձնյակները, որոնք եղել են քիչ քանակությամբ:<br>Սևանի էնդեմիկ ձկնատեսակ՝ բեղլուն և էնդեմիկ ենթատեսակ կողակը հանդիպել են եզակի առանձնյակներով: Սևանի իշխանի մանրաձկների շարունակական բաց թողման աշխատանքները դեռ չեն հանգեցնում լճում այս ձկնատեսակի քանակի զգալի փոփոխության: Այսպիսով, կարելի է նշել, որ թեպետ լճում իշխանի պոպուլյացիան գոյություն ունի, ամենամյա մանրաձկան բացթողումների հաշվին, սակայն համարել որ դա արդեն վերականգնված պոպուլյացիա է դեռ վաղ է, քանի որ այս տեսակի բնական վերարտադրությունը լճում գործնականորեն բացակայում է:<br>Սևանա լճի էկոհամակարգի կայուն զարգացման և իրավիճակը վերահսկելու համար անհրաժեշտ է ներկա վիճակի արդունագործական պաշարների՝ սիգի, կարասի և խեցգետնի պաշարների հաշվառման և գնահատման աշխատանքների իրականացում: Լճում այդ տեսակների պոպուլյացիայի չափատարիքային, սեռական կազմի ու թվաքանակի վերաբերյալ հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա հնարավոր կլինի համապատասխան միջոցառումներ մշակել ձկան պաշարների օգտագործման և Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու և պահպանելու միջոցառումների մշակման համար: Սևանա լճի ջրահավաք ավազանում էնդեմիկ ձկների վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ Սևանա լճում և Սևանա լիճ թափվող հիմնական գետերում:<br>«Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի իրականացումը նախատեսված է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Սևանա լճի արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման ծրագիրը հաստատելու մասին» N 1755-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 1-ին և 2-րդ կետերով, ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե:<br>Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառման նպատակով անհրաժեշտ է շարունակել «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի իրականացումը, այդ թվում՝<br>• Սևանա լճի ձկների (սիգի, կողակի, լճածածանի, իշխանի) ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում՝ յուրաքանչյուր տարին 1 անգամ,<br>• Սևանա լճի խեցգետնի պաշարների ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում՝ յուրաքանչյուր տարին 1 անգամ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>«Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքներ» ծրագիրը բաղկացած է 3 ենթաբաժիններից՝<br>1. Սևանա լճում ձկան պաշարների հաշվառման ծառայություններ (հաշվետվություն) – 1 հատ |

| | |
|---|---|
| | Հաշվետվության կազմում հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>• սիգի արդյունագործական պաշարների որոշում<br>• սիգի գիրացող վտառի գնահատում<br>• սիգի ձվադրող վտառի գնահատում, բեղունություն<br>• սիգի գծային և քաշային աճը<br>• սիգի որսաչափի գնահատում<br>• կարասի արդյունագործական պաշարների որոշում<br>• կարասի բեղունության որոշում<br>• կարասի ձվադրավայրերի և ձվադրման ժամկետների որոշում<br>• կարասի գծային, քաշային աճի  որոշում<br>• կարասի որսաչափի գնահատում<br>• իշխանի վտառի գնահատում:<br>Հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված բոլոր ելակետային տվյալների միջանկյալ և վերջնական հաշվետվությունների ներկայացում:<br>2. Սևանա լճում խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ (հաշվետվություն) – 1 հատ<br>Հաշվետվության կազմում հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>• խեցգետնի արդյունագործական պաշարների որոշում<br>• խեցգետնի սննդառությունը<br>• խեցգետնի սեզոնային բաշխվածությունը ըստ խորության և տարածքի<br>• խեցգետնի գծային և քաշային աճը ըստ տարիքա-չափային խմբերի<br>• խեցգետնի բեղունությունը<br>• խեցգետնի որսաչափի գնահատում:<br>Հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված բոլոր ելակետային տվյալների միջանկյալ և վերջնական հաշվետվությունների ներկայացում:<br>3. Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկան և խեցգետնի կենսամիջավայրի պայմանների բացահայտման ծառայություններ (հաշվետվություն) – 1 հատ<br>Հաշվետվության կազմում հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիչի, Վարդենիկ, Մակենիս և Մասրիկ գետերում<br>• Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերի ձկան տեսակային կազմի որոշում<br>Էնդեմիկ ձկնատեսակների /գեղարքունի, ամառային իշխանի, կողակի/ ձվադրավայրերի վիճակի  գնահատում<br>• Էնդեմիկ ձկնատեսակների /գեղարքունի, ամառային իշխանի, կողակի/ ձվադրմանը գնացող ժամկետների, քանակի, կենսաբանական վիճակի որոշում<br>• Էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունու, ամառային իշխանի, կողակի) ձվադրմանը խոչընդոտող պայմաների որոշում: |
| 75. | **Կենսաբազմազանության և էկոտուրիզմի առկա պոտենցիալի արդյունավետ օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում կենսաբազմազանության բիզնես ներուժի գնահատման և  անձնագրավորման հենքի ստեղծում վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կենսաբազմազանության բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ըստ մարզերի կենսաբազմազանության անձնագրավորման, գնահատման  և էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միասնական տվյալների բացակայությամբ, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում բնական պաշարների տարերային, չկանոնակարգված օգտագործման և կենսաբազմազանության բիզնես ներուժի ոչ լիարժեք օգտագործման համար: Խնդրի կարգավորման առաջնահերթ քայլ է հանդիսանալու կենսաբազմազանության բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի մշակումը:<br>Նպատակն է՝ կենսաբազմազանության բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի մշակման միջոցով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կենսաբազմազանության |

| | |
|---|---|
| | անձնագրավորման, բիզնես ներուժի գնահատման աշխատանքների իրականացումը: Խնդրին ճիշտ լուծում տալու համար անհրաժեշտ է վերը նշված մեթոդոլոգիայի կիրառմամբ իրականացնել ՀՀ բոլոր մարզերի տարածքներում իրականացնել կենսաբազմազանության անձնագրավորման աշխատանքներ, ներառյալ բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմի, տարածվածության ուսումնասիրություն, սահմանել օգտագործման չափաքանակները և այլն: Աշխատանքների արդյունքների հիման վրա ձևավորել կենսաբազմազանության տվյալների համալիր, միասնական էլեկտրոնային տեղեկատվական բազա (ստացված տվյալների քարտեզագրում, թվայնացում և այլն) ըստ ՀՀ մարզերի՝ նպաստելով կենսառեսուրսների համապարփակ կադաստրի ստեղծմանն ու մոնիթորինգի իրականացմանը: Կենսաբազմազանության բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի մշակման միջոցով նախատեսվում է կանոնակարգել ՀՀ տարածքում կենսաբազմազանության կայուն կառավարման հարաբերությունները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կենսառեսուրսների բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի կիրառման միջոցով նախատեսվում է իրականացնել կենսաբազմազանության անձնագրավորման աշխատանքներ և ստացված արդյունքների հիման վրա հետագայում իրականացնել հետևյալ հաջորդական քայլերը՝<br>• ստեղծել կենսառեսուրսների էլեկտրոնային տեղեկատվական համակարգ,<br>• իրականացնել կենսաբազմազանության բիզնես ներուժի գնահատման աշխատանքներ,<br>• նպաստել կենսաբազմազանության և էկոտուրիզմի առկա պոտենցիալի արդյունավետ օգտագործման եղանակների մշակմանը,<br>• մշակել դասընթացների ծրագիր և ըստ ՀՀ մարզերի կազմակերպել դասընթացներ կենսառեսուրսների օգտագործման նպատակայնության արդյունավետության, էլեկտրոնային տեղեկատվական համակարգի և կենսառեսուրսների բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի վերաբերյալ: |
| 76. | **«Ջերմուկ» ազգային պարկի հիմնման իրավական հենքի ստեղծում գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ-ներ) 2014-2020թվականների պետական ծրագրի միջոցառումների (կետ3.2) համաձայն, ԲՀՊՏ-ների համակարգի զարգացման նպատակով «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրի հենքի վրա նախատեսվում է ստեղծել «Ջերմուկ» ազգային պարկի հիմնման իրավական հենքը:<br>ՀՀ ԲՀՊՏ-ների գործող համակարգը ներկայումս ներառում է 4 ազգային պարկեր, որոնք տեղակայված են ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերի տարածքում և ստեղծվել են Սևանա և Արփի լճերի էկոհամակարգի, ՀՀ Տավուշի մարզի կաղնու և հաճարենու ռելիկտային անտառների, Մեղրիի լեռնաշղթայի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական տեսակների պահպանության նպատակով:<br>ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում գտնվող «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրի հենքի վրա «Ջերմուկ» ազգային նոր պարկի հիմնման իրավական հենքի ստեղծմամբ հնարավորություն է ընձեռվում ապահովելու Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի ջրային ու հարակից էկոհամակարգերի, դրանց կենսաբանական բազմազանության պահպանությունը, հողի, օդի, ջրի և կենսաբանական բազմազանության ամբողջականության, բնական պաշարների, հազվագյուտ կենդանական տեսակների, դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն |

| | |
|---|---|
| | օգտագործումը, բնության կենդանի և անկենդան հուշարձանները, խթանելու տարածաշրջանում զբոսաշրջության զարգացումը:<br>ՀՀ կառավարության կողմից 2009 թ. սեպտեմբերի 17-ի հաստատվել է «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 1063-Ն որոշումը, որտեղ սահմանված է արգելավայրի պահպանության ռեժիմը: ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N1430-Ն որոշմամբ հաստատվել է «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը, հատակագիծը և տարածքի չափը, որը կազմում է 17371.76 հա:<br>ՀՀ բնապահպանության նախարարության և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև 12.12.2016թ.-ին կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն նախատեսում է տրամադրել 5.7 մլն. ԱՄՆ դոլար՝ ՀՀ Վայոց ձորի մարզում Արփա գետի վերին հատվածի ջրհավաք ավազանում ստեղծելու նոր «Ջերմուկ» ազգային պարկ, որում կներառվեն «Ջերմուկի ջրաբանական», «Ջերմուկի» անտառային և «Հեր-հերի» նոսրանտառային պետական արգելավայրերի տարածքները: Նախատեսվող նոր ազգային պարկը կզբաղեցնի մոտ 33.800 հա տարածք:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>«Ջերմուկ» ազգային պարկի ստեղծման արդյունքում հնարավոր կլինի.<br>- ապահովել տարածաշրջանի ՀՀ Վայոց ձորի մարզի կանորագույն էկոհամակարգերի էկոհամակարգերի ամբողջականության պահպանությունը,<br>- աջակցել ազգային պարկի պահպանման գոտում գտնվող համայնքների տնտեսական զարգացմանը,<br>- խթանել տարածաշրջանի զբոսաշրջության զարգացումն ու բարձրացնելու բնակչության կենսամակարդակը: |
| 77. | **Բնապահպանության բնագավառում լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման ապահովում գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» N 1524-Ն որոշման 3-րդ կետով հաստատված ցանկի 1.1, 1.2, 1.7, 1.8, 2.1, 2.3, 2.6, 2.7, 2.8, 2.13 կետերի, Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում արգելված ապրանքների կանոնակարգման և սահմանափակումների ենթակա ապրանքների լիցենզավորման գործընթացը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմին է ճանաչվել ՀՀ բնապահպանության նախարարությունը:<br>Ներկայումս ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման NN 5, 6, 7 և 8 հավելվածների ցանկերում ընդգրկված նյութերի, ապրանքների, բույսերի և կենդանիների արտահանման կամ ներմուծման համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրվում են մեկանգամյա լիցենզիաներ թղթային կրիչի վրա:<br>Լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման համակարգի ներդրման իրականացման համար կպահանջվեն ֆինանսական միջոցներ՝ ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Արտաքին տնտեսական գործունեության շրջանակներում սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների բնապահպանության բնագավառում լիցենզիաների, թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման համակարգի ներդրումը թույլ կտա ՀՀ լիազոր պետական մարմին հայտերը, կից փաստաթղթերը, տեղեկատվությունը ներկայացնել և մեկանգամյա լիցենզիաները, թույլտվությունները ստանալ ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով, որը հայտատուների |

| | |
|---|---|
| | համար կավելացնի այդ ոլորտում ծառայություններից օգտվելու մատչելիությունը և կնվազեցնի լիցենզիաների և թույլտվությունների ստացման ժամանակահատվածը: |
| 78. | **Ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազայի կատարելագործում և արդիականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ ջրային օրենսգիրքը ջրային պետական կադաստրը սահմանում է որպես մշտապես գործող համակարգ, որը համապարփակ տվյալներ է գրանցում ջրային ռեսուրսների քանակական և որակական ցուցանիշների, ջրհավաք ավազանների, ջրավազանների հուներից ու ափերից արդյունահանվող նյութերի, կենսառեսուրսների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների մասին:<br>ՀՀ կառավարության 2003թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշմամբ հաստատվել է ջրային պետական կադաստրում փաստաթղթերի գրանցման և տեղեկատվության տրամադրման կարգը: Ի լրումն ջրային պետական կադաստրի վարման կարգը սահմանող նորմատիվ փաստաթղթի՝ մշակվել և ՀՀ բնապահպանության նախարարի 30.12.2003թ. N 514-Ն հրամանով հաստատվել է «Ջրային պետական կադաստրում տվյալների գրառման գրանցամատյանների ձևերը և դրանց վարման կարգը», որը 2006 թ. փոփոխվել և լրացվել է ՀՀ բնապահպանության նախարարի N 260-Ն հրամանով:<br>Ջրային պետական կադաստրի վարումն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, որը հավաքում, համախմբում և պահպանում է ջրային ռեսուրսների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը պաշտոնական շտեմարաններում:<br>2004-2008 թթ. ընթացքում ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագիրն աջակցեց ՀՀ կառավարությանը՝ ստեղծելու ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգ՝ համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի և դրա վերաբերյալ ՀՀ կառավարության 2003թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշման դրույթների:<br>Ջրային պետական կադաստրի տեղեկատվական համակարգն ինտերակտիվ գործիք է, որը հնարավորություն է տալիս մշակելու ջրային ռեսուրսների տարածական տվյալները երկրատեղեկատվական համակարգերի ֆորմատով, ինչպես նաև տվյալների բազայի բարելավման համակարգ է շահագրգիռ հաստատությունների միջոցով տրամադրված ամփոփ տեղեկատվության համար:<br>2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-19-Ն ՀՀ օրենքի 19.2-րդ հոդվածի՝ ջրային ռեսուրսների պետական կադաստրը տեղեկատվական համակարգ է, որը վարում է ջրային ռեսուրսների որակական և քանակական բնութագրերի, ջրային ռեսուրսների վրա բնական ու մարդածին ազդեցությունների, ջրային ռեսուրսների և ջրաէկոհամակարգերի պահպանության, օգտագործման ու վերականգնման մասին տվյալների շտեմարանների ստեղծման գործընթացները:<br>Համաձայն ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման գործընթացը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի նոր 19.2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի «Ջրային պետական կադաստրում փաստաթղթերի գրանցման և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1060-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգային նորմերը չէին համապատասխանում օրենսգրքի նոր պահանջներին:<br>Հաշվի առնելով վերոնշյալը, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի փետրվարի 2-ին ընդունվել է «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 68-Ն որոշումը: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 68-Ն |

| | |
|---|---|
| | որոշման կարգավորվել է ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման գործընթացը, ինչպես նաև հստակ տարանջատվել է թե որ գերատեսչությունն ինչ տեղեկատվություն և ինչ պարբերականությամբ պետք է ներկայացնի ջրային ռեսուրսների պետական կադաստր՝ գրանցման, ինչպես նաև սահմանվել է ջրային ռեսուրսների պետական կադաստրի կառուցվածքը, բովանդակությունը և տեղեկատվության տրամադրման ընթացակարգը:<br>ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N68-Ն որոշման պահանջների համաձայն անհրաժեշտություն է առաջացել թարմացնելու ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազան:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ջրային ռեսուրսների պետական կադաստրի հզոր տեղեկատվական համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում: |
| 79. | **Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման նպատակով ախտորոշիչ ուսումնասիրությունների իրականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 24-ի նիստի N 36 արձանագրային որոշմամբ հաստատվել է հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը, ինչը հիմք է հանդիսանում հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար:<br>Հայեցակարգով ամրագրվել է, որ ներկայացված խնդիրների լուծման և ոլորտի հետագա կայուն զարգացման, ինչպես նաև միջազգային շուկայում Հայաստանը ներկայացնելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն և ռազմավարություն՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին:<br>Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը դիտարկվում է օգտակար հանածոների պաշարների արդյունավետ և ողջամիտ օգտագործում՝ հաշվի առնելով բնապահպանական-սոցիալական և մշակութային հիմնահարցերը: Տվյալ հիմնահարցերի շարքում առանձնահատուկ կարևորվում է բնապահպանական ոլորտի օրենսդրական մեխանիզմների կատարելագործումը՝ նպատակաուղղված ընդերքօգտագործման թափոնների կառավարման մեխանիզմների և տեխնոլոգիաների խթանմանը և օգտակար հանածոների արդյունահանված տարածքների կենսաբանական վերականգնմանը, ինչը թույլ կտա ապահովել տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունություն:<br>Ռազմավարական գործողություններն ամրագրելու համար պետք է նախապես իրականացնել որոշ ախտորոշիչ ուսումնասիրություններ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն շրջակա միջավայրի և ազգաբնակչության առողջության համատեքստում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռիսկերի վերհանմանը և տեխնիկական կարողությունների գնահատմանը:<br>Գերակա խնդրի իրականացման ֆինանսավորումն իրականացվելու է ՀԲ տրամադրված դրամաշնորհի հաշվին՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ախտորոշիչ ուսումնասիրությունների արդյունքները հիմք կհանդիսանան մշակվելիք ռազմավարական փաստաթղթի համար, կկանխորոշեն հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման ուղղությունները, որոնք հիմնված կլինեն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա տեխնածին ճնշումների դրսևորումների նվազեցման կամ բացառման գաղափարախոսության վրա: |
| 80. | **Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների թվով 50 ջրառի կետերում առցանց հոսքաչափական սարքավորումների տեղադրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2016 թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի շրջանակներում իրականացված գույքագրման և հաշվառման տվյալների Արարատյան |

| | |
|---|---|
| | դաշտում ջրառը կազմել է շուրջ 1.67 մլրդ մ$^3$/տարի, այն ինչ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսները կազմում են 1100,0 մլն մ$^3$/տարի:<br>Հաշվի առնելով Արարատյան դաշտում ստեղծված իրավիճակը անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել առցանց հոսքաչափական սարքավորումներ և դրանք տեղադրել ձկնաբուծական տնտեսություններում, քանի որ վերջիններս հանդիսանում են ստորերկրյա ջրային ռեսուրսների խոշոր ջրօգտագործողներ:<br>Հոսքաչափական սարքավորումների տեղադրման նպատակն է առցանց եղանակով հետևել ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործվող ջրի ծավալը և տրված ջրօգտագործման թույլտվությունից ավելի օգտագործելու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների ջրառի կետերում առցանց հոսքաչափական սարքավորումների տեղադրման արդյունքում առցանց եղանակով հասանելի կլինեն ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործված ջրի ծավալի վերաբերյալ ստույգ և ճշգրիտ տվյալներ, ինչը կնպաստի Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը՝ հետագայում հանգեցնելով ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգմանը: |
| 81. | **«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիայի միջազգային պահանջների համաձայն կարողությունների զարգացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիան (այսուհետ լաբորատորիա) ներկայումս տեղակայված է Կոմիտաս 29-ի հասցեում և զբաղեցնում է 610 քմ մակերեսով տարածք: Տարածքը պատկանում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Անալիտիկ» ՓԲԸ-ին, ինչի համար վճարվում է ամսական 250800 (երկու հարյուր հիսուն հազար ութ հարյուր) դրամ վարձավճար:<br>Լաբորատորիան հագեցած է ժամանակակից սարքավորումներով, որոնց համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ: Լաբորատորիայի ներկայիս տարածքը գտնվում է անմխիթար վիճակում, չի պահպանվում ջեռուցման և օդափոխանակման պայմանները, ներքին հարդարանքը չի համապատասխանում լաբորատորիայի համար անհրաժեշտ ստանդարտներին: Առկա խնդիրների պատճառով հնարավոր չի ստանալ ինչպես տեղային, այնպես էլ միջազգային հավատարմագրում, ինչը մեծ ազդեցություն է ունենում լաբորատորիայի անալիզների որակի, գործունեության, միջազգային և տարածաշրջանային համագործակցությունների վրա: Լաբորատորիայի վերանորոգման համար անհրաժեշտ ֆինանսավորումը պետական բյուջեով հնարավոր չէ իրականացնել:<br>«Եվրոպական միության Ջրային նախաձեռնություն +» ծրագրի ֆինանսական աջակցությամբ նախատեսվում է իրականացնել «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի լաբորատորիայի նոր տարածքի (ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության Երևան քաղաքի Պարույր Սևակի փող. շենք 5/2) վերանորոգման, վերազինման և միջազգային հավատարմագրման գործընթացները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիայի արդիականացումը և միջազգային պահանջներին համաձայնեցումը կնպաստի շրջակա միջավայրի բաղադրիչների անալիզների որակի բարձրացմանը, միջազգային միասնական բնապահպանական տեղեկատվական համակարգերում ՀՀ շրջակա միջավայրի տեղեկատվության ընդգրկմանը, տարածմանը և համապատասխան հզորությունների զարգացմանը: |

| | |
|---|---|
| 82. | **Բնապահպանական միասնական պետական մոնիթորինգի համակարգի նախադրյալների ստեղծման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի նիստի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 4.4 բաժնի 2-րդ կետի 6-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով մշակվել է «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման» հայեցակարգը, ինչը հիմք է հանդիսանում էկոհամակարգային մոտեցման հիման վրա շրջակա միջավայրի պետական միասնական մոնիթորինգի համակարգի ստեղծման, պետական մոնիթորինգի համակարգի զարգացման ռազմավարության և ազգային գործողությունների ծրագրի մշակման համար:<br>Հայեցակարգում ամրագրվել է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների էկոհամակարգային մոտեցմամբ մոնիթորինգի իրականացման նոր ձևի անցում՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների միմյանցից տարանջատ մոնիթորինգի իրականացման փոխարեն, ինչը կերաշխավորվի բնական միջավայրի որևէ բաղադրիչի վերաբերյալ որոշում կայացնելիս միաժամանակ մյուս բաղադրիչների վրա կայացվող որոշման ազդեցության դիտարկումն ու գնահատումը:<br>Շրջակա միջավայրի պետական միասնական մոնիթորինգի վիճակի բարելավման համար անհրաժեշտ է մշակել շրջակա միջավայրի պետական միասնական մոնիթորինգի համակարգի բարելավմանն ուղղված առաջնահերթ և հեռանկարային ազգային գործողությունների ծրագիրը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից բխող մոնիթորինգային աշխատանքների կատարումը, սահմանել շրջակա միջավայրի պետական միասնական մոնիթորինգ իրականացնող ենթահամակարգերը, դրանց գործունեության կարգը, միասնական մոնիթորինգի համակարգի ենթահամակարգերում միմյանց հետ փոխկապակցվածության մեխանիզմները, դիտարկման ցանցերի և տեղեկատվական ռեսուրսների ստեղծման և պահպանման կարգը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի միասնական պետական մոնիթորինգի հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագրի իրագործումը հնարավորություն կընձեռի հետևողականորեն լուծել մոնիթորինգի խնդիրները, զարգացնել ազգային հզորությունները շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի և տեղեկատվության կառավարման ուղղությամբ, որի առկայությունը կապահովի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի բազմակողմանի գնահատումը՝ ապահովելով առավել արդյունավետ բնապահպանական քաղաքականության մշակմանը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը շրջակա միջավայրի մոնիթորինգի բնագավառում: |
| 83. | **Բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների, ինչպես նաև բնապահպանության ոլորտում պատասխանատվության և վնասի փոխհատուցման համակարգերի կատարելագործում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող բնօգտագործման տնտեսական մեխանիզմների համակարգը չի համապատասխանում ժամանակակից մեթոդներին, քանի որ դրույքաչափերի հիմքում ընկած չեն գիտականորեն հիմնավորված սկզբունքներ, իսկ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչներին հասցված վնասի գնահատման մեթոդաբանական հիմքերը հակասության մեջ են բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի օրենսդրության հետ: Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի համակարգի և գործող դրույքաչափերի անհամապատասխանության պատճառով աղավաղվում են ինչպես կատարված ծախսերի և օգուտների վերլուծությունները, այնպես էլ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: |

| | |
|---|---|
| | Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել վերանայել և կատարելագործել բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների, բնապահպանության ոլորտում պատասխանատվության և վնասի փոխհատուցման գործող համակարգերը: Որի նպատակով 2018 թվականին նախատեսվում է իրականացնել վերլուծական աշխատանքներ, համապատասխան ուսումնասիրությունների իրականացում, այդ թվում միջազգային փորձի, խնդիրների վերհանում և լուծման ուղղված առաջարկությունների մշակում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն գերակա խնդրի իրականացումը նախադրյալներ կստեղծի բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների, պատասխանատվության և վնասի փոխհատուցման համակարգի կատարելագործման ուղղված կոնկրետ քայլերի և միջոցառումների իրականացման համար, որոնց հիմքում կդրվեն կոնկրետ վերլուծությունների արդյունքները: |
| 84. | **ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանգրերով և կոնվենցիաններով նախատեսված տեխնիկական և ֆինանսական օժանդակության մեխանիզմների կիրառում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Սույն գերակա խնդրի շրջանակներում 2018 թվականին նախատեսվում է «Կանաչ կլիմայի հիմնադրամի և ՀՀ կառավարության միջև Կանաչ կլիմայի հիմնադրամի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» համաձայնագրի ստորագրումը: Կանաչ կլիմայի հիմնադրամը (Green Climate Fund) հիմնադրվել է ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմ երկրների 10-րդ համաժողովում (Կանկուն, 2010թ.), և 2011թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 11-ը Դուրբանում (Հարավային Աֆրիկա) կայացած Կլիմայի փոփոխության կոնվենցիայի կողմ երկրների 17-րդ համաժողովում հաստատվել է՝ որպես զարգացող երկրների կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ծրագրերի իրականացման ֆինանսական նոր մեխանիզմ:<br>Հիմնադրամի հիմնական գործառույթն է՝ աջակցել և տրամադրել ֆինանսական միջոցներ, ինչպես առավել նվազ զարգացած, այնպես էլ զարգացող երկրներին կլիմայի փոփոխության դեմ գործողություններում (ջերմոցային գազերի արտանետումների կրճատման) և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման (կլիմայի փոփոխությանը հարմարվելու) համար:<br>Հիմնադրամի միջոցները ներկայումս կազմում են 11 մլրդ. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ.-ից հետո տարեկան պետք է ապահովեն 100 մլրդ. ԱՄՆ դոլարի ներդրումային աջակցություն զարգացող երկրներին:<br>Շահառու զարգացող երկրների հետ տեղեկատվության փոխանակման և այդ երկրների կարիքների գնահատման համար Հիմնադրամը առաջարկել է նշանակել Ազգային լիազոր մարմնի (National Designated Entity) կոնտակտային անձ: Կանաչ կլիմայի հիմնադրամի Լիազորված ազգային մարմինը (National Designated Entity) Հայաստանի Հանրապետությունում ՀՀ բնապահպանության նախարարությունն է, իսկ որպես ազգային համակարգող հանդես է գալիս ՀՀ բնապահպանության նախարարը:<br>2016 թվականի հուլիսին հավանություն է տրվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի /ՎԶԵԲ/ կողմից ներկայացված «Կովկասյան կանաչ տնտեսության ֆինասավորման մեխանիզմ» ծրագրի նախագծին՝ Հիմնադրամի ֆինանսավորմանը ներկայացնելու համար: Ծրագրի շահառու երկրներն են՝ Մերձավոր Արևելքի, Արևմտյան և Կենտրոնական Ասիայի, Հարավային և Արևելյան Եվրոպայի 20 երկիր: Այդ թվում՝ Հարավային Կովկասի 3 երկիր: Ծրագրի նպատակն է՝ ֆինանսավորել վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության և կլիամայական փոփոխության կայունացման ծրագրերը: Վերջինս կմեկնակվի 2018-ին:<br>2017թվականին ստորագրվել է «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում և մասշտաբավորում» ծրագրային փաստաթուղթը 20 մլն. ԱՄՆ դոլարի դրամաշնորհի չափով:: Հայաստանը ԱՊՀ առաջին երկիրն է, որը նման ֆինանսավորում է ստանում: Որպես այդ դրամաշնորհին համաֆինանսավորում Եվրոպական ներդրումային բանկը հատկացրել է 100 մլն. ԱՄՆ դոլարի «փափուկ» վարկ: Գումարը կուղղվի |

| | |
|---|---|
| | հանրային և մասնավոր շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը:<br>Կանաչ կլիմայի հիմադրամի հաստատմանն է ներկայացվել կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային պլանի (NAP) մշակման `մինչև 3 մլն. ԱՄՆ դոլար հայտը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>«Կանաչ կլիմայի հիմնադրամի և ՀՀ կառավարության միջև Կանաչ կլիմայի հիմնադրամի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» համաձայնագրի ստորագրումը կապահովի պայմաններ Հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության՝ որպես գործընկեր երկրի, համագործակցության դյուրացման և վստահության երաշխիքների ապահովման համար:<br>Հաշվի առնելով ՄԱԿ-ի կլիմայի փոփախության շրջանակային կոնվենցիայի ներքո ընդունված Փարիզյան համաձայնագիրը Կանաչ կլիմայի հիմնադրամը պետք է սպասարկի այդ փաստաթղթի ներքո համապատասխան երկրների ֆինանսական կարիքները: |
| 85. | **Միջազգային բնապահպանական պայմանագրերի արձանագրությունների վավերացման գործընթացի իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն գերակա խնդրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում նախատեսվում է «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կիգալիի փոփոխության վավերացման գործընթացի ապահովում:<br>Կիգալիի ուղղումը՝ «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի «Օզոնային շերտը քայքայող նյութերի (ՕՔՆ) մասին» Մոնրեալի արձանագրության 5-րդ ուղղումն է: Ուղղումն ընդունվել է Մոնրեալի արձանագրության Կողմերի 28–րդ հանդիպմանը, որը տեղի է ունեցել 2016թ-ի հոկտեմբերի 15–ին Ռուանդայի մայրաքաղաք Կիգալիում: Այս ուղղումով Արձանագրությամբ կարգավորվող նյութերի ցանկում ավելացվել են հիդրոֆտորածխածինները (ՀՖԱ):<br>Մինչև վերջերս, Մոնրեալի արձանագրությունը վերահսկել է օզոնային շերտը քայքայող նյութերի (քլորֆտորածխածիններ (ՔՖԱ) և հիդրոֆտորածխածիններ (ՀՔՖԱ) և այլ նյութերի) շրջանառությունը: (ՔՖԱ-ները 2010թ.-ին հանվեցին համաշխարհային տնտեսական գործընթացից ամբողջությամբ, իսկ ՀՔՖԱ-ները դուրս են բերվում գործածումից ներկայումս: Դրանք շատ դեպքերում փոխարինվում են ՀՖԱ-ով: Կիգալիի ուղղումը նախատեսում է ՀՖԱ-ների գործածման փուլային կրճատում:<br>Օզոնաքայքայիչ նյութերին այլ ընտրանք հանդիսացող ՀՖԱ-ների օգտագործումն արագորեն աճում է: ՀՖԱ-երը, հանդիսանալով հզոր և երկարակյաց ջերմոցային գազեր, հայտնվելով մթնոլորտում՝ նպաստում են կլիմայի փոփոխությանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>ՀՖԱ-ների փուլային փոխարինման միջոցով ակնկալվում է կանխել մոտ 105 մլն տոննա ածխածնի երկօքսիդին համարժեք ջերմոցային գազերի արտանետումները, ինչը կօգնի մինչև 2100թ-ը ակնկալվող ջերմաստիճանի գլոբալ բարձացումը նվազեցնել մինչև 0.5 աստիճանով՝զուգահեռ շարունակելով պահպանել օզոնային շերտը:<br>Ուղղման համաձայն՝ Մոնրեալի արձանագրության կողմերը պարտավորվում են աստիճանաբար նվազեցնել ՀՖԱ-ների օգտագործումը՝ 2040թ-ին այն կրճատելով 80–85%-ով: Զարգացող երկրների մեծամասնության, այդ թվում նաև՝ Հայաստանի համար, նախատեսված է ՀՖԱ-ների գործածման փուլային կրճատման ստորև ներկայացված ժամանակացույցը.<br>2024 թ.՝ ՀՖԱ-ների օգտագործման սառեցում բազային մակարդակի վրա<br>2029 թ.՝ 10% կրճատում,<br>2035 թ.՝  30 %,<br>2040 թ.՝ 50%,<br>2045 թ. (թիրախ)՝ 80 %:<br>Ներկայումս, որպես ՀՖԱ-ների փոխարինողներ դիտարկվում  են օզոնային շերտը չքայքայող նյութեր՝ կլիմայի վրա նվազագույն ազդեցությամբ,ինչպիսիք են ամոնիակը կամ ածխածնի |

| | |
|---|---|
| | երկօքսիդը: Մշակվում են բարձր շահավետությամբ սառնարանային տեխնոլոգիաներ, որոնք չեն ազդի կլիմայի վրա՝ ՀՖԱ արտանետումների նվազեցման և էներգիայի խնայողության հաշվին: ՀՖԱ-ների փոխարինման գործընթացի համար նախատեսված է նաև ֆինանսական մեխանիզմ: Մասնավորապես, դոնոր երկրները համաձայնություն են ձեռքբերել ՀՖԱ-ների գործածման կրճատման ֆինանսավորման անհրաժեշտության հարցում: Ենթադրվում է, որ դրա համար կպահանջվի միլիարդավոր դոլարներ: Հայաստանի կողմից Կիգալիի ուղղման վավերացումը կարևոր է ոչ միայն բնապահպանական տեսակետից: Այն կնպաստի նաև վերը նշված ֆինանսական մեխանիզմների շնորհիվ ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծմանը: |
| | **ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն** |
| 86. | **Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2015 թվականին մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների գործնական փուլից ի վեր Հայաստանի Հանրապետությունում համայնքների խոշորացման գործընթացում ներգրավվել է թվով 466 համայնք, ինչի արդյունքում ձևավորվել է թվով 52 համայնք:<br>Խոշորացման արդյունքում ձևավորվել է առավել մրցակցային ավագանի, հաստիքների վերաբաշխում, ինչի արդյունքում կրկնվող հաստիքները (աշխատակազմի քարտուղար, ֆինանսիստ, հաշվապահ և այլն) փոխարինվել են ծառայություններ մատուցող հաստիքներով:<br>Հնարավոր է դարձել համայնքի համախմբված բյուջեի միջոցների հաշվին բնակավայրերում կապիտալ ներդրումների իրականացումը:<br>Իրականացվում են խոշորածավալ ներդրումներ միջազգային կազմակերպությունների կողմից. ներդրումների հաշվին իրականացվում են կապիտալ ծրագրեր, տեխնիկայի ձեռքբերում:<br>Ավագանու նիստերը դարձել են ավելի շահագրգիռ, մրցակցային, թիրախային: Օրակարգային հարցերի քննարկումների շուրջ ծավալվում են հիմնավորված բանավեճեր, ինչի արդյունքում շահում են նիստերի որակը և ընդունված որոշումների արդյունավետությունը: Սկսել են անցկացվել արտագնա նիստեր (համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում):<br>Որոշակիորեն աճել է պետության կողմից ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դրամական միջոցների չափը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման պարագայում կապահովվի վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունը, ինչը կնպաստի համայնքների կողմից ֆինանսական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացմանը, որակի և մատչելիության բարձրացմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը: |
| 87. | **Տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրում և դրանց գործառնական հնարավորությունների ընդլայնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկա դրությամբ ՀՀ 502 համայնքներից մոտ 400-ում (մոտ 80%-ում) ներդրված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ), որոնցից 16-ը՝ խոշորացված բազմաբնակավայր համայնքներում: Խոշորացված համայնքում ՀԿՏՀ-ի կիրառության շնորհիվ մեկ միասնական տեղեկատվական տարածության մեջ են ներառվում համայնքի կենտրոնի և բնակավայրերի վարչական ղեկավարների գրասենյակները, համայնքային ծառայությունները բնակիչների համար հավասարապես հասանելի են դառնում համայնքի բոլոր բնակավայրերում: ՀԿՏՀ-ի բաղադրիչների թվում էլեկտրոնային վճարումների մոդուլի ավելացումը հնարավորություն կտա տեղական տուրքերին և վճարներին առնչվող գործընթացներում բարձրացնել այդ ծառայությունների տրամադրման արդյունավետությունը և հարմարավետությունը քաղաքացիների և ՏԻՄ-երի համար:<br>Համացանցում հասանելի դարձնելու դեպքում ՀԿՏՀ-ն ծառայում է որպես համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայք: Ներկա դրությամբ նման կայքեր ունեն ՀՀ համայնքներից մոտ 200-ը (շուրջ 40 %-ը): Համացանցային կայքերը հնարավորություն են ընձեռում ՏԻՄ-երին |

| | |
|---|---|
| | հրապարակելու օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվությունը՝ այդպիսով ապահովելով նրանց գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը:<br>Սկսած 2016թ. -ից նոյեմբերից շուրջ 25 համանքներում ավագանու նիստերը կամ հանրային նշանակության այլ միջոցառումներն առցանց հեռարձակվում են համացանցում, ինչը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և հանրության առաջ նրանց հաշվետվողականության բարձրացմանը: Խոշարացված համայնքներից առցանց հեռարձակումներ են իրականացնում 5-ը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման պարագայում կապահովվի ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը, հանրային հաշվետվողականությունը և հանրության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Տեղական ինքնակառավարման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը կնպաստի նաև մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավմանը, դրանց մատչելիության ավելացմանը, կառավարման արդյունավետության և օպերատիվության բարձրացմանը: |
| 88. | **Խոշորացված համայնքներում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համայնքի բյուջետային միջոցների արդյունավետ կառավարումը դառնում է համայնքի զարգացման կարևորագույն խնդիր: Այն հիմնարար նշանակություն է ստանում համայնքի տնտեսական աճի ապահովման գործում: Ակնհայտորեն, տվյալ խնդրի լուծման գործում առանցքային դեր է վերապահված համայնքի բյուջետային գործընթացի կատարելագործմանը, որը, ըստ էության, պետք է հիմնված լինի բյուջետային գործընթացի կանոնակարգվածության, արդյունավետ ֆինանսական վերահսկողության, հաշվետվողականութան և մոնիթորինգի իրականացման սկզբունքների վրա: Բյուջետային համակարգում բարեփոխումների իրականացման արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ դեպքերում ծախսերի հիմնավորվածությունը հեռու է բավարար լինելուց: Այն ցուցանիշները, որոնք դրված են ծախսային քաղաքականության գնահատման հիմքում, ոչ միայն մեթոդապես հնացած են, այլև թույլ չեն տալիս լիարժեք գաղափար կազմել բյուջետային ծախսերի իրական արդյունքների մասին, դրանց հիման վրա ընդունել որակյալ ռազմավարական որոշումներ: Նման երևույթները բացառելու նպատակով անհրաժեշտ է ներդնել և զարգացնել «ծրագրային բյուջետավորման» մեթոդը, որը դեռևս բյուջեի նախագծի ձևավորման ընթացքում թույլ կտա համակողմանիորեն հիմնավորել, թե ծախսերին հավակնող հայտի բավարարման ու բյուջե ներառման դեպքում ինչպիսին կլինեն ակնկալվելիք արդյունքները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման պարագայում հնարավորություն կընձեռնվի բարձրացնել համայնքի բյուջեի պլանավորման, մոնիթորինգի ու գնահատման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ այն միջոց կհանդիսանա համայնքի կողմից տեղական իշխանություններին հաշվետու պահելու համար: |
| 89. | **Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) փաստաթղթերի կոդավորված (շտրիխ կոդ) հաշվառման համակարգի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության ծրագրում մեծ տեղ է հատկացվում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, որի իրականացման առաջին գրավականը քաղաքացիներին էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցումն է: Նրանց անհրաժեշտ արխիվային տեղեկությունների տրամադրման գործընթացների դյուրացումը կարևոր նշանակություն ունի հասարակությունում վստահության ամրապնդմանն ուղղված ՀՀ կառավարության որդեգրած ծրագրերի կենսագործման գործընթացում: Ուստի արխիվային փաստաթղթերի հաշվառման նոր համակարգի ներդրումը առավել մատչելի կդարձնի քաղաքացիների կողմից արխիվային տեղեկությունների ստացումը, կրճատելով տեղեկության ստացման տևողությունը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց արխիվային ծառայությունների մատուցումը կիրականացվի նոր համակարգի միջոցով, որի շնորհիվ ՀՀԱՀ օգտվողները հնարավորություն կունենան այդ հավաքածուի կազմի և քանակի վերաբերյալ համակարգված տեղեկությունը որոնել, դիմել և ստանալ առցանց համակարգով, կրճատելով այդ գործընթացների տևողություն: |
| 90. | **ՀՀ մարզերի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություններից բխող գործողությունների մոնիթորինգ և արդյունքների գնահատում**<br><br>**1. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2017 թվականի հուլիսի 6-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» թիվ 29 արձանագրային որոշումը, որով ընդունված ռազմավարությունները խթան են հանդիսանալու բոլոր մարզերում մրցունակության բարձրացման համար՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ, ինչպես նաև կապահովի տարածքներում համաչափության բարձր մակարդակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքներին ու սահմանամերձ համայնքներին: Վերոնշյալ նպատակի իրականացման համար մարզպետարանների հետ համատեղ կմշակվեն արդյունքային ցուցանիշներ, որոնց հիման վրա կապահովվի մոնիթորինգի իրականացումը՝ համաձայն պլանների:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունների արդյունքային ցուցանիշների մշակման արդյունքում ակնկալվում է ունենալ հստակ թիրախային կետեր և դիտարկել դրանց իրականացման ընթացքը՝ հիմք ընդունելով նախապես կազմավորված արդյունքային ցուցանիշները: |
| 91. | **Տարածքային կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքի ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տարածքային կառավարման համյեցակարգի , ինչպես նաև «Տարածքային կառավարման մասին» օրենքի ընդունումից հետո անհրաժեշտություն է առաջանալում ապահովել այդ փաստաթղթերով նախատեսվող մարզային նոր կառույցների, ինչպես նաև նոր իրավիճակում աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով մարզպետարանների աշխատակազմերի նոր կառուցվածքների ձևավորումը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում կներդրվեն տարածքային կառավարման նոր կառույցները, ինչպես նաև կբարձրանա մարզպետարանների աշխատակազմերում աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը: |
| 92. | **Համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերին աջակցություն**<br><br>**1.Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 1.2 բաժնի 3-րդ կետով նախատեսված՝ գործարարության զարգացման ուղղությամբ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, բնակչության կենսապահովման բարձրացմանն ու աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ներդրումային և գործառնական ծրագրերի խթանման և դրանց արդյունավետ իրականացման միջոցառումների կատարմամբ:<br>Հանրապետության տնտեսության կայունության, համաչափ տարածքային զարգացման և հետագա տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ քայլերից է հանդիսանում |

| | |
|---|---|
| | արդյունավետ ներդրումային քաղաքականության վարումը և բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը: Այս պարագայում առաջնային կարևորություն է ձեռք բերում համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) պետական աջակցությունը:<br>Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը կարևորում է մասնավոր հատվածում ներդրումների խրախուսումը, ինչպես նաև պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացումը՝ այն դիտարկելով որպես իր գործունեության կարևոր ուղղություններից մեկը, Ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել ընկերությունների մրցունակությունը, զարգացնել տնտեսական ենթակառուցվածքները և նպաստել ազգային ու տեղական կարևորագույն ծրագրերի արդյունավետ իրականացմանը:<br>Հանրապետության տնտեսության կայունության, համաչափ տարածքային զարգացման և հետագա տնտեսական աճի ապահովման նպատակով՝ համայնքների տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման և դրանց հետևողականության ապահովման համար անհրաժեշտ է ապահովել ծրագրերի ընթացքի, ինչպես նաև գործարար ծրագրերի վարկային տոկոսների սուբսիդավորման գործընթացի համակարգում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի առավել արդյունավետ իրականացում, դրանց նպատակային իրագործելիություն, պետության գերակա ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի սուբսիդավորման համակարգված գործընթացի ապահովում: |
| 93. | **Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի արդիականացում**<br><br>**1. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագրի 1.2 բաժնի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 49 արձանագրային որոշման դրույթներով:<br>Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ցածր մակարդակը, դրա հետ կապված սոցիալական, բնապահպանական և ընդհանուր սանիտարական խնդիրները, ինչպես նաև անարդյունավետ ինստիտուցիոնալ դաշտի, ֆինանսական հոսքերի և ներդրումների ոչ համակարգված կիրառումը հանգեցրել են աղբահանության և սանիտարական մաքրման անարդյունավետ համակարգի ձևավորմանը, այդ թվում աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելու, չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու վայրերում աղբը թափելուն և այլն:<br>Դրա հետ մեկտեղ գործնականում աղբահանության ծառայությունների մատուցման չափորոշիչները նորմավորված չեն, այդ իսկ պատճառով դրանք շատ տարբեր են և տեղերում սահմանվում են ըստ տեղական պատկերացման:<br>Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման, կոշտ կենցաղային թափոնների կառավարման բնագավառի համակարգված բարեփոխումների իրականացման:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է բարելավել հանրապետության աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակը, ձևավորել բնագավառում կայուն կառավարման համակարգ, ապահովել հանրապետության բոլոր համայնքների ընդգրկումը կազմակերպված աղբահանության և սանիտարական մաքրման համակարգում, ինչպես նաև կատարելագործել ոլորտի նորմատիվատեխնիկական դաշտը ու ներդնել բնագավառում պետական կառավարման, վիճակագրական հաշվառման և մոնիթորինգի միասնական համակարգ: |

| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե | |
|---|---|
| 94. | **ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության գերակա խնդիրների թվում նշված ծրագրի ներառման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համայնքներում տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորման անհրաժեշտությամբ:<br>Հայաստանի Հանրապետության համայնքների զգալի մեծամասնությունն ապահովված չեն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, ինչի հետևանքով բազմաթիվ համայնքներում կառուցապատումը կրում է չկանոնակարգված բնույթ, որն էլ իր հերթին սուբյեկտիվ որոշումների ընդունման հնարավորություն է ստեղծում: Ծրագրի իրականացումը կապահովի համայնքների ռազմավարական զարգացման պլանավորումը:<br>Ներկայացվող ծրագրով նախատեսվում է (ֆինանսավորման առկայության դեպքում) յուրաքանչյուր տարի մշակել 2-3 մարզի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2018 թվականին ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը նախատեսված է ՀՀ կառավարության 2017-2022 թթ ծրագրով: Նշված փաստաթղթերի մշակումը պետք է իրականացվի ներառված համայնքների կողմից համապատասխան համաֆինանսավորմամբ, գոտևորման նախագծերի մասով:<br>Նախատեսվում է, որ մինչև 2018 թվականի վերջը մշակված կլինեն.<br>- ՀՀ Սյունիքի մարզի 8 համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ: Նշված փաստաթղթերը կներառեն 138 բնակավայրի գոտևորման նախագծեր:<br>- ՀՀ Արարատի մարզի 9 համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ: Նշված փաստաթղթերը կներառեն 99 բնակավայրի գոտևորման նախագծեր: |
| 95. | **Կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գերակա խնդիրների թվում նշված ծրագրի ներառման անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքաշինության ոլորտում ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման միջոցով՝ հանրապետությունում կառուցապատման գործընթացների խթանման, կառուցապատման ծրագրերում ընդգրկված տարածքների զարգացման և արդիականացման անհրաժեշտությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է ստեղծել բարենպաստ պայմաններ ներդրումային ծրագրերի ներգրավման և դրանց արդյունավետ իրագործման համար, պարզեցնել և խթանել կառուցապատման գործընթացները, ստեղծել նախադրյալներ՝ պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման և նոր աշխատատեղերի ստեղծման համար:<br>Կոմիտեի կողմից կառուցապատման ներդրումային ծրագրերի իրագործման աշխատանքների հետևողական համակարգումն ու աջակցության տրամադրումը (մասնավորապես՝ ըստ անհրաժեշտության նոր կառուցվող ճարտարապետական համալիրների և առանձին կառույցների իրականացմանն ուղղված ներդրումային նախաձեռնությունների, դրանց կառուցապատման հայեցակարգերի և նախագծերի մշակման գործընթացում, ինչպես նաև ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին ներդրումային ծրագրերի իրականացմանն առնչվող խնդիրներում մասնագիտական խորհրդատվության ապահովումը)՝ էական ազդեցություն կունենա այդ ծրագրերը կյանքի կոչելու և դրանց իրականացման բնականոն ընթացքն ու շարունակականությունն ապահովելու գործընթացում: |

| | |
|---|---|
| 96. | **Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակման, վերանայման, տեղայնացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակում, վերանայում, տեղայնացում» գերակա խնդիրը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 51 արձանագրության 17-րդ կետով «Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին», ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի նիստի N 17 արձանագրության 26-րդ կետով «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» հավանության արժանացած արձանագրային որոշումների պահանջների, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում սպառողների համար հարմարավետության ապահովման անհրաժեշտությունից:<br>Հանրապետությունում գործող քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի համակարգը հիմնականում ընդգրկում է նախկին ԽՍՀՄ ժամանակահատվածում գործող նորմերը, որոնք չեն համապատասխանում ներկայումս գործող միջազգային և եվրոպական ստանդարտներին: Հետևաբար, կարիք ունեն արդիականացման՝ համահունչ միջազգայնորեն ընդունված չափանիշներին:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քաղաքաշինության բնագավառի առաջնահերթ նշանակության նորմատիվ փաստաթղթերի մշակումը, վերանայումը և տեղայնացումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան կնպաստի բնակչության առողջության և բարեկեցության բարելավմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, շենքերի ու շինությունների սեյսմակայունության և հուսալիության բարձրացմանը:<br>Միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ նորմատիվ փաստաթղթերի բազայի համալրումը կապահովի միասնական շուկայում հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունը, տեխնոլոգիաների արդիականացումը, տարբեր նշանակության շենքերի ու շինությունների նախագծային և շինարարական աշխատանքների որակը, ինչպես նաև շահագործման պահանջներն ու պայմանները:<br>Մշակման, վերանայման և տեղայնացման ենթակա նորմատիվ փաստաթղթերի նկատմամբ առաջնահերթության սահմանումը թույլ կտա առավել նպատակային օգտագործել տրամադրվող ֆինանսական միջոցները: |
| 97. | **Հայաստանի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման և ազգային անվտանգության ապահովման նպատակով շենքերի և շինությունների սեյսմիկ ռիսկի նվազեցում, ինչպես նաև դրանց սեյսմակայունության և հուսալիության բարձրացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» քաղաքաշինության ոլորտի 5-րդ կետի պահանջների և ՀՀ կառավա-րության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինու-թյունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» N 39 արձանագրային որոշման կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցով նախատեսված 2018 թվականին իրականցվելիք աշխատանքների կատարմամբ:<br>Գերակա խնդրի նպատակն է՝<br>1. Շենքերի և շինությունների սեյսմիկ անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվա-տեխնիկական դաշտի բարելավման, արդիականացման, շենքերի և շինությունների սեյսմակայու-նության բարձրացման և դրանց հուսալի շահագործման համար. |

ա) վերանայել սեյսմակայուն շինարարության նորմերը՝ Հայաստանի Հանրապետության տարածքի երկարաժամկետ սեյսմիկ վտանգի 1:500000 մասշտաբի հավանականային գնահատմամբ նոր քարտեզին համապատասխան:
Սեյսմակայուն շինարարության նորմերի վերանայման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրելու ուղղությամբ բանակցություններ են վարվում Ասիական զարգացման և Համաշխարհային բանկերի հետ,
բ) մշակել տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման մեթոդաբանություն՝ սահմանելով դրանց ընտրության առաջնահերթության չափորոշիչները,
Տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման մեթոդաբանության մշակման համար ֆինանսական միջոցներ չի պահանջվում:
2. Մշակել նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման կարգ՝ սահմանելով շենքերի ու շինությունների տեխնիկական անձնագրավորման իրականացումը և այդ գործընթացում ներգրավված մասնակիցների փոխհարաբերությունները:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Գերակա խնդրի լուծմամբ ակնկալվում է նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման և հուսալի շահագործման, ինչպես նաև դրանց վերակառուցման դեպքում համապատասխան արդյունավետ միջոցառումների մշակման համար ապահովել անհրաժեշտ ելակետային տեխնիկական տվյալներ:

98.

**Նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացման նպատակով աջակցություն նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման գործընթացներին**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը, (նպատակը)**

Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» քաղաքաշինության ոլորտի 3-րդ կետի 3-րդ ենթակետի և 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների կատարմամբ:
Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը նպատակաուղղված է համաշխարհային շուկայում հանրապետության շինարարական արտադրանքների և ծառայությունների համատեղելիության ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, էներգաարդյունավետութան բարձրացմանը և այլ պահանջների ու պայմանների բարելավմանը:
Գերակա խնդրի նպատակն է տեխնիկական աջակցություն ցուցաբերել շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման գործընթացներին: Շինարարական կազմակերպությունների և մասնագիտական շրջանակների կողմից մշակված ու քննարկման ներկայացված նոր տեխնոլոգիաների կիրառման և ներդրման գործընթացների ապահովումն ուղղված է նաև առկա կարողությունների զարգացմանն ու բիզնես ներուժի խրախուսմանը:
Նորարարական նախաձեռնությունների, առաջարկությունների և նախագծերի պետական ֆինանսավորման անհրաժշտությունը, մեծությունը, ինչպես նաև պետության կողմից հնարավոր համաֆինանսավորման չափը կարող է գնահատվել կոնկրետ ծրագրերի իրականացման շրջանակներում:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Գերակա խնդրի լուծմամբ ակնկալվում է՝
- ապահովել շինարարության ոլորտում տարբեր նշանակության շենքերի ու շինությունների նախագծման ու կառուցման համար նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն, ինչը խթան կհանդիսանա նախագծային ու շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը,
- ինտեգրվել միջազգային լավագույն փորձի միասնական համակարգում՝ համապատասխանություն ապահովելով արտաքին և ներքին միջավայրերի փոփոխված պահանջներին,
- ապահովել շինարարական արտադրանքի համատեղելիությունը արտերկրից ներկրվող նմանատիպ արտադրանքի հետ՝ խթանելով մրցունակ տեղական արտադրության կազմակերպմանը, շինարարության ոլորտում արտաքին ներդրումների ներգրավմանը, ինչպես նաև արտահանման գործընթացների ակտիվացմանը:

<table>
<tr><td>99.</td><td>Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման սկզբունքների արդիականացում<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատվել է գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը: Կարգը կազմվել է 1994–1995 թվականների մեթոդաբանության հիմքով, երբ դեռևս բացակայում էին շուկայական հարաբերությունները: Ներկայումս շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 1984 թվականի նորմատիվ բազան, այդ թվում աշխատավարձի և մեքենամեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է նախկինում գոյություն ունեցող գներով՝ կիրառելով համապատասխան գործակիցներ, որտեղ հաշվի չեն առնված նոր տեխնոլոգիաների, նոր մեքենաների և սարքավորումների շահագործման, ինչպես նաև աշխատավարձի ներկայիս պահանջները: Ներկայումս գործող վերոնշյալ կարգով շինմոնտաժային աշխատանքների նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի ծախսերի միջև առկա են անհամապատասխանություններ:<br>Նոր մեթոդաբանության հայեցակարգի մշակման միջոցով շինարարական աշխատանքների արժեքը համապատասխանեցնել գնագոյացման արդի պահանջներին:<br><br>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման հայեցակարգի արդիականացում, առավելությունը տալով խոշորացված գներով շինարարության արժեքի հաշվարկման մեթոդաբանությանը, որն ավելի կպարզեցնի բյուջեների ձևավորման և մրցույթների կազմակերպման գործընթացը:</td></tr>
<tr><td colspan="2">Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</td></tr>
<tr><td>100.</td><td>Հայաստանի Հանրապետության քաղաքների երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծում<br><br>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:<br><br>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի մասին:<br>Բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան ստեղծելու և ներդնելու նպատակով 2018թ. նախատեսվում է իրականացնել Սևան, Սպիտակ, Ջերմուկ, Կապան և Գորիս քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները:<br>Աշխատանքների իրականացման համար ֆինանսական ծախսերը ներառված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2018 թվականի ծախսերի կատարման նախահաշվում:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| 101. | **Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ArmREF02) ազգային գեոդեզիական կորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է ունենալ.<br>ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի՝ բարձր ճշտությամբ, հնարավորություն տալով գեոդեզիայի բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին խնայել ժամանակ և ֆինանսական զգալի միջոցներ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումների «գեոդեզիական» կոորդինատներից անցում այլ էլիպսոիդային և «նորմալ» բարձրությունների:<br>Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի «ՌՈՎԵՐ» դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) համակարգում:<br>Աշխատանքների իրականացման համար ֆինանսական ծախսերը ներառված են ՀՀ կառա-վարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2018 թվականի ծախսերի կատարման նախահաշվում: |
| 102. | **Հայաստանի Հանրապետությունում հողամասերի և դրանց բարելավումների միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանում և բազային արժեքների որոշում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում հողամասերի և դրանց բարելավումների միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանումն է և բազային արժեքների որոշումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռնի Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմների ներդրմանը, կապահովի անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովմանը, կխթանի պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծմանը, ինչպես նաև հիմք կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական հարկման համակարգի ներդրմանը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե** | |
| 103. | **Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը լրանում է 2016 թվականին: Էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքները պետք է իրականացվեն երկու փուլով՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվա-կանի օգոստոսի 23-ի «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման նկատմամբ պահանջները հաստատելու մասին» N 1085-Ն որոշման:<br>Շահագործման ժամկետի երկարացման 1-ին փուլի աշխատանքներին զուգահեռ սկսվել է Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի երկարացման աշխատանքների իրականացման 2-րդ փուլը՝ շահագործման լրացուցիչ ժամկետին էներգաբլոկի նախապատրաստումը, որի ընթացքում |

| | |
|---|---|
| | ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմինը (այսուհետ՝ կարգավորող մարմին) կքննարկի Հայկական ԱԷԿ-ի կողմից ներկայացվող հետևյալ փաստաթղթերը՝<br>1) էներգաբլոկի չվերականգնվող և չփոխարինվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորում.<br>2) էներգաբլոկի արդիականացման և անվտանգության բարձրացման միջոցառումների ներդրում.<br>3) էներգաբլոկի համակարգերի (տարրերի) փորձարկում.<br>4) էներգաբլոկի անվտանգության հիմնավորման հաշվետվության մշակում.<br>5) սթրես-թեստի հաշվետվության հիման վրա մշակված միջոցառումների ներդրում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Վերոհիշյալ փաստաթղթերի քննարկման հիման վրա կարգավորող մարմինը համաձայնություն կտա երկրորդ փուլի աշխատանքների արդյունքներին կամ շահագործող կազմակերպությունը կներկայացնի լրացուցիչ աշխատանքների իրականացման պահանջ:<br>Էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների երկրորդ փուլի աշխատանքների վերաբերյալ կարգավորող մարմնի համաձայնությունն ստանալուց հետո շահագործող կազմակերպությունը միջուկային տեղակայանքի շահագործման լիցենզիայի ժամկետի երկարաձգման մասին հայտ կներկայացնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 104. | **Ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիայի ստեղծում**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին են վերապահված շրջակա միջավայրի հողի, օդի, ջրի ճառագայթային մշտադիտարկման (մոնիթորինգ) և վերահսկողության իրականացումը, տեսչական ստուգումների ժամանակ ստուգվող օբյեկտներից փորձանմուշներ վերցնելը, հայտնաբերված ռադիոակտիվ նյութերի տիպաճշտումը, երկրի ընդերքից արտազատվող ռադիոակտիվ ռադոն գազի վերահսկումը:<br>Վերոնշյալ աշխատանքները ժամանակակից պահանջներին համապատասխան կատարելու համար անհրաժեշտ է բարձր ճշտության ռադիոմետրիկ ու սպեկտրոմետրիկ սարքերով, ինչպես նաև ռադիոքիմիական անալիզների կատարման ու փորձանմուշների մշակման համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցված լաբորատորիա:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիա ունենալու դեպքում կոմիտեն կկարողանա Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներիպահանջներին համապատասխան իրականացնել շրջակա միջավայրի կարգավորող վերահսկողությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, բարելավելու շրջակա միջավայրի պահպանությունը: |
| **Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** | |
| 105. | **Ջրամբարաշինության (Կապսի, Վեդու և Սելավ-Մաստարա ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>2016 թվականի օգոստոսի 25-ին հավանության է արժանացել ՀՀ կառավարության N33-18 արձանագրային որոշումը, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների հետ թափանցիկ հարաբերությունների նոր մակարդակ ներդրմանը: Միաժամանակ «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված գերակա խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| 106. | **Ոռոգման համակարգերի վերականգնման, վերակառուցման, արդիականացման ծրագրերի իրականացման ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը ոռոգման ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը բարձրացնելն է:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ոռոգման ջրի արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա ոռոգման գյուղատնտեսության արդյունավետության ու կայուն զարգացմանը և բնակչության համար եկամտի ապահովմանը: Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը և հետագա պահպանումը: Միաժամանակ՝ ինքնահոս համակարգերի, հեռացնող ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնել ինքնարժեքի նվազման քաղաքականություն: |
| 107. | **Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական, ֆինանսական և ֆիզիկական վիճակի գնահատման, ջրի հաշվառման հստակեցման, ջրակորուստների բացահայտման և էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման ուղղությամբ վերահսկելիության բարձրացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ոռոգման ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է ջրառի կետերը և մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները, որոնց ընդհանուր քանակը 2100 է, բերել պատշաճ վիճակի՝ կարգաբերելով և հագեցնելով դրանք ժամանակակից ջրաչափական սարքերով, ինչչով էլ պայմանավորված է գերակա խնդրի անհրաժեշտությունը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ոռոգման ոռոգման ոլորտում ներդրված հստակ հաշվառման համակարգի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ոռոգման գործընթացի արդյունավետությունը, կորուստների ցուցանիշի վերահսկումը, ավելի օպերատիվ արձագանքել համակարգում վթարների վերացմանը, իրականացնել ոռոգման ջրի ավելի օպտիմալ բաշխում, էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ առցանց տեղեկատվություն ստանալու արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն նվազեցնել տարատեսակ ռիսկերը, ինչը նաև կբերի սպասարկման և այլ ընթացիկ ծախսերի նվազեցմանը, հնարավորություն կստեղծվի ջրի կառավարման GIS ծրագրում կիրառել ոռոգման ջրի և էլ. էներգիայի ծախսի հաշվառման առցանց համակարգերը, որոնցից ստացվող տվյալները կօգտագործվեն ծրագրում առկա հաշվետվություններում, մեխանիկական ջրարտադրության գործընթացն կդառնա ավելի վերահսկելի և ավելի կազմակերպված շնորհիվ առցանց ստացվող էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ տեղեկատվությունից կազմված վերլուծություններից: |
| 108. | **Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Հանրապետության ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գրունտային ջրերի մակարդակների կարգավորման, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխման, մշակաբույսերի բնականոն աճի ապահովման |

| | |
|---|---|
| | նպատակներով, հանրապետության գերխոնավ հողերի տարածքներում սկսած 1950-ական թվականներից առ այսօր կառուցվել է շուրջ 1696.612 կմ դրենաժային ցանց, այդ թվում՝ բաց՝ 1065.662 կմ և փակ՝ 630.95 կմ, որի պահպանման, շահագործման նպատակով էլ պայմանավորված է գերակա խնդիրը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գրունտային ջրերի մակարդակների անթույլատրելի բարձր մակարդակի, նրանցում պարունակվող ագրեսիվ հիդրոկարբոնատ-մագնեզիում-նատրիումական հանքայնացման առկայության, հողատեսքերի ծանր մեխանիկական կազմի, ջրման ու լվացման ռեժիմների խախտման, մշակաբույսերի ցածր իռիգացիոն որակ ունեցող ջրերով ոռոգման պատճառներով հողերի մելիորատիվ վիճակը վատթարանում է:<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումն ու ալկալիացումը, տարափոխիկ հիվանդությունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը: |
| 109. | **Խմելու ջրի ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովում, ինչպես նաև չսպասարկվող տարածքներում պետություն-մասնավոր գործընկերության փոխշահավետ համագործակցության առավել արդյունավետ գործիքների ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>Հայաստանի Հանրապետության շուրջ 570 բնակավայրեր ընդգրկված չեն վարձակալական պայմանագրի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում և չունեն ջրամատակարարման և ջրահեռացման որակյալ համակարգեր:<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ աշխատանքներ տարվեն, որպեսզի ապահովվեն անհրաժեշտ նախադրյալներ որևէ մասնագիտացված օպերատորի ընդգրկմամբ տվյալ բնակավայրերում պատշաճ մակարդակի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնելու համար:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծումն հնարավորություն կտա ՀՀ-ում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության հետ կապված խնդիրների լուծում, կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում, ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հուսալիության ավելացում: |
| 110. | **Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստում և իրականացում, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման բնագավառի հայեցակարգային մոտեցումների մշակում և առաջարկությունների ներկայացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը**<br>ՀՀ-ում կեղտաջրերի հավաքման և մաքրման ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման ծառայությունները բավարար մակարդակի չեն գտնվում: Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման բնագավառի հայեցակարգային մոտեցումների մշակման համար է պայմանավորված գերակա խնդրի անհրաժեշտությունը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծումն հնարավորություն կտա ՀՀ-ում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության հետ կապված խնդիրների լուծում, կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում, ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հուսալիությունն ավելացում: |

**Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն**

111.

**ՀՀ բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի տարածում**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Գերակա խնդրի անհրաժեշտությունը բնակչության ֆիզիկական դաստիարակության ամրապնդումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումն է՝ սկսած նախադպրոցական տարիքի երեխաներից մինչև տարեցներ, նրանց շրջանում առողջության ամրապնդումը, ակտիվ հանգստի կազմակերպումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների խթանումը և կազմակերպումն է բնակչության բոլոր տարիքային խմբերի համար:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Բնակչության շրջանում ֆիզիկական դաստիարակության ամրապնդում և զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպում և առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության կենցաղում ակտիվ հանգիստ և առողջ ապրելակերպ վարող անձանց թվի աճ: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության նպատակով Երևան քաղաքի, ինչպես նաև մարզերի քաղաքների պուրակներում և այգիներում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների անցկացում: ՀՀ ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հասարակությանը նրանց ինտեգրման գործընթացի և սոցիալական հավասարության խթանում: Հանրապետության քաղաքներում և գյուղերում ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական ծրագրերի անցկացման խթանում և բարելավում՝ բնակչության լայն շերտերի ընդգրկման միջոցով:

112.

**Ֆիզիկական կուլտուրայի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում առողջ ապրելակերպի սերմանում և տարածում**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման բացահայտում և ձևավորում, ինչպես նաև խոստումնալից երեխաների ի հայտ բերում մանկապատանեկան մարզադպրոցների համար: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական ունակությունների զարգացում և բարելավում, տարբեր մարզաձևերում ընդգրկվող երեխաների թվի ավելացում: Նախադպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում, նախադպրոցական հիմնարկների ավագ տարիքի երեխաների համար տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշում:

113.

**Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի դերի կարևորում և տարածում**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների շրջանում ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորում, սոցիալական հավասարության խթանում, նրանց հասարակություն ինտեգրման գործընթացի խթանում, բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում:

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներին նրանց ներգրավվածության թվի աճ, նրանց մեջ առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում |
| 114. | **Մանկապատանեկան սպորտի զարգացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում գործող մանկապատանեկան մարզադպրոցների ուսումնական ծրագրերի արդիականացում և համապատասխանեցում ներկայիս ստանդարտներին: Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժներին փոխտնօրեններին, հրահանգիչ-մեթոդիստներին, ուսուցման ժամանակակից պահանջներին և մեթոդներին, սաների ֆիզիկական դաստիարակության արդի հիմնախնդիրներին, մարզչական և կազմակերպչական նորագույն նվաճումներնի և արդյունքների մասին իրազեկում և ուսուցանում, նրանց ներկայացվող աշխատանքային պահանջների հստակեցում: Ուսումնական հաստատությունների Ֆիզիկական կուլտուրա առարկայի նյութատեխնիկական բազայի ամրապնդում, մարզադահլիճների համալրում ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում նոր՝ ըստ մարզաձևերի և մարզման փուլերի մշակված միասնական ուսումնական ծրագրերի առկայություն և ներդրում: Կադրերի վերապատրաստում և որոկավորման բարձրացում: Ուսումնական հաստատու-թյունների մարզադահլիճնորում անհրաժեշտ մարզագույքի առկայություն |
| 115. | **Երիտասարդների շարժունակության խթանում, միջազգային երիտասարդական համագործակցության զարգացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է երիտասարդների շարժունության խթանումը, միջազգային երիտասարդական համագործակցության զարգացումը, այլ երկրների երիտասարդության ոլորտում փորձի փոխանակումը, միջազգային հանդիպումներին, փառատոներին, խորհրդա-ժողովներին և այլ միջոցառումներին երիտասարդների մասնակցությանն աջակցությունը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>- մարզային (համայնքային և գյուղական) երիտասարդության շրջանում տեղական և միջազգային ծրագրերում ներգրավվածության մակարդակի բարձացում:<br>- միջազգային երիտասարդական ծրագրերի իրականացման գործընթացում պետության և հասարակական կազմակերպությունների համագործակցության ընդլայնում: |
| 116. | **Երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության աստիճանի բարձրացում, նրանց զբաղվածության, սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման ուղղությամբ փաստարկված և իրատեսական լուծումների առաջարկում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության աստիճանի բարձրացման, ինչպես նաև երիտասարդության շրջանում առկա գործազրկության կրճատման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել երիտասարդների ներգրավվածությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացման, երիտասարդական հասա-րակական կազմակերպությունների գործունեության խթանման, փաստարկված երիտասարդա-կան քաղաքականության մշակման և իրականացման միջոցով:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդական ծրագրերի էական ավելացում մարզերում, երիտասարդական հասարա-կական կազմակերպությունների կարողությունների զարգացում, միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման և երիտասարդների շարժունակության խթանում, երիտասարդ- |

| | |
|---|---|
| | ների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ փաստական հենքի ստեղծում, ինչպես նաև երիտասարդների ստեղծագործական ձեռներեցության մոդելների լավագույն փորձի տեղայնացում: |
| **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** | |
| 117. | **Հայրենադարձության գործընթացի խթանում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ Նախագահի քաղաքական հարցադրումների իրականացման նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հայրենադարձության խթանման համար: Հայրենադարձության գործընթացի խթանումը նպատակ ունի բարելավել Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը, ապահովելու մասնագիտական խմբերի կարողությունների ավելացումը, դիմագրավելու սոցիալ-տնտեսական, քաղաքական ու ժողովրդագրական մարտահրավերներին:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայրենադարձության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի տնտեսական, քաղաքական, մտավոր ու պաշտպանական ներուժը:<br>Հայաստանում այն կնպաստի սփյուռքահայերի արագ և սահուն ինտեգրմանը հասարակության մեջ, կնպաստի Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հնարավորություն կընձեռի հայկական մասնագիտական ներուժի համախմբման և Հայաստանում նպատակային կիրառման համար: |
| 118. | **Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական հիշողության փոխանցմանը և ամրապնդմանն աջակցություն**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացը շարունակելու և խթանելու նպատակով անհրաժեշտ է հայկական և համահայկական նշանակության հարցերը տարբեր միջազգային և պետական իշխանության մարմիններին իրազեկել, տարածել ճշմարիտ և օբյեկտիվ տեղեկատվություն, վեր հանել և ներկայացնել Հայոց ցեղասպանության իրավական հիմնահարցերը, նպաստել հայ ժողովրդի իրավունքների ու Հայոց ցեղասպանության հատուցման իրավական թղթածրարի շուրջ համահայկական համախոհության ձևավորման քայլերի մշակմանը, վեր հանել և ներկայացնել իսլամացված հայերի հիմնախնդիրները: Որպես գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլեր են՝ Թուրքիայի այն նահանգներում, որտեղ բնակվում են (հայ) բռշաներ հետազոտական աշխատանքների կազմակերպման, կրոնափոխ արևմտահայության կյանքն արտացոլող ֆիլմաշարի առաջին ֆիլմի՝ «Համշեն» ստեղծման, «Հայկական պետությունների և սփյուռքի դեմ ուղղված հակահայկական քարոզչությունը. վերլուծություն և լուծման ուղիներ», ինչպես նաև «Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության և Հայոց Կիլիկիայի դեմ (1919-1921թթ.)» հետազոտության կազմման և հրատարակման աշխատանքներին ֆինանսական աջակցությունը իրականացվում է ՀՀ պետական բյուջեով ՀՀ սփյուռքի նախարարությանը հատկացված «Մշակութային միջոցառումներ» ծրագրի՝ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կձևավորվի Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվության/տվյալների բազա. ինչպես նաև կամբողջացվեն նյութական, ֆինանսական, մշակութային կորուստների մասին տվյալները, կկազմվի իսլամացված և ծպտյալ հայերի հիմնախնդիրների շուրջ միջոցառումների ծրագիր-ժամանակացույց: |

| | |
|---|---|
| 119. | **Հայաստան-սփյուռք գործակցության մեջ երիտասարդական կազմակերպությունների դերի ակտիվացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը երիտասարդության՝ Հայաստանի հետ կապի ակտիվացումն է, համայնքային կյանքում երիտասարդների ներգրավումը, Հայաստանում և սփյուռքում գործող երիտասարդական կազմակերպությունների համագործակցության ապահովումը և փոխադարձ ճանաչելիության դաշտի ընդլայնումը, երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության և հայրենաճանաչության մակարդակի բարձրացումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համահայկական երիտասարդական հավաքի, Հայաստանի և սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների համատեղ միջոցառումների կազմակերպում, երիտասարդական կազմակերպությունների տվյալների շտեմարանի նորացում, երիտասարդական լավագույն նախագծերի ներկայացում: |
| 120. | **Սփյուռքում հայապահպանության հիմնախնդրի լուծման գործում մշակութային գործոնի ավելացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է՝ սփյուռքի մշակութային կյանքի ակտիվացումը, Հայաստան-սփյուռք մշակութային գործակցության ամրապնդումը, սփյուռքի մշակութային խմբերին Հայրենիքում ելույթ ունենալու հնարավորության ընձեռումը, սփյուռքյան մշակութային խմբերի և անհատների փոխադարձ ճանաչելիության դաշտի ընդլայնումը:<br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայրենիքում սփյուռքի մշակութային խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ մշակութային միջոցառումների կազմակերպումը, սփյուռքում հայապահպանությանը նպաստումը, սփյուռքի մշակութային ներուժի հաշվառումը, մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացմամբ, սփյուռքյան մշակութային խմբերի գործունեության ակտիվացմամբ դրանց մաս կազմող երիտասարդության թվի ավելացումը: |
| | **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** |
| 121. | **Առողջապահական համակարգի արդիականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական և գերակա խնդիր է Հայաստանի Հանրապետությունում: Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն, ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2018 թվականին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես.<br>1. 2018 թվականին նախատեսվում է ավարտել 2016թ. մեկնարկած ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ (130 մահճակալ) հիմնանորոգման շինարարական, ինչպես նաև բժշկական կենտրոնի հագեցման աշխատանքները: Նպատակն է աջակցել Արտաշատի տարածաշրջանի բնակչությանը (շուրջ 91.000 բնակիչ) մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանը: |

| | |
|---|---|
| | 2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում նախատեսվում է նույնպես ավարտել նոր հիվանդանոցի (32 մահճակալ) կառուցման շինարարական, ինչպես նաև կահույքով, սարքավորումներով հագեցման աշխատանքները: Նորակառույց հիվանդանոցային մասնաշենքը հնարավորություն կընձեռի էապես բարելավել մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը, արդյունավետությունը և մատչելիությունն ազգաբնակչության համար:<br>Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Գեղարքունիքի մարզը հանդիսանում է տուրիստական գոտի, ժամանակակից առողջապահական ենթակառուցվածքները ևս կնպաստեն տուրիզմի զարգացմանը:<br>3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնը՝ 95 մահճակալ հզորությամբ, բազմապրոֆիլային հիվանդանոց է, որը լայն սպեկտրի հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ է մատուցում Մարտունու տարածաշրջանի 89.8 հազար բնակչությանը, որից 12.5 հազարը քաղաքային է, 77.3-ը՝ գյուղական: Մարտունու բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1987 թվականին կառուցված, եռահարկ պանելային շինությունում, որը շահագործման հանձնելուց ի վեր չի ենթարկվել հիմնանորոգման, և ներկայում գտնվում է անբարեկարգ վիճակում: Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, ինչպես նաև կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից՝ տնտեսապես արդյունավետ չէ Մարտունու բժշկական կենտրոնի ներկայիս մասնաշենքի հիմնանորոգումը: Ուստի, նպատակահարմար է Մարտունու բժշկական կենտրոնի տարածքում կառուցել հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող բժշկական կենտրոնի նոր մասնաշենք՝ 55 ստացիոնար մահճակալ հզորությամբ: Ընթացքում է թիվ 5222 վարկային համաձայնագրի փոփոխության գործընթացը, որի շրջանակներում նախատեսվում է 2018-20թթ. շարունակել սքրինինգային հետազոտությունները, ինչպես նաև Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ճառագայթային բուժման մասնաշենքի կառուցման համար նախատեսված վարկային միջոցներն ուղղել ՀՀ Վայոց ձորի մարզի և Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական ծառայությունների արդիականացմանը:<br>Ներկայում, արդեն իսկ ստացվել է ՀՀ վարչապետի համաձայնությունը՝ վարկային ծրագրի փոփոխության գործընթացն իրականացնելու վերաբերյալ, և համապատասխան գրություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:<br>4. ՀՀ Վայոց ձորի մարզն ընդգրկում է 3 քաղաք՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, ինչպես նաև 41 գյուղական համայնք և 52 գյուղ: Մարզի ընդհանուր բնակչության թիվը 01.01.2015թ. դրությամբ կազմում է 51,4 հազ. մարդ: Եղեգնաձորի տարածաշրջանում գործում է «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ 45 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Եղեգնաձորի տարածաշրջանի շուրջ 33.4 հազար ազգաբնակչությանը: Բժշկական կենտրոնը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կարիք ունի կապիտալ հիմնանորոգման, իսկ սարքավորումները, կահույքը և պարագաները ֆիզիկապես մաշված են, մեծ մասն արտադրված է դեռևս Խորհրդային Միության տարիներին: Վայքի տարածաշրջանում գործում է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ն՝ 35 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Վայքի և Ջերմուկի տարածաշրջանների բնակչությանը՝ շուրջ 11.6 հազ. մարդ: Ծառայություններն իրականացվում են հիմնական, ծննդատան և ինֆեկցիոն ծառայության մասնաշենքերում: Գլխավոր մասնաշենքը երկհարկանի է, զբաղեցնում է շուրջ 1620 քմ ընդհանուր մակերեսով տարածք, որը կառուցվել է 1962-70-ական թվականներին և մասնակի վերանորոգվել պետական բյուջեի միջոցներով: Բուժմիավորման մյուս եռահարկ մասնաշենքում տեղակայված է ծննդօգնության ծառայությունը, որը համեմատաբար նոր՝ 1994 թվականի, շուրջ 2259 քմ ընդհանուր մակերես տարածքով կառույց է: Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև կենտրոնների մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից՝ նպատակահարմար չէ արդիականացնել մարզի 2 բժշկական հաստատությունները: Ուստի՝ նպատակահարմար է միավորել Եղեգնաձորի և Վայքի բժշկական հաստատությունների հիվանդանոցային և ծննդօգնության ծառայությունները (ընդհանուր՝ 80 մահճակալ հզորությամբ)՝ կառուցելով նոր բժշկական կենտրոն (36 ստացիոնար մահճակալ հզորությամբ) 2 քաղաքները կապող ճանապարհի միջնամասում: Ընթացքում է թիվ 5222 վարկային համաձայնագրի փոփոխության գործընթացը, որի շրջանակներում նախատեսվում է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ճառագայթային բուժման մասնաշենքի կառուցման համար նախատեսված վարկային միջոցներն ուղղել ՀՀ Վայոց ձորի մարզի և Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական ծառայությունների արդիականացմանը: |

| | |
|---|---|
| | Ներկայում, արդեն իսկ ստացվել է ՀՀ վարչապետի համաձայնությունը՝ վարկային ծրագրի փոփոխության գործընթացն իրականացնելու վերաբերյալ, և համապատասխան գրություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:<br>5. Հայաստանի մեծությամբ երրորդ քաղաքի (Երևանից և Գյումրիից հետո)՝ Վանաձորի նորակառույց բժշկական կենտրոնը հնարավորություն կընձեռի ՀՀ Լոռու մարզի և հատկապես Վանաձոր քաղաքի բնակչությանը մատուցել որակյալ, ժամանակակից և մատչելի բժշկական ծառայություններ՝ արտահիվանդանոցային և երրորդային մակարդակի բազմազան հիվանդանոցային ծառայություններ: «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է Վանաձորի ԲԿ-ի հագեցումն արդի բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Վանաձորի ԲԿ-ում նախատեսվում է նոր ծառայությունների ծավալում՝ մասնավորապես ինվազիվ կարդիոլոգիայի: Լոռու մարզը կլինի երրորդը, որտեղ կմատուցվեն նման ծառայություններ (վերոնշյալ ծառայությունները արդեն մատուցվում են Սյունիքի և Շիրակի մարզերում): Հիվանդանոցը կհագեցվի նաև համակարգչային շերտագրով, ժամանակակից ուլտրաձայնային ախտորոշման սարքով: Այս ամենը կնվազեցնի պացիենտների հոսքը դեպի Երևան՝ տեղում ապահովելով բնակչության բարձր մասնագիտական բուժումը: |
| 122. | **Ծխելու վնասակարության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի կազմակերպում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն գերակա խնդրի նպատակն է ապահովել ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի կետ 1-ի 2-րդ ենթակետի «ա» պարբերության և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Ծխելու դեմ պայքարի ռազմավարությանը և այդ ռազմավարության 2017-2020 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 33 արձանագրային որոշման պահանջների իրացումը: Նշված միջոցառման ընթացքում հնարավոր կլինի միջոցառումներներ իրականացնել՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում ծխախոտի օգտագործման, սպառման նվազեցմանը, պահպանել բնակչության առողջությունը՝ պաշտպանելով ծխախոտի ծխի երկրորդային ազդեցությունից և նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության ցուցանիշները՝ կրճատելով ծխախոտի օգտագործումը, պատշաճ իրազեկելով բնակչությանը:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում ակնկալվում է պատշաճ իրազեկմամբ հանրապետությունում ունենալ վարքագծային փոփոխություն ծխախոտի օգտագործման հարցում և նվազեցնել՝<br>1) ծխախոտի օգտագործման տարածվածությունը (տարեկան 1,5-2 %-ով),<br>2) 15 և բարձր տարիքի տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածության ընթացիկ ցուցանիշի հարաբերական կրճատում մինչև 10%-ով:<br>3) երկրորդային ծխի ազդեցության նվազեցում, որը կնպաստի արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, չարորակ նորագոյացություններից, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից և շաքարային դիաբետից ընդհանուր և վաղաժամ մահացության կրճատում: |
| 123. | **Պետական պատվերի միջոցների հաշվին դեղերի ձեռքբերման և փոխհատուցման մեխանիզմների ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին հատկացվող դեղերի փոխհատուցման (ֆինանսավորման) մեխանիզմների սահմանումը նպատակ ունի բարձրացնելու պետական բյուջեի միջոցների ծախսման թափանցիկությունն ու արդյունավետությունը: Բացի այդ, պետական պատվերի շրջանակներում բժշկական կազմակերպությունների կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման համար կստեղծվի տեխնիկական մասնագրերի մշակման միասնական համակարգ և կիրականացվի |

| | |
|---|---|
| | շարունակական բարելավում՝ ՀՀ առողջապահության նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների և կառույցների կողմից: Տեխնիկական բնութագրերը շարունակական կերպով կհրապարակվեն ՀՀ առողջապահության նախարարության կայքում:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի կատարման արդյունքում ակնկալվում է Հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի փոխհատուցման (ֆինանսավորման) մեխանիզմների սահմանում, որը կնպաստի պետական բյուջեի միջոցների ծախսման արդյունավետությանը՝ բացառելով միևնույն դեղի համար պետական բյուջեի տարբերակված հատկացումները: Փոխհատուցման (ֆինանսավորման) մեխանիզմների սահմանվելու է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից կատարվող դեղերի մանրածախ գների մշտադիտարկման արդյունքում:<br>Պետական պատվերի միջոցների հաշվին ձեռք բերվող դեղերի և բժշկական նշանակության ապրանքների տեխնիկական մասնագրերի մշակումը դրական ազդեցություն կունենա ամբողջ առողջապահական համակարգի վրա, մասնավորապես՝ կնպաստի գնումների համար նախատեսված պետական բյուջեի միջոցների ծախսման արդյունավետության բարձրացմանն ու ձեռք բերվող ապրանքների որակական ցուցանիշների բարելավմանը (հաշվի առնելով տեխնիկական բնութագրերի շարունական մասնագիտական կատարելագործումը): |
| 124. | **Առողջապահական համակարգում դեպքերի անհատական վարման ինստիտուտի (case management) ներդրում**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի թիվ 646-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի «Առողջապահություն» գլխի 2-րդ կետով նախատեսված է ներդնել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցված ծառայությունների դեպքերի անհատական վարման (case managament) ինստիտուտ, մեծացնել Գործակալության գործառույթներում բժիշկ-փորձագետների ինստիտուտի դերը:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է ՀՀ ԱՆ ՊԱԳ-ում ներդնել դեպքերի անհատական վարման (case managament)-ի ինստիտուտը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2002 թվականի 1301-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ ՀՀ ԱՆ ՊԱԳ գործառույթներում և կառուցվածքում: Նախատեսվում է որոշմանը համապատասխան վերանայել բժիշկ-փորձագետների պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև հաստատել բժիշկ-փորձագետների գործունեության ընթացակարգը և մասնագիտական բնութագրերը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով: Գործակալության գործառույթներում բժիշկ-փորձագետների ինստիտուտի ներդրման արդյունքում Դեպքերի անհատական վարման (case managament) շրջանակներում Գործակալությունում նախատեսվում է իրականացնել հիվանդանոցային դեպքերի փաստաթղթային և տեղում փորձագիտական աշխատանքներ:<br>Փորձագետների կողմից կուսումնասիրվեն կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունները, կուսումնասիրվեն և կիրականացվի անմիջապես տվյալ պահին բժշկական օգնություն և սպասարկում ստացող պացիենտների վարման հետ կապված այցեր բժշկական կազմակերպություններ, ինչպես նաև փորձագիտական գնահատում էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով: Կբարձրանա բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման որակը, կնվազեն պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացած պացիենտների վերաբերյալ ներկայացվող |

| | |
|---|---|
| | հաշվետվություններում տեղ գտած սխալները կամ խախտումները, Պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների ծախսը կդառնա առավել արդյունավետ և նպատակային: |
| 125. | **Բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման և (կամ) մասնավորեցման աշխատանքների իրականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված սույն թվականի հունիսի 17 646-Ա 2017-2022 թթ. զարգացման ծրագրի «4.3. Առողջապահություն» գլխի 4-րդ կետի 5-րդ ենթակետի՝ թիրախավոր-վում է փուլային եղանակով կատարել աշխատանքներ՝ ուղղված բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման մեխանիզմների ընդունմանը: Բժշկական հաստատությունները կոնցեսիոն կառավարմանը փոխանցելը պայմանավորված է ազգաբնակչության առողջության ցուցանիշների, բժշկական օգնության և սպասարկման որակի ու մատչելիության բարելավման, ինչպես նաև բժշկական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Մարզերում գտնվող բժշկական հաստատություններն ընդգրկելը կխթանի մարզերի համաչափ զարգացումը՝ նվազեցնելով անհավասարության մակարդակը: Մարզերում գտնվող բժշկական հաստատություններն անգամ հագեցած լինելով անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, գործում են թերծանրաբեռնված, որի հիմնական պատճառներից է ոչ արդյունավետ կառավարումը: Որպես խնդրի լուծում՝ առաջարկվում է մարզային բժշկական հաստատությունները մրցութային եղանակով կոնցեսիոն կառավարման հանձնել: Գերակա խնդրի նպատակն է բարձրացնել մարզերում գտնվող բժշկական հաստատությունների գործունեության արդյունավետությունը՝ ապահովելով բժշկական օգնության և սպասարկման հավասարության սկզբունքը և բժշկական օգնության որակի բարելավումը:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման մեխանիզմների ընդունման արդյունքում ակնկալվում է բնակչության առողջության ցուցանիշների բարելավում՝ պատշաճ բժշկական օգնություն ապահովելու միջոցով: |
| 126. | **Բժշկական տուրիզմի ծառայություններ մատուցող կազմակեպությունների շտեմարանի ստեղծում և հասարակությանը իրազեկում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն գերակա խնդրի նպատակն է ապահովել ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջը, ըստ որի՝ թիրախավորված է զարգացնել բժշկական տուրիզմը Հայաստանի Հանրապետությունում՝ նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շտեմարանի ստեղծման և տարբեր շուկաներում դրա իրազեկման ապահովման միջոցով: Մասնավորապես, թիրախավորվում են այն ոլորտները, որտեղ Հայաստանը ունի համեմատական առավելություն և որոնց միջոցով համաշխարհային բժշկական սպասարկման շուկային կարող են առաջարկվել մրցունակ ծառայություններ:<br>Սպասարկման ոլորտի աճը համարվում է կայուն տնտեսական զարգացման ուղիներից մեկը, միևնույն ժամանակ տուրիզմի ոլորտի զարգացումը, ինչն արտահանումն է, նույնպես նպաստում է ՀՆԱ-ի աճին: Բացի այդ, բժշկական տուրիզմի զարգացումը կստեղծի աշխուժացում ոլորտում, ինչն էլ կնպաստի եկամուտների ավելացմանը: Կմշակվեն համապատասխան չափանիշներ, որոնց հիման վրա բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունները կընդգրկվեն շտեմարանում, ինչը հնարավորություն կընձեռնի ընտրել բժշկական տուրիզմի ոլորտում ծառայություններ մատուցող լավագույն |

| | |
|---|---|
| | կազմակերպություններին և միջազգային շուկայում վերջիններիս մասին իրազեկել՝ կանոնակարգելով տեղեկատվական դաշտը: Խնդրի լուծումը ֆինանսական միջոցներ չի պահանջում:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պլաստիկ վիրաբուժության, ստոմատոլոգիական, վերականգնողական և համալիր բժշկական զննման (check-up) ոլորտներում ծառայություններ մատուցող կազմակերպությունների՝ շտեմարան ընդգրկումը և իրազեկմանն ուղղված գործունեությունը կնպաստի ոլորտի զարգացմանը: |
| 127. | **Ֆինանսական թափանցիկության ապահովման գործուն մեխանիզմի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Առողջապահության ոլորտի կազմակերպությունները, որոնք պետական բյուջեի շրջանակներում հասարակությանը մատուցում են բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, փաստացի կիրառում են հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության տարբեր ստանդարտներ և չեն հրապարակում ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ: Վերջինս չի ապահովում բյուջետային միջոցների օգտագործման ուղիների թափանցիկությունը, նպատակայնությունը:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>- հասարակության համար պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին ծառայություններ<br>- մատուցող կազմակերպությունների թափանցիկություն,<br>- արտաքին ներդրողների համար ՀՀ առողջապահության ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսական կանխատեսելիության և թափանցիկության ապահովում: |
| 128. | **Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերապատրաստման դասընթացների կազմակերպում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն գերակա խնդրի նպատակն է ապահովել ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերության և ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի նիստի N 4 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարության», «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ներդրման ռազմավարության 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրի» պահանջների իրականացումը: Նշված միջոցառմամբ հնարավոր կլինի իրականացնել առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների համար պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ: Համապատասխան վերապատրաստում անցած բուժանձնակազմի առկայության դեպքում, օրենսդրության շրջանակներում հնարավորություն կընձեռնվի ձևավորել շարժական թիմեր՝ պալիատիվ բժշկական օգնության ծառայությունների գործնական իրագործման նպատակով:<br>2017 թվականին իջազգային կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվել են բուժաշխատողների համար պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, ինչը նախատեսվում է կազմակերպել նաև 2018 թվականի ընթացքում:<br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում ակնկալվում է առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների վերապատրաստում անցած շուրջ 80 բուժաշխատողների (բժիշկներ, բուժքույրեր), պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման պահանջի ապահովման առկայություն: |

129.

**Կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելակարգերի և ընթացակարգերի ներդրում**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Արձանագրային մոտեցումները հանդիսանում են բոլոր զարգացած երկրների առողջապահական համակարգերի հիմքը: Անկախ տվյալ երկրի որդեգրած ազգային առողջապահական մոդելներից, պատշաճ մշակված և տեղայնացված ուղեցույցերը, գործելակարգերը և ընթացակարգերը թույլ են տալիս համակարգել արդի բժշկագիտական տեղեկատվությունը, նվազեցնել մատուցվող բուժծառայությունների որակական և ծավալային անհամաչափությունները, ապահովել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, իրականացնել որակի վերահսկման և շարունակական մասնագիտական կրթության ծրագրեր, նպաստել ոլորտի իրավական դաշտի կարգավորմանը: Օգնելով բժշկին ընդունել իր պացիենտի համար լավագույն կլինիկական որոշումները՝ ուղեցույցերը և գործելակարգերը անմիջականորեն ազդում են բուժման և ախտորոշման որակի ու անվտանգության վրա:

Նմանատիպ փաստաթղթերի բազան ՀՀ առողջապահական համակարգում խիստ թերի է, առկա օրինակները ոչ լիարժեք են, հաճախ իրարամերժ և հնացած: Իսկ փոքրաքանակ պատշաճ օրինակները կարիք ունեն հիմնավոր խմբագրման և թարմացման: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ՀՀ առողջապահության նախարարին վերապահված է լիազորություն ընդունելու՝

ա. կլինիկական ուղեցույցներ (բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների մշակած և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված կոնկրետ խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակն է աջակցել բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ կայացնելուն,

բ. պացիենտի վարման գործելակարգեր (բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությանը, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ),

գ. գործունեության ընթացակարգեր (բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը նկարագրող փաստաթուղթ):

Խնդրի իրականացումը պետական բյուջեից հատկացումներ չի ենթադրում, ֆինանսավորման աղբյուրը՝ արտաքին չարգելված ֆինանսավորման աղբյուրներ:

**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ուղեցույցերի, գործելակարգերի և ընթացակարգերի առկայությունը և գործնական ներդրումը կունենա բազմակողմանի ազդեցություն ամբողջ առողջապահական համակարգի վրա: Ծրագրում ընդգրկված կլինիկական մասնագիտություններով առաջնահերթ կմշակվեն և կտեղայնացվեն ընդհանուր թվով մոտ 250 կարգավորող փաստաթուղթ արտահիվանդանոցային և հիվանդանոցային օղակների համար: Ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- բժշկական ծառայությունների որակական և ծավալային անհամաչափության նվազում: Ասել է թե, պացիենտը, դիմելով մարզային թե մայրաքաղաքային բժշկական հաստատություն, վստահ կլինի, որ իրեն կմատուցվի համընդհանուր բնույթի և անհրաժեշտ ծավալի ծառայություններ,
- արտահիվանդանոցային ախտորոշիչ հետազոտությունների ոչ նպատակային ուղղորդումների կրճատում,
- ոչ հիմնավորված հոսպիտալիզացիաների քանակի նվազում,
- տվյալ ախտորոշմամբ հոսպիտալիզացիայի միջին տևողության նվազում,
- տարածված ախտորոշումների ուղղությունններով միջին ծախսերի նվազում,
- կներդրվի որակի գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը՝ ծառայություններ մատուցողի գործընթացների համապատասխանությունը արդի բժշկագիտության նորմերին, որը հնարավոր կլինի կապել ֆինանսավորման ծավալների հետ,
- բուժաշխատողի և պացիենտի հարաբերությունները կարգավորող հիմնավորված և թափանցիկ իրավական դաշտի ձևավորում,

շարունակական մասնագիտական զարգացմանն արդյունավետության բարձրացում առկա սկզբունքային մեթոդաբանական և նյութատեխնիկական բացերի լուսաբանում՝ օրինակ դեղեր, հետազոտություն, միջամտություն կամ գործելակարգ, որոնք պահանջվում են տվյալ հիվանդության վարման համար, բայց անհասանելի են կամ առկա չեն ՀՀ տարածքում:

| | |
|---|---|
| 130. | **Սիրտ-անոթային և հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերի ներդնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն գերակա խնդրի նպատակն է ապահովել ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի «4.3. Առողջապահություն» գլխի գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերության պահանջը, ըստ որի՝ թիրախավորված է ներդնել սիրտ-անոթային հիվանդությունների, և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերը:<br>Սիրտ-անոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերի ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է մասնագիտական քննարկումների կազմակերպում, սիրտ-անոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրություն, Հայաստանում հիվանդության համաճարակաբանության (տարածվածությունը ըստ ախտահարված օրգան-համակարգի և տեսակի) ուսումնասիրություն և վերլուծություն: Հայեցակարգերի ներդրման շրջանակներում սիրտ-անոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների կանխարգելմանը, հիվանդների վաղ հայտնաբերմանը, բուժմանը, վարմանն (ներառյալ ժամանակակից հետազոտությունների մեթոդների կիրառում) առնչվող ռազմավարությունների և միջոցառումների մշակում, ինչպես նաև ծառայությունների աշխարհագրական տեղակայման և հանրության մոբիլիզացիայի և իրազեկման վերաբերյալ միջոցառումների մշակում և ներդնում:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սիրտ-անոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերի ներդրման արդյունքում նախատեսվում է բարելավել բնակչության առողջապահական ցուցանիշները, մասնավորապես նշված հիվանդությունների կանխարգելման և բուժման արդյունավետության բարձրացում և մահացության նվազեցում: |
| 131. | **Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածքի հաստատում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված սույն թվականի հունիսի 17 646-Ա 2017-2022 թթ. զարգացման ծրագրի «4.3. Առողջապահություն» գլխի 3-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության՝ թիրախավորվում է կատարել աշխատանքներ ուղղված բուժհաստատությունների քանակի և աշխարհագրական տեղաբաշխման նորմատիվային բազայի ներդրմանը:<br>Որպես հիմնախնդրի լուծում՝ առաջարկվում է մշակել և ներդնել առողջապահական ծառայությունների, բուժհաստատությունների քանակի, մարդկային ներուժի աշխարհագրական տեղաբաշխման նորմատիվային բազա: Մշակման հիմքում դրվելու են ծառայությունների հասանելիության սկզբունքները (աշխարհագրական, ժամանակային և այլն.) և դրանից ելնելով կմշակվի և կհաստատվի բժշկական հաստատությունների տեղաբաշխման ժամանակակից նորմատիվային բազա:<br>Ծրագրի 4.3. Առողջապահություն» գլխի 4-րդ կետի 3-րդ ենթակետով թիրախավորվել է մինչև 2018 թվականի ավարտը հաստատել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածքը (master plan):<br>Նախատեսվում է Երևան քաղաքի և ՀՀ մարզերի կտրվածքով մշակել ԱԱՊ-ի օղակի գործունեության, հիվանդանոցային և ախտորոշիչ ծառայությունների կազմակերպման և մարդկային ներուժի նորմատիվային բազայի մշակումը և ներդրումը, ինչպես նաև սահմանել յուրաքանչյուր մարզին առողջապահական կադրային ներուժի օրինակելի կազմ և կառուցվածք՝ ելնելով յուրաքանչյուր մարզի վերլուծված կարիքներից, բժշկական կազմակերպությունների քանակից և մատուցվող ծառայությունների տեսակից, ինչն էլ հիմք կհանդիսանա նշված համակարգերի օպտիմալ կառուցվածքի հաստատման համար: Խնդրի լուծումը ֆինանսական միջոցներ չի պահանջում: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բժշկական հաստատությունների տեղաբաշխման ժամանակակից նորմատիվային բազայի հաստատման արդյունքում ակնկալվում է բարելավել ազգաբնակչության բժշկական սպասարկման որակը, ծառայությունների ֆիզիկական հասանելիությունը, ինչպես նաև կհաստատվի Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածքը: |
| 132. | **ՀՀ բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերում և մշտադիտարկում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ առողջապահական համակարգի շարունակական զարգացումն ապահովելու, ինչպես նաև հանրապետությունում տարեց տարի ավելացող ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելման և բուժման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագիրը: Ծրագրի նպատակն է բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումը և մշտադիտարկումը, ինչպես նաև Ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում առողջապահական ծառայությունների որակը և արդյունավետությունը:<br>Ընթացքում է թիվ 5222 վարկային համաձայնագրի փոփոխության գործընթացը, որի շրջանակներում նախատեսվում է 2018-20թթ. շարունակել սքրինինգային հետազոտությունները, ինչպես նաև Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ճառագայթային բուժման մասնաշենքի կառուցման համար նախատեսված վարկային միջոցներն ուղղել ՀՀ Վայոց ձորի մարզի և Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական ծառայությունների արդիականացմանը: Վերջինիս վերաբերյալ արդեն իսկ ստացվել է ՀՀ վարչապետի համաձայնությունը:<br>2014-2019 թթ. ընթացքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն վերը նշված հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և մշտադիտարկումը, ինչպես նաև մահացության նվազեցմանը: Հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկված է ազգաբնակչության 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը:<br>01.01.2015 թ.-01.11.2017 թ. ընկած ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 1 մլն 283 հազ. հետազոտություն: Կանանց մոտ իրականացվել է շուրջ 158 հազ. ՊԱՊ թեստի հետազոտություն, շուրջ 430 հազար քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և շուրջ 653 հազար քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 41 հազ. մեզի և արյան երրորդ հետազոտություն: Միևնույն ժամանակ իրականացվել է շարունակական մշտադիտարկում:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետության շուրջ 420 հազար բնակչության ռիսկային խմբերում սքրինինգային հետազոտությունների իրականացումն է՝ նպաստելով ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և մշտադիտարկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը: |
| 133. | **Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանության մշակում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը**<br>Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տարբեր ծրագրերի շրջանակներում մատուցվող նույն ծառայությունների գները տարբեր |

| | |
|---|---|
| | են և այդ ծառայությունների գները առանձին ծրագրերով չեն համապատասխանում իրական ծախսերին և ցածր են ներկայումս շուկայում գործող և վճարովի սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների գներից, որն էլ բերում է կոռուպցիոն ռիսկերի և դրանից բխող այլ բացասական երևույթների: Հետևաբար, ՀՀ կառավարության ծրագրի «Առողջապահություն» բաժնի 2-րդ կետի 5-րդ ենթակետով 2018 թվականի համար նախատեսված՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների՝ գների հաշվարկման մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է 2018 թվականին մշակել Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանություն և այդ մեթոդաբանության հիման վրա հաշվարկված գների փուլային ներդրումը սկսել 2019 թվականից:<br><br>**2. Գերակա խնդրի կատարման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է մշակել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանություն և այն հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով՝ վերանայելով պետական պատվերի շրջանակներում ընդգրկված ծառայությունների գների հաշվարկման և հաստատման մեխանիզմները: Ակնկալվում է՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների առավել նպատակային և հասցեական ծախսում և պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների իրատեսական գների ընդունման արդյունքում կոռուպցիոն ռիսկերի նվազում: |
| | **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն** |
| 134. | **Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է յուրաքանչյուր նախադպրոցական տարիքի երեխայի կրթության համար հավասար մեկնարկային պայմանների ստեղծմամբ՝ նախադպրոցական այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման, նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների մշակման միջոցով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովում, ընդգրկվածության ընդլայնում: |
| 135. | **Հանրակրթության բովանդակության և ծրագրերի բարելավում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է յուրաքանչյուր երեխայի որակյալ, արդիական և մրցունակ կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնմամբ՝ փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման առանձնահատուկ մոդելների ներդրման, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության համատեքստում ուսուցիչների փուլային վերապատրաստման, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության, միջնակարգ կրթության 3-րդ աստիճանում (10-12 դասարաններ) կրեդիտային համակարգի փորձնական ծրագրի ներդրման, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների (կամ խմբակի) համակարգի փորձնական կիրառման միջոցով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրակրթության բովանդակության և ծրագրերի բարելավում |
| 136. | **Համընդհանուր ներառական կրթության ներդրում ՀՀ Արմավիրի մարզում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխությունններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության |

| | |
|---|---|
| | համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 14-րդ կետի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելությանը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունա-կական մատուցումը իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում: |
| 137. | **Կրթական պաշարների և ուսումնական գրականության բարելավում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մշակել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների դասագրքերին և ուսումնաօժանդակ նյութերին ներկայացվող պահանջներ, բարելավել չափորոշչային պահանջների կատարումը վերահսկելու մեխանիզմները որակյալ ուսումնական նյութերի միջոցով սովորողների ուսուցման/ ուսումնառության գործընթացը դարձնել ավելի գրավիչ, դասագրքաստեղծ հեղինակային խմբերին ապահովել դասագրքերի համար մշակված ավելի հստակ չափանիշներով և գործիքակազմով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակության ստեղծման նոր չափանիշների և գործիքակազմի մշակում, հաշվի առնելով նաև սփյուռքի կրթօջախների, փախստականների կարիքները՝ հայալեզու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագիր և էլեկտրոնային ուսումնա-կան պաշարների՝ հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմների մշակման մեկնարկ: |
| 138. | **Ուսուցիչների պատրաստման, զարգացման և մասնագիտական առաջընթացի արդյունավետ համակարգի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ուսուցչի մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ուսուցիչների աշխատանքի վարձատրության, խրախուսման նոր մեխանիզմների մշակում և հաստատում՝ հատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների ուսուցիչներին: |
| 139. | **Դպրոցների կառավարման համակարգի վերափոխում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերանայել և առավել արդյունավետ դարձնել հանրակրթական հաստատությունների կառավարումը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Թափանցիկ հաշվետու և համագործակցային կառավարման մեխանիզմների մշակում և ներդրում, հանրակրթության որակի բարձրացում: |
| 140. | **Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատու-թյունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը: |

| | |
|---|---|
| | Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով:<br>Ներկայումս Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվում է կայուն դպրոցական սննդի ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության 6 մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների շուրջ 60000 սովորողներ: ՄԱԿ-ի ՊՀԾ-ն նախատեսում է շարունակել դպրոցական սննդի ծրագիրը, ընդլայնելով ծրագրի աշխարհագրությունը և շահառուների թիվը:<br>Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման ծրագիրն իրականացվում է ՀՀ մարզերի միջոցով, մարզպետարանը գումարն ընթացիկ դրամաշնորհի տեսքով բաշխում է իր ենթակայության տարրական դասարաններ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև, որոնք էլ իրականացնում են ծրագիրը՝ հիմք ընդունելով պետական դրամաշնորհներին վերաբերող օրենքներն ու այլ իրավական ակտերը, այդ թվում՝ գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2018 թվականին ՀՀ Շիրակի մարզում կիրականացվի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը, որի արդյունքում շահառուների թիվը կկազմի շուրջ 12600: |
| 141. | **Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոդելի մշակում և ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատաշուկայում ՄԿՈւ ոլորտի մրցունակ կադրերի բացակայությամբ, ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով, «Սոցիալական գործընկերության» հայեցակարգով, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական ներկայիս մակարդակով:<br>Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոդել և ընտրված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով ներդնել երկակի (դուալ) ուսուցման համակարգ, երբ ուսումնական գործընթացին զուգահեռ կիրականացվի գործնականի վրա հիմնված ուսուցում: Գործատուի մոտ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ զբաղունակությանը, ՄԿՈՒ ոլորտի գրավչության բարձրացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը:<br>Նման գործընթացը երաշխավորում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստումը բացառապես աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը կարևոր է նրանց մասնագիտական գործունեության, առաջխաղացման, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ակնկալվող արդյունքը՝ լուծել ՀՀ կրթության ոլորտում առկա մի շարք խնդիրներ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում, նպաստել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը, սովորողների մոտ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գործատուների ներգրավմանը և սոցիալական գործընկերության ընդլայնմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը և որակավորումների փոխճանաչմանը: |

| | |
|---|---|
| 142. | **Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան առնվազն 7 որակավորումների ոլորտային շրջանակների մշակում**<br><br>**1. Որակավորումների ոլորտային շրջանակների մշակման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որակավորումների ոլորտային շրջանակի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ բուհական համակարգում և աշխատաշուկայում Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) գործնական կիրառության ապահովելիությամբ: Որակավորումների ոլորտային շրջանակները (ՈՈՇ) տարբեր մասնագիտական ոլորտների համար նախատեսված յուրօրինակ անցումային կապակցող գործիք կհանդիսանան ՈԱՇ-ի և մասնագիտական բնագավառի ու կրթական ծրագրի միջև: Առայսօր բուհերը խիստ սահմանափակ հնարավորություններ են ունեցել մշակելու ժամանակին համահունչ նոր և ճկուն կրթական ծրագրեր, որոնք կբավարարեին առկա արագ փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին: Հետևաբար, պարզ և հստակ ծրագրային ուղենիշներ ապահովելու համար պահանջվում են ճկուն, մասնագիտական ոլորտներին հատուկ ՈՈՇ-ներ, որոնք ոչ թե կսահմանեն, թե ինչ պետք է ուսուցանվի որակավորումը ստանալու համար, այլ՝ թե ինչ պետք է գիտենա և կարողանա անել որակավորում ստացողը ուսումնառության ավարտին: Ուստի, ՈՈՇ-ը կսահմանի ՈԱՇ-ին համապատասխան կոնկրետ մասնագիտական ոլորտի համար անհրաժեշտ գիտելիքի, կարողությունների և հմտությունների նվազագույն լրակազմը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բարձրագույն կրթության համակարգը կունենա ուսումնական վերջնարդյունքներով կրթական ծրագրերի վերանայման համար անհրաժեշտ մի գործիք, որը կխթանի բուհերի կողմից տրամադրվող կրթության որակի բարձրացմանը և բուհերի արդյունավետությանը, ինչպես նաև կնպաստի շրջանավարտների մրցունակությանը տեղական և միջազգային աշխատաշուկաներում: |
| 143. | **Բնագիտական և ինժեներական ոլորտում բուհ-գիտահետազոտական ինստիտուտ-գործատու գիտակրթական կլաստերների մոդելների տարբերակների մշակում**<br><br>**1. Գիտակրթական կլաստերների ձևավորման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գիտակրթական կլաստերների ձևավորման նպատակն է խթանել տարբեր բուհերի և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների, գիտական ու գիտահետազոտական հիմնարկների և գործարար ոլորտի առևտրային կազմակերպությունների ու այլ շահառուների համագործակցությունը՝ միտված իր բոլոր անդամների ռեսուրսների համատեղ և արդյունավետ օգտագործմանը, հետազոտական և ինովացիոն ծրագրերի համատեղ իրականացմանը, բարձրագույն կրթության որակի բարձրացմանն ու մասնագետների կողմնորոշմանը դեպի գործարար ոլորտի և արտադրության արդի հիմնախնդիրներ, կիրառական նշանակությամբ գիտական և գիտատեխնիկական խնդիրների համատեղ առաջադրմանն ու լուծմանը և ստացված արդյունքների ներդրմանը:<br><br>**2. Գիտակրթական կլաստերների մոդելների կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որպես վերջնաարդյունք ակնկալվում է ձևավորվող մոդելների միջոցով խթանել որակյալ և պահանջված մասնագետների պատրաստումը, գիտություն-արտադրություն կապերի զարգացումը, տնտեսության մեջ գիտելիքահենն արտադրության հիմնումը և գիտական արտադրանքի առևտրայնացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, տնտեսության աշխուժացումը և բնակչության կենսամակարդակի բարձրացումը: |
| | **ՀՀ մշակույթի նախարարություն** |
| 144. | **Մշակութային ժառանգության ոլորտում մշակութային նոր ծառայությունների ներդրում և կիրառում՝ տնտեսական բաղադրիչի մեծացմամբ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է ստեղծել նպաստավոր պայմաններ գրականության տարածման, դասական և ժամանակակից ստեղծագործությունների հանրահռչակման, հասարակության մեջ |

| | |
|---|---|
| | ընթերցանության արմատավորման համար: Այսօր այս բնագավառում մշակութային քաղաքականության անկյունաքարը պետք է լինի Պետական պատվերով, աջակցությամբ և մասնավոր հրատարակիչների կողմից արտադրված գրականության տարածման խթանումը, դրան հաղորդակցվելու և ձեռք բերելու մատչելիության ապահովումը: Այս գործընթացի կազմակերպման համար լավագույն քայլը գրավաճառ ցանցի ընդլայնումն է, ինչպես Երևանի տարբեր համայնքներում, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ապահովվում է գրող-ընթերցող կապը, ստեղծվում է նպաստավոր միջավայր ընտանեկան գրադարանների հարստացման ավանդույթը վերականգնելու համար, խթանվում է դասական և ժամանակակից հայկական և արտասահմանյան գրականության հանրահռչակումը, երիտասարդության շրջանում գրական ճաշակի ձևավորումը: Գրախանութների ցանցի ընդլայնման շնորհիվ կիեշտանա պետական պատվերով և աջակցությամբ տպագրվող գրականության, ինչպես նաև՝ ժամանակակից հրատարակիչների արտադրանքի տարածումը, մյուս կողմից էլ հանրապետության տարբեր մարզերի բնակիչների համար կապահովվի գրականության ձեռքբերման մատչելիությունը: |
| 145. | **Մշակութային ժառանգության ոլորտում տեղեկատվական հասանելիության և մատչելիության ապահովում հուշարձանային համալիրներում/տարածքներում տեղեկատվական վահանակ-ցուցանակների (QR) տեղադրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է ապահովել մշակութային ժառանգության վերաբերյալ առկա տեղեկատվության մատչելիությունը, խթանել մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման բնագավառի զարգացումը, ստեղծել նպաստավոր պայմաններ երիտասարդության մեջ մշակութային ժառանգության վերաբերյալ գիտելիքների ամրագրման, ճանաչողության մեծացման համար: Նպատակն իրականացնելու լավագույն և արդիական եղանակը մշակութային ժառանգության թվայնացման գործընթացի շարունակական իրականացումն է: Հուշարձանային համալիրներում և հուշարձանների մոտ տեղեկատվական ցուցանակների անբավարարությունը. Նախկինում հուշարձանների տարածքներում տեղադրված են եղել երկու լեզվով և միայն հուշարձանի անվանումը ներառող վահանակներ: Ներկայում զբոսաշրջության զարգացման արդի պահանջներին համահունչ անհրաժեշտ է հուշարձանները ներկայացնող վահանակները պատրաստել եռալեզու՝ QR կոդերով.<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում կապահովվի մշակութային ժառանգության վերաբերյալ մեկ միասնական տեղեկատվական դաշտ, հնարավոր կլինի մեկ ընդհանուր շտեմարանում հաղորդակցվել մշակութային արժեքների վերաբերյալ թվային տվյալներին, կստեղծվեն նպաստավոր պայմաններ հետազոտողների համար հետագա ուսումնասիրություններն առավել դյուրին կազմակերպելու համար: Խնդրի իրականացման ընթացքում նախատեսվում է միասնական նմուշի (եռալեզու) տեղեկատվական վահանակ-ցուցանակների մշակում, ինչպես նաև ֆինանսավորման պարագայում՝ տեղադրում QR կոդերով:<br>Արդյունքում կբարձրանա հուշարձանների հանրահռչակման, հասարակության և զբոսաշրջիկների տեղեկացվածության մակարդակը: |
| 146. | **Հայաստանում կինոարտադրության զարգացմանն ուղղված կառավարման ժամանակակից մոդելի ներդրում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը նպաստավոր պայմանների ստեղծումն է Հայաստանի Հանրապետությունում կինոարտադրության, մասնավորապես ազգային կինոյի զարգացման համար՝ կինոարտադրությունը խրախուսող տարատեսակ մեխանիզմների ներդրմամբ: Դրանցից կարևորն է |

| | |
|---|---|
| | համարվում կինոարտադրության կառավարման ժամանակակից մոդելի ներդրումը, որը հնարավորություն կտա իրականացնելու կինեմատոգրաֆայի ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր: Համընդհանուր բարեփոխումները, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և ոլորտի զարգացման առկա մարտահրավերները լրացուցիչ անհրաժեշտություն են առաջացրել վերանայելու մշակութային պետական քաղաքականության մոտեցումները և իրավահարաբերությունների կարգավորումը: Նախատեսվում է ստեղծել «Ֆիլմ հանձնակատար» մոդելը, որը արդյունավետ գործում է աշխարհի ավելի քան 140 երկրում: Այն ապահովելու է կինեմատոգրաֆիայի ոլորտի արդյունավետ համակարգի կայացումը՝ ներկայացնելով կինեմատոգրաֆիայի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների շահերը՝ այդպիսով հանդիսանալով միջնորդ վերջիններիս և կինեմատոգրաֆիայի ոլորտը կանոնակարգող մարմինների միջև:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում կզարգանա ազգային կինոարտադրությունը, կառավարման ժամանակակից մոդելի ներդրմամբ կինեմատոգրաֆիստների համար կգործի ծառայությունների մատուցման մեկ պատուհան սկզբունքը, կխթանվեն նոր ենթակառուցվածքների՝ մասնավորապես կրթական հաստատությունների, ֆիլմարտադրության ստուդիաների, ֆիլմարտադրության սպասարկող կառույցների ստեղծման գործընթացները: |
| 147. | **Ժամանակակից հայ կերպարվեստի հանրահռչակման և զարգացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2018 թվականին իրականացվող միջոցառումներն ու գործընթացները նպատակաուղղված կլինեն Հայաստանում հայ ժամանակակից կերպարվեստի զարգացմանն (նպատակային միջոցառումների կազմակերպման միջոցով) ու միջազգային հարթակներում (բիենալեներ, տրիենալեներ պլեներներ) վերջինիս նորովի ներկայացմանն ու հանրահռչակմանը, հայ ժամանակակից անվանի արվեստագետների ստեղծագործական գործունեության արժևորմանն ու երիտասարդ ստեղծագործողների ներուժի զարգացմանը (անհատական ցուցահանդես, սեմինարներ, պատկերագրքերի հրատարակում), նոր ցուցադրությունների, մշակութային նոր արտադրանքի ստեղծման միջոցով հայ կերպարվեստի հանդեպ հետաքրքրության առաջացմանը, հանրության գեղագիտական ճաշակի բարձրացմանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ապահովել հայ կերպարվեստի հանրահռչակումը.<br>- արտերկրում՝ միջազգային հեղինակավոր հարթակներում հայ Ժամանակակից արվեստի ներկայացմամբ,<br>- Հայաստանում՝ նպատակային միջոցառումների կազմակերպմամբ:<br>Իրականացվող միջոցառումները կնպաստեն ստեղծագործական ներուժի խթանմանը, ցուցադրական տարածքների ընդլայնմանն ու արդիականացմանը, թանգարանային ֆոնդերի համալրմանը՝ հայ ժամանակակից (այդ թվում երիտասարդ) նկարիչների ստեղծագործություններով, նոր ցուցադրումների, մշակութային նոր արտադրանքի ստեղծմանը: |
| 148. | **Հայ պարարվեստի զարգացում և հանրահռչակում**<br>**Ժամանակակից հայ պարարվեստի հանրահռչակման և զարգազման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2018 թվականին իրականացվող միջոցառումներն ու գործընթացները նպատակաուղղված կլինեն Հայաստանում նպատակային միջոցառումների կազմակերպման միջոցով հայ ազգային պարի վերարժևորմանն ու նորովի ներկայացմանը, տարազների պատրաստմանը, հայ ժամանակակից պարարվեստի զարգացմանն ու միջազգային հարթակներում ներկայացմանն ու հանրահռչակմանը, երիտասարդ պարուսույցների մասնագիտական ունակությունների զարգացմանը, նոր պարային ծրագրերի ստեղծման միջոցով հայ պարարվեստի հանդեպ հանրության հետաքրքրության առաջացմանը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի կատարման արդյունքում նախատեսվում է իրականացնել պարային նոր բեմադրություններ, նպատակային միջոցառումներ, որոնց արդյունքում ակնկալվում է հայկական պարարվեստի հանրահռչակումը, պարային համույթների խաղացանկի համալրումը, հայկական պարարվեստի՝ միջազգային ասպարեզում մրցունակության ապահովումը, հանդիսատեսի քանակական և որակական ցուցանիշների բարձրացումը: |
| 149. | **Մարզերում մշակութային ծառայությունների համաչափության, մատչելիության և հասանելիության ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է ՀՀ մարզերում և համայնքներում մշակույթի զարգացման բարենպաստ միջավայրի, պետության մշակութային կյանքին քաղաքացու մասնակցության իրավունքի, բնակչության բոլոր շերտերի համար մշակույթի և ժամանակակից արվեստի, մշակութային արտադրանքի և ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը, մշակութային ապակենտրոնացումն ու մարզերում մշակութային կյանքի աշխուժացումը, մշակութային նոր ենթակառուցվածքների ստեղծման և առկա ենթակառուցվածքների արդիականացման գործընթացների խթանումը, ազգաբնակչության մշակութային-ժամանցային սպասարկման որակի բարելավումը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում կմեծանա մշակութային արտադրանքի և ծառայությունների հասանելիությունը, կապահովվի մշակույթի համաչափ զարգացումը, մշակութային ծառայությունների արդյունավետությունն ու բազմազանությունը, կստեղծվի անհատի և հասարակության աճող պահանջներին համապատասխանող մշակութային միջավայր, մարզերում կխթանվեն մշակութային նոր ենթակառուցվածքների ստեղծման և առկա ենթակառուցվածքների արդիականացման գործընթացները, կհանրահռչակվի մշակույթի ոլորտի աշխատողների, արվեստագետների, ստեղծագործական միավորումների գործունեությունը: |
| 150. | **Օտարերկրյա պետություններում հայկական մշակույթի հանրահռչակում և Հայաստանում համաշխարհային մշակույթի ներկայացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է միջազգային համագործակցության ոլորտում պետական քաղաքականության ուղղությունների զարգացումը՝ հայ մշակույթի ներկայացումը արտերկրում, քաղաքակրթական ցուցահանդեսների և այլ լայնամասշտաբ միջոցառումների միջոցով տեղորոշումն ու հանրահռչակումը, արտերկրի մշակույթների ներկայացումը Հայաստանում՝ փոխադարձության սկզբունքով, Հայաստանի ինտեգրումը միջազգային մշակութային կազմակերպություններին, ինչպես նաև լեզվամշակութային ինքնության կորստի կանխումը:<br>Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է նաև մշակութային երկխոսության, հանդուրժողականության զարգացման, երկկողմ և բազմակողմ հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, աշխարհում հայ մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործմանը, համաշխարհային մշակույթը Հայաստանի հանրության լայն շերտերի համար մատչելի դարձնելու գործընթացների ապահովմանը, համատեղ և համաֆինանսավորվող ծրագրերի ավելացմանը, մշակութային ծառայությունների քանակի և որակի բարձրացմանը, դրանց հասանելիության ապահովմանը, ինչպես նաև մշակույթի ոլորտում ներդրումների ներգրավմանը:<br>Միջմշակութային բազմազանության ապահովման կարևորագույն գործոններից է նաև այլալեզու սպառողի պահանջներին համապատասխան մշակութային գործունեության իրականացումը, որի համատեքստում Հայաստանում ներկայացվում է տարբեր պետությունների և ժողովրդների մշակույթը թատերական ներկայացումների, ցուցահանդեսների, երաժշտական կատարումների միջոցով: Միաժամանակ, դրամաշնորհային ծրագրի միջոցով աջակցություն կցուցաբերվի արտասահմանյան այն հրատարակչություններին, որոնք մասնակի աջակցությամբ պատրաստ են |

| | |
|---|---|
| | իրենց երկրում իրենց լեզվով հրատարակել հայ դասական կամ ժամանակակից գրականություն: Միջոցառումներին զուգահեռ կազմակերպվում են նաև մշակութային հեղինակավոր գործիչների վարպետության դասընթացներ, որոնք հնարավորություն են ընձեռում հիմնականում երիտասարդ մասնագետներին հղկելու իրենց մասնագիտական կարողությունները:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ապահովվում է միջմշակութային երկխոսությունը՝ ապահովվում է Հայաստանի մշակութային գործիչների և արվեստագետների մասնակցությունը տարբեր երկրներում կազմակերպված միջազգային միջոցառումներին և հակառակը, նոր հիմքեր և հնարավորություններ են ստեղծվում ստեղծագործողների միջև ուղիղ կապերի հաստատման համար, ինչպես նաև նպաստավոր պայմաններ՝ համաշխարհային նշանակության հայկական մշակութային արժեքների և միջազգային ճանաչում ունեցող հայ մտավորականների ստեղծագործական ներուժի հանրահռչակման համար:<br>Հայաստանի հանրությունը հնարավորություն կունենա ծանոթանալու տարբեր երկրների մշակույթներին ու պատմությանը, ավանդույթներին, ժամանակակից արվեստի տարբեր դրսևորումներին, միևնույն ժամանակ՝ փոխադարձաբար ներկայացնելու սեփական հարուստ նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Բարձրացվում է հայաստանյան ծրագրերում օտարազգի մասնակիցների ներգրավվածության մակարդակը, և որպես արդյունք, ընդլայնվում է մշակութային բազմազանության ներթափանցումը: Երիտասարդ մասնագետները ստանում են անհրաժեշտ գիտելիքներ, որոնք հույժ կարևոր են հետագա գործունեության և միջազգային հարթակ դուրս գալու համար: Իրականացվելիք միջոցառումներով կխթանվի նաև ավանդական մշակույթների կենսունակությունը և ընկալունակությունը, որի արդյունքում կընդլայնվեն մշակութային քաղաքականության գործառույթների շրջանակները՝ ընդգրկելով ազգային կյանքի տարբեր ոլորտներ (սոցիալական, առողջապահական, կրթական և այլն): |
| **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | |
| 151. | **Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը՝ որպես սոցիալական պաշտպանության նախաձեռնողական քաղաքականության նախադրյալների ձևավորման հիմքի վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ աշխատանք և սոցիալական քաղաքականության ոլորտի հիմնական ուղղություններից է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ անցումը դեպի սոցիալական պաշտպանության նախաձեռնողական քաղաքականություն: Կարևորվում է նաև սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը և զարգացումը, համայնքային ներուժի ներգրավմամբ՝ տարածքային համաչափ զարգացման նպատակով՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակումն ու սոցիալական ծառայությունների տրամադրման այլընտրանքային մեխանիզմների ներդրումը:<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սոցիալական աշխատող կարող է լինել բարձրագույն կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը:<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված է, որ տարածքային մարմինը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում և կարգով՝ մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին: Նույն օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է հետևյալ արդյունքը՝<br>1) սոցիալական աջակցության բնագավառում իրականացվող աշխատանքները դնել պրոֆեսիոնալ հիմքերի վրա: Սոցիալական աջակցության համակարգում նախատեսվում է, որ աշխատելու են «սոցիալական աշխատող» որակավորում ունեցող անձինք: Կատարելագործվում է սոցիալական աշխատողների մասնագիտական գիտելիքների որակավորման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ սոցիալական աշխատողների որակավորման կրեդիտային սանդղակի նախագծի մշակում, համայնքի սոցիալական աշխատողների վերապատրաստման կազմակերպում և համապատասխան վկայականի տրամադրում, որը հնարավորություն կտա նաև բարձրացնել տրամադրվող սոցիալական ծառայությունների որակը: Գնահատելով սոցիալական աշխատողների վերապատրաստումների կարիքները, հնարավորություն է ստեղծվում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել առավել որակյալ, հասցեական, թիրախային սոցիալական ծառայությունների՝ փաթեթով տրամադրման համար, որը նաև կբերի սոցիալական ծառայությունների տրամադրման ծախսարդյունավետության բարձրացմանը: Միաժամանակ սոցիալական դեպքի վարման ընթացքում համայնքում գործող սոցիալական աշխատողի առկայությունը կթեթևացնի ծախսերը:<br>2) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով որպես սոցիալական աջակցության սկզբունք սահմանվել է նաև համագործակցությունը, մասնավորապես այն հիմնարար նշանակություն ունի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի գործարկման համար: Ինտեգրված սոցիալական ծառայությունները ներառում են նաև տեղական սոցիալական ծրագրեր կազմելը և իրականացնելը:<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է պետություն-համայնք-մասնավոր հատված համա- գործակցությամբ ներդրումների իրականացում, որոնք ուղղված կլինեն համայնքային ծառայու- թյունների մատուցմանը: Տվյալ համայնքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային մարմնի սոցիալական աշխատողի և համայնքի սոցիալական աշխատողի համագործակցությամբ տեղական սոցիալական ծրագրերի մշակումը, հիմք ընդունելով համայնքի գնահատված սոցիալական կարիքները, կբերի ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում սոցիալական ուղղվածության նպատակային ենթածրագրերի թվաքանակի ավելացման, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման աջակցությանը:<br>Միաժամանակ, սոցիալական պաշտպանության ոլորտում պարենի (ֆուդբանկի) ձևավորումը՝ որպես այլընտրանքային մեխանիզմի տեսակ հնարավորություն կտա բանավոր, գրավոր դիմումներից, ահազանգերից, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող հանգամանքների մասին վկայող տվյալներ ստանալու դեպքում, այդ իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին) արագ և արդյունավետ օգնություն կազմակերպել՝ փորձնական ծրագրի շրջանակներում, որը կբերի նաև սոցիալական դեպքի վարման գործընթացիկազմակերպմանարդյունավետության բարձրացմանը: |
| 152. | **Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Խնդիրը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2-րդ գլխի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30-Ն արձանագրային որոշմամբ նախատեսված միջոցառումներից և պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով՝ երեխաների խնամքի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմամբ և այդ հաստատություններում երեխաների թվի նվազեցմամբ, ինչպես նաև խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների ցանցի զարգացման անհրաժեշտությամբ: |

Գործընթացի նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի, երեխայի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանության երաշխիքների, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելման ապահովումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող, մասնավորապես, 0-6 տարեկան երեխաների խնդիրների հայտնաբերումը, կանխարգելումը և վաղ միջամտությունն է:
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության 11 հաստատություն, որից 6-ը՝ երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (մանկատներ) են, իսկ 5-ը՝ երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններ: Վերջիններիս գործունեության նպատակը ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումն էր:
Վերջին տարիներին մոնիթորինգային դիտարկումներով պարզվում է, որ այդ հաստատություն-ներում խնամվող երեխաների մի մասը, պայմանավորված հաստատության գտնվելու վայրով, հնարավորություն ունեն գիշերելու տանը (ընտանիքում)՝ շարունակելով տվյալ հաստատությունում ստանալ աջակցության ծառայություններ:
Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հանրապետությունում դեռևս բավարար չեն երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալական աջակցության ծառայություններ տրամադրող կառույցները, նպատակահարմար է գործող հաստատությունները վերակազմակերպել այլընտրանքային ծառայություններ տրամադրող կառույցների:
Նոր ստեղծվող կառույցները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին, ըստ գնահատված կարիքների, կտրամադրեն մասնագիտական ծառայություններ, այդ թվում՝ աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Խնդրի լուծման դեպքում ականկալվում է ապահովել երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը, շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների թվի նվազեցումը, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:
Կվերակազմակերպվեն և կբեռնաթափվեն նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն, Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն). դրանցում խնամվող երեխաները կվերադառնան կենսաբանական ընտանիքներ, կստեղծվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող այլընտրանքային կառույցներ: Ինչպես նաև շուրջօրյա խնամքի կարիք ունեցող երեխաների հետագա խնամքը կկազմակերպվի փոխարինող ընտանիքներում, (խնամակալի, հոգաբարձուի, խնամատար ծնողի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ շուրջօրյա խնամք տրամադրող փոքր տներում: Կավելացվի խնամատար ընտանիքների թիվը, ինչպես նաև միջոցներ կտրամադրվեն հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերին:

153. **Բժշկասոցիալական փորձաքննության համակարգի արմատական փոփոխություններ և հաշմանդամության գնահատման նոր մոդելի ներդրման շարունակականությունն ապահովելուն ուղղված ընթացակարգերի ապահովման վերաբերյալ**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփոխումները

հիմնված են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. Կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) պահանջների վրա, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականին:

Բարեփոխումներն ուղղված են բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արմատական փոփոխություններին, մասնավորապես հաշմանդամության գնահատման մոդելի վերանայմանը: Նոր մոդելի մշակման պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 9-ի N 1 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգում: ՀՀ էկոնոմիկայի 2014 թ. դեկտեմբերի 19-ի N 1139-Ն հրամանով ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության դասակարգիչը հաստատվել է որպես ազգային ստանդարտ:

Նոր մոդելը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ և բազմակողմանի գնահատել անձի կարողությունները և սահմանել հաշմանդամությունը հաշվի առնելով, ոչ միայն նրա առողջական խնդիրը, ախտորոշումը, կարողությունը, այլև այն միջավայրային գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են նրա գործունեության վրա: Մոդելի ներդրման հիմնական նպատակն է՝ անձի բազմակողմանի գնահատված կարիքներին համարժեք վերականգնողական ծառայությունների մատուցումը:

Հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման ուղղությամբ 2015-2016թթ. ընթացքում մշակվել են հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչներ՝ հիմնված ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների վրա: Համապատասխան իրավական հենքի ստեղծումից, հաշմանդամության սահմանման համար որոշում կայացնելու գործընթացի ինքնաշխատ էլեկտրոնային համակարգի ստեղծումից և բժիշկ-փորձագետների ռեեստրի ձևավորումից հետո հնարավոր կլինի նոր մոդելը փորձնական կիրառել առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց նկատմամբ: Այս գործընթացի առանցքում լինելու է անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա վերականգնողական անհատական ծրագրերը: Նոր մոդելի շրջանակներում հաշմանդամ չճանաչված անձանց կտրամադրվի անհատական վերականգնողական ծրագիր՝ համապատասխան ծառայություն ստանալու համար: Առաջին փուլի ավարտից հետո կիրականացվի վերլուծություն՝ ֆինանսական գնահատական տալու նպատակով: Փորձնական կիրառման ամբողջական արդյունքների վերլուծության հիման վրա կմշակվեն առաջարկություններ մոդելի ամբողջական ներդրման համար:

Նոր մոդելի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ունենալ հստակ և հավաստի տեղեկատվություն անձի առողջական վիճակի (ախտորոշման), իրականացված ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումների արդյունքների վերաբերյալ: Ըստ այդմ, նախատեսվում է խնդրո առարկա տեղեկատվությունը ստանալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 43 արձանագրային որոշման N 1 հավելվածով նախատեսված առողջապահության ոլորտի միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգից՝ ինքնաշխատ եղանակով:

Նոր մոդելի փորձնական կիրառումը հաջողությամբ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է նաև գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստումների կազմակերպում:

Բժշկասոցիալական փորձաքննության համակարգի արմատական փոփոխություններ և հաշմանդամության գնահատման նոր մոդելի ներդրմանն ուղված քայլերի համար ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտություն չկա:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

1) բժշկասոցիալական փորձաքննութան նոր համակարգի ձևավորում,

2) հաշմանդամության սահմանման գործընթացում նոր մոդելի փորձնական կիրառման հիման վրա վերլուծությունների իրականացում և մոդելի ներդրման համար առաջարկությունների ներկայացում,

3) նոր մոդելով գնահատման արդյունքում վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա լիարժեք վերականգնողական ծրագրերի իրագործման հենքի ստեղծում:

| | |
|---|---|
| 154. | **Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 30 տոկոսն ուղղվում է սոցիալական պաշտպանության ոլորտին, ուստի խիստ կարևորվում է մշտադիտարկման և գնահատման ամբողջական համակարգի առկայությունը: Գերակա խնդիրը բխում է նաև ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N646-Ա որոշման հավելվածի 4-րդ բաժնի 4.2 գլխի 8-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի դրույթներից:<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (ծառայությունների) մշտադիտարկման և գնահատման համակարգի հիմնական նպատակներն են՝<br>•սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունները սահմանելու նպատակով առկա խնդիրների բացահայտումը,<br>•իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը,<br>•շահառուների և այլ շահագրգիռ կողմերի ծրագրերից բավարարվածության աստիճանի գնահատումը,<br>•ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Դեռևս 2013 թվականից սկսվել է մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացը, որի շրջանակում մշակվել է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (ծառայությունների) ՄԳ-ի համակարգի ներդրման հայեցակարգը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է ծրագրերի ՄԳ-ի կարգը և մեթոդաբանությունը: Մշտադիտարկման և գնահատման գործընթացում մեթոդաբանության կիրառման և միջազգային փորձագետների հետ համագործակցության արդյունքում ՄԳ-ի կարգը և մեթոդաբանությունը լրամշակվել են և համապատասխան իրավական ակտով սահմանվել են ՄԳ-ի իրականացման հետևյալ հիմնական փուլերը՝<br>• ծրագրերի (ծառայությունների) մասին տեղեկանքների, ՄԳ-ի անձնագրերի և ցուցանիշների (քանակական և որակական) մշակում,<br>• համակարգում առկա տեղեկատվական շտեմարաններից քանակական ցուցանիշների առցանց ստացում, որակական ցուցանիշների հավաքագրման նպատակով ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացում,<br>• ՄԳ-ի ցուցանիշների վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծություն և ծրագրերի գնահատում<br>• ամփոփ հաշվետվության կազմում և գնահատման արդյունքներով ի հայտ եկած խնդիրների և թերությունների լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում,<br>• ծրագրերի ՄԳ-ի արդյունքների հրապարակում:<br><br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի համապատասխան բնագավառներում ՄԳ-ի արդյունքներով ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակել ծրագրերի կիրարկումն ապահովող իրավական ակտերը, բարձրացնել այդ ծրագրերի արդյունավետությունն ու հասցեականությունը, ապահովել շահառուների գնահատված կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցումը, ինչպես նաև կանխել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի ներդրմանն ուղղված քայլերի համար ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտություն չկա: |

155. **Դրամական վճարների նշանակման գործընթացների վերակազմակերպման վերաբերյալ**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ ՀՀ կառավարությունը կարևորելով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների բնագավառում նպատակային, արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգի առկայությունը՝ հիմնված «դրամի դիմաց առավելագույն արժեք» սկզբունքի վրա, նախատեսում է մինչև 2018 թվականի ավարտը վերակազմակերպել դրամական վճարների (բացառությամբ՝ ընտանեկան և սոցիալական նպաստները) նշանակման գործընթացները և քաղաքացիներին սպասարկելու գործառույթը տարանջատել որոշում ընդունելու գործառույթից (վարչարարությունից)՝ նպատակ ունենալով նվազեցնելու որոշումներ ընդունող անձնակազմի և շահառուների միջև շփումները՝ նպատակ ունենալով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների (բացառությամբ՝ ընտանեկան և սոցիալական նպաստները) բնագավառում շարունակաբար նվազեցնել առկա ռիսկերը:

Այդ փոփոխություններին համապատասխան՝ անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման մեջ:

**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է, որ Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում տարածքային բաժինների (բացառությամբ՝ սոցիալական աջակցության տարածքային մարմինների) փոխարեն կստեղծվեն սպասարկման գրասենյակներ և նշանակման կենտրոններ: Կմշակվեն (ըստ անհրաժեշտության՝ կլրամշակվեն) և նշված վայրերում կփորձարկվեն կենսաթոշակ, նպաստ և դրամական այլ վճարներ (բացառությամբ՝ ընտանեկան և սոցիալական նպաստները) նշանակելու և վճարելու նոր ընթացակարգեր (փորձնական ծրագիր):

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն**

156. **Քրեական պատիժների համակարգի արդյունավետության և պատժի նպատակայնության ապահովում**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Զարգացած և զարգացող մի շարք երկրներում (որպես այլընտրանք) քրեական վերականգնողական արդարադատությունը ներկայումս ապահովում է առավել ճկուն հակազդում հանցագործությանը: Վերականգնողական արդարադատության սկզբունքներից բխում է, որ արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը: Այս առումով հարկ է նշել, որ քրեակատարողական ոլորտում դեռևս արդիական են մնում կալանավորված և դատապարտված անձանց վերասոցիալականացման և հասարակությունում վերաինտեգրման խնդիրները:

Հետևաբար, քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև քրեական պատիժների նպատակային իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար որպես գերակա ուղղություններ անհրաժեշտ է առանձնացնել դատապարտյալների կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովումը, կալանավորված անձանց և դատապարտյալների համար մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը, անազատության մեջ գտնվող անձանց բժշկական օգնության և սպասարկման պայմանների բարելավումը, որոնք դրականորեն կանդրադառնան հանցանք կատարած անձանց սոցիալական վերաինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացման վրա:

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Անազատության մեջ գտնվող անձանց կրթական և զբաղվածության ապահովման պայմանների ստեղծումը կնպաստի հանցանք կատարած անձանց վերասոցիալականացմանը և կխթանի հասարակության մեջ նրանց վերաինտեգրմանը՝ այդպիսով հանգեցնելով կրկնահանցագործությունների նվազեցմանը: |
| 157. | **Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացում (շարունակական)**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական ծառայությունների տրամադրման ընդհանուր կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը, իսկ քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների տրամադրումն իրականացնում են հիմնարկների կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող բժշկական սպասարկման կամ բժշկական մասնագիտացված բաժինները կամ բաժանմունքները կամ խմբերը: Քրեակատարողական համակարգում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ են մատուցվում 12 քրեակատարողական հիմնարկում, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում: Քրեակատարողական հիմնարկներում առողջության առաջնային պահպանման գործող բաժանմունքները կամ միավորները, կախված քրեակատարողական հիմնարկների չափից և հիմնարկում պահվող անձանց թվից, հիմնականում ունեն մեկ բժիշկ (որպես կանոն՝ ընդհանուր պրակտիկայի բժիշկ), բուժքույրեր, բաժանմունքների պետեր: Որոշ քրեակատարողական հիմնարկներում գործում են նաև ստացիոնար (հիվանդանոցային) բաժանմունքներ: Քրեակատարողական հիմնարկների առողջության առաջնային պահպանման բաժիններն ունեն նյութատեխնիկական և կադրային խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է համապատասխան բժշկական օգնության տրամադրման համար հատկացված սենյակների վերանորոգում և բժշկական սարքավորումների արդիականացում: Ընդհանուր առմամբ, քրեակատարողական հիմնարկների առողջության առաջնային պահպանման միավորներում առկա սարքավորումները գրեթե ամբողջապես ենթակա են փոխարինման, քանի որ մաշվածության հետևանքով վերջիններիս միջոցով որակյալ բուժօգնություն տրամադրել հնարավոր չէ:<br>Քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունների բարեփոխման նպատակով անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար կազմակերպել եվրոպական չափանիշներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ առողջապահության, մարդու իրավունքների, բժշկական էթիկայի, սանիտարահամաճարակային հսկողություն թեմաներով, ինչպես նաև մասնագիտացված բժշկագիտական դասընթացներ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացմամբ ազատությունից զրկված անձինք կստանան միջազգային չափանիշներին համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում՝ այդպիսով ապահովելով Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքների երաշխավորմանը:<br>Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվում է «Ամրապնդել առողջապահությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվելու է քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի վերապատրաստումը: |

158. **Էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդնում և շարունակական զարգացում, էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների նախատեսում**

**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման և շարունակական զարգացման, էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմներ նախատեսելու նպատակն է պետության գործունեության թափանցիկության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, պետական մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների հասանելիության, որակի և արդյունավետության բարձրացումը: Էլեկտրոնային կառավարման ոլորտում ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ կբարձրանա քաղաքացիներին և բիզնես ոլորտին պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը, մատչելիությունն ու արդյունավետությունը: Պետական ծառայությունների մատուցման ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում քաղաքացիների համար հնարավորություն կստեղծվի «մեկ պատուհանի» սկզբունքով ստանալ ծառայություններ՝ բացառելով մի քանի մարմիններ այցելելու անհրաժեշտությունը:

www.e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի օգնությամբ քաղաքացիները կարող են առցանց եղանակով պետական մարմիններին ուղղել իրենց հարցումը, դիմումը կամ բողոքը և սահմանված ժամկետում ստանալ դրա պատասխանը ևս առցանց եղանակով:

Քրեակատարողական ծառայության e-Penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շնորհիվ կապահովվի ՔԿՀ-ներում պահվող անձանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվության մշակումը, կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ իրականացվող գործառույթների անցումը ամբողջությամբ էլեկտրոնային եղանակի, կներդրվի քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների գնահատման արդյունավետ գործիքակազմ: ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության e-probation էլեկտրոնային համակարգի օգնությամբ ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության աշխատակիցները կարող են միասնական հարթակում մշակել և վարել պրոբացիայի շահառուների տվյալների շտեմարանը, ներդնել վիճակագրական գործիքներ և ներկայացնել առցանց հաշվետվություններ: e-Penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումն ու գործարկումը նախատեսվում է իրականացնել 2018 թվականի պետական բյուջեում «ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկների պահպանում» ծրագրի շրջանակներում և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցներով:

Իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացն ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով իրականացման մեխանիզմները հնարավորություն կընձեռեն քաղաքացիներին և բիզնես ոլորտի ներկայացուցիչների առցանց եղանակով՝ խնայելով սեփական միջոցներն ու ժամանակը իրականացնել բոլոր անհրաժեշտ գրանցումները:

«Թեժ գիծ» ծառայության էլեկտրոնային հարթակի ներդնման նպատակն է քաղաքացիների, կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց կողմից բարձրացված խնդիրներին, բողոքներին և հարցումներին էլեկտրոնային եղանակով ավելի օպերատիվ արձագանք ապահովելը:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքի արդիականացման նպատակն է կատարելագործել առկա www.e-draft.am կայքը՝ հաշվի առնելով շահագրգիռ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքները և ներդնել միասնական հարթակ, որտեղ հրապարակվում են պետական մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը՝ ապահովելով հասարակության մասնակցային գործընթացը պետության իրավաստեղծ գործունեությանը:

Հաշվի առնելով էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացումը ՀՀ-ում՝ անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել www.arlis.am իրավական տեղեկատվական կայքը, ինչի արդյունքում կստեղծվի նոր գործիքակազմով և նորարարական լուծումներով համալրված կայք:

| | |
|---|---|
| | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության www.probation.am կայքի ներդրման նպատակն է ստեղծել հարթակ, որի օգնությամբ օգտատերերը կարող են իրազեկվել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության նախաձեռնությունների, հրապարակումների և թափուր աշխատատեղերի վերաբերյալ: Կայքի ներդրման արդյունքում քաղաքացիական կբարձրանա քաղաքացիական հասարակության իրազեկվածությունը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ:<br>Սնանկության միասնական www.e-bancrupcy.am կայքի ներդրման արդյունքում սնանկության գործընթացի հետ կապված ամբողջ փաստաթղթաշրջանառությունը կիրականացվի էլեկտրոնային եղանակով, մասնավորապես, հնարավորություն կընձեռնվի էլեկտրոնային եղանակով ծանոթանալ սնանկության վարույթին, դիմել սնանկ ճանաչելու կամ ֆինանսական առողջացման գործընթացի վերաբերյալ:<br>Էլեկտրոնային նոտար՝ www.e-notary.am համակարգի լիարժեք գործարկման և հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների միջև էլեկտրոնային կապի ստեղծման արդյունքում հնարավորություն կընձեռնվի հանրային ծառայություններ մատուցող պետական մարմիններին՝ արդյունավետ իրականացնել նոտարական գործողությունները և ծառայություն-ներ մատուցել «մեկ պատուհան» սկզբունքով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ արդարադատության նախարարության կողմից մատուցվող ծառայությունների լիարժեք անցում էլեկտրոնային եղանակի, վարչարարության և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրության մասնակցային գործընթացի ապահովում պետության իրավաստեղծ գործունեությանը: Վերոգրյալ էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման արդյունքում կստեղծվեն նաև ճկուն վիճակագրական գործիքներ, որոնք թույլ կտան գնահատել պետական մարմինների կողմից իրականացվող գործառույթների արդյունավետությունը: |
| 159. | **Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացում, որոնք միտված են դատական իշխանության՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումների արդյունավետ իրականացմանը**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սահմանադրական բարեփոխումների առանցքային նպատակներից մշտապես դիտարկվել է իրավական պետության ձևավորման գործում էական դերակատարում ունեցող իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը:<br>Գործառութային, կառուցակարգային, և բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր հանդիսանալ:<br>ՀՀ Սահմանադրության և Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի հիման վրա ներդրված մեխանիզմներից բխող անհրաժեշտ միջոցառումների իրականացումն ուղղված կլինի դատական իշխանության՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումների արդյունավետ իրականացմանը, դատավորների կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դատական իշխանությանը արդյունավետ գործիքակազմով ապահովմանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքից բխող անհրաժեշտ միջոցառումների լիարժեք և արդյունավետ իրականացման արդյունքում դատական համակարգի արդյուանվետ և լիարժեք գործունեության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել դատավորների մասնագիտական զարգացման և վերապատրաստման ծրագրերի իրականացում, ինչպես նաև դատավորի աշխատակազմի և դատական այլ ծառայողների հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով վերապատրաստման ծրագրերի իրականացում, Բարձրագույն դատական խորհրդի և դատավորների Ընդհանուր ժողովի գործունեության՝ գործնականում թափանցիկության շարունակական բարելավման, մասնագիտական ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում: |

| | |
|---|---|
| | Նախատեսված միջոցառումների լիարժեք գործարկման արդյունքում կներդրվեն դատական իշխանության արդյունավետ գործունեությունը երաշխավորող անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ: |
| **Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն** | |
| 160. | **ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի կառավարման համակարգի բարելավում, ՀՀ զինված ուժերի արդիականացման գործընթացի ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է երկարատև պլանավորման միջոցով ունենալ առկա մարտահրավերներին համապատասխան կառավարման համակարգով, կառուցվածքով, արդիական սպառազինությամբ և մարտական տեխնիկայով համալրված և գիտատեխնիկական մեծ ներուժ ունեցող զինված ուժեր՝ ունակ արդյունավետ դիմակայելու ռազմական սպառնալիքներին և ապահովելու Հայաստանի Հանրապետության հուսալի պաշտպանությունը:<br>Գերակա խնդրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է հակառակորդի կողմից հրադադարի խախտումների ավելացման և հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու քաղաքական կամքի բացակայության, ինչպես նաև պաշտպանության համակարգը ՀՀ Սահմանադրության 2016թ. փոփոխություններին համահունչ կատարելագործելու հանգամանքով:<br>Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլեր են հանդիսանալու Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրի ներդրումը, ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի գործունեության նոր կարգի և կառուցվածքի սահմանումը, ռազմաբժշկական և ռազմաուսումնական հաստատությունների օպտիմալացումը և գործունեության որակի բարձրացումը:<br>Գերակա խնդրի կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում նախատեսվում է ՀՀ Նախագահի հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը, ապահովել ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի բնականոն գործունեությունը, ՀՀ պաշտպանության նախարարության մի շարք ռազմաբժշկական հաստատությունների գործունեության ոլորտում ներառել նաև բնակչության բժշկական օգնության և սպասարկման գործառույթներ, իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատությունների միավորում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության բարձր մակարդակ, կատարելագործել պաշտպանության բնագավառում կառավարման համակարգը, առավել նպատակային դարձնել ռազմաբժշկական և ռազմակրթական ոլորտներում պետական քաղաքականությունը: |
| **Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն** | |
| 161. | **1. Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնում ստեղծվել են հատուկ օբյեկտների պահպանության (ՀՕՊ) 2 ջոկատների 10 հենակետեր (Տավուշի ՀՕՊ ջոկատ՝ Ազատամուտ, Չինարի, Ներքին Կարմիր աղբյուր, Այգեպար, Մովսես, Պառավաքար և Նոյեմբերյանի ՀՕՊ ջոկատ՝ Ոսկևան, Սարիգյուղ, Բերդավան, Կոթի):<br>2018 թվականի ընթացքում նախատեսվում է ՀՀ Տավուշի մարզում ստեղծել ևս 4 քաղաքացիական պաշտպանության հենակետեր՝ Վազաշեն, Չորաթան, Դովեղ և Ոսկեպար բնակավայրերում:<br>ՀՕՊ ջոկատների կողմից իրականացվում են հետևյալ գործառույթները.<br>1) հատուկ օբյեկտների պահպանություն (ջրամբարներ, ջրաղբյուրներ, կապտաժներ, կամուրջներ), |

| | |
|---|---|
| | 2) պահակային ծառայության կազմակերպում ու իրականացում,<br>3) մասնակցություն հակաղեսանտային և հակադիվերսիոն միջոցառումների իրականացմանը,<br>4) ստեղծված իրավիճակի մասին հավաստի տեղեկությունների ստացման նպատակով քաղաքացիական պաշտպանության հետախուզության անցկացում՝ քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կողմից հիմնավորված որոշումներ ընդունելու համար,<br>5) պաշտպանիչ մատույցների և դիրքերի կառուցման աշխատանքների կատարում,<br>6) ականապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում (ականազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողության կազմակերպում,<br>7) ավերված, խարխլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, հանման և տեղափոխման կազմակերպում ու իրականացում,<br>8) վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում,<br>9) բնակչության տարահանման միջոցառումներին աջակցում:<br>Նախատեսվում է քաղաքացիական պաշտպանության հենակետերը ստեղծել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նախաձեռնությամբ՝ մարզպետարանների, համայնքների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն չի առաջանում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծումը հնարավորություն կտա ապահովել նշված բնակավայրերի բնակչության, տարածքների, կարևորագույն օբյեկտների և ենթակառուցվածքների պաշտպանությունը: |
| 162. | **Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած մարդկային անվերահսկելի հոսքերի կառավարման կարողությունների զարգացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման գործողությունների պլանի» (այսուհետ՝ պլան) մշակման և ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է տարածաշրջանում ստեղծված իրավիճակից, որին մեր երկիրը պետք է պատրաստ լինի դիմակայելու:<br>ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի նիստի N 12-16 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարության համաձայն, որպես սահմանային կառավարման մեխանիզմների բարելավում, նախատեսված է պլանի մշակումը:<br>Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի հանրապետության տարածք մուտք գործելու և հետագա միջոցառումներն իրականացնելու համար անհրաժեշտ է կանոնակարգել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործողություններն ու դրանց իրականացման կարգը:<br>Պլանի ներդրմամբ կանոնակարգվելու են.<br>1. ՀՀ տարբեր գերատեսչությունների գործառույթները սահմանային անցակետերում,<br>2. միգրացիոն հոսքի կառավարմանն ուղղված գործողություններն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերը,<br>3. սահմանային անցակետերի ընթացակարգերն ու միգրացիոն ճամբարի ծավալումը,<br>4. մարզի ղեկավար կազմի գործառույթները Հայաստանի Հանրապետության տարածք միգրացիոն հոսքի ներթափանցման դեպքում:<br><br>Գերակա խնդիրն իրականացվելու է ՄԱԿ-ի միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում, լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է զարգացնել խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած միգրացիոն հոսքերի կառավարման կարողությունները և ապահովել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների համակարգված գործունեությունը: |
| 163. | **Սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգն ապահովող ազգային դիտացանցի արդիականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանը գտնվում է երկու հզոր՝ Եվրասիական և Արաբական ցամաքային սալերի բախման գոտում և համարվում տարածաշրջանի ամենավտանգավոր և բարձր սեյսմիկ ռիսկով բնութա-գրվող տարածքներից: Պարբերաբար տեղի ունեցող ուժեղ և ավերիչ երկրաշարժերից պաշտ-պանվելու լավագույն միջոցը սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգի ապահովումն է, որն էլ Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից է:<br>Մոնիթորինգի ապահովման հրատապ խնդիրներից է գրունտի ուժեղ շարժումների անալոգային սարքերի փոխարինումը թվայիններով: Սարքերի թվային գրանցումներն՝ աքսելերոգրամներն անհրաժեշտ են երկրաշարժերի ժամանակ շենքերի և կառույցների վարքագծի ուսումնասիրման և սեյսմիկ հաշվարկների ժամանակ, դրանք հանդիսանում են նաև ելակետային տվյալներ սեյսմիկ վտանգի գնահատման համար:<br>Գրունտի ուժեղ շարժումների ցանցի արդիականացումն իրականացվելու է Շվեյցարիայի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտի Շվեյցարիայի սեյսմոլոգիական ծառայության կողմից տրամադրված թվային սարքավորումներով՝ աքսելերոգրաֆներով:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում հնարավոր կլինի զգալիորեն բարձրացնել սեյսմիկ վտանգի մոնիթորինգի մակարդակը և սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիությունը: |
| 164. | **Անտառային հրդեհների արձագանքման կարողությունների զարգացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անտառային հրդեհները լուրջ վտանգ են ներկայացնում անտառային հարուստ կենսաբազմա-զանության, այդ թվում՝ նաև հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսական և կենդանական տեսակների համար և կարող են բացասական ազդեցություն ունենալ անտառային պաշարներն օգտագործող անտառամերձ համայնքների սոցիալական վիճակի վրա:<br>Հրդեհներն ազդում են ոչ միայն բուսածածկ տարածքների վրա, այլ նաև ռիսկեր են պարունակում տեղի համայնքների և բնակչության համար: Չպայթած զինամթերքով և ականներով պատված տարածքներում առաջացած հրդեհները լրացուցիչ վտանգ են ներկայացնում հրշեջների և հրդեհների դեմ պայքարող անձանց համար:<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կլիմայական փոփոխությունների հետևանքով ստեղծվում են չափազանց շոգ և չոր կլիմայական պայմաններ, ինչը մեծացնում է լայնածավալ բուսածածկ տարածքների հրդեհների առաջացման և տարածման ռիսկը, անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհների արձագանքման կարողություններն՝ անտառային հրդեհների ռիսկը կառավարելու նպատակով:<br>Գերակա խնդիրն իրականացվելու է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջոցներով, լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն չի առաջանում:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի» ներդրմամբ ակնկալվում է անտառային հրդեհների դեպքերի և հետևանքների նվազեցում: Անտառտնտեսություններում պատասխանատու մարմինների աշխատողները կվերապատրաստվեն և հրդեհների դեմ պայքարը կլինի առավել արդյունավետ ու |

| | |
|---|---|
| | համակարգված: Հրդեհավտանգ ժամանակաշրջանի սկզբում անտառտնտեսությունների հրշեջ սարքավորումները կլինեն սարքին և պատրաստ օգտագործման համար: |
| 165. | **Հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի արդիականացում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերջին տասնամյակներում աճել է վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների և կլիմայական էքստրեմումների հաճախականությունը և ինտենսիվությունը, դրանցով պայմանավորված մարդկային և տնտեսական կորուստները: Զարգացած և պարբերաբար արդիականացվող, դիտարկումների համաշխարհային ցանցում ինտեգրված հիդրոօդերևութաբանական կառույց ունենալու համար անհրաժեշտ է հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի տեխնիկական վերազինում և արդիականացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում, տեղեկատվության հավաքման և փոխանակման համակարգի արդիականացում, տվյալների մշակման և կառավարման նոր ծրագրային փաթեթների ներդնում: Նշված քայլերի իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի արդիականացման կարիքների ուսումնասիրություն և գնահատում և մասնագետների կարողությունների զարգացման շարունակական ապահովում:<br>Գերակա խնդրի լուծմանն ուղղված աշխատանքները նախատեսվում է իրականացնել Համաշխարհային բանկի և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի արդիականացման համար առաջնային և կարևոր նախադրյալ է հանդիսանում կարիքների ուսումնասիրությունը և գնահատումը, ինչը հնարավորություն կտա մշակել Հիդրոօդերևութաբանական ծառայության դիտարկումների ցանցի արդիականացման միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլան (ճանապարհային քարտեզ) և նախատեսել իրականացման տարբերակներ:<br>Մասնագետների հիդրոօդերևութաբանական կանխատեսումների և տվյալների կառավարման կարողությունների բարելավումը, նրանց կողմից նոր տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը կնպաստի Հիդրոմետ ծառայության սպասարկման որակի բարձրացմանը և ոլորտում առկա խնդիրների լուծմանը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 166. | **ՀՀ Տավուշի մարզում տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողությունների իրականացման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման գործընթացի կատարելագործում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ մարզերում Ճանապարհային ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար անհրաժեշտ է ՀՀ մարզերում տեղակայված վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում ստորաբաժանումների կողմից ծառայությունը մատուցելու պահին հիմնական վարորդական վկայականի և հաշվառման վկայագրի հատկացումը, ինչը պայմանավորված է քաղաքացիներին որակյալ և պարզեցված ընթացակարգով ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:<br>Ներկայումս անհրաժեշտ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով ՀՀ որոշ մարզերում տեղակայված վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանումների կողմից հիմնական վարորդական վկայականը և հաշվառման վկայագիրը հատկացվում են ծառայությունը մատուցելուց հետո 5 օրվա ընթացքում՝ այդ ժամանակահատվածի համար հատկացնելով ժամանակավոր վարորդական վկայական կամ հաշվառման վկայագիր: Այսինքն քաղաքացին ստիպված է լինում կրկին այցելել Ճանապարհային ոստիկանության ստորաբաժանում և ստանալ հիմնական վարորդական վկայականը կամ հաշվառման վկայագիրը: |

| | |
|---|---|
| | Սույն գերակա խնդրի իրականացմամբ առաջարկվում է Տավուշի մարզում տեղակայված վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանման կողմից ծառայությունը մատուցելու պահին հիմնական վարորդական վկայականի և հաշվառման վկայագրի տրամադրման ապահովում: Մասնավորապես, նախատեսվում է 2018 թվականի ընթացքում ապահովել Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործման համար անհրաժեշտ նախագծահաշվարկային աշխատանքները, իրականացնել անհրաժեշտ շինարարական աշխատանքների նախնական փուլը: Ճանապարհային ոստիկանության Տավուշի մարզի հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործմանն ուղղված աշխատանքների իրականացման համար կպահանջվի կպահանջվի 196 մլն. դրամ, որը կհատկացվի Ճանապարհային ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվից:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացման արդյունքում կկրճատվի վարորդական վկայականներ հատկացնելու և տրանսպորտային միջոցները հաշվառելու համար պահանջվող ժամանակը՝ վարորդական վկայականը և հաշվառման վկայագիրը հատկացնելով ծառայությունը մատուցելու պահին, կբարելավվի ՀՀ մարզերում Ճանապարհային ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը: |
| 167. | **Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը որպես 2018 թվականին ՀՀ ոստիկանության կողմից իրականացվելիք գերակա խնդիր իրականացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ոստիկանություն-հասարակություն կապի սերտացման և առավել արդյունավետ փոխհամագործակցության հարցում մեծ դերակատարություն ունեն համայնքային ոստիկանության ծառայողները: Իսկ հենակետերի առկայությունը հասարակական վայրերում այդ նպատակին ծառայելու ևս մեկ գործուն միջոց է: Յուրաքանչյուր վարչական տարածքում գործող ոստիկանության ստորաբաժանումները տեղակայված են հիմնականում մեկ շինության ներսում, ինչը հաճախ արհեստականորեն դժվարացնում է հասարակության ներկայացուցիչների և ոստիկանության ծառայողների անմիջական շփումը: Մինչդեռ, առանձին համայնքային ոստիկանության հենակետերի առկայության պարագայում քաղաքացին իրեն հուզող խնդիրների մասին ավելի հեշտությամբ է իրազեկում համայնքային ոստիկանության ծառայողին:<br>Որպես 2018 թվականի գերակա խնդիր ներառելով համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը Երևան քաղաքում՝ նախատեսվում է կառուցել ևս 1 նոր հենակետ Էրեբունի վարչական շրջանի տարածքում: Հենակետի կառուցման համար կպահանջվի 22 մլն. դրամ, որը կհատկացվի ՀՀ ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշվից:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի համակողմանի իրագործման, համապատասխան ֆինանսական հատկացումների առկայության պայմաններում նախատեսվում է համայնքային ոստիկանության 1 նոր հենակետի ստեղծում (Երևանի Էրեբունի վարչական շրջանում)՝ տեխնիկական միջոցների և գույքի ապահովմամբ, ինչպես նաև ոստիկանություն-հասարակություն կապի սերտացման, փոխհամագործակցության ամրապնդման նկատառումների և անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման շրջանակներում՝ համայնքներում քաղաքացիների խորհրդակցական խմբերի ստեղծում ու համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում: |

| | |
|---|---|
| 168. | **Գյումրի և Վանաձոր քաղաքներում ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների կազմում թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ շահագործվող օպերատիվ կառավարման կենտրոնների ստեղծում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ոստիկանությունում օրեցոր ավելանում են տեղեկատվական հոսքերը: Այդ հոսքերի օպերատիվ կառավարման համար անհրաժեշտ է մոդեռնիզացնել և վերակազմակերպել բնակչության կողմից ստացվող ահազանգերի ընդունման և անձագանքման համակարգը՝ վերջինս բարձրացնելով գաղափարապես և տեխնիկապես նոր մակարդակի: Ներկայումս գործող համակարգը շատ առումներով հնացած է և չի բավարարում ՀՀ ոստիկանության կողմից օպերատիվ իրավիճակի կառավարմանը ներկայացվող արդի պահանջներին: Խնդրի լուծման նպատակով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում ներդրվել է օպերատիվ կառավարման որակապես նոր համակարգ: Միայն Երևան քաղաքում համակարգի ներդրմամբ սակայն խնդիրն ամբողջական լուծում չի ստանա, ուստի անհրաժեշտություն է առաջացել նաև նման փոփոխություններ կատարել ՀՀ մարզերում:<br><br>**2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ոստիկանության կանխարգելիչ գործունեության արդյունավետությունն առավել բարձրացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ մարզերում՝ մասնավորապես 2018 թվականի ընթացքում Գյումրի և Վանաձոր քաղաքներում, ևս ստեղծել թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ շահագործվող օպերատիվ կառավարման կենտրոններ: Նման կենտրոնները թույլ են տալու իրավախախտումների և հանրորեն վտանգավոր դեպքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կուտակել մեկ համակարգում, ապահովել դրանց օպերատիվ արձագանքումը, ճիշտ և արդյունավետ կառավարել ոստիկանական ուժերը և միջոցները:<br>Գերակա խնդրի իրագործման համար ընդհանուր առմամբ կպահանջվի մոտ 300.000 ԱՄՆ դոլար, ինչը նախատեսվում է իրականացնել ՀՀ և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև կնքված (Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր) Վարկային համաձայնագրի շրջանակներում տրամադրվող ֆինանսավորմամբ (ՎԱՐԿ No. 8539-AM): |
| | **Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն** |
| 169. | **Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարման աշխատանքների վերաբերյալ**<br><br>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղա-քականության ուղենիշների և տրված հանձնարարականների հիման վրա ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, Հայաստանի արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, երկրի հեղինակության ամրապնդմանը, արտերկրում Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումները ներկայացնելուն, միջազգային կազմակերպություններում ու գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:<br>Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորացման, արտաքին շուկաներում մրցունա-կության բարձրացման, տնտեսական կառույցների այժմեականացման, Հայաստանի |

| | |
|---|---|
| | տնտեսական ներուժի բազմապատկման և կայուն զարգացման նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ հարաբերությունների զարգացմանը, Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովմանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու դիվերսիֆիկացմանը, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտմանը և արտաքին ներդրումների խրախուսմանը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ　　　　　　　　　　Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

